Եկեղեցու Նախագահների ուսմունքները

Լորենզո Մնոու



ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ԼՈՐԵՆԶՈ ՄՆՈՈՒ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Գրքեր *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքից

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (առարկայական համարը 36481)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Բրիգամ Յանգ (35554)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոն Թեյլոր (35969)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները.Վիլֆորդ Վուդրուֆ (36315)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Լորենզո Սնոու (36787)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (35744)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հեբեր Ջ. Գրանթ (35970)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ (36786)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Դեյվիդ Օ. Մակքեյ (36492)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հարոլդ Բ. Լի (35892)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ

Այս գրքերը պատվիրելու համար դիմեք ձեր տեղական բաշխման կենտրոն կամ այցելեք store.lds.orgինտերնետային կայքը: Գրքերը նաև մատչելի են առցանց LDS.org-ում:

Շնորհակալ կլինենք այս գրքի վերաբերյալ ձեր դիտողությունների ու առաջարկների համար: Ուղարկեք դրանք Curriculum Development, 50 East North Temple Street, Room 2404, Salt Lake City, UT 84150-0024 USA հասցեով:

Ուղարկեք էլ փոստով cur-development@ldschurch.org հասցեով:

Խնդրում ենք նշեք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Չմոռանաք գրել գրքի վերնագիրը: Ապա առաջարկեք ձեր դիտողություններն ու առաջարկները գրքի ուժեղ կողմերի և հնարավոր բարելավումներ պահանջող մասերի վերաբերյալ:

© 2012 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 8/02
Թարգմանության հաստատումը. 8/02
Teachings of Presidents of the Church: Lorenzo Snow-ի թարգմանությունը
Armenian
36787 201

Բովանդակություն

Ներածություն VII
Պատմական ամփոփագիր XII
Լորենզո Մնոուի կյանքն ու ծառայությունը 1
1 Սովորել հավատքով 43
2 Մկրտություն և Սուրբ Հոգու պարգև 53
3 Կյանքի տևողությամբ դարձ՝ շարունակելով առաջադիմել ճշմարտության սկզբունքներում 69
4 Ամրացած Սուրբ Հոգու զորությամբ 81
5 Հավատարիմների փայլուն ճակատագիրը 95
6 Կատարյալ դառնալով Տիրոջ առջև. «Օրեցօր մի փոքր ավելի լավ» 107
7 Հավատարմություն փորձության ժամանակներում. «Ստվերներից դեպի փառահեղ արևափայլը» 123
8 «Քննիր ինձ, ով Աստուած, եւ ճանաչիր իմ սիրտը» 135
9 Սրբազան ընտանեկան հարաբերություններ 147
10 «Եկեք տաճարներ» 157
11 «Իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը» 169
12 Տասանորդ՝ օրենք մեր պաշտպանվածության և առաջադիմության համար 181
13 Սփոփող Միություն՝ ճշմարիտ գթություն և մաքուր կրոն 193
14 «Աստծո հետ բոլոր բաները հնարավոր են» 201
15 Հավատարիմ, եռանդուն ծառայություն Աստծո թագավորությունում 211
16 «Որպեսզի մենք մեկ դառնանք» 225
17 Քահանայություն՝ «մարդկության ընտանիքի փրկության համար» 237
18 Եկեղեցու կառավարում և անձնազոհ ծառայություն . . 251
19 Միսիոներական աշխատանք. «Հասնել յուրաքանչյուր մարդկային սրտին» 261
20 Աստծո թագավորությունը առաջ է շարժվում 275

21 Աստծուն ավելի շատ սիրել, քան մենք սիրում ենք աշխարհը 289
22 Բարիք անել ուրիշներին. 299
23 Մարգարե Ջոզեֆ Սմիթը 309
24 Մտորումներ Հիսուս Քրիստոսի առաքելության մասին. 321
Տեսանյութերի ցանկ 331
Ցուցիչ 333



Lorenzo Snow

Ներածություն

Առաջին նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը հիմնադրել են *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքը՝ օգնելու ձեզ խորացնել վերականգված ավետարանի ձեր ըմբռնումը և վերջին օրերի մարգարեների ուսմունքների միջոցով ավելի շատ մոտենալու Տիրոջը: Քանի որ Եկեղեցին այս շարքին ավելացնում է հատորներ, դուք կարող եք ավետարանական տեղեկատուների հավաքածու ստեղծել ձեր տան համար: Այս շարքի հատորները նախատեսված են օգտագործվելու անհատական ուսումնասիրության և կիրակնօրյա հրահանգավորման համար: Դրանք կարող են նաև օգնել ձեզ պատրաստել այլ դասեր կամ ելույթներ և պատասխանել հարցերի՝ Եկեղեցու վարդապետության վերաբերյալ:

Այս գիրքը նկարագրում է Նախագահ Լորենզո Մնոուի ուսմունքները, որը ծառայել է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու Նախագահ՝ 1898 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև 1901 թվականի հոկտեմբերի 10-ը:

Անհատական ուսումնասիրություն

Երբ դուք ուսումնասիրեք Նախագահ Լորենզո Մնոուի ուսմունքները, աղոթքով որոնեք Սուրբ Հոգու ոգեշնչումը: Յուրաքանչյուր գլխի վերջում գտնվող հարցերը կօգնեն ձեզ հասկանալ Նախագահ Մնոուի ուսմունքները և կիրառել դրանք ձեր կյանքում: Երբ դուք ուսումնասիրեք այս ուսմուքները, զուցե կամենաք մտածել ուղիների մասին, որոնցով կարող եք կիսվել դրանցով ընտանիքի անդամների և ընկերների հետ: Դա կզորացնի ձեր հասկացողությունը նրա վերաբերյալ, ինչ կարդում եք:

Ուսուցանել այս գրքից

Այս գիրքը նախատեսված է օգտագործելու տանը և եկեղեցում: Հետևյալ ուղեցույցները կարող են օգնել ձեզ ուսուցանել գրքից:

Պատրաստվեք ուսուցանել

Որոնեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, երբ պատրաստվեք ուսուցանել: Աղոթքով ուսումնասիրեք նշանակված գլուխը՝ վստահություն ձեռք բերելով Նապագահ Մնոուի ուսմունքների ձեր հասկացողության մեջ: Դուք կուսուցանեք ավելի մեծ անկեղծությամբ և զորությամբ, երբ նրա խոսքերը անհատապես ազդեն ձեզ վրա (տես ՎԵՈՒ 11.21):

Եթե դուք ուսուցանում եք Մելքիսեդեկյան Քահանյության կամ Սփոփող Միության դաս, դուք չպետք է այս գիրքը մի կողմ դնեք կամ պատրաստեք դաս ուրիշ նյութերից: Աղոթքով ընտրեք գլխից այն ուսմունքները, որոնք զգում եք, որ կլինեն ամենաօգտակարը ուսուցանելու համար: Որոշ գլուխներ պարունակում են ավելի շատ նյութեր, քան դուք կկարողանաք քննարկել դասի ընթացքում:

Խրախուսեք մասնակիցներին ուսումնասիրել գլուխը դասից առաջ և գիրքը բերել իրենց հետ: Երբ նրանք անեն այդ, նրանք ավելի լավ նախապատրաստված կլինեն մասնակցելու քննարկմանը և միմյանց խրատելու համար:

Ներկայացրեք գլուխը

Երբ ներկայացնեք գլուխը և դասի ընթացքում, փորձեք ստեղծել մի մթնոլորտ, որի ընթացքում Հոգին կարող է ազդել նրանց սրտերի և մտքերի վրա, ում դուք ուսուցանում եք: Դասը սկսելու համար, օգնեք նրանց, ում ուսուցանում եք, կենտրոնանալ գլխի ուսմունքների վրա:

- Կարդացեք և քննարկեք գլխի սկզբում գտնվող «Լորենզո Մնոուի կյանքից» բաժինը:
- Քննարկեք գլխից մի նկար կամ սուրբ գրության որևէ հատված:
- Միասին երգեք առնչվող որևէ օրհներգ:

- Համառոտակի կիսվեք թեմայի վերաբերյալ անձնական փորձառությամբ:

Քննարկում ծավալեք «Նախագահ Մնոուի ուսմունքների» մասին

Երբ դուք ուսուցանեք այս գրքից, հրավիրեք մյուսներին կիսվել իրենց մտքերով, հարցեր տվեք և ուսուցանեք միմյանց: Երբ նրանք ակտիվորեն մասնակցեն, նրանք ավելի լավ պատրաստված կլինեն սովորելու և ստանալու անձնական հայտնություն: Ավելի լավ է թույլ տաք քննարկում ծավալվի, քան փորձեք ընդգրկել բոլոր ուսմունքները: Քննարկում խրախուսելու համար, օգտագործեք յուրաքանչյուր գլխի հարցերը: Հղումները յուրաքանչյուր գլխի ընթացքում վերաբերում են այդ հարցերին: Դուք կարող եք նաև ձևակերպել ձեր սեփական հարցերը, հատկապես նրանց համար, ում ուսուցանում եք:

Հետևյալ տարբերակները կարող են ձեզ տալ լրացուցիչ գաղափարներ.

- Խնդրեք մասնակիցներին կիսվել այն ամենով, ինչ նրանք սովորել են գլխի իրենց անհատական ուսումնասիրությունից: Կարող է օգտակար լինել կապվել մի քանի մասնակիցների հետ շաբաթվա ընթացքում և խնդրել, որ նրանք պատրաստված գան կիսվելու այն ամենով, ինչ իրենք սովորել են:
- Հանձնարարեք մասնակիցներին կարդալ ընտրված հարցերը գլխի վերջից (անհատապես կամ փոքր խմբերով): Խնդրեք նրանց տվյալ գլխում որոնել այն ուսմունքները, որոնք կապված են հարցերի հետ: Ապա հրավիրեք նրանց իրենց մտքերով և ներըմբռնումներով կիսվել խմբի մնացած մասի հետ:
- Միասին կարդացեք գլխից մի ընտրանիՆախագահ Մնոուի մտքերից: Խնդրեք մասնակիցներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց սեփական փորձառությունից, որոնք ցույց են տալիս, թե ինչ էր Նախագահ Մնոուն ուսուցանում:
- Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին և մտքում կարդալ այն: Հանձնարարեք նրանց երկու կամ երեք հոգուց բաղկացած խմբերով հավաքվել, ովքեր ընտրել են նույն բաժինը, և քննարկել այն, ինչ սովորել են:

Խրախուսեք որ կիսվեն և կիրառեն

Նախագահ Մնոուի ուսմունքները կլինեն շատ իմաստալի մասնակիցների համար, ովքեր կիսվում են դրանցով ուրիշների հետ իրենց կյանքում: Մտածեք հետևյալ գաղափարների շուրջ.

- Հարցրեք մասնակիցներին, թե ինչպես կարող են կիրառել Նախագահ Մնոուի ուսմունքներն իրենց պարտականություններում՝ որպես ծնողներ և որպես տնային ուսուցիչներ, կամ՝ այցելող ուսուցիչներ:
- Խրախուսեք մասնակիցներին կիսվել Նախագահ Մնոուի ուսմունքներով ընտանիքի անդամների և ընկերների հետ:
- Կոչ արեք մասնակիցներին կիրառել այն, ինչ նրանք սովորել են, և կիսվել իրենց փորձառություններով հաջորդ դասի սկզբում:

Եզրափակեք քննարկումը

Համառոտ ամփոփեք դասը կամ խնդրեք մեկ կամ երկու մասնակիցների անել դա: Վկայեք այն ուսմունքների մասին, որոնք քննարկել եք: Դուք կարող եք հրավիրել ուրիշների ևս՝ կիսվել իրենց վկայություններով:

Տեղեկություն այս գրքում վկայակոչված աղբյուրների վերաբերյալ

Ուսմունքներն այս գրքում ուղղակի մեջբերումներ են Նախագահ Լորենզո Մնոուի քարոզներից, հրատարակված գրվածքներից, նամակներից և օրագրերից: Նրա նամակներից և օրագրերից բոլոր մեջբերումներում կետադրությունը, ուղղագրությունը, մեծատառերի օգտագործումը և պարբերությունները միօրինակացվել են: Հրատարակված աղբյուրներից մեջբերումներում պահպանվել են բնօրինակ աղբյուրների կետադրությունը, ուղղագրությունը, մեծատառերի օգտագործումը և պարբերությունները, եթե անհարաժեշտ չեն եղել խմբագրական և տպագրական փոփոխություններ՝ դյուրընթեռնելիությունը բարելավելու համար: Այդ պատճառով դուք գուցե նկատեք փոքրիկ անհամապատասխանություններ տեքստում: Օրինակ *ավետարան* բառը փոքրատառով է որոշ մեջբերումներում և մեծատառով այլ դեպքերում:

Նախագահ Մնոուն նաև հաճախ է օգտագործել *մարդիկ, մարդ* կամ *մարդկություն* բառերը, վերագրելով դրանք բոլոր մարդկանց, ինչպես արական այնպես էլ իգական սեռին: Նա հաճախ օգտագործել է *նա, նրա* և *նրան* դերանունները երկու սեռի համար էլ: Դա սովորական էր իր դարաշրջանի լեզվի համար: Չնայած այս լեզվական համաձայնությունների միջև եղած տարբերություններին և ներկա օգտագործմանը, Նախագահ Մնոուի ուսմունքները վերաբերում են ինչպես կանանց, այնպես էլ՝ տղամարդկանց:

Պատմական ամփոփագիր

Հետևյալ ժամանակագրությունն ապահովում է համառոտ պատմական հիմք Նախագահ Լորենզո Սնոուի ուսմունքների համար, որոնք ներկայացված են այս գրքում։

3 ապրիլի, 1814	Ծնվել է Մանտուայում, Օհայո, Ռոզետա Լեանորա Փեթիբոն Սնոուի և Օլիվեր Սնոուի ընտանիքում
1832	Լսում է Մարգարե Ջոզեֆ Սմիթի քարոզը Հայրամում, Օհայո։
1835	Թողնում է տունը՝ սովորելու Օբերլին Քոլեջում, Օբերլին, Օհայո։ Ճանապարհին հանդիպում է Երեց Դեյվիդ Վ. Փաթենին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից։
1836	Թողնում է Օբերլին Քոլեջը և տեղափոխվում Կիրթլենդ, Օհայո՝ սովորելու եբրայերեն։ Ընդունում է վերականգված ավետարանը և մկրտվում է ու հաստատվում հունիսին։ Հետագայում կարգվում է երեց։ Ստանում է հայրապետական օրհնություն Ջոզեֆ Սմիթ Ավագի կողմից, դեկտեմբերին։
1837	Քարոզում է ավետարանը Օհայոում
1838 թվականի հոկտեմբերից մինչև 1840 թվականի մայիսը	Ծառայում է ևս մեկ միսիա, քարոզելով ավետարանը Օհայո, Միսսուրի, Կենտուկի և Իլինոյս նահանգներում, և աշխատում որպես դպրոցի ուսուցիչ 1839–40թվականների ձմռան ընթացքում։

Մայիս 1840	Մեկնում է Նավույից, Իլինոյս, ծառայելու համար միսիա Անգլիայում: Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարության ներքո նախագահում է Եկեղեցում Լոնդոնում, Անգլիա, և շրջակա տարածքում: Հրատարակում է գրքույկ, որը կոչվում է *«Փրկվելու միակ ուղին»*:
12 ապրիլի, 1843	Ժամանում է Նավու, Իլինոյս, 250 նորադարձ Վերջին Օրերի Սրբերի հետ՝ Անգլիայից:
1843- ի վերջ և 1844-ի սկիզբ	Ուսուցանում է դպրոցում Լիմայում, Իլինոյս
1844	Ղեկավարում է ընտրարշավ Օհայոում՝ առաջադրելու համար Ջոզեֆ Սմիթին որպես Միացյալ Նահանգների նախագահ: Վերադառնում է Նավու Ջոզեֆ և Հայրում Սմիթի նահատակության մասին իմանալուց հետո, որը տեղի էր ունեցել հունիսի 27- ին:
Հունվար 1845	Նշանակվում է Նախագահ Բրիգամ Յանգի կողմից ճանապարհորդելու Օհայո նահանգով և հավաքելու նվիրատվություններ Նավույի Տաճարի կառուցման համար:
1845	Մտնում է բազմամուսնության մեջ, ինչպես այդ ժանանակ կիրառվում էր Եկեղեցում, ամուսնանալով Շարլոտա Սքուայերսի և Մարի Ադալին Գոդարդի հետ:
Փետրվար 1846	Թողնում է Նավուն ընտանիքի անդամների և ուրիշ Վերջին Օրերի Սրբերի հետ, Նավուի Տաճարում օժտումներ և կնքումներ ստանալուց հետո:

1846-1848	Ապրում է իր ընտանիքի հետ մի բնակավայրում, որը կոչվում է Մաունթ Փասգա Այովա նահանգ: Որոշ ժամանակ ղեկավարում է այդ բնակավայրը: 1848 թվականի գարնանը Սրբերի մի խումբ է տանում Սոլթ Լեյք Սիթի:
12 փետրվարի,1849	Ձեռնադրվում է Առաքյալ Սոլթ Լեյք Սիթիում
1849	Նվիրատվություններ է հավաքում Ներգաղթի Մշտական Ֆոնդի համար:
1849- 1852	Միսիա է ծառայում Իտալիայում: Ծառայում է նաև Անգլիայում, որտեղ ղեկավարում է Մորմոնի Գրքի թարգմանությունը՝ իտալերենով, ինչպես նաև՝ Շվեյցարիայում և Մալթայում: Հրատարակում է *Ջոզեֆի ձայնը* վերնագրով մի գրքույկ:
1852	Ընտրվում է Յուտայի Նահանգի օրենսդրական մարմնում:
1853	Կանչվում է Նախագահ Բրիգամ Յանգի կողմից ղեկավարելու Վերջին Օրերի Սրբերին մի բնակավայրում, որը կոչվում էր Բոքս Էլդեր Քաունթի, որը տեղադրված էր Յուտայի հյուսիսային մասում: Անվանում է գլխավոր քաղաքը Բրիգամ Սիթի: Երկար տարիներ ծառայում է որպես ղեկավար Եկեղեցում և համայնքում:
Մարտ 1864 - մայիս 1864	Մի խմբի հետ, որը ղեկավարվում էր Տասներկուսի Քվորումից Երեց Էզրա Թաֆթ Բենսոնի կողմից, ծառայում է կարճատև միսիա Հավայան կղզիներում:

հոկտեմբեր 1872 - հուլիս 1873	Մի խմբի հետ, որը ղեկավարվում էր Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական՝ Նախագահ Ջորջ Ա. Սմիթի կողմից, ուղևորության է մեկնում Եվրոպայի որոշ մասեր և Մերձավոր Արևելք, ներառյալ Սուրբ Երկիր: Ճանապարհորդությունը կատարվում է Նախագահ Բրիգամ Յանգի խնդրանքով:
1882	Միացյալ Նահանգների Կոնգրեսն ընդունում է Էդմունդսի ակտը, որը բազմամուսնությունը դիտում է որպես հանցագործություն և արգելում բազմամուսնություն ունեցողներին քվեարկել, հասարակական գրասենյակ ունենալ կամ երդվյալ ատենակալի պարտականություն կատարել:
1885 թվականի օգոստոսից մինչև 1885 թվականի հոկտեմբեր	Միսիա է ծառայում Ամերիկյան հնդկացիների մեջ Միացյալ Նահանգների հյուսիս արևմուտքում և Վայոմինգի նահանգում:
1886 թվականի մարտի 12- ից մինչև 1887 թվականի փետրվարի 8-ը	Բանտարկվում է բազմամուսնություն կիրառելու համար
1887	Միացյալ Նահանգների Կոնգրեսը ընդունում է Էդմունդս Թակեր ակտը, մեկ այլ հակաբազմակնության օրենք, թույլ տալով ֆեդերալ կառավարությանը բռնազավթել Եկեղեցու անշարժ գույքի մեծ մասը: Ակտը դառնում է օրենք 1887 թվականի մարտի 3- ին:
21–23 մայիսի, 1888	Մանթի Յուտա Տաճարի նվիրագործման նիստերի ժամանակ կարդում է նվիրագործման աղոթքը:

7 ապրիլի, 1889	Հաստատվում է Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ
1893 մայիսի 19-ից մինչև 1898 թվականի սեպտեմբերը	Ծառայում է որպես Սոլթ Լեյքի Տաճարի առաջին նախագահ
2 սեպտեմբերի, 1898	Դառնում է ավագ Առաքյալ և Եկեղեցու նախագահող առաջնորդ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի մահվան ժամանակ: Ստանում է աստվածային դրսևորում Սոլթ Լեյքի Տաճարում, որում Տերը հրահանգում է նրան արագացնել Առաջին Նախագահության վերակազմավորումը:
13 սեպտեմբերի, 1898	Հաստատվում է Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից որպես Եկեղեցու Նախագահ: Սկսում է ծառայել որպես Նախագահ:
9 հոկտեմբերի, 1898	Հաստատվում է որպես Եկեղեցու Նախագահ գերագույն համաժողովի ընթացքում:
10 հոկտեմբերի, 1898	Ձեռնադրվում է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի ԵկեղեցուՆախագահ:
Մայիս 1899	Ճանապարհորդում է Սենթ Ջորջ, Յուտա, որտեղ ստանում է հայտնություն քարոզելու տասանորդի օրենքը Սրբերին: Սկսում է հաղորդել այս ուղերձը Սենթ Ջորջում և ղեկավարում է այն հաղորդելու ջանքերը ողջ Եկեղեցում:
1 հունվարի, 1901	Հրատարակում է մի հռչակագիր՝ «Ողջույն աշխարհին» վերնագրով, ողջունելով 20-րդ դարը:
10 հոկտեմբերի, 1901	Մահանում է Սոլթ Լեյք Սիթիում. Յուտա, 87 տարեկան հասակում:

Լորենզո Սնոուի կյանքն ու ծառայությունը

Երբ 21 տարեկան էր, մի օր,1835 թվականին, Լորենզո Սնոուն ձիով ուղևորվեց իր ծնողների տնից դեպի Օբերլին Քոլեջ՝ Օբերլինում, Օհայո: Նա չգիտեր որ այս կարճ ճամփորդության ընթացքում մի փորձառություն էր տեղի ունենալու իր հետ, որը փոխելու էր նրա կյանքի ընթացքը:

Ձիավարելով իր հայրենի քաղաքի ճանապարհն ի վար Մանտուայում, Օհայո, նա հանդիպեց մի մարդու, որը նույնպես ձիավարում էր: Դեյվիդ Վ. Փաթեն անունով այդ մարդը վերջերս էր կարգվել որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ: Նա վերադառնում էր Վերջին Օրերի Սրբերի մոտ՝ Կիրթլենդ, Օհայո, միսիա ծառայելուց հետո: Երկու տղամարդիկ ճամփորդեցին միասին մոտավորապես 30 մղոն (50կիլոմետր): Լորենզո Սնոուն հետագայում վերհիշում էր.

«Մեր խոսակցությունը գնաց կրոնի և փիլիսոփայության վերաբերյալ և լինելով երիտասարդ և վայելած լինելով որոշ ուսումնական հնարավորություններ, ես սկզբում տրամադրված էի թեթևամտորեն վերաբերվել նրա կարծիքներին, հատկապես այն պատճառով, որ դրանք քերականական լեզվով չէին արտահայտվում, բայց երբ նա շարունակեց իր լուրջ և խոնարհ ձևով իմ մտքի առջև բացել փրկության ծրագիրը, ես անընդունակ զգացի դիմադրել այն գիտելիքին, որ նա Աստծո մարդն էր և որ նրա վկայությունը ճշմարիտ էր»:[1]

Լորենզո Սնոուն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ չէր, երբ հանդիպեց Երեց Փաթենին, բայց նա ծանոթ էր Եկեղեցու որոշ ուսմունքներին: Փաստորեն Մարգարե Ջոզեֆ Սմիթը այցելել էր Սնոուների ընտանիք, լինելով նրանց տտանը, և Լորենզոի մայրը և քույրերը՝ Լեանորան և Էլիզան մկրտվել էին և հաստատվել Եկեղեցու անդամ: Սակայն Լորենզոն, ինչպես նա ասաց «զբաղված էր այլ ուղղություններով» այդ

Լորենզո Սնոուի հայրը՝ Օլիվեր Սնոուն

ժամանակ և այդպիսի բաները «որոշ չափով դուրս էին մնացել [իր] մտքից»:[2] Դա սկսվեց փոխվել,երբ նա խոսեց Երեց Փաթենի հետ: Անդրադառնալով այդ փորձառությանը նա ասել է. «Դա շրջադարձային կետ էր իմ կյանքում»:[3] Նա նկարագրել է, թե ինչպես էր զգում խոսակցության ընթացքում:

«Ես զգացի, որ սիրտս խոցվեց: Նա ակնհայտորեն զգացել էր այդ, քանի որ գրեթե վերջին բանը, որ նա ասաց ինձ՝ իր վկայությունը բերելուց հետո, այն էր, որ ես պետք է գնայի Տիրոջ մոտ նախքան քնելը և ինքս հարցնեի: Սա ես արեցի և արդյունքում՝ այն օրից սկսած, որ ես հանդիպեցի այս հիանալի Առաքյալին, բոլոր իմ ձգտումներն անսահմանորեն մեծացել են և բարձրացել»:

Երեց Փաթենի «բացարձակ անկեղծությունը, նրա լրջությունը և նրա հոգևոր ուժը»[4] տևական ազդեցություն ունեցան երիտասարդի վրա, որը մի օր ինքն էր ծառայելու որպես Առաքյալ: Եվ այդ խաղաղ զրույցը տարավ այլ փորձառությունների, որոնք նախապատրաստելու էին Լորենզո Սնոուին դառնալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ՝ Աստծո խոսնակը երկրի վրա:

Մեծանալով հավատքի և տքնաջան աշխատանքի մի տան մեջ

Երկու ուժեղ ընտանիքներ, որոնք հարուստ էին հավատքով և կրոնական ավանդույթով, միացան, երբ Օլիվեր Սնոուն ամուսնացավ Ռոզետա Լեանորա Փեթիբոնի հետ՝ 1800 թվականի մայիսի 6-ին: Փեսան ու հարսը Միացյալ Նահանգների ամենավաղ Եվրոպական նորաբնակների հետնորդներն էին՝ Անգլիացի պանդուխտներ, ովքեր անցել էին Ատլանտյան օվկիանոսը 1600- ական թվականներին, խուսափելու կրոնական հետապնդումից: Օլիվերն ու Ռոզետան անցկացրեցին իրենց ամուսնության առաջին մի քանի տարիները Մասաչուսետս նահանգում, որտեղ նրանց դուստրերը Լեանորա Աբիգայլը և Էլիզա Ռոքսին ծնվեցին: Հետո նրանք տեղափոխվեցին Մանտուա Օհայո, որն այդ ժամանակ արևմտյան ամենահեռավոր բնակավայրն էր Միացյալ Նահանգներում: Նրանք տասնմեկերորդ ընտանիքն էին, ովքեր տեղափոխվեցին այդ

տարածաշրջանը: Մանտուայում ընտանիքում ևս երկու դուստրեր ծնվեցին՝ Ամանդա Փերսին և Մելիսան: Լորենզոն՝ Օլիվերի և Ռոզետայի հինգերորդ երեխան և առաջին որդին, ծնվեց Մանտուայում 1814 թվականի ապրիլի 3 -ին: Հետագայում նրան միացան երկու փոքրիկ եղբայրներ՝ Լուսիուս Ավգուստոսը և Սամուել Փիրսը:[5]

Իրենց ընտանեկան ավանդույթների միջոցով, Օլիվերն ու Ռոզետան ուսուցանեցին իրենց երեխաներին հավատքի, տքնաջան աշխատանքի և կրթության կարևորությունը: Երբ նրանք կիսվում էին դժվարությունների մասին պատմություններով, որոնք նրանք տարել էին իրենց տունը հաստատելու համար, նրանց երեխաները սովորեցին հաղթահարել հուսահատությունը և գնահատել Աստծո օրհնություններն իրենց կյանքում: Էլիզան գրել է. «Մենք իսկապես կարող ենք ասել մեր ծնողների մասին, որ նրանց ազնվությունն անբիծ էր և նրանք վստահելի էին կյանքի բոլոր իրենց հասարակական փոխհարաբերություններում և գործարարական գործարքներում և խնամքով ուսուցանում էին իրենց երեխաներին աշխատասիրության, խնայողության և խիստ բարոյականության սովորույթներ»:[6] Լորենզոն արտահատել է իր երախտագիտությունը, որ նրանք միշտ իրեն վերաբերվել են «հոգատարությամբ և քնքշությամբ»:[7]

Երբ Լորենզոն մեծացավ, նա ջանասիրաբար աշխատեց հետամուտ լինելով աշխարհիկ և մտավոր նպատակների: Նրա հայրը հաճախ էր բացակայում տնից՝ ծառայելով համայնքին «հասարակական գործերով»: Օլիվերի բացակայության ժամանակ, Լորենզոն որպես ավագ որդի, պատասխանատու էր ֆերմայի համար՝ մի պարտականություն, որին նա լրջորեն էր վերաբերվում և հաջող կատարում: Երբ Լորենզոն չէր աշխատում, նա սովորաբար կարդում էր: «Նրա մշտական ուղեկիցը, ասել է Էլիզան,- իր գիրքն էր:[8]

Ետ նայելով Լորենզոյի զարգացող անհատականությանը, Էլիզան նկատել է. «Վաղ մանկությունից [նա] դրսևորում էր բնավորության ուժ և վճռականություն, որը նկատվեց նրա ապագա կյանքի ողջ առաջընթացում»:[9]

Հաղթահարելով պատանեկան փառասիրությունը

Օլիվեր և Ռոզետա Մնոուն խրախուսում էին կրոնի հանդեպ ազնիվ հետաքրքրասիրությունը: Նրանք թույլ էին տալիս իրենց երեխաներին սովորել տարբեր եկեղեցիների մասին, բացելով իրենց տունը «բոլոր դավանանքների բարու և խելամտության» հանդեպ: Նույնիսկ այդ խրախուսանքով Լորենզոն «քիչ կամ ոչ մի ուշադրություն չէր դարձնում կրոնի նյութին, առնվազն ոչ բավականաչափ՝ նախընտրությունը տալու որևէ որոշակի աղանդի»:[10] Նրա երազանքն էր դառնալ ռազմական հրամանատար և այս երազանքը գերիշխում էր նրա կյանքի մյուս ազդեցությունների վրա, «ոչ թե այն պատճառով, որ նա սիրում էր կռիվ», գրել է պատմաբան Օրսոն Ֆ. Ուիթնին, այլ որովհետև «նա հրապուրված էր ռազմական կարիերայի ռոմանտիկայով և ասպետականությամբ»:[11] Բայց շուտով նա փոխարինեց այս փառասիրությունը, մեկ այլ բանով: Նա թողեց տունը և ընդունվեց մոտակա Օբերլին Քոլեջը, որպեսզի կարողանար ստանալ «համալսարանական կրթություն»:[12]

Երբ Լորենզոն սովորում էր Օբերլինում, նա զարգացրեց նոր հետաքրքրություն դեպի կրոնը: Դեռևս Երեց Փաթենի հետ ունեցած զրույցի ազդեցության տակ, նա ոչ միայն խորհում էր վերականգնված ավետարանի վարդապետությունների շուրջ, այլ կիսվում էր դրանցով Օբերլինում, նույնիսկ նրանց հետ, ովքեր պատրաստվում էին քահանաներ դառնալ: Իր քույր Էլիզային գրված մի նամակում, ովքեր հավաքվել էին Սրբերի հետ Կիրթլենդում, նա գրեց. «Քահանաների և ապագա քահանաների հետ, հավաստիացնում եմ ձեզ, ես բավականին լավ հաջողություն ունեցա Մորմոնիզմը պաշտպանելիս: Ճիշտ է ես շատ նորահավատներ չբերեցի, քանի որ ես ինքս էլ նորահավատ եմ, սակայն ես ստիպեցի նրանցից ոմանց գրեթե խոստովանել, որ նրանք զգացին որոշ [իմաստություն] ձեր վարդապետություններում: Մորմոնիզի դեմ ուժեղ նախապաշարմունքը Օբերլինի ուսանողի մտքից վերացնելը հեշտ իրականացվող բան չէ»:

Այս նույն նամակում Լորենզոն պատասխանեց Էլիզայից ստացված հրավերին: Նա տեղ էր նախապատրաստել նրա համար իր հետ մնալու Կիրթլենդում և սովորելու Եբրայերեն մի դասարանում, որը ներառում էր Ջոզեֆ Սմիթին և Տասներկու

Առաքյալների Քվորումից մի քանի անդամների: Նա գրեց. «Ես երջանիկ եմ իմանալով, որ դու այդքան շատ երջանկություն ես վայելում Կիրթլենդում, չնայած ներկայումս ես տրամադրված չեմ փոխել իմ բակավայրը քոնի հետ, սակայն եթե այնտեղ սովորելու հնարավորությունները նույնը լինեին, կարծում եմ ես գրեթե հակված կլինեի փորձել փոխանակել: Քանի որ, եթե չլիներ ոչինչ ավելի, այն պետք է որ շատ հետաքրքիր լիներ ինձ համար և հավանաբար ոչ անշահավետ լսել այդ վարդապետությունները քարոզվելիս, որոնց ես այդքան երկար հետամուտ եղա պաշտպանել և աջակցել այստեղ, Օբերլինում»:

Չնայած Լորենզոն տպավորված էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վարդապետություններից, նա տատանվում էր միանալ Եկեղեցուն: Բայց նա հետաքրքրված էր:Էլիզային ուղղված իր նամակում նա մի քանի հարցեր էր տվել Եկեղեցու մասին: Նա ասում էր, որ Օբերլինի ուսանողներից, ովքեր պատրաստվում էին քահանաներ դառնալ,

Լորենզո Սնոուն մկրտվել է և հաստատվել Կիրթլենդում, Օհայո 1836 թվականի հունիսին, այստեղ պատկերված Կիրթլենդի Տաճարի նվիրագործումից երկու ամիս հետո:

պահանջվում էր «նվիրել յոթ տարի կամ ավելի տքնաջան ուսումնասիրություն, նախքան նրանց թույլ կտրվեր ասել հեթանոսներին, որ Երկնքում Աստված կա, իրավաբանի նման, որը պետք է ունենա որոշակի որակավորում նախքան նա կկարողանա թույլտվություն ձեռք բերել խոսելու»: Ի տարբերություն ասել էր նա իր քրոջը. «Ձեր մարդիկ կարծում եմ ավելի շատ կախված են աստվածային օգնությունից, քան նրանից, ինչը տրվում է համալսարանական կրթությամբ, երբ քարոզում են ձեր վարդապետությունները»: Նա ցանկություն հայտնեց հասկանալ Հոգու ներգործումները, հարցնելով, թե Սուրբ Հոգին կարո՞ղ էր շնորհվել մարդկանց «այս դարում աշխարհին»: Արդյոք մարդիկ կարո՞ղ են ստանալ Սուրբ Հոգին, հարցնում էր նա, «թե՞ Աստված միշտ շնորհում է այն երկրորդ մարդու միջոցով»:[13] Այլ խոսքով ասած նա ուզում էր իմանալ, թե արդյոք քահանայության իշխանությունը անհրաժե՞շտ էր, որպեսզի ստանային Սուրբ Հոգին:

Լորենզոն գնահատում էր ընկերությունը և կրթությունը, որ ձեռք էր բերել Օբերլին Քոլեջում Բայց նա գնալով ավելի դժգոհ էր դառնում այնտեղի կրոնական ուսուցումից: Ի վերջո նա թողեց քոլեջը և ընդունեց Կիրթլենդում եբրայերեն սովորելու իր քրոջ հրավերը: Նա ասաց, որ հաճախում էր եբրայերենի դասին, միայն նրա համար, որ կարողանա պատրաստվել քոլեջ ընդունվել Միացյալ Նահանգների արևելյան մասում:[14] Սակայն Էլիզան նկատում էր, որ բացի եբրայերեն սովորելուց «նրա միտքը կլանվում էր և սիրտը լցվում հավիտենական Ավետարանի կենդանի հավատքով»:[15] Շուտով նա գտավ պատասխաններ այն հարցերին, որոնք նա հարցրել էր Օբերլին Քոլեջում և 1836 թվականի հունիսին նա մկրտվեց Երեց Ջոն Բոյնթոնի՝ այս տնտեսությունում Տասներկու Առաքյալների Քվորումի առաջին անդամներից մեկի կողմից: Նա նաև հաստատվեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

Մոտ երկու շաբաթ անց, մի ընկեր հարցրեց նրան. «Եղբայր Սնոու, դուք ստացա՞ք Սուրբ Հոգին մկրտվելուց հետո»: Այդ հարցն ինձ կարծես լցրեց շփոթությամբ և հուսահատությամբ: Փաստը նրանում էր, որ չնայած ես ստացել էի այն ամենը, ինչ գուցե ինձ անհրաժեշտ էր, ես չէի ստացել այն, ինչ ես էի ակնկալում», որը նշանակում է, որ չնայած նա հաստատվել էր, նա

չէր ստացել հատուկ դրսևորում Սուրբ Հոգուց: «Ես դժգոհ էի,- ասաց նա,- ոչ թե նրա համար, ինչ արել էի, այլ ինքս ինձանից: Այդ զգացումով ես երեկոյան առանձնացա մի վայրում, որտեղ սովորաբար մատուցում էի աղոթքներս առ Տերը»: Նա ծնկի իջավ և անմիջապես ստացավ պատասխան իր աղոթքներին: «Դա երբեք չի ջնջվի իմ հիշողությունից քանի դեռ իմ հիշողությունը կտևի»: Հետագայում նա հայտարարեց. «Ես ստացա կատարյալ գիտելիք, որ կար Աստված, որ Հիսուսը, որը մահացավ Գողգոթայում, Իր Որդին էր, և որ Զոզեֆ Մարգարեն ստացել էր իշխանություն, որը նա հայտարարում էր, որ ուներ: Այդ դրսևորման բավականությունն ու փառքը ոչ մի լեզու չի կարող արտահայտել: Ես վերադարձա իմ բնակարանը: Այժմ ես կարող էի վկայել ողջ աշխարհին, որ ես գիտեի, հաստատ գիտելիքով, որ Աստծո Որդու Ավետարանը վերականգվել էր, և որ Զոզեֆը Աստծո Մարգարեն էր, որը լիազորված էր խոսել Նրա անունով»:[16]

Իր փորձառությամբ զորացված, Լորենզոն նախապատրաստվեց միսիոներ դառնալ: Ինչպես նրա քույր Էլիզան է ասել, դարձը փոփոխություն առաջացրեց նրա ձգտումներում և «բացեց մի նոր աշխարհ նրա առջև»: Նա նկատել է. «Երկրային ռազմական հանրաճանաչության փոխարեն, նա այժմ մտավ մրցամարտի մի արենա երկնքի զորքերի հետ»:[17]

Դիմավորել մարտահրավերները որպես լիաժամկետ միսիոներ

Լորենզո Սնոուն սկսեց իր միսիոներական ծառայությունը Օհայո նահանգում 1837թվականի գարնանը: Եկեղեցուն միանալու իր որոշման նման, որպես լիաժամկետ միսիոներ ծառայելու նրա որոշումը պահանջում էր նրանից փոխել իր հայացքներն ու ծրագրերը: Նա գրել է իր օրագրում. «1837թվականին ես լիովին հրաժարվեցի բոլոր իմ սիրելի գաղափարներից»:[18] Նա հրաժարվեց Միացյալ Նահանգների արևելյան մասում համալսարանում «դասական կրթություն» ստանալու իր ձգտումից:[19] Նա նաև համաձայնվեց ճանապարհորդել առանց քսակի կամ պարկի, այլ խոսքով ասած, գնալ առանց փողի, ապավինելով ուտելիք և ապաստան տալու ուրիշների բարությանը: Սա հատկապես դժվար էր նրա համար, որովհետև իր

Երեց Լորենզո Սնոուն

պատանեկության տարիներին նա միշտ զգացել էր, որ կարևոր էր վճարել իր սեփական միջոցներից, օգտագործելով այն փողը, որը նա օգնել էր իր հորը և վաստակել ընտանեկան ֆերմայում: Նա ասել է. «Ես սովոր չէի կախված լինել որևէ մեկից՝ ուտելիքի կամ ապաստանի համար: Եթե ես գնում էի որևէ հեռու տեղ, հայրս սովորաբար հոգ էր տանում, որ ես մեկնեի իմ ծախսերի համար շատ փողով: Եվ այժմ, դուրս գալ և խնդրել ուտելիք և մի տեղ՝ գլուխս դնելու համար, շատ մեծ փորձություն էր ինձ համար,և՝ այնքան տարբեր իմ սովորածից»:[20] Նա «վճռեց անել դա», բայց միայն այն պատճառով, որ ստացավ «հաստատուն գիտելիք, որ Աստված պահանջում էր դա»:[21]

Երեց Սնոուի հորեղբայրները, հորաքույրները, զարմիկներն ու ընկերները մասնակցում էին առաջին ժողովներին, որը նա վարում էր որպես միսիոներ: Հիշելով առաջին անգամվա իր քարոզելը, նա ասաց. «Ես շատ ամաչկոտ էի այդ ժամանակ, և

. . . շատ դժվար բան էր ինձ համար վեր կենալ այնտեղ և քարոզել իմ ազգականներին և հարևաններին, ովքեր ներս էին հրավիրվել: Հիշում եմ, որ ես աղոթեցի այդ գիշերվա նախորդ գրեթե ողջ օրը, երբ ես պետք է խոսեի: Ես դուրս գնացի մենակ և խնդրեցի Տիրոջը՝ ինձ խոսելու ինչ որ միտք տար: Հորաքիույրս հետագայում ինձ ասաց, որ նա գրեթե դողում էր, երբ տեսավ ինձ վեր կենալիս խոսելու, բայց ես բացեցի իմ բերանը և թե ինչ ասացի ես երբեք իրականում չիմացա, բայց հորաքույրս ասաց, որ ես լավ խոսեցի երեք քառորդ ժամ»:[22] Նա հիշում էր երախատագիտությամբ. «Ես հավատում էի և համոզվածություն էի զգում, որ ոգեշնչման Հոգին ինձ կհուշեր և ինձ արտահայտվել կտար: Ես որոնել էի աղոթքով և ծոմով, ես խոնարհեցրել էի ինձ Տիրոջ առջև, կանչելով առ Նա զորավոր աղոթքով՝ շնորհելու սուրբ Քահանայության զորությունն ու ոգեշնչումը և երբ ես կանգնեցի համայնքի անդամների առջև, չնայած ես չգիտեի ոչ մի բառ թե ինչ պիտի ասեի, հենց որ ես բացեցի բերանս խոսելու, Սուրբ Հոգին զորությամբ հանգչեց ինձ վրա, լցնելով միտքս լույսով և հաղորդակցվելու գաղափարներով և պատշաճ բառապաշարով՝ նրանց հետ կիսվելու համար»:[23] Նախքան այդ տարածքից հեռանալը, նա մկրտել էր և հաստատել մի հորեղբոր, մի հորաքրոջ, մի քանի զարմիկների և մի քանի ընկերների:[24]

Իր ընտանիքի և ընկերենների հետ ավետարանով կիսվելուց հետո, Երեց Սնոուն շարունակեց իր միսիոներական աշխատանքներն այլ քաղաքներում և ավաններում՝ ծառայելով մոտ մեկ տարի: Նա հաղորդել է. «Երբ այս միսիայում էի, ես ճանապարհորդեցի Օհայո նահանգի տարբեր մասերում և այդ ընթացքում մկրտեցի բազմաթիվ անձանց, ովքեր հավատարիմ մնացին ճշմարտությանը»:[25]

Լորենզո Սնոուն երկար չմնաց տանը այս առաջին միսիայից հետո, երբ նա ցանկություն զգաց կրկին քարոզել ավետարանը: «Իմ միսիոներական կոչման ոգին այնպես ուժգնորեն էր ճնշում մտքիս վրա,- ասել է նա,- որ ես փափագում էի զբաղվել այդ աշխատանքներով»:[26] Այս անգամ նա քարոզեց վերականգված ավետարանը Միսսուրի, Կենտուկի և Իլինոյս ու կրկին Օհայո նահանգներում:

Որոշ մարդիկ թշնամական էին Երեց Սնոուի և այն ուղերձի հանդեպ, որ Երեց Սնուն էր հաղորդում: Օրինակ նա մի դեպք

պատմեց, որ պատահել էր իր հետ Կենտուկիում, երբ մի խումբ մարդիկ հավաքվել էին ինչ որ մեկի տանը՝ լսելու նրա քարոզը: Քարոզելուց հետո նա իմացավ, որ որոշ մարդիկ ծրագրել էին հարձակվել նրա վրա, հենց որ նա հեռանար: Նա վերհիշում է, որ տանը « ամբոխի հրմշտոցի մեջ» տղամարդկանցից մեկը «պատահաբար ձեռքը մտցրեց իմ վերարկուի գրպաններից մեկը, որը նրան հանկարծակիի բերեց՝ խիստ անհանգստացնելով»: Զգալով ինչ որ կոշտ բան Երեց Սնոուի գրպանում, նա անմիջապես զգուշացրեց իր ընկերներին, որ միսիոները զինված էր ատրճանակով: Հետագայում Երեց Սնոուն գրեց. «Դա բավական էր, որ օրինախախտել ցանկացողները վերջ տային իրենց չար ծրագրերին»: Որոշ չափով զվարճանալով, Երեց Սնոուն ավելացրեց. «Ենթադրվող ատրճանակը, որը նրանց տագնապի մատնեց և իմ պաշտպանությունը հանդիսացավ, իմ գրպանի Աստվածաշունչն էր, մի թանկարժեք նվեր, որ ինձ էր տրվել շատ սիրելի Հայրապետի՝Հայր Յոզեֆ Սմիթ[Ավագի] կողմից»:[27]

Ուրիշ մարդիկ ողջունում էին Երեց Սնոուին և ընդունում ուղերձը, որ նա հաղորդում էր: Միսսուրիի բնակավայրերից մեկում նա սովորեցրեց հինգ մարդկանց, ովքեր մկրտվեցին ձմռան կեսին: Երեց Սնոուն և մյուսները ստիպված էին կտրել սառույցը գետի վրայից, որպեսզի նա կարողանար կատարել արարողությունը: Չնայած ցրտին, որոշ նորադարձներ «դուրս եկան ջրից, ծափ տալով և գովք բացականչելով Աստծուն»:[28]

Երեց Սնոուի առաջին երկու միսիաները ընդգրկեցին 1837 թվականի գարնանից մինչև 1840 թվականի մայիսը: Այս նամակներից հատվածները բնորոշում են Տիրոջ ծառայության այդ ժամանակահատվածը. «Ես անցկացրեցի ձմռան մնացած մասը [1838-39] ճանապարհորդելով և քարոզելով, . . .տարբեր հաջողությամբ և վերաբերմունքով՝ երբեմն ընդունվելով ամենաքաղաքավարի ձևով և լսվելով լարված հետաքրքրությամբ, իսկ այլ դեպքերում նախատում էին և լկտիաբար վիրավորում ինձ, բայց ոչ մի դեպքում ավելի վատ չէին վերաբերվում, քան Հիսուսին, որին ես հայտարարում եմ, որ հետևում եմ»:[29] «Երբ ես այժմ ետ եմ նայում այն տեսարաններին, որով ես անցա, . . . ես ապշում եմ և զարմանում»:[30] «Տերն ինձ հետ էր, և ես մեծապես օրհնվեցի՝ կատարելով իմ դժվարին աշխատանքները»:[31]

Միսիան Անգլիայում

1840 թվականի մայիսի սկզբին Լորենզո Սնոուն միացավ Սրբերին Նավույում, Իլինոյս, բայց նա այնտեղ երկար չմնաց: Նա կանչվեց անցնել Ատլանտյան օվկիանոսով և միսիա ծառայել Անգլիայում և նա մեկնեց Նավույից այդ նույն ամսին: Նախքան մեկնելը նա այցելեց ինը Առաքյալներից մի քանիսի ընտանիքներին, ովքեր արդեն ծառայում էին Անգլիայում:

Երբ նա այցելեց Բրիգամ Յանգի ընտանիքին, նա տեսավ, որ նրանց գերանաշեն հյուղակի գերանների արանքների ճեղքերը շաղախով փակված չէին, նրանց թողնելով «անպաշտպան քամու և փոթորիկների դեմ»: Քույր Յանգը հոգնած էր, որովհետև հենց նոր էր վերադարձել ընտանիքի կաթնատու կովի ապարդյուն որոնումներից: Չնայած իր դժվարին պայմաններին, նա ասաց Երեց Սնոուին. «Դուք տեսնում եք իմ վիճակը, բայց ասեք նրան [իմ ամուսնուն], որ իմ մասին չնեղվի, կամ՝ չանհանգստանա նվազագույն իսկ չափով: Ես կամենում եմ, որ նա մնա իր ծառայության վայրում, մինչև պատվավոր ձևով արձակվի»: Ազդված Քույր Յանգի ծայրահեղ աղքատ, թշվառ վիճակից, Երեց Սնոուն ցանկացավ օգնել. «Ես ունեի փող, բայց քիչ , որը բավական չէր ինձ մինչև իմ ծառայության վայրը տարածության մեկ տասներորդ մասն իսկ հասցնել, փողի մնացած մասը ձեռք բերելու հեռանկար էլ չկար, իսկ այդ ժամանակ մեկնելու նախաշեմին էի»: Ես հանեցի գրպանիցս իմ փոքրիկ գումարի մի մասը, . . . բայց նա հրաժարվեց ընդունել այն, երբ ես ողջ ուժով պնդում էի, որ վերցներ, իսկ նա շարունակում էր հրաժարվել, որոշ չափով դիտմամբ և որոշ չափով էլ պատահմամբ, փողն ընկավ հատակին և գլորվեց գերանների արանքի բացվածքով, որը լուծեց վեճը և ես ցտեսություն մաղթելով նրան, թողեցի, որ նա վերցներ այն, երբ իրեն հարմար կլիներ:[32]

Իլինոյսից Երեց Սնոուն ուղևորվեց դեպի Նյու Յորք, որտեղից նա նավ նստեց, Ատլանտյան օվկիանոսով անցնելու համար: Ծովային ճանապարհորդության 42-րդ օրը երեք կատաղի փոթորիկներ հարվածեցին նավին: Շրջապատված վախեցած և արտասվող ուղևորներով, Երեց Սնոուն մնաց հանգիստ, վստահ լինելով, որ Աստված կպաշտպաներ իրեն: Երբ նավը հասավ Լիվերպուլ, Անգլիա, Երեց Սնոուի սիրտը «լի էր

մեծագույն երախտագիտությամբ Նրա հանդեպ, ով պահպանում է և հաստատում նրանց, ում Նա կանչում է և ուղարկում առաջ, որպես փրկության ծառաներ երկրի ազգերին»:[33]

Չորս ամիս Անգլիայում որպես միսիոներ ծառայելուց հետո, Երեց Սնոուն ստացավ մի լրացուցիչ պարտականություն: Նա նշանակվեց ծառայելու, որպես Լոնդոնի Կոնֆերենսի նախագահ, կոչում, որը նմանատիպ է այսօրվա շրջանի նախագահին: Նա շարունակեց ավետարանի քարոզելը և նա նաև ղեկավարում էր քահանայության ղեկավարների աշխատանքը, ինչպես օրինակ ճյուղերի նախագահների աշխատանքը՝ տարածքում: Երբ նա ծառայում էր այս ղեկավար պաշտոնում, նա հաճախ էր հաշվետվություն ներկայացնում Երեց Փարլի Պ. Փրատին՝ Տասներկուսի Քվորումի անդամի և միսիայի նախագահին: Նա գրել է շատ մարդկանց մասին, ովքեր «հետաքրքրվում էին փրկության ճանապարհով» մի սենյակում, որը «պայթելու աստիճանի լցված էր» կիրակնօրյա ժողովի համար և «Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի հոտում [նորահավատներին] մկրտելու հաճույքի մասին»: Աշխատանքի հանդեպ ջերմեռանդությամբ և լավատեսությամբ նա ասել է. «Չնայած շրջապատված ամեն նկարագրությունից վեր կամայական ամբարշտությամբ, Սիոնը սկսում է դուրս խուժել և վստահ եմ երկար ժամանակ կդառնա լույս տվող ճրագ այս քաղաքում»:[34]

Լոնդոնի Կոնֆերենսը էական աճ ապրեց, ունենալով Երեց Սնոուին որպես նախագահ: Չնայած Երեց Սնոուն ուրախանում էր այս հաջողությամբ, նա նաև մաքառում էր ղեկավարման պարտականությունների հետ: Տասներկուսի Քվորումից Երեց Հեբեր Ս. Քիմբալին գրված մի նամակում նա ընդունում է, որ այդ մարտահրավերները նրան ստիպել են «ընտրել կառավարման այլ ուղղություն, քան նախկինում երբևէ իմ ընտրածներից որևէ մեկը»:[35] Նա ասել է Երեց Քիմբալին. «Դուք և Երեց [Վիլֆորդ] Վուդրուֆը ասացիք, որ սա կլինի փորձառության դպրոց, որն արդեն փաստ է դարձել: . . . Ինչ եկել եմ այստեղ անընդհատ որևէ մի նոր բան է առաջանում Սրբերի մեջ: Մեկը դեռ չվերջացած մեկ ուրիշն է առաջանում »: Նա կիսվել էր մի ճշմարտությամբ, որը նա շատ արագ էր յուրացրել իր նոր պարտականություններում. «Ես չէի կարող գլուխ հանել դժվարություններից, [եթե] Աստված ինձ աղքան շատ չաջակցեր»:[36] Նա

Բազմաթիվ վաղ օրերի Սրբեր գաղթեցին Եվրոպայից, միանալու Սրբերին Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

արտահայտեց նույնատիպ զգացումներ մի նամակում, որն ուղղված էր Երեց Ջորջ Ա. Սմիթին `Տասներկուսի Քվորումից, «Այն քիչը, որ ես արել եմ, ինձանից չէր, այլ Աստծուց: Մեկ բան ես լիովին սովորել եմ իմ փորձառությունից, մինչ ձգտում էի մեծարել իմ պաշտոնը որպես ուսուցիչ Իսրայելում, այսինքն, ինքնուրույն ես ոչինչ չգիտեմ, ոչ էլ կարող եմ որևէ բան անել. Ես նաև հստակորեն տեսնում եմ, որ ոչ մի Սուրբ չի կարող բարգավաճել, մինչև նա հնազանդ չլինի այն հրահանգներին և նրանց խորհրդին, ովքեր դրվել են նախագահելու Եկեղեցում: Ես վստահ եմ, որ քանի դեռ ես պահում եմ նրա օրենքները Տեր Աստված կպահի և կաջակցի ինձ իմ պաշտոնում: . . . Երբ ես քայլեմ համեստությամբ նրա առաջ, նա կտա ինձ զորություն՝ խորհորդ տալու արդարությունով և հայտնության հոգով»:[37]

Բացի քարոզելուց ավետարանը և Լոնդոնի Կոնֆերենսում որպես նախագահ ծառայելուց, Երեց Սնոուն գրեց նաև մի կրոնական տրակտատ կամ գրքույկ, օգնելու միսիոներներին

բացատրել վերականգված ավետարանը: Այս տրակտատը կոչում էր *Փրկվելու միակ ճանապարհը,* հետագայում թարգմանվեց մի քանի լեզուներով և օգտագործվեց 19-րդ դարի ողջ երկրորդ կեսի ընթացքում:

Երեց Սնոուն ծառայեց Անգլիայում մինչև 1843 թվականի հունվարը: Նախքան հեռանալը, նա կատարեց մի հանձնարարություն, որը ստացել էր Նախագահ Բրիգամ Յանգից: Իր օրագրի լուսանցքում նա գրեց միակ նշումը այդ հանձնարարության մասին. «Հանձնվեց երկու Մորմոնի Գիրք Վիկտորիա Թագուհուն և Արքայազն Ալբերտին, Նախագահ Բրիգամ Յանգի խնդրանքով»:[38]

Երբ Երեց Սնոուն հեռացավ Անգլիայից, նա առաջնորդեց բրիտանական Վերջին Օրերի Սրբերի մի խմբի, ովքեր ներգաղթեցին Նավու: Նա գրել է իր օրագրում. «Ես պատասխանատու էի երկու հարյուր և հիսուն հոգուց բաղկացած մի խմբի համար, որոնցից մեծ մասը իմ մտերիմ ընկերներն էին, ովքեր ուխտի մեջ էին մտել իմ սպասավորման միջոցով: Իրավիճակը, որում այժմ գտնվում էի ես օվկիանոսը կրկին անցնելով, շրջապատված ընկերների կողմից, շատ նախանձելի էր, համեմատած այն միայնակ ժամանկին, երբ ես կանգնած էի երկու և կես տարի առաջ»:[39] Երեց Սնոուի փորձառությունը *Սվանթոն* նավի վրա ցույց տվեց նրա ղեկավարման հմտությունները և նրա հավատքն առ Աստված: Հետևյալ պատմությունը վերցված է նրա օրագրից:

«Ես ի մի հավաքեցի [Սրբերին] և փոխադարձ համաձայնությամբ նրանց կազմակերպեցի խմբերի և ենթախմբերի, նշանակելով համապատասխան ղեկավարներ յուրաքանչյուրի համար, և հաստատեցի կանոններ խմբի ղեկավարման համար: Ես այնտեղ պարզեցի, որ մեր մեջ մի քանի Քահանայապետեր և երեսուն Երեցներ կային և, հաշվի առնելով այն բնական ցանկությունը, որ շատ Երեցներ քիչ թե շատ պետք է որևէ բան անեն, որով նրանք կկարողանան փոքրիշատե բարի անուն վաստակել, իսկ եթե դա չկարողանա արվել մի ձևով, ապա պետք է արվեր մեկ այլ ձևով, ուստի եզրակացրեցի, որ ավելի ապահով էր ինքս կարգավորեի նրանց գործելակերպը, ուստի ես նշանակեցի որքան հնարավոր է շատերին, որոշ մարդկանց տալով այս կամ այն հանձնարարությունները

և պատասխանատու դարձրեցի դրանց կատարման համար: Ողջ խումբը հավաքվում էր ամեն երեկո շաբաթվա ընթացքում աղոթելու համար: Մենք շաբաթը երկու անգամ քարոզում էինք, հանդիպելով կիրակի օրը և ճաշակում հաղորդությունը:

Մեր նավապետը, որի հետ ցանկանում էի զարգացնել լավ ընկերական հարաբերություններ, թվում էր ոչ մարդամոտ և զուսպ: . . . Ես հեշտորեն զգացի, որ նրա միտքը նախապաշարված էր մեր դեմ: Մենք ծովում էինք մոտ երկու շաբաթ, որի ընթացքում ոչ մի լուրջ բան չէր պատահել, երբ հետևյալ դեպքը տեղի ունեցավ:

«Կապիտանի մատուցողը, մի երիտասարդ գերմանացի, վթարի ենթարկվեց, որը սպառնում էր նրա կյանքին: Լինելով առաքինի, լուրջ և վստահելի երիտասարդ, նավապետի հետ մի քանի ճանապարհորդությունների գնացած լինելով, նա մեծ հաջողության էր հասել վաստակելով նավապետի, սպաների և անձնակազմի սերը, Սրբերը ևս շատ էին կապվել նրա հետ»: Այդ պատճառով նրա մահվան հավանականությունը վշտի և սգի մեծ իրարանցում առաջացրեց ողջ նավի վրա:

Նրա բերանից արյուն էր գալիս, որն ուղեկցվում էր ուժեղ ջղաձգությամբ, ուշագնացությամբ և ցնցումներով: Ի վերջո աննպատակ տարբեր դեղամիջոցներ փորձելուց հետո, նրա կյանքի համար բոլոր հույսերը կտրվեցին: Նավաստիները նավապետի խնդրանքով, քնելու գնալուց առաջ, մեկ առ մեկ մտնում էին նրա նավախուցը մնաս բարով ասելու, որն արվեց առանց նվազագույն իսկ սպասումների, որ կտեսնեին նրան հաջորդ առավոտ: Շատերի աչքերը թաց էին արցունքներից, երբ նրանք վերադառնում էին այդ նավախցից:

Քույր Մարտինը [նավի վրայի Վերջին Օրերի Սրբերից մեկը], երբ միայնակ նստած էր նրա մահճակալի կողքին, արտահայտեց նրան իր ցանկությունը, որ ես կանչվեի և նրան սպասավորեի քահանայության օրհնություն և գուցե նա դեռ կարողանար բժշկվել: Սրան նա ուրախությամբ համաձայնվեց: Ես քնած էի իմ նավախցում, երբ լուրը ստացա, մոտավորապես գիշերվա տասներկուսն էր: Ես անմիջապես վեր կացա և գնացի դեպի խցիկը, և ճանապարհին տեսա նավապետի օգնականին, որը հենց նոր էր տեսել նրան: Հենց որ նա անցավ իմ կողքով, նա հանդիպեց Եղբայր Սթեյնսին և նշեց որ Պր. Սնոուն գնում էր

ձեռքերը դնելու մատուցողի վրա: «Բայց,- ասաց նա (վշտալի ձայնով), - ոչ մի բան օգուտ չունի, այժմ ամեն ինչ վերջացած է խեղճ տղայի համար»: «Օհ,- ասաց Երեց Սթեյնսը,- Տերը կարող է նրան բժշկել ձեռքները դնելու միջոցով»: Դուք այդպե՞ս եք կարծում, պատասխանեց նավաստին իր սրտի անմեղությամբ:

Երբ քայլում էի, խցիկի դռան մոտ հանդիպեցի նավապետին, որը կարծես արտասվելիս էր եղել: «Ուրախ եմ, որ եկաք Պր. Սնոու, ասաց նա,- չնայած օգուտ չունի, քանի որ մատուցողն արդեն մահանում է»: Ես ներս մտա սենյակ և նստեցի նրա մահճակալին: Նրա շնչառությունը շատ հաճախ ընդհատվում էր և տպավորությունն այնպիսին էր, կարծես թե մահանում էր: Նա չէր կարողանում բարձր խոսել, բայց ցույց տվեց իր ցանկությունը, որ ես նրան օրհնություն տայի: Պարզվեց, որ Գերմանիայում, Համբուրգում, նա կին և երկու երեխա ուներ ովքեր կախված էին նրանից իրենց ապրուստի համար: Երևում էր, Նա շատ էր անհանգստացած նրանց համար:

Ես դրեցի ձեռքերս նրա գլխին և հենց որ ավարտեցի օրհնությունը, նա բարձրացավ և նստած դիրք ընդունեց, ձեռքերն իրար զարկեց [հարվածեց], գովասանքներ բացականչելով առ Տերը բժշկվելու համար, հետո շատ շուտով վերկացավ իր մահճակալից և դուրս գնաց խցիկից և քայլեց տախտակամածով:

Հաջորդ առավոտ բոլորն ապշել էին՝ տեսնելով մատուցողին ողջ և առողջ , և զարմացած էին տեսնելով, որ նա կարողանում էր սովորականի պես իր գործն անել: Նավաստիները բոլորը մեկ մարդու պես երդվում էին, որ դա հրաշք էր, Սրբերը գիտեին, որ դա այդպես էր՝ ցնծում էին և փառաբանում Տիրոջը, նավապետն անսասան հավատքով և խորը երախտագիտությամբ լցվեց և նրա սիրտը կապվեց մերինի հետ այդ ժամանակից ի վեր: Նա շնորհում էր մեզ ամեն բարեհաճություն և հանդուրժողականություն, և ելնելով իր պաշտոնից, ու արժանացնելով մեզ հատուկ ուշադրության՝ անընդհատ ստուգում էր մեր հարմարավետությունը: Նա հաճախում էր մեր բոլոր ժողովներին, գնել ու կարդում էր մեր գրքերը: Նավապետի օգնականները ևս անում էին նույնը և երբ ես նրանց թողեցի Նյու Օրլեանում, Լուիզիանա, նրանք խոստացան, որ կմկրտվեն: Ես մոտ մեկ տարի հետո մի նամակ ստացա գլխավոր օգնականից, որն ինձ հաղորդում էր, որ նրանք կատարել էին իրենց

Սվանթոն *նավի վրա խիստ վնասված մի մարդ բժշկվեց, Երեց Լորենզո Սնոուի ապաստարանից անմիջապես հետո:*

խոստումը: Նավապետը նաև հայտնեց իր մտադրությունը, որ ապագայում,գուցե կգա մի ժամանակ, երբ նա կընդունի ավետարանը և կապրի Սրբերի հետ: Մատուցողը ևս մկրտվեց, երբ մենք հասանք Նոր Օրլեան, և բաժանվելիս նա ինձ նվիրեց Աստվածաշունչը, որը ես այժմ էլ պահում եմ»:[40]

Երեց Սնոուն գրել է. «Նավաստիներից մի քանիսը արտասվում էին, երբ մենք բարեհաջող թողեցինք *Սվանթոնը»:* Իրականում մենք բոլորս շատ լուրջ զգացումներ ունեինք»:[41] Նյու Օրլեանից Երեց Սնոուն և նրա ընկեր Սրբերը նստեցին լաստանավ ու ուղևորվեցին Միսսիսիպի գետով վեր: Նրանք ժամանեցին Նավու 1843 թվականի ապրիլի 12-ին:

Մշտական նվիրվածություն Տիրոջ գործին

Յոթ տարիների ընթացքում, ծառայելով որպես լիաժամկետ միսիոներ, Լորենզո Սնոուն տեսավ, որ իր ծառայելու

հնարավորությունները որոշ ժամանակով փոխվեցին: 1843–44 թվականների ձմռանը տեղի դպրոցի խնամակալները նրան առաջարկեցին ուսուցչի աշխատանք: Նա ընդունեց աշխատանքի առաջարկը, չնայած նա գիտեր ուսանողներից շատերին, ովքեր «հպարտանում էին ուսուցիչներին անարգելուց և դպրոցները վնասելուց»: Նա որոշեց, որ ուսանողներին հաղթելու միակ ուղին նրանց հանդեպ հարգանք ցուցաբերելն էր : Նրա քույր Էլիզան հիշում էր. «Նա այնպես էր դիմում այդ տղաներին, կարծես նրանք ամենահարգված պարոնայք լինեին: . . . Նա հատուկ ջանքեր էր գործադրում՝ նրանց ցույց տալու իր սրտացավությունը նրանց հանդեպ» և նրա ցանկությունն էր «աջակցել նրանց՝ առաջ ընթանալ իրենց ուսման մեջ: . . . Այս ձևով՝ բարությամբ և համոզելով, նրանց կրքերը հանդարտվեցին , նրանց վստահությունը շահվեց և համբերատարությամբ և մշտական ճիգերով այդ կռվարար երիտասարդները կերպարանափոխվեցին հարգալիր ուսանողների, և կիսամյակի ավարտից շատ առաջ զարմանալի առաջընթաց ունեցան, նրանք դարձել էին խիստ տքնաջան սովորողներ»:[42]

1844 թվականին Նա ստացավ մի նոր Եկեղեցական հանձնարարություն: Նրան հանձնարարեցին գնալ Օհայո և ղեկավարել Ջոզեֆ Սմիթին Միացյալ Նահանգների նախագահ ընտրելու ընտրարշավը: Մարգարեն հիասթափված էր, թե ինչպես էր Միացյալ Նահանգների կառավարությունը վերաբերվում Վերջին Օրերի Սրբերին, ուստի նա գրել էր նախագահի պաշտոնի ներկա թեկնածուներին, որ կողմնորոշվեին Եկեղեցու հանդեպ իրենց վերաբերմունքի առումով: Նրանց պատասխաններից դժգոհ, նա որոշեց նախագահության համար դնել իր թեկնածությունը:

Տասներկուսի Քվորումը հանձնարարեց Լորենզո Մնոուին և մյուսներին «կազմակերպել մի քաղաքական կազմակերպություն ողջ Օհայոի Նահանգով մեկ Ջոզեֆի նախագահության թեկնածությունն առաջ քաշելու համար»:[43] Այդ անելիս նրանք բարձրացրեցին մարդկանց տեղեկացվածությունը այն ուղիների մասին, թե ինչպես էին խախտվել Սրբերի սահմանադրական իրավունքները: Լորենզոն ասաց, որ նա «շատ հետաքրքիր ժամանակ» անցկացրեց»:[44] Որոշ մարդիկ սաստիկ դեմ կանգնեցին Մարգարեի թեկնածությանը, մինչդեռ մյուսները զգացին,

որ Ջոզեֆ Սմիթը կարող էր առաջնորդել ազգին դեպի հաջողություն և բարգավաճում:

«Այս հակասական տեսակետների լարված ժամանակահատվածում, - հիշում է Լորենզոն,- իմ առաջընթացը հանկարածակի ավարտվեց Մարգարեի և նրա եղբոր Հայրումի սպանության մասին խիստ հավաստի մի հաղորդագրությամբ»:[45] Նա վերադարձավ Նավու «տխուր սրտով»:[46]

Նույնիսկ այս ողբերգության ժամանակաընթացքում Սրբերը ջանասիրաբար աշխատում էին Աստծո թագավորությունը կառուցելու համար: Ինչպես Լորենզոն հետագայում դիտարկեց. «Ամենազորի առաջնորդությամբ թագավորությունը առաջ էր շարժվում»:[47] Նրանք շարունակում էին քարոզել ավետարանը և զորացնել միմյանց, և նրանք աշխատում էին միասին ավարտել տաճարի կառուցումը՝ իրենց քաղաքում:

Երբ Լորենզոն և Սրբերը հավաքվել էին Նավույում, նա որոշում էր կայացրել երբեք չամուսնանալ՝ փոխարենը ընտրելով նվիրաբերել իր կյանքը ավետարանի քարոզմանը: Նրա քույր Էլիզան հետագայում դիտարկել է. «Նրա միակ և ամեն-ինչ կլանող ցանկությունն էր՝ իր ժամանակը, իր տաղանդները և այն ամենն, ինչն ինքն ուներ, ծառայությանը նվիրելը »:Նա զգում էր, որ ընտանեկան կյանքը ինչ որ ձևով «կնվազեցներ իր օգտակարությունը» Տիրոջ աշխատանքին:[48]

Լորենզոյի տեսակետները ամուսնության և ընտանիքի վերաբերյալ սկսեցին փոխվել 1843 թվականին, երբ նա մենակ խոսեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ, Միսսիսիպի գետի ափերին: Մարգարեն վկայեց այն հայտնության մասին, որը ստացել էր բազմակնության վերաբերյալ: Նա ասաց Լորենզոին. «Տերը կբացի քեզ ուղի ընդունելու և հնազանդվելու Սելեստիալ ամուսնության օրենքին»:[49] Այս խորհրդով Լորենզոն սկսեց հասկանալ, որ ամուսնությունը պատվիրան էր Տիրոջից և գլխավոր մաս Երկնային Հոր երջանկության ծրագրում:

1845 թվականին Լորենզոն մտավ բազմակնության մեջ, ինչպես այն ժամանակ քարոզվում էր Եկեղեցում, ամուսնանալով Շարլոտ Սքուայերսի և Մարի Ադելին Գոդարդի հետ: Նա հետագայում կնքվեց ուրիշ կանանց հետ ևս: Նրա նվիրվածությունը

իր կանանց և երեխաներին դարձավ Տիրոջ աշխատանքին իր նվիրվածության մի մասը:

Սրբերը շարունակեցին կառուցել Աստծո թագավորությունը Նավույում, բայց հետապնդումը շարունակվեց նույնպես: 1846 թվականի ձմռան սառնամանիքին, հրոսակախմբերը ստիպեցին նրանց թողնել իրենց տները և իրենց տաճարը: Նրանք սկսեցին երկար մի գաղթարշավ դեպի արևմուտք՝ դեպի նոր տուն:

Օգնելով Սրբերին հավաքվել Սոլթ Լեյքի հովտում

Չնայած Լորենզո Մնոուն և նրա ընտանիքը թողեցին Նավուն մնացած Սրբերի հետ, նրանք ժամանեցին Սոլթ Լեյքի հովիտ միայն մեկ տարի և մի փոքր անց առաջին ռահվիրաներից հետո: Վերջին Օրերի Սրբերի առաջին ռահվիրաներից մեծ մասի նման, նրանք ճանապարհին մնացին ժամանակավոր կացարաններում: Լորենզոն և նրա ընտանիքը կարճ ժամանակով մնացին Այովա բնակավայրում, որը կոչվում էր Գարդեն Գրով, որտեղ նրանք սարքեցին գերանաշեն տնակներ Սրբերի համար, որոնք գալու էին իրենցից հետո: Այնտեղից նրանք շարժվեցին դեպի մի բնակավայր, որը կոչվեց Փասգա Մաունթ, որը նույնպես Այովայում էր:

Փասգա Մաունթում Լորենզոն աշխատեց իր ընտանիքի և մյուս Սրբերի հետ, կրկին ապահովելով իրենց և նրանց կարիքները, ովքեր ճանապարհին էին, ովքեր իրենց ետևից էին գալու դեպի Սոլթ Լեյքի հովիտ : Նրանք գերանաշեն տներ սարքեցին և նույնիսկ ցանքս արեցին և մշակաբույսեր տնկեցին, գիտենալով, որ ուրիշները գալու ու հավաքելու էին բերքը: Փասգա Մաունթում իրենց մնալու մի ժամանակահատվածում, Լորենզոն կանչվեց ղեկավարելու բնակավայրը: Երբ ցավը, հիվանդությունը և մահը հարվածեցին ժողովրդին, ներառելով իր ընտանիքը, նա ջանասիրաբար աշխատեց օգնել մարդկանց՝ գտնել հույս, զորացնել միմյանց և մնալ հնազանդ, Տիրոջ պատվիրաններին:[50]

1848 թվականի գարնանը Նախագահ Բրիգամ Յանգը Լորենզո Մնոուին հրահանգեց թողնել Փասգա Մաունթը և ճանապարհորդել Սոլթ Լեյքի հովիտ: Լորենզոին նորից ղեկավար

Լորենզո Սնոուն ծառայում էր որպես ղեկավար ռահվիրաների ընկերությունների վրա, որոնք ժամանում էին Սոլթ Լեյքի հովիտ՝ 1848 թվականին:

պաշտոն տրվեց, այս անգամ որպես ռահվիրաների ընկերությունների ղեկավար: Ընկերությունները Սոլթ Լեյքի հովիտ ժամանեցին 1848 թվականի սեպտեմբերին:

Ծառայությունը որպես Տասներկուսի Քվորումի անդամ

1849 թվականի փետրվարին Լորենզո Սնոուն մի ուղերձ ստացավ, որ նա Տասներկու Առաքյալների Քվորումում պետք է

մի ժողովի մասնակցեր: Նա անմիջապես դադարեցրեց այն, ինչ որ անում էր, և գնաց ժողովի, որն արդեն ընթացքի մեջ էր: Ճանապարհին նա մտածում էր, թե ինչու էր կանչվել Տասներկուսի Քվորումի առաջ: Նա երկմտանքի մեջ էր՝ մի՞թե նա մեղադրվում էր իրավազանցութան մեջ: Իմանալով, որ ինքը հավատարիմ էր եղել իր պարտականության մեջ, նա վանեց այդ մտատանջությունը: Բայց նա չէր կարողանում պատկերացնել, թե ինչ էր սպասվում իրեն: Երբ նա ժամանեց, նա զարմացավ իմանալով, որ կանչվել էր ծառայելու որպես քվորումի անդամ: Այդ նույն ժողովում, նա և երեք ուրիշներ՝ Երեց Չարլզ Ս. Ռիչը, Երեց Ֆրանկլին Դ. Ռիչարդսը և Երեց Էրաստուս Սնոուն, հեռավոր մի զարմիկ, ձեռնադրվել էին Առաքյալներ:[51]

Լորենզո Սնոուի ձեռնադրումը առաքյալության վճռեց նրա մնացած կյանքը: Նրա կոչումը որպես «Քրիստոսի անվան հատուկ վկա (ՎևՈՒ 107.23)» ազդեց այն ամենի վրա, ինչ նա արեց: Նա հետագայում արտահայտեց իր զգացումները Առաքյալի անձնական պարտականությունների մասին:

«Առաջինը՝ Առաքյալը պետք է ունենա Աստծո կողմից հայտնությամբ Աստվածային գիտություն, որ Հիսուսն ապրում է, որ Նա կենդանի Աստծո Որդին է:

Երկրորդը՝ նա պետք է աստվածայնորեն լիազորված լինի Սուրբ Հոգու խոստումին՝ Աստվածային մի սկզբունք, որը բացահայտում է Աստծո բաները, որը հայտնի է դարձնում Նրա կամքը և նպատակները, առաջնորդելով դեպի ամենայն ճշմարտություն և ցույց տալով գալիք բաները, ինչպես հայտարարվել է Փրկչի կողմից:

Երրորդը, նա լիազորված է Աստծո զորությամբ սպասավորելու Ավետարանի սրբազան արարողությունները, որոնք հաստատվում են յուրաքանչյուր անձի Աստվածային վկայության միջոցով: Հազարավոր մարդիկ, ովքեր ապրում են այս լեռնային հովիտներում, ովքեր ստացել են այս արարողությունները իմ սպասավորումների միջոցով, այս դրույթի ճշմարտության կենդանի վկաներն են»:[52]

Բացի իր կոչման անձնական պատասխանատվությունից, Երեց Սնոուն համոզմունք ուներ այն բանի վերաբերյալ, թե ինչ էր նշանակում Տասներկուսի Քվորումի անդամ լինել. «Մենք,

Տասներկուսս վճռական ենք վար դնել ամեն ինչ, որը մեր ուշադրությունը կշեղի պարտականության ուղուց, որպեսզի մենք լինենք մեկ, ինչպես [Առաջին] Նախագահությունն է մեկ և կապված միմյանց հետ սիրո զգացումով, որը կապում է Աստծո Որդուն Հոր հետ»:[53]

Իր անձնական կոչման և Տասներկուսի Քվորումի առաքելության այս անհատական ըմբռնմամբ, Երեց Լորենզո Սնոուն նվիրաբերեց իր կյանքն՝ օգնելու կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա: Նա պատասխանեց շատ տարբեր ուղիներում և շատ տարբեր վայրերում ծառայելու կոչին:

Իտալական միսիան

1849 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ Երեց Սնոուն կանչվեց միսիա հիմնադրելու Իտալիայում: Չնայած նա անծանոթ էր երկրին և մշակույթին ու լեզվին , նա չտատանվեց ընդունել կոչումը: Համաժողովից ավելի քիչ, քան երկու շաբաթ անց, նա արդեն պատրաստ էր գնալ, ապահովելով անհրաժեշտ օգնությամբ ՝ իր բացակայության ընթացքում՝ իր կանանց և երեխաներին:

Երբ նա և մյուս միսիոներները, ովքեր ճանապարհորդում էին դեպի Միացյալ Նահանգների արևելյան մասը, հանդիպեցին այնտեղ, որտեղ նրանք նավ էին նստելու՝ Ատլանտյան օվկիանոսն անցնելու համար, նրա մտքերը դարձան ինչպես դեպի իր ընտանիքն, այնպես էլ դեպի այն մարդիկ, ում նա պիտի շուտով ծառայեր: Իր քույր Էլիզային ուղղված մի նամակում նա գրել է. «Խիստ հակասական զգացումներ էին լցնում իմ սիրտը: . . . Մենք արագորեն ավելի ու ավելի էինք հեռանում հզոր մագնիսից՝ ՏՆԻՑ, բայց մենք գիտեինք, որ այն աշխատանքը, որով մենք զբաղված էինք, պետք է լույս տաներ նրանց, ովքեր նստած էին խավարում և Մահվան Ստվերների Հովտում, և մեր սիրտը բոցավառվեց սիրով և մեր արցունքները սրբվեցին»:[54]

1850 թվականի հուլիսին Երեց Սնոուն և նրա ընկերակիցները հասան Ջենովա, Իտալիա: Նրանք հասկացան, որ Տիրոջ աշխատանքը դանդաղ էր առաջ գնալու: Երեց Սնուն գրել է. «Ես միայնակ եմ և օտարական այս հսկա քաղաքում, ութ հազար մղոն հեռու իմ սիրելի ընտանիքից, շրջապատված մի ժողովրդով, որոնց վարքի և կենցաղի առանձնահատկությունների հետ

ես ծանոթ չեմ: Ես եկել եմ լուսավորելու նրանց մտքերը և ուսուցանելու նրանց արդարակեցության սկզբունքներ, բայց ես չեմ տեսնում հնարավոր միջոցներ այս նպատակն իրականացնելու համար: Ամեն ինչ խավար է հեռանկարում»: Մտահոգված ժողովրդի «տգիտության . . . ամբարշտության, մեծ խավարով և սնոտիապաշտությամբ», ում նա կանչվել էր ծառայելու, նա գրեց. «Ես խնդրում եմ իմ Երկնային Հորը այս ժողովրդի վրա նայել ողորմածությամբ: Ով Տեր, թող որ նրանք դառնան Քո կարեկցանքի առարկաները, որպեսզի նրանք բոլորը չոչնչանան: Ներիր նրանց մեղքերը և թույլ տուր ինձ հայտնի դառնալ նրանց մեջ, որպեսզի նրանք ճանաչեն Քեզ, որ գիտենան, որ Դու ես ուղարկել ինձ հիմնելու Քո թագավորությունը: . . . Միթե՞ դու չունես այս ժողովրդի մեջ մի քանի ընտրյալներ, ում մոտ ուղարկվել եմ ես: Առաջնորդիր ինձ դեպի այդպիսիները, և Քո անունը կունենա փառքը Քո Որդու Հիսուսի միջոցով»:[55]

Երեց Սնոուն գտավ այս «ընտրյալներին» մարդկանց մի խմբի մեջ, ովքեր կոչվում են Վալդենսիաններ: Վալդենսիաններն ապրում էին լեռնոտ մի հովտում Պիեդմոնտի շրջանում, հենց Իտալիա-Շվեյցարիա սահմանի հարավում և Իտալիա-Ֆրանսիա սահմանի արևելյան մասում: Նրանց նախնիները հալածվել էին և քշվել մի տեղից մյուսը, որովհետև նրանք հավատում էին հնադարյան Առաքյալների իշխանությանը և կամենում էին ավելի շուտ հետևել Առաքյալների ուսմունքներին, քան միանալ ներկա կրոններին:

Նախագահ Բրիգամ Յանգին ուղղված մի նամակում Երեց Սնոուն գրել էր, որ Վալդենսիանները տոկացել էին «խավարի և դաժանության» դարերի ընթացքում և «անսասան կանգնել, գրեթե ինչպես ալիքներից հարվածվող ժայռ՝ փոթորկոտ օվկիանոսում»: Բայց հենց Վերջին Օրերի Սրբերի միսիոներների Իտալիա ժամանելուց, Վալդենսիանները սկսեցին վայելել «խորը հանգստության մի շրջան» այնպես, որ թվում էր թե նրանք ավելի շատ կրոնական ազատություն ունեին, քան մյուսներն Իտալիայում: «Այսպիսով,- դիտարկում է նա,- ուղին բացված էր միայն մի կարճ ժամանակով, նախքան միսիայի սկսվելը, քանզի Իտալիայի ոչ մի մաս չի կառավարվում այդպիսի նպաստավոր օրենքներով»:

Կամենալով ավելի շատ բան իմանալ այդ ժողովրդի մասին, Երեց Սնոուն գնաց գրադարան՝ մի գիրք գտնելու նրանց մասին: Նա հիշում էր. «Գրադարանավարը, որին ես դիմեցի, տեղեկացրեց ինձ, որ նա ուներ իմ նկարագրությամբ ընդամենը մի գիրք, որը ես էի պահանջում, բայց այն հենց նոր էին վերցրել: Նա հազիվ էր վերջացրել նախադասությունը, երբ մի կին ներս մտավ այդ գրքով: «Օ,- ասաց նա ,- սա նշանավոր դեպք է, այս պարոնը հենց նոր այդ գիքն էր ուզում վերցնել»: Ես շուտով համոզվեցի, որ այս մարդիկ արժանի էին ստանալ Ավետարանի առաջին քարոզն Իտալիայում»:[56]

Երեց Սնոուն և նրա ընկերակիցները ցանկանում էին քարոզել ավետարանը Պիեդմոնտի շրջանում, բայց նրանք զգում էին, որ պետք է առաջ գնան զգուշությամբ, ընկերություն հաստատելով, և ցույց տալով մարդկանց, որ իրենց կարելի էր վստահել: Երբ նրանք զգացին, որ լավ հարաբերություններ էին հաստատել մարդկանց հետ, նրանք մագլցեցին մի մոտակա լեռ, երգեցին «գովք երկնքի Աստծուն» և աղոթք հղեցին՝ նվիրագործելով Իտալիայի հողը միսիոներական աշխատանքի համար: Նրանք նաև արտահայտեցին իրենց անձնական նվիրվածությունն աշխատանքին և Երեց Սնոուն քահանայության օրհնություններ տվեց իր ընկերակիցներին՝ օգնելու նրանց իրենց պարտականություններում: Ոգեշնչված լեռան վրա ունեցած իրենց փորձառությունից, Երեց Սնոուն անվանեց տեղանքը Մաունթ Բրիգամ:[57]

Նույնիսկ այդ փորձառությունից հետո, մոտ երկու ամիս անցավ, մինչև որևէ մեկը ցանկություն հայտնեց միանալու Եկեղեցուն: 1850 թվականի հոկտեմբերի 27-ին միսիոներները վերջապես ցնծում էին տեսնելով առաջին մկրտությունը և հաստատումը Իտալիայում:[58] Երեց Սնոուն հետագայում հաղորդեց. «Աշխատանքն այստեղ դանդաղ է և ձանձրալի: . . . Այնուամենայնիվ Եկեղեցին հիմնադրվել է: Ծառը տնկվել է և տարածում է իր արմատները»:[59]

Մի գիշեր Երեց Սնոուն մի երազ տեսավ, որը նրան օգնեց հասկանալ Իտալիայում իր միսիայի բնույթը: Երազում նա ձուկ էր որսում իր ընկերների հետ: «Մենք հրճվում էինք, տեսնելով ամենուրեք հեռու տարածության վրա մեծ և գեղեցիկ ձկներ ջրի մակերևույթին: - ասում էր նա: - Մենք տեսանք շատ մարդկանց,

ովքեր զցում էին իրենց ուռկանները և ձկնորսական կարթաթելերը, բայց նրանք բոլորը թվում է անշարժ էին , մինչդեռ մենք անընդհատ շարժման մեջ էինք: Նրանցից մեկից անցնելով ես հայտնաբերեցի, որ իմ կարթին ձուկ էր ընկել և մտածեցի, որ գուցե դա անհանգստացներ այդ մարդուն, որ ես բռնել էի ձուկը, որ ես նրա ձեռքից փախցրել էի այն, սակայն մենք շարժվեցինք առաջ և մոտեցանք ափին: Այդ ժամանակ ես դուրս քաշեցի իմ կարթաթելը և շատ զարմացա ու նեղսրտվեցի, տեսնելով իմ որսի փոքրությունը: Ես մտածեցի, որ շատ տարօրինակ էր, որ այդքան հրաշալի, ընտիր տեսքով ձկներից ես պետք է այդքան փոքրիկ որս բռնեի: Բայց բոլոր իմ հիասթափություններն անհետացան, երբ ես հայտնաբերեցի, որ նրա հատկությունները շատ արտասովոր բնույթի էին»:[60]

Երեց Սնոուի երազը մարգարեական էր: Նա չտեսավ մեծ քանակությամբ նորադարձներ Իտալիայում և, ինչպես մեկ այլ միսիոներ հետագայում նկատեց, նրանք ովքեր ընդունեցին ավետարանը, «հարուստ և ազնվազարմ» չէին:[61] Այնուամենայնիվ, Երեց Սնոուն և նրա ընկերակիցները Տիրոջ ձեռքերում գործիքներ էին՝ բերելով բարի, հավատարիմ մարդկանց Աստծո թագավորություն՝ մարդկանց, ովքեր երախտապարտ էին, որ «սկսել էին քայլել նոր և հավերժական կյանքի ուղիներում»:[62] Եվ արդյունքում, Երեց Սնոուի ղեկավարությամբ, Մորմոնի Գիրքը թարգմանվեց իտալերեն:

Գրեթե մեկ դար ու կես հետո, մեկ այլ Առաքյալ՝Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը խոսեց այն տղամարդկանց և կանանց մասին, ովքեր միացել էին Եկեղեցուն Երեց Սնոուի և նրա ընկերակիցների շնորհիվ: «Ոմանք առաջին ձեռնասայլերի ընկերությունում էին, ովքեր եկան Սոլթ Լեյքի հովիտ: . . .Նրանց հետնորդներից շատերը խնամում էին նոր վերականգված եկեղեցու խաղողի այգիները և այսօր էլ անզուգական ներդրումներ են կատարում համաշխարհային եկեղեցում, հավատալով ինչպես իրենց նախնիները, որ Առաքյալները կրում են բանալիներ, որոնք երբեք չեն ժանգոտվում»:[63]

Կառուցելով Եկեղեցին

Երեց Սնոուն հետագայում ծառայեց այլ միսիաներ, մեծարելով Տասներկուսի Քվորումի անդամի իր կոչումը՝ աշխատելով

«Եկեղեցու [Առաջին] Նախագահության ղեկավարության ներքո . . . կառուցելով եկեղեցին, և կարգավորելով բոլոր նույն գործերը, բոլոր ազգերի մեջ» (ՎԼՈՒ107.33)։

1853 թվականին Նախագահ Բրիգամ Յանգը կանչեց Լորենզո Սնոուին՝ ղեկավարելու ընտանիքների մի խմբի՝ բնակվելու հյուսիսային Յուտայի Բոքս Ելդեր երկրամասում։ Գոյություն ունեցող բնակավայրը փոքր էր, անկազմակերպ և թուլացած։ Երեց Սնոուն անմիջապես գնաց աշխատելու, կազմակերպելով ժողովրդին համաձայն նվիրաբերման օրենքի սկզբունքների, ինչպես ուսուցանվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից։ Ժողովուրդը հիմնադրեց մի ծաղկող քաղաք, որը Երեց Սնոուն կոչեց Բրիգամ քաղաք՝ Նախագահ Յանգի պատվին։ Աշխատելով միասին և աջակցելով միմյանց, քաղաքացիները կառուցեցին դպրոցական համակարգ, ֆաբրիկաներ, ոռոգման համակարգ, առևտրական կազմակերպություն և նույնիսկ՝ թատերական միություն։ Չնայած նրանք լիովին չէին ապրում նիրաբերման օրենքով, նրանք առաջնորդվում էին դրա սկզբունքներով և նրանք ցույց տվեցին, թե ինչ կարող է համայնքն իրագործել համագործակցությամբ և տքնաջան աշխատանքով։ «Բրիգամ քաղաքում ծույլեր չկային», - գրել է Նախագահ Սնոուի դուստր Լեսլին։ « Առկա էր գործունեության և բարգավաճման մի ժամանակահատված, որը հավանաբար երբեք չէր կարող իր հավասարն ունենալ նահանգի պատմության մեջ որևէ այլ բնակավայրում»։[64]

Երեց Սնոուն և նրա ը նտանիքը ապրեցին Բրիգամ քաղաքում երկար տարիներ։ Նա ղեկավարում էր այնտեղի Սրբերին, մեկնելով ժամանակ առ ժամանակ ծառայելու կարճաժամկետ միսիաներ այլ տեղերում։ 1864 թվականին նա գնաց երեք ամսով՝ ծառայելով կարճ միսիա Հավայան կղզիներում։ Նա գնաց Երեց Էզրա Թ. Բենսոնի հետ, որը նույնպես Տասներկուսի Քվորումի անդամ էր, և Երեցներ Ջոզեֆ Ֆ. Սմիթի, Ալմա Սմիթի և Ուիլյամ Վ. Քլաֆի հետ։[65] 1872–73 թվականներին Երեց Սնոուն և ուրիշներ, Նախագահ Ջորջ Ա. Սմիթի՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականի ուղեկցությամբ, մեկնեցին ինն ամսյա ուղևորության Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրներ, ներառյալ մի այցելություն կատարեցին Սուրբ Երկիր։ Նրանք գնացին Նախագահ Բրիգամ Յանգի խնդրանքով, որը հույս

Յուտայի Բրիգամ քաղաքի այս շենքում պատրաստում էին երկայնաճիտք և այլ կոշիկներ, գլխարկներ և լծասարքեր:

ուներ, որ նրանց արդարակյաց ազդեցությունը կօգներ նախապատրաստվել մյուս ազգերին ընդունելու վերականգված ավետարանը:[66] 1885 թվականին Երեց Սնոուն կանչվեց այցելելու Ամերիկյան հնդկացիների մի քանի խմբերի Միացյալ Նահանգների հյուսիս արևմտյան մասերում և Վայոմինգի նահանգում: Սկսելով օգոստոսից և ավարտելով հոկտեմբերին, նա այնտեղ միսիաներ հիմնադրեց և կազմակերպեց Եկեղեցու ղեկավարներին՝ օգնելու նրանց, ովքեր մկրտվել էին և հաստատվել:

Տաճարային աշխատանք

Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը՝ Եկեղեցու յոթերորդ Նախագահը, նկատել է, որ Նախագահ Լորենզո Սնոուն «նվիրաբերեց իր կյանքը՝ տարիներ շարունակ աշխատելով Տաճարում»:[67] Տաճարի հանդեպ այդ սերը սկսել էր Նախագահ Սնոուի դարձից ի վեր և խորացել որպես Առաքյալ իր ծառայության ընթացքում: Նա մասնակցում էր Կիրթլենդի Տաճարում անցկացվող ժողովներին իր մկրտվելուց և հաստատվելուց անմիջապես հետո: Հետագայում նա ոգևորությամբ ընդունեց Նավույում տաճար կառուցելու համար նվիրատվություններ հավաքելու կոչումը: Երբ Նավույի Տաճարը կառուցվեց, նա ծառայեց այնտեղ, որպես

տաճարային աշխատող՝ օգնելով Վերջին Օրերի Սրբերին ստանալ օժտման և կնքման արարողությունները, նախքան նրանց մեկնելը դեպի արևմուտք: Նրա պարտականությունները տաճարում շարունակվում էին և ընդարձակվում, երբ նա կանչվեց ծառայելու որպես Առաքյալ: Նա խոսեց Լոգանի Յուտայի Տաճարում նվիրագործման ծառայությունների ժամանակ: Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը Մանթի Յուտայի Տաճարը նվիրագործելուց հետո, Նախագահ Սնոուն կարդաց նվիրագործման աղոթքը հաջորդ օրվա նիստերի ընթացքում: Երբ Սոլթ Լեյքի Տաճարի ամենաբարձր գագաթին դրվեց վերնաքարը, նա ղեկավարեց համայնքի մեծաքանակ անդամներին Օվսաննա Բացականչության ժամանակ: Սոլթ Լեյքի Տաճարի նվիրագործումից հետո նա այնտեղ ծառայեց որպես տաճարի առաջին նախագահ:

Նախագահ Սնոուի 80- ամյակին տեղի լրագրերից մեկը տվել էր էր այս գնահատականը.«Իր օրերի իրիկնամուտին [նա դեռ] զբաղված է և եռանդուն այն մեծ գործում, որին նա նվիրել է իր վաղ տարիները, նա շարունակում է Տաճարի սրբազան շրջակայքում այն փառահեղ գործերը, որոնց նվիրաբերել են իրենց, նա և՝ նրա ընկերակիցները, աշխատանքներ՝ այնպիսի խորը կարևորության այս մեղքից ու մահից տանջված աշխարհի համար»:[68]

Ծառայություն անհատներին

Երբ Նախագահ Սնոուն ճանապարհորդում էր տեղից տեղ՝ ուսուցանելով մարդկանց մեծ խմբերի, նա ժամանակ էր տրամադրում ծառայելու անհատների և ընտանիքների: Օրինակ՝ 1891թվականի մարտին, երբ նա ծառայում էր որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ, նա խոսում էր մի համաժողովում, Բրիգամ քաղաքում: Իր ելույթի կեսին մի գրություն դրվեց ամբիոնին: Մի ականատես ասաց, որ նա «դադարեցրեց խոսելը, կարդաց գրությունը, իսկ հետո բացատրեց Սրբերին, որ դա մի կանչ էր այցելելու որոշ մարդկանց, ովքեր խորը վշտի մեջ էին»: Նա ներողություն խնդրեց և հեռացավ ամբիոնից:

Գրությունը Բրիգամ քաղաքի մի բնակչից էր, որի անունը Զակոբ Զենսեն էր: Այն ասում էր, որ Զակոբի դուստրը՝ Էլլան մահացել էր այդ օրը՝ շաբաթներով կարմրուկի դեմ մաքառելուց

հետո: Եղբայր Ջենսենը ուղղակի այդ գրությունը գրել էր Նախագահ Սնոուին՝ տեղեկացնելու մահվան մասին և նրան խնդրելու կազմակերպել թաղումը: Բայց Նախագահ Սնոուն ցանկացավ անմիջապես այցելել ընտանիքին, չնայած դա պահանջեց դադարեցնել իր խոսքը և թողնել ժողովը, որտեղ նա նախագահում էր: Նախքան Նախագահ Սնոուն կթողներ ժողովը, նա կանչեց Ռուդգեր Քլաուսոնին, որն այդ ժամանակ Բոքս Էլդեր ցցի նախագահն էր, ուղեկցել իրեն:

Եղբայր Ջենսենը վերհիշում էր, երբ Նախագահ Սնոուն և Նախագահ Քլաուսոնը ժամանեցին նրա տուն.

«Էլլայի մահճակալի կողքին մեկ կամ երկու րոպե կանգնելուց հետո, Նախագահ Սնոուն հարցրեց թե սրբագործված յուղ կա՞ր տանը: Ես խիստ զարմացա, բայց ասացի որ կար և այն բերեցի նրա համար: Նա տվեց յուղով սրվակը Եղբայր Քլաուսոնին և խնդրեց նրան օծել Էլլային: [Նախագահ Սնոուն] այդ ժամանակ օծումը հաստատողն էր:

Սպասավորման ժամանակ ես հատկապես տպավորվեցի այն մի քանի խոսքերից, որոնք նա օգտագործեց և կարողանում եմ լավ հիշել դրանք այժմ: Նա ասաց. «Միրելի Էլլա, ես պատվիրում եմ քեզ Տեր Հիսուս Քրիստոսի անունով ետ գալ և ապրել, քո առաքելությունը չի վերջացել: Դու դեռ պետք է ապրես կատարելու մի մեծ առաքելություն»:

Նա ասաց, որ պետք է դեռ ապրեր դաստիարակելու մի մեծ ընտանիք և լինելու մխիթարություն իր ծնողներին ու ընկերներին: Ես լավ եմ հիշում այս խոսքերը: . . .

. . . Նախագահ Սնոուն այդ օրհնությունն ավարտելուց հետո, դիմեց կնոջս և ինձ ու ասաց. «Հիմա , այլևս մի ողբացեք կամ սգացեք : Ամեն ինչ լավ կլինի: Եղբայր Քլաուսոնը և ես զբաղված ենք և պետք է գնանք, մենք չենք կարող մնալ, բայց դուք ուղղակի համբերատար եղեք և սպասեք, և մի ողբացեք, որովհետև ամեն ինչ լավ կլինի» . . .

Էլլան այդ վիճակում մնաց մեկ ժամից ավելի, Նախագահ Սնոուի կողմից սպասավորվելուց հետո, կամ՝ իր մահից հետո ընդամենը երեք ժամ: Մենք նստած էինք այնտեղ մահճակալի կողքին հետևելով, նրա մայրն ու ես, երբ հանկարծակի նա բացեց աչքերը: Նա աչք ածեց սենյակը, տեսավ որ մենք

նստած էինք այնտեղ, բայց դեռ ուրիշ ինչ որ մեկին էր որոնում և առաջին բանը, որ ասաց սա էր. «Ո՞ւր է նա: Ո՞ւր է նա»: Մենք հարցրեցինք.«Ո՞վ, ո՞ւր է ով»: «Դեհ, Եղբայր Սնոուն», պատասխանեց նա: «Նա ինձ ետ կանչեց»:[69]

Երբ Էլլան հոգևոր աշխարհում էր եղել, նա զգացել էր այնպիսի խաղաղություն և երջանկություն, որ նա չէր կամեցել ետ վերադառնալ: Բայց նա հնազանդվել էր Նախագահ Սնոուի ձայնին: Հենց այդ օրվանից նա մխիթարում էր ընտանիքի անդամներին և ընկերներին, օգնելով նրանց հասկանալ, որ նրանք չպետք է ողբային իրենց սիրելիների համար, ովքեր մահացել էին:[70] Հետագայում նա ամուսնացավ, ունեցավ ութ երեխա և հավատարմորեն ծառայեց իր եկեղեցական կոչումներում:[71]

Ղեկավարելով Եկեղեցին որպես Տիրոջ Մարգարե, Տեսանող և Հայտնող

1898 թվականի սեպտեմբերի 2- ին Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը մահացավ, ծառայելով որպես Եկեղեցու Նախագահ ավելի քան ինը տարի: Նախագահ Լորենզո Սնոուն, որն այդ ժամանակ ծառայում էր որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, Բրիգամ քաղաքում էր, երբ լսեց այդ նորությունը: Նա գնացք նստեց դեպի Սոլթ Լեյք Սիթի հենց որ կարողացավ, գիտենալով, որ Եկեղեցու ղեկավարման պատասխանատվությունն այդ ժամանակ դրվում էր Տասներկուսի Քվորումի վրա:

Զգալով իրեն անհամապատասխան, բայց պատրաստ լինելով հետևել Տիրոջ կամքին, Նախագահ Սնոուն գնաց Սոլթ Լեյքի Տաճար և աղոթեց: Ի պատասխան իր աղոթքի, Տերն անձնապես այցելեց նրան: Նախագահ Սնոուն հետագայում վկայեց, որ նա «իրականում տեսավ Փրկչին . . . տաճարում և խոսեց Նրա հետ դեմ առ դեմ»: Տերը նրան ասաց անմիջապես սկսել Առաջին Նախագահության վերակազմավորումը, չսպասել ինչպես նախորդ Եկեղեցու Նախագահների մահվան ժամանակ էր արվել:[72] Նախագահ Սնոուն հաստատվեց Տասներկուսի Քվորումի կողմից որպես Եկեղեցու Նախագահ 1898 թվականի սեպտեմբերի 13- ին, որից հետո նա սկսեց ծառայել որպես Նախագահ: Նա հաստատվեց Եկեղեցու ընդհանուր անդամակցության կողմից

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը՝ 1898 թվականին: Վերևի շարքում ձախից աջ՝ Սնոոն Լ. Լանդ, Ջոն Վ. Թեյլոր, Ջոն Հենրի Սմիթ, Հեբեր Ջ. Գրանթ, Բրիգամ Յանգ Կրտ., Ջորջ Թիդեյլ, Ռուդգեր Քլաուսոն, Մարիներ Վ.Մերիլ: Միջին շարքում՝ Ֆրենսիս Մ. Լիման, Ջորջ Ք. Քենոն, Լորենզո Սնոու, Զոզեֆ Ֆ. Ֆիլդինգ, Ֆրանկլին Դ. Ռիչարդս: Ներքևի շարքում՝ Մաթիաս Ֆ. Քոուելի, Աբրահամ Օ. Վուդրուֆ:

հոկտեմբերի 9- ին, և կարգվեց որպես Եկեղեցու հինգերորդ Նախագահ, հոկտեմբերի 10- ին:

Նախագահ Սնոուի օրինակով և նրա ստացած հայտնությունների միջոցով Վերջին Օրերի Սրբերը սկսեցին ճանաչել նրան որպես իրենց մարգարե: Այլ հավատքների մարդիկ ևս սկսեցին հարգել նրան որպես Աստծո ճշմարիտ մարդու:

Փոխհարաբերությունները Վերջին Օրերի Սրբերի հետ

Նախագահ Սնոուն հաճախ էր նախագահում ցցի համաժողովներում, երբ նա Եկեղեցու Նախագահ էր: Երբ նա հանդիպում էր Սրբերին, արտահայտում էր իր սերն ու հարգանքը նրանց հանդեպ: Նրա խոսքերն ու գործերը ցույց էին տալիս, որ չնայած նա գիտակցում էր իր կոչման սրբությունը, նա չէր դնում իրեն վեր այն ժողովրդից, որին ծառայում էր:

Ցցի մի համաժողովում Նախագահ Սնոուն մասնակցեց ցցի երեխաների համար մի հատուկ նիստի: Երեխաները հրավիրվեցին մի կանոնավոր շարք կազմել, որպեսզի ամեն անգամ մեկը մոտենար մարգարեին և սեղմեր նրա ձեռքը: Նախքան նրանք դա կանեին, նա կանգնեց և ասաց. «Երբ սեղմեմ ձեր ձեռքը, ես ուզում եմ, որ դուք նայեք իմ դեմքին, որպեսզի դուք միշտ հիշեք ինձ: Դեհ ես ոչնչով ավելի լավը չեմ, քան շատ ուրիշ մարդիկ, բայց Տերը մեծ պարտականություններ է դրել ինձ վրա: Այն ժամանակից, երբ Տերը Իրեն հայտնի դարձրեց ինձ, ամենակատարյալ ձևով,և երբ Նա արեց դա, ես ջանացել եմ կատարել ինձ վրա դրված յուրաքանչյուր պարտավորություն: Այն բարձր պաշտոնը, որ ես զբաղեցնում եմ այդ պատաճառով է, որ ես կամենում եմ, որ դուք հիշեք ինձ, հիշեք, որ դուք սեղմել եք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Նախագահի ձեռքը: Հուսով եմ, որ դուք չեք մոռանա աղոթել ինձ համար և իմ խորհրդականներ՝ Նախագահ Քենոնի և Սմիթի ու Առաքյալների համար»:[73]

Նախագահ Սնոուի որդի ԼԵՌոյը պատմեց հետևյալ պատմությունը ցցի մի համաժողովից՝ Ռիչֆիլդում, Յուտա. «Նախագահ Լորենզո Սնոուն և Ֆրենսիս Մ. Լիմանը [Տասներկուսի Քվորումից] ներկա էին ցցի մի համաժողովում Ռիչֆիլդում: Բացիչ աղոթքից հետո ցցի նախագահը հարցրեց Եղբայր Լիմանին, թե ում նա պետք է կանչեր ասելու բացիչ աղոթքը: Եղբայր Լիմանն ասաց. «Հարցրեք Նախագահ Սնոուին», ի նկատի ունենալով, որ հարցներ Նախագահ Սնոուին, թե ով պետք է աղոթեր: Այնուամենայնիվ ցցի նախագահը փոխարենը խնդրեց Նախագահ Սնոուին ասել աղոթքը: Նախագահ Սնոուն ներողամտորեն արձագանքեց և նախքան աղոթքը սկսելը արտահայտեց իր զոհունակությունը կանչվելու համար, և ասաց, որ երկար ժամանակ էր անցել այն օրից, ինչ նրան տրվել էր այդ բավականությունը: Ասում են նա սքանչելի աղոթք մատուցեց»:[74]

Փոխհարաբերությունները այլ հավատքի մարդկանց հետ

Նախագահ Սնոուի ազդեցությունը տարածվեց իր ընկեր Վերջին Օրերի Սրբերից այն կողմ: Երբ այլ հավատքի մարդիկ հանդիպում էին նրան, նրանք գալիս էին հարգանքի տուրք մատուցելու նրան և այն Եկեղեցուն, որը Նա ներկայացնում էր: Պատվելի Վ. Դ. Քորնելը, մեկ ուրիշ եկեղեցու քահանա, այցելեց

Սոլթ Լեյք Սիթի և հնարավորություն ունեցավ ժամանակ անցկացնել Նախագահ Սնոուի հետ: Նա գրել է.

«Ես առաջնորդվեցի դեպի նրա վեհաշուք ներկայությունը իր քաղաքավարի և փորձառու քարտուղարի կողմից և գտա ինձ երբևէ հանդիպած ամենահաճելի և ամենագրավիչ մարդկանցից մեկի ձեռքը սեղմելիս՝ մի մարդու, ով բնորոշ հատկություն ունի միանգամից իր ներկայությամբ վերացնելու մարդուց ամեն կաշկանդվածություն՝ զրուցակցելու արվեսի վարպետի, մի հազվագյուտ հանճարով, հնարավոր դարձնելով մարդուն զգալ մի հանգստավետ հյուրընկալություն՝ իր ներկայությամբ:

Նախագահ Սնոուն բարեկիրթ մարդ է՝ մտքով, հոգով և մարմնով: Նրա խոսքը հրաշալի է, ճկուն, բարեհաճ, խորագիտակ: Նրա շարժուձևը ցույց է տալիս լավ կրթօջախներում ուսումնառության տակտը: Նրա բնավորության հիմնական առանձնահատկությունը երեխայի պես հեզ լինելն է: Երբ ծանոթացնում են նրա հետ, դուք գոհ եք լինում նրանից: Երբ զրուցում եք նրա հետ, սկսում եք հավանել նրան: Երբ երկար ժամանակով եք այցելում նրան, սկսում եք սիրել նրան»: Դիմելով իր ընթերցողներին, ովքեր ակնհայտորեն նախապաշարմունքներ ունեին Եկեղեցու վերաբերյալ Պատվելի Քորնելը նշել է.«Եվ այնուամենայնիվ նա «Մորմոն է»: Դեհ եթե «Մորմոնիզմը» երբևէ հաջողության է հասել կոշտ, կոպիտ մի մարդուց դաձնել Նախագահ Սնոու, այն իսկապես շատ բան ունի անելու: Եթե «Մորոմնիզմը» եղել է կաղապարող այդ ուժը, որը տվել է աշխարհին, այնպիսի ինքնատիրապետման հասած, բնավորությամբ՝ խաղաղ այդպիսի մի մարդու, ինչպիսին նա է, կրթված, խելքով, անշուշտ պետք է որ «Մորմոնիզմի» մեջ ի վերջո ինչ որ լավ բան լինի»:[75]

Մեկ այլ քահանա՝ Պատվելի Փրենթիսը, նույնպես գրել է Նախագահ Սնոուի հետ հանդիպման մասին. «Դեմքը, որը խոսում է հոգու մասին, որտեղ տիրում է Խաղաղության Իշխանը նրա լավագույն վկայությունն է: Ժամանակ առ ժամանակ մի կյանքի ընթացքում, որն անցել է մարդկանց ուսումնասիրելով ես գտել եմ այդպիսի վկայություն: Այդպիսին էր դեմքը, որ ես տեսա այսօր: . . . Ես ակնկալում էի տեսնել բանականության, բարեսրտության, արժանապատվության, հանգստության և ուժի արտացոլումը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի

Եկեղեցու Նախագահի դեմքին, բայց երբ ես ներկայացվեցի Նախագահ Լորենզո Սնոուին, մի վայրկյան ես ցնցվեցի։ . . . Նրա դեմքը խաղաղության զորություն էր, նրա ներկայությունը խաղաղության օրհնություն։ Նրա անխոռով աչքերի խորքերում ոչ միայն «լուռ աղոթքի տունն էր», այլ հոգևոր ուժի օթևանը։ Երբ նա խոսում էր «մարգարէական աւելի հաստատ խօսք»ի և անտարակույս հույսի մասին, որը նրանում էր և մնայուն հավատքի, որը հաղթահարել էր վշտալի կյանքի փորձություններն ու դժվարությունները, ես հետևում էի նրա դեմքի վրայով անցնող զգացմունքներին և ուսումնասիրում հմայված ուշադրությամբ արտահայտության նուրբ երանգները, որոնք այնքան հստակորեն խոսում էին նրա հոգու ապրումների մասին, և ամենատարօրինակ մի զգացում համակեց ինձ, որ ես կանգնած էի «սուրբ հողի վրա», որ այդ մարդը չէր գործում քաղաքականության, շահի, կամ նպատակահարմարության հասարակ դրդապատճառներով, այլ «գործում էր խիստ հեռավոր մի կենտրոնից . . . Եթե Մորմոնների Եկեղեցին կարող է առաջ բերել այդպիսի վկաներ, այնքան էլ անհրաժեշտ չի լինի լավ գրողի գրիչը, կամ՝ մեծ քարոզչի պերճախոսությունը»։[76]

Հայտնություն տասանորդի վերաբերյալ

Նախագահ Սնոուն հավանաբար լավագույնս հայտնի է տասանորդի օրենքի համար ստացած հայտնության համար։ 1899 թվականի մայիսին նա հուշում զգաց Եկեղեցու այլ առաջնորդների հետ ճանապարհորդելու Սենթ Ջորջ, Յուտա։ Չնայած նա չգիտեր, թե ինչու նրանք պետք է գնային, նրա եղբայրները ևս արագ արձագանքեցին այդ հուշումին և մոտավորապես երկու շաբաթվա ընթացքում նրանք Սենթ Ջորջում էին։ Մայիսի 17 ին Սենթ Ջորջ ժամանելուց հետո, Նախագահ Սնոուն հայտնություն ստացավ, որ պետք է քարոզեր տասանորդի օրենքը։ Հաջորդ օրը նա կատարեց հետևյալ հայտարարությունը Սրբերին. «Տիրոջ խոսքը ձեզ որևէ նոր բան չի, դա պարզապես այս է. ԺԱՄԱՆԱԿՆ ԱՅԺՄ ԵԿԵԼ Է, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԻ ՀԱՄԱՐ, ՈՎ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է, ՈՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է ԱՊԱԳԱՅԻՆ, ԵՎ ԻՐ ՈՏՔԵՐԸ ՃԻՇՏ ՀԻՄՔԻ ՎՐԱ ԱՄՈՒՐ Է ՊԱՀՈՒՄ, ՏԻՐՈՋ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԻ ԵՎ ԻՐ ԼՐԻՎ ՏԱՍԱՆՈՐԴԸ ՎՃԱՐԻ։Սա Տիրոջ խոսքն է ձեզ և դա կլինի Տիրոջ խոսքը Սիոնի ողջ երկրով մեկ յուրաքանչյուր բնակավայրի»։[77]

Այս ուղերձը Սենթ Ջորջում հայտարարելուց հետո, Նախագահ Սնոուն և նրա ուղեկիցները նույն ուղերձը հայտնեցին հարավային Յուտայի քաղաքներում և այլ համայնքներում, որոնք գտնվում էին Սենթ Ջորջի և Սոլթ Լեյք Սիթիի միջև: Մինչև մայիսի 27-ին իրենց վերադարձը, նրանք անցկացրել էին 24 ժողովներ, որոնց ընթացքում Նախագահ Սնոուն ունեցել էր 26 ելույթ և սեղմել էր 4,417 երեխաների ձեռքը: Նրանք ճանապարհորդել էին 420 մղոն գնացքով և 307 մղոն ձիով և կառքով:[78] Նախագահ Սնոուն ոգևորված էր այդ փորձառությունից և փափագում էր շարունակել տասանորդի օրենքը քարոզելը ողջ Եկեղեցում: «Ես այնքան գոհ եմ այս այցելության արդյունքից, ասաց նա, որ ես մտածում եմ ճանապարհորդել Սիոնի բոլոր ցցերով մոտ ապագայում»:[79] Նա նախագահեց բազմաթիվ ցցի համաժողովներում, որտեղ խոստացավ Սրբերին, որ այս օրենքին հնազանդվելը կնախապատրաստի Եկեղեցու անդամներին ստանալ ֆիզիկական և հոգևոր օրհնություններ:[80] Նա նաև խոստացավ, որ տասանորդի օրենքին հնազանդվելը հնարավոր կդարձնի Եկեղեցուն ազատվել պարտքերից:[81]

Ողջ Եկեղեցով մեկ անդամները արձագանքեցին Նախագահ Սնոուի խորհրդին նորոգված նվիրվածությամբ: 1904 թվականին պատմաբան Օրսոն Ֆ. Ուիթնին, որը հետագայում ծառայելու էր որպես Տասներկուսի Քվորումի անդամ, գրել է. «Շարժման արդյունքն ակնթարթային էր: Տասանորդներն ու նվիրատվությունները եկան ներս թափվելով ճշտությամբ և առատորեն, որը չէր իմացվել տարիներ շարունակ և շատ կողմերից Եկեղեցու վիճակը բարելավվեց և հեռանկարները պայծառացան: Նախագահ Սնոուն նախկինում վայելել էր իր ժողովրդի սերն ու վստահությունը, և այժմ այս բարի զգացումները աճեցին և ուժեղացան»:[82] Նախագահ Հեբեր Ջ. Գրանթը, որը Տասներկուսի Քվորումի անդամ էր, երբ Նախագահ Սնոուն ստացավ տասանորդի վերաբերյալ հայտնությունը, հետագայում հայտարարեց. «Լորենզո Սնոուն Եկեղեցու նախագահություն եկավ, երբ նա ութսունհինգ տարեկան էր, և այն ինչ նա իրականացրեց իր կյանքի հաջորդ երեք տարիների ընթացքում ուղղակի սքանչելի է մտածել: . . . Երեք կարճ տարիների ընթացքում այս մարդը, աշխարհի ըմբռնումներով կարողության տարիքն անց, այս մարդը , որը չէր զբաղվել ֆինանսական գործերով,

որը նվիրաբերել էր իր կյանքը, տարիներ շարունակ աշխատելով Տաճարում, վերցրեց Քրիստոսի Եկեղեցու ֆինանսներն իր ձեռքը՝ կենդանի Աստծո ոգեշնչմամբ և այդ երեք տարիների ընթացքում, փոխեց ֆինանսապես ամեն ինչ՝ խավարից դեպի լույս»:[83]

Իր ծառայության օրերի վերջում բերելով վկայություն

1901 թվականի հունվարի 1- ին Նախագահ Սնոուն մասնակցեց մի հատուկ ժողովի Սոլթ Լեյքի Թաբերնաքլում՝ ողջունելու 20- րդ դարը: Ժողովին մասնակցելու էին հրավիրված բոլոր կրոնների մարդիկ: Նախագահ Սնոուն պատրաստել էր մի ուղերձ այդ իրադարձության կապակցությամբ, բայց նա չկարողացավ անձնապես կարդալ այն, որովհետև խիստ մրսած էր: Բացիչ հիմնից, բացիչ աղոթքից և Թաբերնաքլի Երգչախմբի կողմից երգի կատարումից հետո, Նախագահ Սնոուի որդին՝ ԼեՌոյը, կամգնեց և կարդաց ուղերձը, որը կոչվում էր «Ողջույն աշխարհին Նախագահ Լորենզո Սնոուի կողմից»:[84] Ուղերձի եզրափակիչ խոսքերն արտահայտում էին Նախագահ Սնոուի զգացմուքները, Տիրոջ աշխատանքի վերաբերյալ:

«Երկրի վրա ութսունյոթ տարեկան հասակում, ես զգում եմ լուրջ ցանկությամբ լցված ի օգուտ մարդկության: . . . Ես բարձրացնում եմ իմ ձեռքերը և վար կանչում երկնքի օրհնությունը երկրագնդի բնակիչների վրա: Թող որ վերից արևի շողերը ժպտան ձեզ վրա: Թող որ գետնի գանձերը և հողի պտուղները առաջ գան ազատորեն՝ ձեր բարիքի համար: Թող որ ճշմարտության լույսը հալածի խավարը ձեր հոգիներից: Թող որ արդարակեցությունը շատանա և անօրինությունը նվազի: . . . Թող արդարությունը հաղթանակի և կաշառակերությունը վերանա: Եվ թող առաքինությունը և մաքրաբարոյությունն ու պատիվը գերիշխի, մինչև չարը պարտվի և երկրագունդը մաքրվի ամբարշտությունից: Թող այս զգացմունքները, որպես «Մորմոնների» ձայն Յուտայի լեռներում, առաջ գնա ողջ աշխարհում և թող բոլոր մարդիկ իմանան, որ մեր ցանկությունն ու մեր առաքելությունն է՝ օրհնել և փրկել ողջ մարդկային ցեղը: . . . Թող Աստված փառավորվի հաղթանակում, որը գալիս է մեղքի և ցավի, թշվառության և մահվան վրա: Խաղաղություն լինի բոլորին»:[85]

1901 թվականի հոկտեմբերի 6- ին Նախագահ Լորենզո Սնոուն կանգնեց խոսելու իր ընկեր Սրբերի հետ գերազույն համաժողովի փակիչ նիստում: Նա բավականին հիվանդ էր եղել մի քանի օր շարունակ և երբ նա հասավ ամբիոնին, ասաց. «Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ինձ համար հրաշքի նման մի բան է թվում, որ փորձում եմ այսօր խոսել ձեզ հետ»: Նա կիսվեց Եկեղեցու կառավարման վերաբերյալ մի համառոտ ուղերձով: Ապա ասաց եզրափակիչ խոսքերը, որոնք Եկեղեցու սովորական անդամները հաճախ էին լսել նրանից. «Աստված օրհնի ձեզ: Ամեն»:[86]

Չորս օր հետո Նախագահ Սնոուն մահացավ թոքաբորբից: Սոլթ Լեյքի Թաբերնաքլում թաղման ծիսակատարությունից հետո նա թաղվեց իր սիրելի Բրիգամ քաղաքի գերեզմանատանը:

Հղումներ

1. Lorenzo Snow, in Lycurgus A. Wilson, *Life of David W. Patten, the First Apostolic Martyr* (1900), v.
2. Lorenzo Snow, "The Grand Destiny of Man," *Deseret Evening News,* July 20, 1901, 22.
3. Lorenzo Snow, in *Life of David W. Patten, the First Apostolic Martyr,* v.
4. Lorenzo Snow, in *Life of David W. Patten, the First Apostolic Martyr,* v.
5. Տես Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 1–2:
6. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 2.
7. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, Church History Library, 18.
8. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 2–3.
9. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 3.
10. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 2, 3.
11. Orson F. Whitney, *History of Utah,* 4 vols. (1892–1904), 4:223.
12. Տես *Biography and Family Record of Lorenzo Snow,* 4:
13. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 57–62.
14. Տես Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 32:
15. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 6.
16. Lorenzo Snow, "The Grand Destiny of Man," 22. Լորենզո Սնոույի դարձի մասին ավելին իմանալու համար տես գլուխ 3:
17. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 6.
18. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 33.
19. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 33; see also "The Grand Destiny of Man," 22.
20. Lorenzo Snow, "The Grand Destiny of Man," 22.
21. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 15.
22. Lorenzo Snow, "The Grand Destiny of Man," 22.
23. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 16.
24. Տես *Biography and Family Record of Lorenzo Snow,* 16, 19:
25. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 19.
26. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 30.
27. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 37–38.

28. Letter from Lorenzo Snow to Oliver Snow, quoted in a letter from Eliza R. Snow to Isaac Streator, Feb. 22, 1839, Church History Library.
29. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 37.
30. Letter from Lorenzo Snow to Oliver Snow, quoted in a letter from Eliza R. Snow to Isaac Streator, Feb. 22, 1839.
31. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 19.
32. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 47.
33. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 50–51. Դեպի Անգլիա կատարած ճանապարհորդության մասին ավելի շատ տեղեկությունների համար տես գլուխ 14:
34. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 58–59.
35. Letter from Lorenzo Snow to Heber C. Kimball, Oct. 22, 1841, in Lorenzo Snow, Letterbook, 1839–1846, Church History Library.
36. Letter from Lorenzo Snow to Heber C. Kimball, Oct. 22, 1841, in Lorenzo Snow, Letterbook, 1839–1846.
37. Letter from Lorenzo Snow to George A. Smith, Jan. 20, 1842, in Lorenzo Snow, Letterbook, 1839–1846.
38. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 45.
39. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 65–66.
40. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 72–83.
41. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 91.
42. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 74–75; see also page 73.
43. Lorenzo Snow, Journal and Letterbook, 1836–1845, 49.
44. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 79.
45. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 79.
46. Lorenzo Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 79, 82
47. Lorenzo Snow, in "Laid to Rest: The Remains of President John Taylor Consigned to the Grave," *Millennial Star,* Aug. 29, 1887, 549. Երեց Սնոուի, Ջոզեֆ Սմիթի նահատակության վերաբերյալ ավելի շատ մեկնաբանություններ տես գլուխ 23-ում:
48. Տես Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow,* 84:
49. Joseph Smith, quoted by Lorenzo Snow in *Biography and Family Record of Lorenzo Snow,* 70.
50. Մաունթ Փասգայում ունեցած փորձառության վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար տես գլուխ 7:
51. Տես *Biography and Family Record of Lorenzo Snow,* 94–95:
52. Lorenzo Snow, "Address of Apostle Lorenzo Snow," *Millennial Star,* Feb. 15, 1886, 110.
53. Lorenzo Snow, *Deseret News,* Jan. 14, 1857, 355.
54. Letter from Lorenzo Snow to Eliza R. Snow, in *The Italian Mission* (1851), 5.
55. Letter from Lorenzo Snow to Franklin D. Richards, in *The Italian Mission,* 8–10.
56. Letter from Lorenzo Snow to Brigham Young, in *The Italian Mission,* 10–11.
57. Տես letter from Lorenzo Snow to Brigham Young, in *The Italian Mission,* 15–17:
58. Տես letter from Lorenzo Snow to Brigham Young, in *The Italian Mission,* 17:
59. Letter from Lorenzo Snow to Franklin D. Richards, in *The Italian Mission,* 20.
60. Letter from Lorenzo Snow to Orson Hyde, in *The Italian Mission,* 23.
61. Letter from Jabez Woodard to Lorenzo Snow, in *The Italian Mission,* 26.
62. Quoted in a letter from Jabez Woodard to Lorenzo Snow, in *The Italian Mission,* 26.
63. In Conference Report, Oct. 1994, 97; or *Ensign,* Nov. 1994, 74.
64. Leslie Woodruff Snow, "President Lorenzo Snow, as the Silver Grays of Today Remember Him," *Young Woman's Journal,* Sept. 1903, 391.

65. Երեց Սնոուի Հավայան կղզիներում ունեցած փորձառության վերաբերյալ ավելին կարդալու համար տես գլուխ 4:
66. Երեց Սնոուի Սուրբ Երկրում ունեցած փորձառության վերաբերյալ ավելին կարդալու համար տես գլուխ 24:
67. Heber J. Grant, in Conference Report, June 1919, 10.
68. *Deseret Evening News,* Apr. 3, 1894, 4.
69. Jacob Jensen, quoted in LeRoi C. Snow, "Raised from the Dead," *Improvement Era,* Sept. 1929, 884–86.
70. Տես LeRoi C. Snow, "Raised from the Dead," 886; LeRoi C. Snow, "Raised from the Dead (Conclusion)," *Improvement Era,* Oct. 1929, 975–79:
71. Տես LeRoi C. Snow, "Raised from the Dead (Conclusion)," 980:
72. Տես ԼԵՌՈՅ Ս. Սնոու ,"An Experience of My Father's," *Improvement Era,* Sept. 1933, 677, տես նաև նամակագրություն Երեց Ջոն Ա.Ռիդթսոուի և Նոա Ս.Փոնդի՝ Ալիս Արմեդա Սնոու Կրտսեր Յանգի ամուսնու միջև հոկտ. 30, 1945, և նոյ. 12, 1946, Եկեղեցու Պատմության Գրադարան: Նախագահ Բրիգամ Յանգը սպասեց երեք տարուց ավելի Մարգարե Ջոզեֆ Սմիթի նահատակությունից հետո, մինչև նա վերակազմավորեց Առաջին Նախագահությունը, Նախագահ Ջոն Թեյլորը սպասեց ավելի քան երեք տարի, Նախագահ Յանգի մահից հետո, Նախագահ Վուդրուֆը սպասեց գրեթե երկու տարի, Նախագահ Թեյլորի մահից հետո: Նախագահ Սնոուի տաճարում ստացած աստվածային դրսևորման վերաբերյալ տես գլուխ 20:
73. Lorenzo Snow, in "President Snow in Cache Valley," *Deseret Evening News,* Aug. 7, 1899, 1.
74. Biographical Notes on Lorenzo Snow, comp. LeRoi C. Snow, Church History Library, 2.
75. W. D. Cornell, quoted in "Mormonism in Salt Lake," *Millennial Star,* Sept. 14, 1899, 579.
76. Reverend Prentis, quoted in Nephi Anderson, "Life and Character Sketch of Lorenzo Snow," *Improvement Era,* June 1899, 569–70.
77. Lorenzo Snow, *Millennial Star,* Aug. 24, 1899, 533; տես նաև *Deseret Evening News,* մայիս 17, 1899, 2; *Deseret Evening News,* մայիս 18, 1899, 2. The *Millennial Star* թերթն ասում է, որ Նախագահ Սնոուն ունեցավ այս ելույթը մայիսի 8 ին, բայց ժամանակակից այլ աղբյուրներ ցույց են տալիս, որ նա այն ելույթ է ունեցել մայիսի 18 ին: Նախագահ Սնոուն խոսեց նաև տասանորդի մասին մայիսի 17 ին: Տասանորդի հայտնության վերաբերյալ ավելի լրիվ պատմությունը տես գլուխ 12:
78. Տես "Pres. Snow Is Home Again," *Deseret Evening News,* May 27, 1899, 1:
79. Lorenzo Snow, in "Pres. Snow Is Home Again," 1.
80. Տես, օրինակ, *Deseret Evening News,* June 24, 1899, 3:
81. Տես, օրինակ, *Improvement Era,* Aug. 1899, 793:
82. Orson F. Whitney, *History of Utah,* 4:226.
83. Heber J. Grant, in Conference Report, June 1919, 10.
84. Տես "Special New Century Services," *Deseret Evening News,* Jan. 1, 1901, 5:
85. Lorenzo Snow, "Greeting to the World by President Lorenzo Snow," *Deseret Evening News,* Jan. 1, 1901, 5.
86. Lorenzo Snow, in Conference Report, Oct. 1901, 60, 62.



Իր կյանքի ընթացքում Նաժարեթի Լորենզո Սնոուն ձգտում էր ուսման «ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎևՈ 88.118):

Սովորել հավատքով

«Եղբայրներ և քույրեր, եկեք շարունակենք աշխատել մեր Տեր Աստծո անունով, օրեցօր կուտակելով իմաստություն և խելամտություն, որպեսզի ամեն դեպք, որ տեղի է ունենում կարողանա ծառայել մեր օգտի համար»:

Լորենզո Սնոուի կյանքից

Երբ պատանի Լորենզո Սնոուն չէր կատարում իր ամենօրյա գործերը ընտանեկան ազարակում, նա սովորաբար կարդում էր —«իր գրքի ետևում թաքնված», ինչպես նրա ընտանիքի անդամներն էին ասում: Ըստ նրա քույր Էլիզայի «նա հավերժ ուսանող էր, ինչպես տանը այնպես էլ դպրոցում»:[1] Ուսման հանդեպ նրա սերն աճեց, երբ նա մեծացավ: Նա ասել է, որ փաստորեն կրթությունը նրա պատանեկության «առաջնորդող աստղն» էր:[2] Միջնակարգ դպրոց հաճախելուց հետո, նա սովորեց Օբերլին քոլեջում՝ մասնավոր դպրոց Օհայո, Կիրթլենդում, որտեղ նա ուսումնասիրեց եբրայերեն մի դասարանում, ուր ընդգրկված էին Մարգարե Ջոզեֆ Սմիթը և շատ Առաքյալներ:

Մկրտվելուց և հաստատվելուց հետո, նա վերջնականապես իր հետաքրքրությունն ուղղեց ավելի շատ «Հոգու կրթության»,[3] քան՝ «գրքային ուսումնառության» վրա:[4] Այս զբաղմունքում նա երբեք չկորցրեց ուսման հանդեպ իր ծարավը: Օրինակ, նա 80 տարեկան էր և ծառայում էր որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, երբ նա կանգնեց Սրբերի առջև 1894 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ: Խոսելով իր ավելի քիչ փորձառու եղբայրների այդ օրվա ավելի վաղ ունեցած ելույթների մասին, նա ասաց.«Ուսուցանվեցին որոշ գաղափարներ, որոնց մասին ես երբեք չէի մտածել նախկինում և դրանք շատ օգտակար էին»:[5] Վեց տարի անց, երբ նա Եկեղեցու Նախագահն էր, նա մասնակցում էր մի համաժողովի,

որը վարում էր Կիրակնօրյա Դպրոցի կազմակերպությունը: Մյուսների խոսքը լսելուց հետո, նա վերջապես կանգնեց ամբիոնում: Իր ուղերձը նա սկսեց ասելով. «Ես կատարելապես հրճվում եմ և զարմացած եմ իմ տեսածի և լսածի վրա ». . . Ես իսկապես կարող եմ ասել, որ ինքս ուսուցանվեցի և եթե ես՝ ութսունվեց տարեկան մարդ լինելով, կարողացա ուսուցանվել, չեմ տեսնում պատճառ, թե ինչու ընդհանրապես չափահասները ևս չեն կարող օգուտ, և նաև՝ բավականություն ստանալ ձեր ժողովներին մասնակցելուց»[6] [տես առաջարկ 1, էջ 51]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Ուսումնառությունը պահանջում է հավատք, ուժերի լարում և հաստատակամություն

Կրոնի այս համակարգում, որը ես և դուք ընդունել ենք, կա հրաշալի և փառահեղ մի բան և ամեն օր սովորելու մի նոր բան, որը մեծ արժեք ունի: Եվ դա չէ միայն մեր արտոնությունը, այլ անհրաժեշտ է, որ մենք յուրացնենք այս բաները և կուտակենք այս նոր գաղափարները:[7]

Մորմոնիզմի ողջ գաղափարը բարելավումն է՝ մտավորապես, ֆիզիկապես և հոգևորապես: Ոչ մի կիսավարտ կրթություն բավարար չէ Վերջին Օրերի Սրբի համար:[8]

Այս երկրի վրա երկար ապրելն ու փորձառություն և գիտելիք ձեռք բերելն օգտակար է, որը գալիս է այդ անելուց, քանզի Տերն ասել է մեզ, որ ինչ գիտելիք մենք ձեռք բերենք այս կյանքում մեզ հետ կբարձրանա հարության ժամանակ և որքան ավելի շատ գիտելիք և խելամտություն է մարդ ձեռք բերում այս կյանքում, ավելի մեծ առավելություն նա կունենա գալիք կյանքում [տես ՎևՈՒ 130.18-19]:[9]

Կան ոմանք, ովքեր չեն սովորում և չեն բարեփոխվում այնքան արագ, որքան կարող էին, որովհետև նրանց աչքերն ու սրտերը Աստծո վրա չեն, նրանք չեն մտածում, ոչ էլ ունեն այն գիտելիքը, որը կարող էին ունենալ, նրանք խիստ շատ բան են բաց թողնում, որը նրանք կկարողանային ստանալ: Մենք պետք է ձեռք բերենք գիտելիք նախքան մշտատև երջանկություն ձեռք բերելը, մենք պետք է շատ լավ տեղյակ լինենք Աստծո բաներին:

«Հոգու դաստիարակությունը» արժանի է մեր «մեծագույն ուշադրությանը»:

Չնայած մենք կարող է անտեսենք մեր ժամանակի կարգավորումը, մեր մտավոր ընդունակությունների պայծառացումը, մենք ինչ որ մի ժամանակ ստիպված կլինենք դա անել: Մենք այնքան շատ ճանապարհ ունենք անցնելու և եթե մեզ չի հաջողվում այսօր ճանապարհորդել, մենք ստիպված կլինենք նույնքան ավելի շատ ճանապարհորդել՝ վաղը:[10]

Պետք է լինի մտքի աշխատանք, այն տաղանդների ուժերի լարում, որոնք Աստված է տվել մեզ, դրանք պետք է գործի դրվեն: Ապա լուսավորված լինելով Սուրբ Հոգու պարգևով և զորությամբ, մենք կարող ենք ստանալ այդ գաղափարները և այն խելամտությունը և այն օրհնությունները, որոնք անհրաժեշտ են նախապատրաստելու մեզ ապագայի համար, այն իրադարձությունների համար, որոնք պիտի գան:

Նույն սկզբունքը կկիրառվի Աստծո բաների հետ կապված բոլոր մեր գործողություններում: Մենք պետք է լարենք մեր ուժերը: . . . Առանց ինքներս մեզ գործի դնելու, այս պարապ մնալը ոչ մի օգուտ չունի, եթե մենք մնանք կատարելապես չեզոք, ոչինչ չի իրականանա: Յուրաքանչյուր սկզբունք, որը

հայտնի է դարձվում երկնքից մեր օգտի համար է, մեր կյանքի համար, մեր փրկության և մեր երջանկության համար։[11]

Մենք կարծում ենք, որ գուցե անհրաժեշտ չէ, որ մենք լարենք մեր ուժերը՝ պարզելու համար թե ինչ է Աստված պահանջում մեր ձեռքից, կամ այլ խոսքով ասած որոնել այն սկզբունքները, որոնք Աստված է հայտնել, որոնց միջոցով մենք կարող ենք ստանալ շատ կարևոր օրհնություններ։ Կան պարզորեն և հստակորեն հայտնի դարձված սկզբունքներ, որոնք հաշվի են առնված Վերջին Օրերի Սրբերին վեհացնելու և նրանց մեծ նեղությունից և անախորժությունից պահպանելու համար, սակայն մեր կողմից դրանք սովորելու և համապատասխանեցնելու հաստատակամության բացակայության պատճառով, մենք ձախողվում ենք ստանալ այն օրհնությունները, որոնք կապված են դրանց հնազանդվելու հետ։[12]

Եկեք շարունակենք եղբայրներ և քույրեր, աշխատել Տիրոջ, մեր Աստծո անունով, կուտակելով իմաստություն և խելամտություն օրեց -օր, որ յուրաքանչյուր դեպք, որը պատահում է, կարողանա ծառայել մեր օգտին և աճեցնել մեր հավատքն ու խելամտությունը[13] [տես առաջարկ 2, էջ 51]։

Հոգու դաստիարակությունը արժանի է մեր մեծագույն ուշադրությանը։

Կա մի տեսակի դաստիարակություն, որը բոլորի մեծագույն ուշադրությանն է արժանի և որով բոլորն են պարտավոր զբաղվել՝ դա Հոգու դաստիարակությունն է։[14]

Մի փոքրիկ հոգևոր գիտելիքը շատ ավելի լավ է, քան սոսկ կարծիքներն ու հասկացությունները և գաղափարները, կամ էլ նույնիսկ խիստ մանրամասնորեն մշակված փաստարկները, մի փոքրիկ հոգևոր գիտելիքը առավել կարևոր է և արժանի մեծագույն ուշադրության։[15]

Մենք չպետք է անտեսենք մեր հոգևոր բարեփոխումները, մինչ ձգտում ենք աշխարհիկ հարստությունների։ Մեր պարտքն է ամեն ջանք գործադրել լույսի և գիտելիքի սկզբունքներում մեր առաջխաղացման նպատակի համար, ինչպես նաև մեծացնելով մեր շուրջը աշխարհիկ օրհնություններ և այս կյանքի հարմարությունները։[16]

Եթե մեր մտքերը խիստ միակողմանի են, չափից ավելի ուշադրություն դարձնելով երկրային բարիքների ձեռքբերմանը, ի անտեսումն հոգևոր հարստության, մենք իմաստուն տնտեսներ չենք[17] [տես առաջարկ 3, էջ 51]:

Մենք օգուտ ենք քաղում լսելով ավետարանի սկզբունքները կրկին ու կրկին:

Դուք հավանաբար լսել եք (որոշ սկզբունքներ) հարյուրավոր անգամներ, և այնուամենայնիվ թվում է անհրաժեշտ է, որ այս բաներն ուսուցանվեն մեզ կրկին և կրկին: Մյուս կողմից դա ինչ որ տեղ նման է նրան, ինչ ես գտնում եմ Վարդապետություն և Ուխտեր Գիրքը կարդալիս: Ամեն անգամ, երբ ես կարդում եմ որևէ հայտնություն այդ գրքում ես ինչ որ նոր գաղափար եմ ստանում, չնայած ես կարող է կարդացած լինեմ այն շատ և շատ անգամներ: Ենթադրում եմ որ սա նաև ձեր փորձառությունն է, եթե դա այդպես չէ, այն խիստ տարբեր է իմից:[18]

Մենք նույն վիճակում ենք, ինչպես այբուբեն սովորող երեխան է: Ուսուցիչն ասում է երեխային.«Ահա *ա* տառը, փորձիր և հիշիր այն: Երեխան պատասխանում է. «Այո, ես կփորձեմ հիշել այն»: Ուսուցիչն անցնում է մյուս տառին, և ասում «Սա *բ* տառն է, ապա նայիր դրան և փորձիր հիշել այն: «Օ, այո»,- ասում է երեխան: Ապա ուսուցիչը վերադառնում է *ա* տառին «Ի՞նչ տառ է սա»: Երեխան մոռացել է այն: Ուսուցիչը մեկ անգամ ևս ասում է երեխային, որ սա *ա* տառն է և վերադառնում *բ* տառին և հայտնաբերում, որ երեխան դա էլ է մոռացել և կրկին պետք է սովորեցնի *բ* տառը: Սա առավոտյան է: Կեսօրին երեխային նորից են կանչում և հարցնում և ուսուցիչը դարձյալ գտնում է, որ երեխան մոռացել է տառերը և կրկին պետք է ուսուցանվի: Այսպիսով դասը պիտի կրկնվի նորից ու նորից, այնքան շատ մինչև, եթե ուսուցիչը փորձառություն ունեցած չլիներ և իմանար ինչ ակնկալեր, նա անպայման պիտի հուսալքվեր: Դա նույնն է Վերջին Օրերի Սրբերի հետ: Չնայած մենք գուցե հոգնենք նույն բաները կրկնվելուց, դա պետք է լինի, որպեսզի մենք կարողանանք խորապես յուրացնել: Մենք պետք է սովորենք դրանք: Ես գիտեմ, որ Վերջին Օրերի Սրբերը ի վերջո կսովորեն Աստծո բոլոր օրենքներն ու պատվիրանները և կսովորեն խստորեն

հետևել դրանց։ Բայց մենք դեռ չենք հասել այդ կետին[19] [տես առաջարկ 4, էջ 51]։

Երբ հավաքվում ենք սովորելու ավետարանը, ինչպես ուսուցիչը այնպես էլ ուսանողը, Հոգու առաջնորդության կարիքն ունեն։

Երբ [ուսուցիչը] կանգնում է մարդկանց առջև նա պետք է դա անի հասկանալով, որ նա կանգնած է նրանց առջև գիտելիք հաղորդելու նպատակով, որ նրանք կարողանան ստանալ ճշմարտություն իրենց հոգիներում և շենանան արդարակեցությամբ՝ շարունակելով ստանալ լույս, առաջադիմելով սրբության սկզբունքների իրենց դաստիարակության մեջ։

Սա չի կարող արվել, բացի մտքի աշխատանքից, հավատքի էներգիայով և որոնելով ողջ մեր սրտով Տիրոջ, մեր Աստծո Հոգին։ Դա նույնն է լսողների համար, մինչև հատուկ ուշադրություն չդարձվի նրան, ինչ պահանջվում է իրենցից ժամանակ առ ժամանակ նրանց կողմից, ովքեր դիմում են մարդկանց այս ամբիոնից, և մինչև մարդիկ չաշխատեն իրենց մտքերում ողջ իրենց զորությամբ և ողջ իրենց ուժով իրենց աղոթքներում Տիրոջ առջև, նրանք չեն ստանա այն բարին և օգուտը իրենց համար, որը նրանք պարտավոր են ստանալ։[20]

Այն, ինչ կամենում եմ Վերջին Օրերի Սրբերից, այն է, որ այս համաժողովի ընթացքում, երբ Երեցները վեր կենան դիմելու մեզ, մեր հավատքն ու մեր աղոթքները գործադրվեն յուրաքանչյուրի համար, ով խոսում է, որ նա ասի այնպիսի բաներ, իսկ մենք կարողանանք ունենալ հոգին ընդունելու այդպիսի բաները, ինչպես օգտակար կլինի բոլորիս համար։ Սա մեր արտոնությունն է և մեր պարտականությունը։ Մենք պատահականորեն չենք եկել այստեղ, մենք եկել ենք այս համաժողովին ակնկալելով ստանալ որոշ բան, որը շահավետ կլինի մեզ համար։[21]

Դուք պետք է խնդրեք Տիրոջը թույլ տալ [խոսնակներին] ասել այն բաները, որոնք դուք կամենում եք իմանալ, որ նրանք կարողանան առաջարկել ձեզ մի բան, որը ձեզ համար որոշ չափով շահավետ կլինի։ Եթե դուք որևէ ցանկություն ունեք իմանալու որոշակի հարցեր, որոնք դուք չեք հասկանում, աղոթեք,



Մենք պետք է «նախապատրաստենք մեր սրտերն ընդունելու և օգուտ քաղելու» այն ուղերձներից, որոնք տրվում են գերագույն համաժողովներում և մյուս ժողովներում:

որ [նրանք] ասեն որոշ բան, որը կլուսավորի ձեր միտքն այն բանի վերաբերյալ, որն անհանգստացնում է ձեզ, և մենք կունենանք հրաշալի և փառահեղ Համաժողով, ավելի լավը, որ երբևիցե ունեցել ենք նախկինում: Որքան էլ որ տարօրինակ թվա, մեր վերջին Համաժողովը միշտ թվում է լավագույնը և թող որ դա այդպես լինի, իսկ դուք եղբայրներ և քույրեր, թող ձեր սրտերը բարձրանան դեպի Տերը և գործադրեք հավատք, մինչ մեր եղբայրները խոսում են ձեզ հետ: Մենք չենք հիասթափվի, իսկ դուք չեք գնա տուն, դուք չեք հեռանա այս Համաժողովից, առանց զգալու, որ դուք մեծապես և առատորեն օրհնվել եք:[22]

Կարծում եմ ունկնդիրներից շատերը, ովքեր այժմ իմ առջևում են, կտրել անցել են երկար տարածություն հանդիպելու մեզ հետ այս գերագույն համաժողովում, և բոլորը մղվել են հավաքվելու այստեղ մաքուր դրդապատճառներից՝ իրենց բարեփոխելու և կատարելագործելու ցանկությունից՝ այն հարցերի վերաբերյալ, որոնք կապված են Աստծո թագավորությունում իրենց օգտակարության հետ: Որպեսզի մենք չհիասթափվենք սրանում, անհրաժեշտ է դառնում, որ մենք նախապատրաստենք մեր սրտերն ընդունելու և օգուտ քաղելու այն առաջարկներից, որոնք կարող են արվել խոսնակների կողմից Համաժողովի առաջընթացին համընթաց, որոնք կարող են

հուշվել Տիրոջ Հոգու կողմից։ Ես մտածել եմ և դեռևս մտածում եմ, որ մեր խրատված լինելն այնքան կախված չէ խոսողից, որքան մեզանից։[23]

Երբ հավաքվում ենք միասին, . . . մեր արտոնությունն է դառնում հրահանգ ստանալ այն անձանցից, ովքեր դիմում են մեզ, և եթե մենք չենք ստանում, մեղավորությունն ընդհանուր առմամբ մերն է։[24]

Ես նկատել եմ մարդկանց մոտ, ինչը վերագրել եմ թուլության, որ նրանցից ոմանք հավաքվում են միասին ավելի շատ այն նպատակով, որ բավականություն ստանան խոսնակի հռետորությունից, հիանան այն ոճով, որով նա դիմում է իրենց, կամ գալիս են այն նպատակով որ տեսնեն խոսողին կամ խորհրդածություններ անեն նրա բնավորության վերաբերյալ, . . . քան հրահանգներ ստանալու նպատակով, որը նրանց բարիք կանի և կշենացնի նրանց արդարակեցության մեջ . . .

. . . Եթե մենք չենք գործադրում այն ընդունակությունները, որոնք տրվել են մեզ և ստանում Տիրոջ Հոգին, ուրեմն քիչ տեղեկություններ կստացվեն խոսնակներից, չնայած մեծ նշանակության և արժեքի գաղափարներ կարող են հաղորդվել։ Չնայած գաղափարները կարող են հաղորդվել խիստ ջարդված ոճով, եթե մարդիկ լարեն իրենց ուժերը, . . . նրանք շուտով կիմանան, որ նրանք երբեք չեն վերադառնա ժողովից առանց իրենց մտքերի պատասխանի, առանց օգուտ քաղելու խոսողներից։[25]

Ոչ միշտ է երկար ելույթը տալիս Վերջին Օրերի Սրբերին այն, ինչ ամենաօգտակարն է, բայց տրված տարբեր ելույթներից մենք կարող ենք կուտակել որոշ գաղափար կամ որևէ սկզբունք կարող է առկայծել մեր հասկացողության մեջ, որը մեզ արժեքավոր կերևա հետագայում։[26]

Մենք հավաքվել ենք Աստծուն երկրպագելու նպատակով և այն գործերը կատարելու, որոնք անհրաժեշտ են ճշմարտության գործն առաջ տանելու համար երկրի վրա։ Հրահանգների բնույթը կախված կլինի մեծապես մեր մտքերի վիճակից։ Մենք այնտեղից պետք է հանենք մեր աշխարհիկ գործերը և նվիրենք մեր ուշադրությունը այս Համաժողովի նպատակին։[27]

Մեր տեղեկության և հոգևոր գիտելիքի համար մենք կախված ենք ամբողջովին, այնքան կախված ենք զգում Տիրոջից։

Եվ համաձայն մեր հավատքի կիրառման չափի, մենք ստանում ենք տեղեկություն Տիրոջ ծառաների հետ հաղորդակցվելու միջոցով։ . . . Նա դիմում է մեզ իր ծառաների միջոցով, ովքեր դիմում են մեզ այս բնույթի առիթներով, երբ մենք հավաքվում ենք միասին երկրպագելու մեր Աստծուն[28] [տես առաջարկ 5, էջ ստորև]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք էջեր 43–44-ը, որոնք նկարագրում են Նախագահ Մնոուի կյանքի ընթացքում սովորելու համար գործադրած ջանքերը։ Ի՞նչն է մարդուն մղում շարունակել ուսումը իր ողջ կյանքի ընթացքում։ Մտածեք ուսման նկատմամբ ձեր սեփական մոտեցման մասին և խորհեք ուղիներ, որոնց միջոցով դուք կկարողանաք շարունակել ուսումը ձեր ողջ կյանքի ընթացքում։
2. Ուսումնասիրեք Նախագահ Մնոուի խորհուրդը ավետարանի յուրացման ժամանակ ուժերը լարելու և հաստատակամության մասին (էջեր 44–45)։ Ի՞նչ ուղիներով է ձեր անձնական յուրացումը փոխվում, երբ դուք իսկապես լարում եք ձեր ուժերը։ Ինչպե՞ս կարող ենք օգնել երիտասարդությանը լարել իրենց ուժերը սովորելու համար։
3. Նախագահ Մնոուն քաջալերեց Սրբերին հետամուտ լինել «Հոգու դաստիարակությանը» (էջ 46)։ Ի՞նչ է նշանակում սա ձեզ համար։ Ի՞նչ արդյունք կարող է լինել, երբ մեր դաստիարակությունը խիստ կենտրոնացած է աշխարհիկ հարստությունների վրա։
4. Ինչպե՞ս է այբուբենը սովորելու երեխայի օրինակը (էջեր 47–48) կապված ավետարանը սովորելու մեր ջանքերի հետ։
5. Ինչպե՞ս կարող ենք նախապատրաստել մեր սրտերը սովորելու Եկեղեցու դասընթացներում և ժողովներում։ Ինչպե՞ս կարող ենք լարել մեր ուժերը սովորելու, նույնիսկ,

երբ մենք պարզապես լսում ենք մի ելույթ հաղորդության ժողովում կամ համաժողովում (օրինակների համար տես էջեր 48–50):

Սոնչվող Սուրբ գրություններ. 2 Նեփի 9.28–29, 28.30, Մոսիա 2.9, ՎևՈՒ 50.13–22, 88.118, 122, 136.32–33

Օգնություն ուսուցչին. «Սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խոսքերը ուսուցանելիս մեզ օգնելու համար, Եկեղեցին լույս է ընծայել դասագրքեր և այլ նյութեր: Բացատրությունների և այլ տեղեկատվական նյութերի համար խիստ անհրաժեշտություն չկա» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում: A Resource Guide for Gospel Teaching* [1999], 52):

Հղումներ

1. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 3.
2. In *Biography and Family Record of Lorenzo Snow,* 28.
3. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 31, 1868, 2.
4. In *Biography and Family Record of Lorenzo Snow,* 28.
5. "Glory Awaiting the Saints," *Deseret Semi-Weekly News,* Oct. 30, 1894, 1
6. "Tithing," *Juvenile Instructor,* Apr. 1901, 214–15.
7. In Conference Report, Apr. 1898, 13.
8. "'Mormonism' by Its Head," *The Land of Sunshine,* Oct. 1901, 257.
9. In "Old Folks Are at Saltair Today," *Deseret Evening News,* July 2, 1901, 1; message prepared by Lorenzo Snow and read by his son LeRoi.
10. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.
11. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
12. *Deseret News: Semi-Weekly,* July 16, 1878, 1.
13. *Deseret News: Semi-Weekly,* Dec. 7, 1869, 7.
14. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 31, 1868, 2.
15. *Deseret News,* Nov. 22, 1882, 690.
16. *Deseret News,* July 19, 1865, 330.
17. *Deseret News,* July 19, 1865, 330.
18. *Deseret Semi-Weekly News,* Mar. 30, 1897, 1.
19. *Deseret Semi-Weekly News,* July 28, 1899, 10; italics added.
20. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
21. In Conference Report, Oct. 1899, 2.
22. In Conference Report, Oct. 1900, 5.
23. In Conference Report, Oct. 1898, 1–2.
24. In Conference Report, Apr. 1898, 61.
25. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
26. In Conference Report, Apr. 1899, 2.
27. *Deseret News,* Apr. 11, 1888, 200; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1888 general conference.
28. *Salt Lake Daily Herald,* Oct. 11, 1887, 2.

Մկրտություն և Սուրբ Հոգու պարգև

«Այս էր . . . առաքյալների օրերում Ավետարանական կարգը՝ հավատք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարություն, ընկղմամբ մկրտություն մեղքերի թողության համար և ձեռնադրմամբ Սուրբ Հոգու ստացում: Երբ այս կարգը հասկացվում էր և պատշաճորեն հետևվում, անմիջապես հաջորդում էին զորություն, պարգևներ և փառահեղ արտոնություններ»:

Լորենզո Սնոուի կյանքից

Նույնիսկ վկայություն ստանալուց հետո, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, Լորենզո Սնոուն գոտեմարտում էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն միանալու որոշման հետ: Նա գիտեր, որ եթե Եկեղեցու անդամ դառնար նա ստիպված կլիներ հրաժարվել իր աշխարհիկ ցանկություններից: Բայց հետևելով մի փորձառության, որը նա կոչեց իր «սրտի և հոգու ամենակատաղի պայքար», նա համաձայնվեց մկրտվել: Նա վերհիշում է. «Տիրոջ օգնությամբ, քանի որ ես անկասկած զգում եմ պետք է որ Նա ինձ օգնած լիներ, ես դրեցի իմ հպարտությունը, աշխարհիկ ձգտումները զոհասեղանի վրա, և խոնարհ ինչպես երեխան, գնացի մկրտության ջրերը և ստացա ավետարանի արարողությունները: . . . Ես ստացա մկրտությունը և ձեռնադրման արարողությունը մեկի կողմից, որը հայտարարեց, որ ուներ աստվածային իշխանություն»: [1]

Անձնապես ստանալով այդ օրհնությունը, նա մտահոգված էր կիսվել դրանով ուրիշների հետ: Երբ Իտալիայում միսիոներ էր, մի նամակում նա գրել է.«Աստծո թագավորության դուռը բացելը

Հիսուս Քրիստոսը օրինակ ցույց տվեց մեզ, երբ Նա մկրտվեց ընկղմամբ:

երկրների մեծ մասում ուղեկցվում էր շատ անախորժություններով և դժվարություններով: Դրանից մեզ էլ քիչ բաժին չի հասել: Ուստի մեծ էր բավականությունը, որով վար իջա ջրի մեջ հավերժական կյանքի համար, առաջին թեկնածուի հետ: Երբեք մեզ համար այդքան քաղցր չէր թվացել Իտալերեն լեզուն, ինչպես այդ հետաքրքիր ժամանակաշրջանում, երբ ես սպասավորեցի այդ սրբազան արարողությունը, և բացեցի մի դուռ, որը *ոչ մի մարդ չի կարող փակել»*[2] [տես առաջարկ 1, էջ 66]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Մենք օրհնություններ ենք ստանում, երբ հետևում ենք այն սկզբունքներին, որոնք Նա է հաստատել:

Կան Աստծո կողմից հաստատված որոշակի սկզբունքներ, որոնց հասկանալն ու պահպանելը կդնի մարդկանց հոգևոր գիտելիքի, պարգևների և օրհնությունների տեր լինելու վիճակում: Աշխարհի վաղ դարերում, նաև առաքյալների օրերում մարդիկ տեր դարձան հոգևոր զորությունների և տարբեր արտոնությունների՝ ձեռք բերելով հասկացողություն և հավատարմորեն կատարելով որոշակի կանոններ, որոնք Տերն էր հաստատել: Ինչպես օրինակ Աբելը՝ Ադամի որդիներից մեկը, ձեռք բերելով տեղեկություն, որ զոհաբերություններ մատուցելը Աստծո կողմից հաստատված կարգ էր, որի միջոցով մարդիկ կարող էին օրհնություն ստանալ, նա գործի անցավ, պահպանեց կարգը, զոհաբերություն կատարեց, որի միջոցով նա ձեռք բերեց Ամենաբարձրյալի փառահեղ դրսևորումները [տես Ծննդոց Դ.4, Եբրայեցիս ԺԱ.4]:

Այսպիսով, երբ անդրջրհեղեղյանները [մարդիկ, ովքեր մեծ ջրհեղեղից առաջ էին] անձնատուր եղան այլասերության և մոտենում էր ժամանակը, երբ կործանում պիտի գար նրանց վրա, Տերը հայտնի դարձրեց մի ուղի, որով արդարները կկարողանային ազատվել, հետևաբար, բոլոր նրանք ովքեր հասկացան և հետևեցին ուղուն, համոզված էին, որ ձեռք կբերեն խոստացված օրհնությունը [տես ԾննդոցԶ– Ը]:

Հեսուն, նախքան Երիքովի տիրապետությունը վերցնելը, պետք է հետևեր Աստծո կողմից նշանակված որոշակի քայլերի:

Պատվիրանների համաձայն պատշաճորեն կատարելով քայլերը, քաղաքն անմիջապես ընկավ նրա տիրապետության տակ [տես Հեսու Զ]։

Մեկ այլ դեպք՝ Նէեմանի, ասորական զորագլխի դեպքը, երևում է նա տառապում էր բորոտությամբ և լսելով Եղիսե մարգարեի մասին նա դիմեց նրան այդ հիվանդությանից ազատվելու համար։ Մարգարեն ունենալով Սուրբ Հոգին իր վրա, որը հաղորդում է Աստծո Միտքը, տեղեկացրեց նրան, որ լվացվելով Հորդանանի ջրերում յոթ անգամ, նա կլավանար։ Սկզբում Նէեմանը մտածեց, որ դա խիստ հասարակ բան էր և դժգոհ էր ու տրամադրված չէր կատարել, օգտագործել այդքան հասարակ միջոցը։ Ավելի պատշաճ մտածելուց հետո, այնուամենայնիվ, խոնարհեցնելով իրեն, նա առաջ գնաց ենթարկվելով կանոններին, երբ ահա, անմիջապես հաջորդեց օրհնությունը [տես Բ Թագավորաց Ե.1–14] . . .

Երբ սկսվեց Ավետարանի տնտեսությունը, պարգևներն ու օրհնությունները ձեռք էին բերվում նույն սկզբունքներով, այսինքն որոշակի հաստատված կանոններին հնազանդվելու միջոցով։ Տերը դեռ նշում էր որոշակի գործողություններ, խոստանալով բոլոր նրանց ովքեր կանեն դրանք, որոշ առանձնահատուկ արտոնություններ, և երբ այդ գործողությունները ի կատար էին ածվում, հետևելով յուրաքանչյուր մանրամասնի, ապա այդ խոստացված օրհնություններն անկասկած իրականացվում էին։[3]

Մկրտության և հաստատման արտաքին արարողությունները անքակտելիորեն կապված են հավատքի և ապաշխարության ներքին աշխատանքների հետ։

Ոմանք զուր են պատկերացնում, որ Ավետարանի տնտեսության ժամանակ պարգևներն ու օրհնությունները ձեռք են բերվում ոչ թե արտաքին ծեսերի միջոցով կամ արտաքին գործերով, այլ միայն հավատքի և ապաշխարության միջոցով, ֆիզիկականից անկախ մտավոր գործողությունների միջոցով։ Բայց մի կողմ դնելով ավանդույթները, սնահավատությունը և մարդկային հավատամքները, մենք կնայենք Աստծո խոսքը,

Պենտեկոստեի օրը մոտ 3,000 մարդ մկրտվեց:

որտեղ մենք կհայտնաբերենք, որ արտաքին գործերը կամ արտաքին արարողությունները Ավետարանի տնտեսության ներքո անքակտելիորեն կապված են ներքին աշխատանքների հետ, հավատքի և ապաշխարության հետ: Ի ապացույց սրա ես կներկայացնեմ հետևյալ դիտարկումը.

Փրկիչն ասաց. «Եւ ի՞նչու էք ինձ Տէր, Տէր կոչում, և չէք անում այն, որ ասում եմ» [Ղուկաս Զ.46]: Կրկին նա ասել է. «Ով որ իմ այս խօսքերը լսում է եւ նորանց կատարում, կնմանացնեմ նորան մի մարդի որ իր տունը շինեց ժայռի վերայ» [տես Մատթեոս Է.24] «Ով որ հաւատաց եւ մկրտուեցաւ կփրկուի» [Մարկոս ԺԶ.16]: Նա նմանապես ասում է.«Եթե մէկը ջրից եւ Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել» [Հովհաննես Գ.5]: Մեր Փրկչի այս ասածները պահանջում են մարդկանց կատարել արտաքին արարողություններ, որպեսզի ստանան իրենց փրկությունը:

Պենտեկոստեի օրը Պետրոսն ասաց շրջապատի բազմությանը «Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուիս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, եւ Սուրբ Հոգու պարգեւը կընդունիք» [տես Գործք Բ.38]: Այս

մարգարեական մտքից մենք սովորում ենք, որ մարդիկ պետք է կատարեին արտաքին աշխատանք՝ մկրտություն ջրում, որպեսզի կարողանային ստանալ մեղքերի թողություն, իսկ հետագայում Սուրբ Հոգու պարգևը։ Բայց նախքան արտաքին աշխատանքը կատարելը, պետք է կատարվի ներքին աշխատանքը՝ հավատքն ու ապաշխարությունը։ Հավատքն ու ապաշխարությունը գնում են մկրտությունից առաջ, իսկ մկրտությունը մեղքերի թողությունից և Սուրբ Հոգու ընդունումից առաջ. . .

Ոմանք սխալ են համարում մկրտությունը դասել Աստծո կողմից կարգված հիմնական սկզբունքների շարքում, որը պետք է կատարվի մեղքերի թողություն ստանալու համար։ Ի պատասխան, մենք ասում ենք, որ Փրկիչը և առաքյալներն այդպես են արել մեզանից առաջ, ուստի մենք պարտավորված ենք զգում հետևել նրանց օրինակին։ . . . Մկրտությունը . . . իսկապես այժմ հեռացնում է մեր հոգիները մեղքերից և աղտոտվածություններից՝ մեծ քավության հանդեպ հավատքի միջոցով։ . . .

Պարզորեն ցույց է տրված, որ արտաքին արարողությունները պետք է կատարվեն, ինչպես նաև հավատքը և ապաշխարությունը, որպեսզի ստանանք Ավետարանի արտոնությունները[4] [տես առաջարկ 2, էջ 66]։

Մկրտությունը սպասավորվում է ընկղմամբ, իսկ Սուրբ Հոգու շնորհումը՝ ձեռնադրմամբ։

Ջրի մեջ մկրտությունը Քրիստոսի ավետարանի մի մասն է հանդիսանում, ուստի մենք նկատում ենք, որ Աստծո ծառաները վաղ դարերում շատ բծախնդիր էին դրա սպասավորումը կատարելիս։ . . .

Մենք այժմ մի պահ կզբաղվենք ջանալով ձեռք բերել մի ճշգրիտ պատկերացում այն ձևի վերաբերյալ, որով սպասավորվում էր մկրտությունը։ Լիովին ակնհայտ է, որ կա միայն մեկ ուղի կամ ձև, որով այս արարողությունը կատարվում էր և այդ ձևը բացատրվել էր առաքյալներին և խստորեն հավատարիմ մնացել դրան բոլոր իրենց սպասավորումներում։ Որպեսզի այս նյութի վերաբերյալ ձեռք բերենք ճշգրիտ պատկերացում, անհրաժեշտ կլինի անդրադանալ այն հանգամանքներին, որի առկայությամբ մկրտությունը սպասավորվել է։

Հովհաննես [Մկրտիչի] մասին ասվում է, որ նա մկրտում էր Այենոնում, որովհետև այնտեղ շատ ջուր կար [տես Հովհաննես Գ.23], ուրեմն եթե ցողումը լիներ ձևը, ենթադրում ենք, որ նա հազիվ թե Այենոն գնար, քանի որ այնտեղ շատ ջուր կար, քանզի շատ քիչ ջրով իրականում, կարելի էր ցողել ողջ Հուդան, որը նա կարող էր ձեռք բերել առանց ճանապարհորդություն կատարելու դեպի Այենոն: Մեզ ասվել է նաև, որ նա մկրտել է Հորդանանում և այդ արարողությունը մեր Փրկչին սպասավորելուց հետո, Նա դուրս եկավ ջրի միջից, արտահայտիչ ձևով նշելով, որ նա գտնվել էր ջրի տակ, որպեսզի արարողությունը հնարավոր լիներ սպասավորել ճիշտ ձևով [տես Մատթեոս Գ.16]: Բացի այդ խոսվում է մի ներքինու մասին, որ նա իջավ ջուրը Փիլիպպոսի հետ, իսկ հետո դուրս եկավ ջրի միջից [տես Գործք Ը.26-38], այսպիսով պետք է ընդունվի ամեն մեկի կողմից, ով որևէ հավակնություն ունի տրամաբանության և հետևողականության, այն բանի վերաբերյալ, որ եթե մի քիչ ջրի ցողումը ճակատին իրականացնում է նպատակը, ապա այն մարդիկ երբեք չէին մտնի ջուրը արարողությունը ստանալու համար: Պողոսը՝ գրելով սրբերին, տալիս է պարզ վկայություն ի օգուտ ընկղման: . . . Այդ առաքյալը նշում է այնտեղ, որ մկրտությունովը սրբերը թաղվեցին Քրիստոսի հետ [տես Հռովմայեցիս Զ.4, Կողոսացիս Բ.12]:

Պարզապես ակնհայտ է, որ նրանք չէին կարող ընկղմվել մկրտությունով, առանց ամբողջապես ջրասույզ լինելու կամ ծածկված լինելու ջրի մեջ: Որևէ առարկայի մասին չի կարելի ասել թաղվել, եթե որևէ մաս մնա չծածկված, այսպիսով, նույնպես և մարդը չի թաղվի ջրի մեջ մկրտությունով, մինչև որ նրա ողջ անձը չդրվի ջրային միջավայրի մեջ: Մկրտության ձևի վերաբերյալ առաքյալի այս բացատրությունը շատ գեղեցիկ ձևով համապատասխանում է Փրկչի կողմից մեզ տրվածի հետ.Եթե մեկը ջրից չծնվի և այլն: Մի բանից ծնվել նշանակում է դրվել այդ բանի մեջ և հայտնվել կամ դուրս գալ դրանից, ջրից ծնվելը նույնպես պետք է նշանակի դրվել ջրերի արգանդում և կրկին դուրս բերվել:

Վստահ եմ, որ արդեն բավականաչափ ասվեց համոզելու ամեն խելամիտ և չնախապաշարված միտք, որ ընկղմումը այն ձևն էր, որով մկրտության արարողությունը սպասավորվում էր

Քրիստոնեության վաղ օրերին, երբ քարոզվում էր ավետարանը իր անաղարտությամբ և լրիվությամբ, ուստի, ես կավարտեմ իմ դիտարկումները այս կետի վրա։

Եբրայեցիս 6-րդ գլխից մենք իմանում ենք, որ ձեռնադրումը համարվում էր Ավետարանի սկզբունքներից մեկը։ Բոլորին հայտնի է, որ այս արարողությունը, ինչպես նաև ընկղմամբ մկրտությունը մեղքերի թողության համար ներկա օրերում, լիովին անտեսվում է Քրիստոնեական եկեղեցիների կողմից, ուստի մի քանի դիտողություններն այս նյութի շուրջ օգտակար կարող են լինել։ Մենք մի քանի դեպքեր ունենք, երբ Քրիստոսը դրեց Իր ձեռքերը հիվանդների վրա և բժշկեց նրանց, և առաքյալներին տրված իր առաջադրանքի մեջ՝ Մարկոսի վերջին գլխում, նա ասում է. Այս նշանները կհետևեն նրանց, ովքեր հավատացին, հիվանդների վրա ձեռք կդնեն և նրանք կառողջանան և այլն։ Անանիան դրեց իր ձեռքերը Սավուղի վրա, որն իսկույն ստացավ իր տեսողությունը այս արարողությունը սպասավորելուց հետո[տես Գործք Թ.17–18]։ Երբ Պողոսը նավաբեկության ենթարկվեց Մելիտե կղզու մոտ, դրեց իր ձեռքերը Պոպլիոսի՝ կղզու գլխավորի հոր վրա և նրան բժշկեց ջերմից [տես Գործք ԻԸ.8]։ Այս մի քանի դիտողությունները հստակորեն ցույց են տալիս, որ ձեռնադրումը նշանակված է եղել Աստծո կողմից՝ լինելու [միջոց], որի շնորհիվ հնարավոր լիներ ձեռք բերել երկնային օրհնություններ։

Չնայած հիվանդների բժշկությունը կապված էր այս արարողության սպասավորման հետ, այնուամենայնիվ, երբ մենք այդ թեման ավելի խորն ենք ուսումնասիրում, մենք հայտնաբերում ենք, որ դեռ ավելի մեծ օրհնություն է կապված այս արարողության հետ։ Մեզ ասվում է, որ Սամարիա քաղաքում տղամարդիկ և կանայք մկրտվեցին Փիլիպպոսի կողմից, որը մկրտվածների մեջ մեծ ուրախություն առաջացրեց։ Նրանք հավանաբար ուրախանում էին հավատքի, ապաշխարության և մկրտության միջոցով մեղքերի թողություն ստանալու հետևանքով և Աստծո Սուրբ Հոգու որոշ մաս ստանալու, որը բնականաբար հետևեց դրանց, իրենց մեղքերի թողության միջոցով, հանգիստ խղճի պատասխանը ձեռք բերելուց հետո։ Սուրբ Հոգու այս մասի միջոցով, որին նրանք տեր դարձան, նրանք

Մենք Սուրբ Հոգին ստանում ենք ձեռնադրմամբ:

սկսեցին տեսնել Աստծո թագավորությունը: Քանզի հիշում ենք, որ մեր Փրկիչը հայտարարեց. Որ ոչ մի մարդ չի կարող տեսնել Աստծո թագավորությունը, մինչև նորից չծնվի,- և հաջորդ հատվածում Նա ասում է,- Նա չի կարող մտնել այնտեղ, մինչև չծնվի երկու անգամ՝ առաջինը ջրից, ապա Հոգուց [տես Հովհաննես Գ.3–5]:

Այսպիսով, Սամարացի այդ մարդիկ ծնվել էին ջրից՝ նրանք ստացել էին առաջին ծնունդը, այդ պատճառով նրանք Աստծո թագավորությունը տեսնելու մի վիճակում էին, մտածելով հավատքի աչքով դրա տարբեր օրհնությունները, արտոնությունները և փառքերը, բայց քանի որ նրանք չէին ծնվել երկրորդ անգամ, նրանք չէին մտել իրենց լրիվության մեջ Ավետարանի արտոնություններին տեր լինելուն: Երբ Երուսաղեմում առաքյալները լսեցին Փիլիպպոսի հաջողության մասին, նրանք Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին Սամարիա, ձեռնադրումը սպասավորելու նպատակով: Ուստի, երբ նրանք հասան

Սամարիա, նրանք դրեցին իրենց ձեռքերը նրանց վրա, ովքեր մկրտվել էին և նրանք ստացան Սուրբ Հոգին [տես Գործք 8.5–8, 12, 14–17],[5] [տես առաջարկ 3, էջ 66]:

Մկրտության և հաստատման օրհնությունները գալիս են, երբ այդ արարողությունները ապասավորվում են համապատասխան իշխանությամբ:

Մինչև [արարողությունները] չսպասավորվեն մեկի կողմից, որն իսկապես ուղարկված է Աստծո կողմից, նույն օրհնությունները չեն հետևի: Առաքյալներն ու յոթանասունակները ձեռնադրվել էին Հիսուս Քրիստոսի կողմից սպասավորելու Ավետարանի արարողությունները, որոնց միջոցով հավերժական աշխարհի պարգևներն ու օրհնությունները պետք է վայելեին: Ուստի Քրիստոսն ասում է առաքյալներին. «Որոնց մեղքը, որ թողէք՝ թողուած կլինի նորանց. որոնցը որ պահէք՝ պահուած կլինի» [տես Հովհաննես Ի.23], այսինքն ամեն մարդ որ գա համեստությամբ, անկեղծորեն ապաշխարելով իր մեղքերից և ստանա մկրտություն առաքյալներից, պետք է իր մեղքերին ներում ստանա Հիսուս Քրիստոսի քավող արյան միջոցով և ձեռնադրմամբ պետք է ստանա Սուրբ Հոգին, բայց նրանք ովքեր կհրաժարվեն ստանալ բաների այս կարգը առաքյալներից, իրենց մեղքերը կմնան իրենց վրա: . . . Ավետարանը սպասավորելու այս զորությունն ու իշխանությունը շնորհվել էր ուրիշներին առաքյալների միջոցով, այնպես որ առաքյալները միակը չէին, որ կրում էին այս պատասխանատու պաշտոնը:. . . Այսպիսով, մինչև չգտնվի մեկը, որը կրում է այսպիսի պաշտոն, մեկը ով ունի մկրտելու և ձեռնադրելու իշխանություն, ոչ մեկը պարտադրանքի տակ չէ ստանալ այդ արարողությունները, ոչ էլ պետք է սպասի օրհնությունների, մինչև դրանք օրինականապես չսպասավորվեն:

. . . Ավետարանի արարողությունները սպասավորելու իշխանությունը կորել էր շատ դարերի ընթացքում: . . . Առաքյալների կողմից հիմնադրված եկեղեցին աստիճանաբար շեղվեց, մոլորվեց անապատում և կորցրեց իր իշխանությունը, իր քահանայությունը և հեռանալով Աստծո կարգից այն կորցրեց նաև իր պարգևներն ու շնորհները, այն խախտեց օրենքները և փոխեց Ավետարանի արարողությունները և լիովին անտեսեց

ձեռնադրումը, արհամարհեց մարգարեությունը և չհավատաց նշաններին . . .

Հովհաննեսը Հայտնությունում, տեսնելով և խոսելով եկեղեցու խավարում մոլորվելու մասին. . . [գլուխ ԺԴ, հատված 6-ում], խոսում է Ավետարանի վերականգման մասին. «Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մէջ, որ յաւիտենական աւետիք ունէր, որ աւետարանէր երկրի վերայ բնակողներին», այսպիսով ակնհայտ է, որ այդ մարգարեությունը պետք է կատարվեր ինչ որ մի ժամանակ նախքան մեր Փրկչի երկրորդ գալուստը:

. . .Այժմ ես բերում եմ վկայություն, ունենալով ամենաբարձր հավաստիացումն Աստծո կողմից, որ այս մարգարեությունն արդեն իրագործվել է, որ մի Հրեշտակ Աստծո կողմից այցելել է մարդուն այս վերջին օրերում և վերականգնել այն, ինչ երկար ժամանակ կորել էր, այսինքն քահանայությունը, թագավորության բանալիները, հավիտենական ավետարանի լրիվությունը[6] [տես առաջարկ 4, էջ 66]:

Երբ մենք պահում ենք մկրտության ուխտը և որոնում Սուրբ Հոգու առաջնորդությունը, խոստացված օրհնությունները անկասկած կհետևեն:

Սա էր այն ժամանակ Ավետարանի կարգը առաքյալների օրոք՝ հավատք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարություն, ընկղմամբ մկրտություն մեղքերի թողության համար և ձեռնադրում Սուրբ Հոգին ստանալու համար: Երբ այս կարգը հասկացվում էր և ճշգրիտ կատարվում, անմիջապես հետևում էին զորություն, պարգևներ, օրհնություններ և փառահեղ արտոնություններ և ամեն դարում և ժամանակաշրջանում, երբ այս քայլերը ճիշտ կատարվում էին և պահպանվում իրենց ճիշտ տեղում և կարգում, նույն օրհնություններն անկասկած հետևում էին, բայց երբ անտեսվում էին, լիներ դա ամբողջովին, թե մասնակիորեն, կամ՝ լինում էր լիակատար բացակայություն այդ օրհնությունների, կամ է՝լ դրանց խիստ նվազեցում:

Քրիստոսը առաքյալներին տված իր հանձնարարությունում խոսում է ինչ որ գերբնական պարգևների մասին, որոնք ստացան նրանք, ովքեր ենթարկվեցին հնազանդորեն այս բաների կարգին [տես Մարկոս ԺԶ.15–18]: Պողոսը . . . տալիս է

ավելի լիակատար նկարագրություն այն տարբեր պարգևների մասին, որոնք ուղեկցում էին Ավետարանի լրիվությանը, նա նշում է դրանցից ինը և տեղեկացնում մեզ, որ դրանք Սուրբ Հոգու ազդեցություններն են կամ պտուղները [տես Ա Կորնթացիս ԺԲ.8–10]։ Այսպիսով Սուրբ Հոգին խոստացվում էր բոլոր նրանց, այսինքն, որքան շատերին Տերը կկանչեր [տես Գործք Բ.37–39]։ Այս պարգևը, լինելով անփոփոխելի իր բնույթով և ներգործություններով և լինելով անքակտելիորեն կապված այս համակարգի կամ կարգի բաների հետ, խելամիտ է դառնում, հետևողական և Սուրբգրքային՝ ակնկալելու նույն պարգևներն ու օրհնությունները, և եթե Նոյը տապանը կառուցելուց հետո, կարող էր պահանջել և ձեռք բերել իր մահկանացու կյանքի փրկությունը խոստման համաձայն [տես Մովսես 7.42–43], կամ՝ Հեսուն շրջապատեց Երիքովն այնքան թվով անգամներ, որքան որ իրեն նշվել էր [և] կարողացավ գնալ նրա փլուզված պատերի վրայով ու գերի վերցնել նրա բնակիչներին[տես Հեսու Զ.12–20], կամ՝ Իսրայելացիները, պատվիրված զոհաբերությունները մատուցելուց հետո, կարող էին այդ ժամանակ ինչպես խոստացված էր, իրենց մեղքերին ներում ստանալ [տես Ղևտացոց Դ.22–35], կամ Նէեմանը ենթարկվելով Եղիսեի հրամանին, յոթ անգամ լվացվելուց հետո Հորդանանի ջրերում, կարող էր պահանջել և ձեռք բերել իր ապաքինումը [տես Դ Թագավորաց Ե.1–14], և վերջապես կույր մարդը Սիլոամի ավազանում լվացվելուց հետո, եթե նա կարող էր պահանջել և ստանալ խոստացված պարգևը [տես Հովհաննես Թ.1–7], ապա ես ասում եմ ճշտությամբ և հետևողականությամբ, որ երբ մարդը մի կողմ դնի իր նախապաշարմունքը և աղանդավոր պատկերացումները և կեղծ ավանդույթները և ենթարկվի Հիսուս Քրիստոսի Ավետարանի ողջ կարգին, ապա չկա ոչ մի բան սելեստիալ աշխարհների ներքո, որ առաքելական դարում գործի ընդդեմ Սուրբ Հոգու պարգևը և Ավետարանի հետ կապված բոլոր օրհնությունները պահանջելուն և ստանալուն։

Կրոն ձեռք բերելու համար, որը մեզ կփրկի Աստծո ներկայության մեջ, մենք պետք է ձեռք բերենք Սուրբ Հոգին և որպեսզի

ձեռք բերենք Սուրբ Հոգին, մենք պետք է հավատանք Տեր Հիսուսին, ապա ապաշխարենք մեր մեղքերից՝ այսինքն թողնենք դրանք, հետո առաջ գնանք և ընկղմվենք ջրում՝ մեղքերի թողության համար, ապա՝ ստանանք ձեռնադրում։[7]

Երբ մենք ստացանք այս Ավետարանը, մենք ուխտեցինք Աստծո առջև, որ մենք կառաջնորդվենք, որ մենք կկառավարվենք և կհետևենք Սուրբ Հոգու առաջարկներին, որ կհետևենք այն սկզբունքի առաջարկներին, որը կյանք է տալիս, որը գիտելիք է տալիս, որը Աստծո բաների հասկացողությունն է տալիս, որը հաղորդակցվում է Աստծո մտքի հետ և որ մենք կաշխատենք Աստծո նպատակների իրականացման համար ի փրկություն մարդկային ընտանիքի, որդեգրելով որպես կյանքի նշանաբան «Աստծո Արքայությունը կամ ոչինչ»։ Որքանով ենք մենք պահել այս ուխտերը . . . և հետևել Սուրբ Հոգու թելադրանքներին, մենք ինքներս պետք է լինենք դատավորները։ Որքանով որ մենք այդ արել ենք, այնքանով Ամենազորի օրհնություններն իջել են մեզ վրա, և մեր մտքերը լուսավորվել են և մեր հասկացողությունը ընդարձակվել է, և մենք առաջ ենք շարժվել սրբության արահետով, կատարելագործման արահետով։ . . . ճիշտ այնքանով որքանով մենք ձախողվել ենք, մեր հավատարմության մեջ, . . . ճիշտ նույնքանով մենք կորցնողներ ենք եղել այս ձեռնարկման մեջ, որում մենք պարտավորվել ենք հավերժական կյանք ձեռք բերելու համար, ձեռք բերելու բավականաչափ իմաստություն և գիտելիք և աստվածային խելամտություն մեզ շրջապատող չարիքներն ու գայթակղությունները հաղթահարելու համար։ Եվ ճիշտ այնքանով, որքանով մենք հետևել ենք այդ աստվածային Հոգուն, մեք զգացել ենք խաղաղություն և ուրախություն մեր հոգիներում, մենք պարտության ենք մատնել թշնամուն, մենք գանձեր ենք դիզել մեզ համար, որը ցեցն ու ժանգը չեն կարող փչացնել, այնքանով առաջ ենք գնացել սելեստիալ արքայության արահետով[8] [տես առաջարկ 5, էջ 66]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Երբ կարդաք 53–55 էջերի պատմությունները, մտածեք ձեր իսկ մկրտության և հաստատման մասին կամ մի ժամանակի մասին, երբ տեսաք մեկ ուրիշին այդ արարողությունները ստանալիս։ Ինչպե՞ս են այս ուխտերն ազդել ձեր կյանքի վրա։
2. Ինչո՞ւ են արարողությունները ոչ բավարար առանց հավատքի ու ապաշխարության։ Երբ մտածում եք կամ քննարկում այս հարցերը, վերանայեք Նախագահ Մնոուի ուսմունքները ներքին աշխատանքների և դրսի արարողությունների մասին (էջեր 56–58)։
3. Ուսումանսիրեք Նախագահ Մնոուի ուսմուքները 58–62 էջերում, նշելով այն սուրբ գրությունները, որոնց վրա նա հղումներ է կատարում։ Ինչպե՞ս են այս սուրբ գրությունները ամրացնում ձեր հասկացողությունը ընկղման անհրաժեշտության մասին։ Ինչո՞ւ եք կարծում, որ Սուրբ Հոգու պարգևի համար ձեռնադրումը «ավելի մեծ օրհնություն» է, քան հիվանդին օրհնելու համար ձեռնադրումը։
4. Կարդացեք այն բաժինը, որը սկսվում է էջ 62-ում։ Ի՞նչ «պարգևներ և շնորհներ» դուք ունեք ձեր կյանքում, վերականգված քահանայության շնորհիվ։
5. Ուսումնասիրեք գլխի վերջին երկու պարբերությունները։ Ի՞նչ է նշանակում ձեզ համար առաջնորդվել ու կառավարվել «Սուրբ Հոգու առաջարկներով»։
6. Ինչպե՞ս են Վարդապետություն և Ուխտերի 68.25–28 հատվածները կապված այս գլխի ուսմունքների հետ։ Ի՞նչ կարող են անել ծնողները օգնելու իրենց երեխաներին հասկանալ հավատքի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարգևի մասին։

Սոնչվող սուրբ գրություններ. 2 Նեփի 31.12, 17–20, Մոսիա 18.8–10, Ալմա 5.14, ՎևՈՒ 20.37, 36.2, 39.6, 130.20–21

Օգնություն ուսուցչին. «[Խուսափեք] խիստ մեծ քանակությամբ նյութ տալու գայթակղությունից: Մենք ուսուցանում ենք մարդկանց, ոչ թե առարկայի նյութը, և. . . յուրաքանչյուր դասի ուրվագիծ, որ ես երբևէ տեսել եմ, անխուսափելիորեն ունեցել է ավելի շատ բան իր մեջ, քան կարելի է հնարավորինս յուրացվել սահմանված ժամանակի շրջանակներում» (Jeffrey R. Holland, "Teaching and Learning in the Church," *Ensign,* June 2007, 91):

Հղումներ

1. "How He Became a 'Mormon,'" *Juvenile Instructor,* Jan. 15, 1887, 22.
2. "Organization of the Church in Italy," *Millennial Star,* Dec. 15, 1850, 373.
3. *Փրկվելու միակ ուղին* (գրքույկ, 1841), 2–3, շեղագիրը բնագրից հանվել է, կետադրությունը միօրինակացվել: Լորենզո Սնոուն գրել է այս գրքույկը ութ տարի առաջ նախքան կանչվելը ծառայելու որպես Առաքյալ: Այն ավելի ուշ թարգմանվեց այլ լեզուներով, ներառյալ իտալերեն, ֆրանսերեն, հոլանդերեն,դանիերեն, գերմաներեն, շվեդերեն, բենգալերեն, թուրքական հայերեն, թուրքական հունարեն: Այն ժամանակ առ ժամանակ վերահրատարակվել է 1800-ականների ողջ մնացած ժամանակաընթացքում որպես Առաքյալ իր ծառայության ժամանակ:
4. *The Only Way to Be Saved,* 3–4, 6; շեղագիրը բնագրից հանվել է:
5. *The Only Way to Be Saved,* 6–9.
6. *The Only Way to Be Saved,* 10–12; շեղագիրը բնագրից հանվել է:
7. *The Only Way to Be Saved,* 9–10.
8. In Conference Report, Apr. 1880, 79–80.



«Մենք պետք է խորապես ուսումնասիրենք Աստծո բանները, դնենք մեր հիմքը վեմի վրա, մինչև հասնենք այն ջրին, որը մեր մեջ կլինի հավերժական կյանքի հավիտենական աղբյուր»:

Կյանքի տևողությամբ դարձ՝ շարունակելով առաջադիմել ճշմարտության սկզբունքներում

«Մեր կրոնը պետք է միախառնվի մեր էության հետ, մեր գոյության մասը կազմի, որը չի կարող մի կողմ դրվել»:

Լորենզո Սնոուի կյանքից

Լորենզո Սնոուն մկրտվեց և հաստատվեց 1836 թվականի հունիսին: Վերհիշելով իր զարգացող վկայությունը, նա հետագայում ասաց. «Ես հավատացի, որ նրանք [Վերջին Օրերի Սրբերը] ունեին ճշմարիտ կրոնը, և ես միացա Եկեղեցուն: Մինչև այդ իմ դարձը պարզապես տրամաբանության հարց էր»:[1] Նա հիշում է.«Ես կատարելապես բավարարված էի, որ արեցի այն, ինչն իմաստություն էր ինձ համար անել տվյալ հանգամանքներում»:[2] Չնայած նա բավարարված էր որոշ ժամանակ այս հասկացողությամբ, նա շուտով փափագեց Սուրբ Հոգու մի հատուկ դրսևորում ստանալ: Նա ասել է. «Ես ոչ մի դրսևորում չէի ունեցել, բայց ես սպասում է դրան»:[3]

«Այդ դրսևորումը անմիջապես չհետևեց իմ մկրտությանը, ինչպես ես էի սպասում,- հիշում էր նա,- բայց չնայած ժամանակը հետաձգվեց մինչև ես ստացա այն, դրա իրականացումը ավելի կատարյալ էր, ֆիզիկական և հրաշագործ, քան իմ մեծագույն հույսերն էին ստիպում ինձ սպասել: Մի օր, երբ ես զբաղված էի իմ ուսումնասիրություններով՝ գրեթե երկու կամ երեք շաբաթ մկրտվելուց հետո, ես սկսեցի մտածել այն փաստի մասին, որ ես ձեռք չէի բերել *զիտելիք*՝ աշխատանքի ճշմարտության վերաբերյալ, որ ես չէի իրականացրել խոստումի կատարումը.«Եթե

մէկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար» [տես Հովհաննես Է.17] և ես սկսեցի շատ անհարամար զգալ։

«Ես մի կողմ դրեցի գրքերս, հեռացա տնից և թափառեցի դաշտերում մի մռայլ, անմխիթար ոգու ճնշող ազդեցության ներքո, մինչ խավարի մի աներևակայելի ամպ թվում էր, պարուրել էր ինձ։ Ես սովորություն էի դարձրել օրվա վերջում առանձնանալ գաղտնի աղոթքի համար իմ բնակատեղից ոչ շատ հեռու գտնվող մի պուրակում, բայց այս անգամ ես հակված չէի այդ անել։

Աղոթքի ոգին հեռացել էր և երկինքները թվում էին արույրե իմ գլխավերևում։ Ի վերջո գիտակցելով, որ գաղտնի աղոթքի սովորական ժամը մոտեցել էր, ես եզրակացրեցի, որ չէի հրաժարվելու իմ երեկոյան աղոթքից և կարծես թե մեխանիկորեն, ծնկի իջա իմ սովորույթի համաձայն իմ առանձանցած վայրում, բայց չզգալով այն, ինչ սովորաբար զգում էի։

Ես հազիվ էի բացել շուրթերս՝ ջանալով աղոթել, երբ լսեցի ձայն, հենց իմ գլխավերևում, ճիշտ մետաքսյա պարեգոտի խշխշոցի նման և Աստծո Հոգին անմիջապես իջավ իմ վրա, ամբողջապես պարուրելով ողջ իմ անձը՝ լցնելով ինձ գլխիս գագաթից մինչև ոտքերիս ծայրը և Օ, ինչ ուրախություն և երջանկություն ես զգացի։ Ոչ մի լեզու չի կարող նկարագրել վայրկենական անցումը մտավոր և հոգևոր խավարի խիտ ամպից դեպի լույսի և գիտելիքի պայծառությունը, ինչպես այդ ժամանակ հաղորդվեց իմ հասկացողությանը։ Այդ ժամանակ ես ստացա մի կատարյալ գիտելիք, որ Աստված ապրում է, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և Սուրբ Քահանայության ու ավետարանի լրիվության վերականգման մասին։

«Դա կատարյալ մկրտություն էր՝ ֆիզիկական ընկղմում երկնային տարրի կամ միջավայրի՝ Սուրբ Հոգու մեջ և նույնիսկ ավելի իրական և ֆիզիկական իր ազդեցություններով իմ համակարգի յուրաքանչյուր մասի վրա, քան ջրի մեջ ընկղմումը, փարատելով հավիտյան որքան որ միտքն ու հիշողությունը կտևի, կասկածի կամ վախի ամեն հնարավորություն կապված պատմականորեն մեզ հասած այն փաստի հետ, որ «Բեթլեհեմի Մանուկը» իսկապես Աստծո Որդին է, նաև այն փաստը, որ Նա այժմ հայտնվում է մարդկանց զավակներին և հաղորդում

Շուտով մկրտվելուց և հաստատվելուց հետո, Լորենզո Սնոուն ստացավ խաղաղ, կյանք փոխող դրսևորում Սուրբ Հոգու կողմից:

գիտելիք, նույն ձևով ինչպես առաքյալների ժամանակ: Ես բացարձակապես բավարարված էի, այնքանով որքանով հնարավոր էր, քանի որ իմ սպասումներն ավելի քան իրականացել էին, կարծում եմ կարող եմ հաստատ ասել՝ անսահման չափով:

Ես չեմ կարող ասել թե որքան ժամանակ էի մնացել այս երանելի վայելքի և աստվածային լուսավորման լիակատար հոսքի մեջ, բայց մի քանի րոպե տևեց նախքան սելեստիալ միջավայրը, որը լցրել էր և պարուրել ինձ, սկսեց աստիճանաբար ետ քաշվել: Ծնկի իջած դիրքից բարձրանալով, արտահայտվելու զորությունից վեր Աստծո հանդեպ երախտագիտությունից սիրտս ուռչած, ես զգացի որ, *գիտեմ* , որ Նա շնորհել էր ինձ այն, ինչ Ամենակարող Էակը կարող է շնորհել, որն ավելի մեծ արժեք ունի, քան աշխարհների բոլոր հարստություններն ու պատիվները»:[4]

Լորենզո Սնոուն հավատարիմ մնաց այն վկայությանը, որ ստացավ այդ օրը, և նա ջանասիրաբար աշխատեց մեծացնել իր հոգևոր գիտելիքը և օգնել ուրիշներին ևս անել նույնը: «Այդ ժամանակից ի վեր, - ասել է նա, - ես փորձել եմ այնպես ապրել, որ չկորցնեմ Նրա Սուրբ Հոգին, այլ միշտ առաջնորդվեմ նրա կողմից, փորձելով ազատվել իմ եսասիրությունից և որևէ սխալ փառասիրությունից և ջանալով աշխատել Նրա նպատակների համար»:[5] Նա հայտարարել է. «Քանի դեռ հիշողությունը շարունակվում է և միտքը վերահսկում, ես երբեք չեմ կարող թույլ տալ հզոր վկայությունը և գիտելիքը, որը հաղորդվել է ինձ, լուռ մնար»[6] [տես առաջարկ 1, էջ 79]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Վկայություն ձեռք բերելը մեկնարկային լավ կետ է Վերջին Օրերի Սրբերի համար:

Հիմքը, որի վրա մենք դրել ենք մեր հավատքը մեծ է ու փառահեղ: Ես դա իմ փորձով գիտեմ: Ես այս Եկեղեցում կարճ ժամանակ էի, երբ ես հաջողության հասա ձեռք բերելով ամենակատարյալ գիտելիքը, որ կա Աստված, որ կա Որդին՝ Հիսուս Քրիստոսը և որ Ջոզեֆ Սմիթը ընդունված է Աստծո կողմից որպես Իր մարգարե: Դա մի գիտելիք էր, որը ոչ մի մարդ չէր կարող հաղորդել: Այն եկավ Ամենազորից հայտնության միջոցով: Դա շատ լավ մեկնարկային կետ է Վերջին Օրերի որևէ Սրբի համար և դա մի բան է, որ յուրաքանչյուր մարդ, որն ունի որևէ ձգտում առաջադիմելու այս ուղում, դրա կարիքը ուշ թե շուտ կունենա: Նա կհայտնվի այնպիսի բնույթի հանգամանքներում, որ նրան անհրաժեշտ կլինի ուժ և այդ ուժը կգա այն փաստի գիտելիքից, որ այն ուղին, որում նա ճամփորդում է, կառաջնորդի նրան դեպի իր բարձրագույն և լավագույն ցանկությունները:[7]

Եղբայրներ և քույրեր, կան որոշ բաներ, որոնց մասին դուք և ես պարտավոր ենք մտածել: Եկել է ժամանակը, երբ յուրաքանչյուր տղամարդու և կնոջ հարկավոր է ինքնուրույն իմանալ այն հիմքի վերաբերյալ, որի վրա իրենք կանգնած են: Մենք բոլորս պետք է ձգտենք մի քիչ ավելի մոտենալ Տիրոջը: Մեզ համար անհրաժեշտ է առաջ գնալ մի փոքր և ձեռք բերել լիարժեք



«Տղամարդիկ և կանայք կարող են մեծացնել իրենց հոգևոր գիտելիքը, նրանք կարող են ավելի լավը դառնալ մինչ տարիները բազմապատկվում են նրանց վրա»:

գիտելիք այն բաների վերաբերյալ, որոնք մենք պետք է ավելի լիովին հասկանանք: Դա յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի արտոնությունն է[8] [տես առաջարկ 2, էջ 79]:

Մենք կարող ենք աճել հավատքով և հոգևոր գիտելիքով:

Տղամարդիկ և կանայք կարող են մեծացնել իրենց հոգևոր գիտելիքը, նրանք կարող են ավելի լավը դառնալ մինչ տարիները բազմապատկվում են նրանց վրա:[9]

Ես զգում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը առաջադիմում են, որ նրանք դաստիարակություն են ստանում: Մենք վեր ենք ելնում ավելի ու ավելի բարձր: Մենք առաջադիմում ենք դեպի ավելի բարձր դիրք ու ոլորտ և ավելի բարձր մակարդակ և մենք ստանում ենք այնպիսի դաստիարակություն, որ աշխարհի իմաստությունը իր բոլոր գիտելիքներով կեղծ վարդապետություններով

ու սկզբունքներով, չեն ունենա ազդեցություն Վերջին Օրերի Սրբերի վրա, քանի որ նրանք բարձրանում են թեորիաների, հիպոթեզների, մարդկային նորարարություններից վեր և սավառնում ճշմարտության բաներում, որոնք բարձրացնում են միտքը, վեհացնում հասկացողությունը և ավելի ու ավելի լիովին իրենց հաստատում կյանքի և փառքի ճշմարիտ սկզբունքներում: Մենք լցված ենք մեր սրտերում այդ ճշմարտություններով և չենք կարող ասել օրը կամ ժամը, թե մեր հավատքը, երբ աճեց, բայց մենք զգում ենք, երբ ետ ենք նայում անցած շաբաթվա, ամսվա կամ տարվա վրա, որ մենք աճել ենք հավատքով և Աստծո հավատքի և զորության գիտելիքով,մենք գիտենք, որ ավելի ենք մոտեցել մեր Աստծուն և զգում ենք, որ մենք մտերմանում ենք մեր Հայր Աստծո հետ[10] [տես առաջարկ 3, էջ 79]:

Եթե մենք կամենում ենք մեծացնել մեր հավատքն ու հոգևոր գիտելիքը, մենք պետք է լարենք մեր ուժերը:

Ամեն մարդ պետք է սովորի հույսը դնել իր իսկ գիտելիքի վրա, նա չի կարող հույսը դնել իր հարևանի վրա, ամեն մարդ պետք է անկախ լինի, նա պետք է ամբողջապես ինքնուրույն ապավինի իր Աստծուն: Իրենից է կախված հասկանալ, թե կդիմանա դժվարությանը և կհաղթահարի խոչընդոտները, որոնք դրված են իր կյանքի ճանապարհին, խանգարելու իր առաջընթացը: Մարդը կարող է տեղեկություն ստանալ Սուրբ Հոգու ներգործումներից և նա մոտենում է Աստծուն և աճում իր հավատքով՝ իր ջանասիրությանը համապատասխան:[11]

Անհնարին է առաջադիմել ճշմարտության սկզբունքներում, աճել երկնային գիտելիքում [մինչև] չգործադրենք մեր մտավոր ունակությունները և ճիշտ ձևով լարենք մեր ուժերը: Վարդապետություն և Ուխտերում մենք մի դեպք ունենք արձանագրված Օլիվեր Քաուդերիի կողմից թյուրըմբռնման մասին, որն առնչվում է այս սկզբունքի հետ: Տերը նրան խոստացավ հնադարյան հիշատակարանները թարգմանելու պարգևը: Մեզանից շատերի նման այսօր, նա սխալ պատկերացում ուներ պարգևի օգտագործման վերաբերյալ: Նա կարծում էր այն ամենն ինչ պետք է աներ ինքը, քանի որ այդ պարգևը խոստացվել էր իրեն Աստծո կողմից, պետք է թույլ տար իր միտքը պարապ սպասեր առանց ջանք գործադրելու, մինչև որ այն ինքնաբերաբար

գործեր։ Բայց, երբ որ այդ հիշատակարանները դրվեցին նրա առջև, ոչ մի գիտելիք չտրվեց, դրանք դեռևս մնացին կնքված, ինչպես որ կային, քանզի թարգմանելու ոչ մի զորություն չեկավ նրա վրա։

Չնայած թարգմանելու պարգևը շնորհվել էր նրան, նա չկարողացավ կատարել աշխատանքը, քանի որ պարզապես ձախողվեց լարել իր ուժերն Աստծո առջև իր մեջ պարգևը զարգացնելու հեռանակարով և նա խիստ հիասթափվեց և Տերը իր բարությամբ և ողորմածությամբ տեղեկացրեց նրան իր սխալի մասին, հետևյալ ձևով.

«Ահա, դու չհասկացար. Դու կարծում էիր, որ ես պիտի տայի քեզ, երբ դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ։ Բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է քննես այն քո մտքում. Հետո դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է, և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում, ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է» և այլն (տես ՎևՈւ 9.7-8)։

Այդպես է նաև մեզ հետ, այն բաների վերաբերյալ որոնք մենք ենք ձեռնարկում։ Եթե ցանկանում ենք բարեփոխվել, իսկույն առաջադիմել մեզ տրված աշխատանքում և վերջում ձեռք բերել այդ պարգևներն ու փառքերը որպես սեփականություն, հասնելով մեր սպասած վեհացման այդ վիճակին, մենք պետք է խորհենք և մտածենք, մենք պետք է լարենք մեր ուժերը և դա ևս՝ մեր ունակության ծայրագույն աստիճանով։[12]

Մենք պարտավոր ենք. . . Հոգին ինքներս ստանալ և չբավարարվել, քայլելով ուրիշների լույսով, մենք պետք է այն միահյուսված ունենանք մեր սեփական հոգիների հետ։ . . .

Անձը, որը ձեռնարկում է ֆլեյտայի վրա նվագել սովորել, սկզբում հանդիպում է դժվարության նոտաները վերցնելիս և որպեսզի ճիշտ նվագի որևէ մեղեդի, մեծ ջանասիրություն և համբերություն է պահանջվում։ Նա պետք է առաջ գնա, կանգ առնի, ետ գնա և նորից սկսի, բայց որոշ ժամանկ անց նա կարողանում է իր ուժերի մեծ լարման միջոցով, վարպետանալ այդ մեղեդիում։ Երբ հետագայում հրավիրում են նվագել այդ մեղեդին, անհրաժեշտություն չկա հիշելու թե որտեղ դնի մատները, այլ նա նվագում է այն բնականորեն։ Դա բնական չէր սկզբում,

անհրաժեշտ էր մեծ համբերություն և աշխատանք, մինչև մեղեդին նվագելը դարձավ բնական։

Նույնը վերաբերում է Աստծո բաների հետ կապված հարցերին։ Մենք պետք է լարենք մեր ուժերը գնալու մեկ շնորհից դեպի մյուսը, այնպես միահյուսել մեր հոգիները գործելու օրենքի հետ, որ բնական լինի անել այն բաները, որոնք պահանջվում են մեզանից[13] [տես առաջարկ 4, էջ 79]։

Երբ մենք խորապես ուսումնասիրում ենք Աստծո բաները և մնում հավատարիմ, մեր կրոնը դառնում է մեր էության մի մասը։

Կա վտանգ, որ մենք բավարարվենք մակերեսային առաջընթացով, ուղղակի առաջ գնալով մակերեսով։ Մենք խոսում ենք Հոգու լույսով քայլելու և մեզ վրա այն զգալու մասին, բայց արդյոք մենք անո՞ւմ ենք այս բաները։ Մենք պետք է խորապես ուսումնասիրենք Աստծո բաները, դնենք մեր հիմքը վեմի վրա, մինչև հասնենք այն ջրին, որը մեր մեջ կլինի հավերժական կյանքի հավիտենական աղբյուր։[14]

Մեր մեջ կան մարդիկ, որոնց վրա Ամենազորի Հոգին մի ժամանակ հանգչում էր զորությամբ, որոնց մտադրություններն այնքան բարի էին և անբիծ ինչպես հրեշտակներինը, և ովքեր ուխտեր էին կապել Աստծո հետ, որ կծառայեն Նրան և կպահեն Նրա պատվիրաններն ամեն և բոլոր հանգամանքներում։ . . . Բայց ինչպիսի՞ն են այժմ այդ Երեցներից մի քանիսը։ Նրանք այդպես չեն զգում այժմ։ Նրանց սերը դրված է այս աշխարհի բաների վրա, որոնք Աստված հնարավորություն է տվել նրանց ձեռք բերել, որ նրանք սպասում են մինչև որ իրենց կանչեն և շատ դեպքերում, երբ կանչվում են, նրանք հնազանդվում են՝ պահպանելու իրենց դիրքն ու պաշտոնը, քան իսկական սրտառուչ սիրուց՝ այն աշխատանքի հանդեպ, որին կանչվել են։

Սա է բոլոր մարդկանց վիճակը, անկախ նրանից թե որքան լավ են սկսում, նրանք ովքեր թույլ են տալիս իրենց մտքերը և համակրանքը աշխարհի հետ լինել և աշխարհիկ ուղիներում և սա պարզ և անվիճելի ապացույց է, երբ խնդիրը սրանում է մարդկանց մոտ, նրանք աշխարհն ավելի են սիրում, քան Տիրոջը և Նրա աշխատանքը երկրի վրա։ Ստացած լինելով

հավիտենական Ավետարանի լույսը և ճաշակած լինելով թագավորության բարի բաներից, և լինելով Իսրայելի սերունդը և ժառանգներ մեծ և փառահեղ խոստումների, մենք պետք է աշխատենք հավատարմությամբ ու ջանասիրությամբ իրականացնել այն, ինչ Աստված է ծրագրել անել մեր միջոցով, մենք պետք է լինենք հավատքի և զորության տղամարդիկ և կանայք ինչպես նաև լավ գործերի և երբ մենք հայտնաբերում ենք, որ նվազագույն իսկ չափով անհոգ ենք զգում կամ անտարբեր, պետք է մեզ համար բավական լինի իմանալ դա, որպեսզի ուղղենք մեր ճանապարհները և վերադառնանք պարտականության ուղուն:[15]

Ոչինչ չի կարող ավելի հիմար բան լինել, քան իր կրոնը վերարկուի կամ ներքնազգեստի նման հանելու մասին մարդու գաղափարը: Չկա այդպիսի բան, որ մարդը հանի իր կրոնը իր վրայից, առանց հանելու ինքն իրեն: Մեր կրոնը պետք է միահյուսված լինի մեր էության հետ, մեր գոյության մասը լինի, որը հնարավոր չլինի հանել: Եթե լինի այդպիսի բան, որ մարդը հանի իր կրոնը, այն պահին, երբ նա այդ անի, նա հայտնվում է մի տարածքում, որի մասին նա ոչինչ չգիտի, նա հանձնում է իրեն խավարի ուժերին, նա իր սեփական տարածքում չէ, նա գործ չունի այնտեղ: Իսրայելի Երեցների հայհոյելը ստելը և հարբեցողությամբ տարվելը իրենցից շատ ցածրում է գտնվում, նրանք պարտավոր են վեր լինել այդպիսի բաներից: Եկեք մեզանից դուրս հանենք ամեն չարիք և ապրենք Աստծո բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքով [տես ՎԱՈՒ 98.11]: Եկեք կատարենք մեզ հանձնարարված յուրաքանչյուր պարտականություն ձգտումով և էներգիայով, որպեսզի մեր մեջ անընդհատ կարողանանք ունենալ մեր Աստծո հոգին, ճշմարտության լույսը և Հիսուս Քրիստոսի հայտնությունները:[16]

Մնացեք Սիոնի նավի վրա: Եթե նավակներ գան կողքից ցույց տալով գեղեցիկ գույներ և սքանչելի խոստումներ, մի իջեք նավից ափ գնալու համար որևէ այլ նավակով, այլ մնացեք նավում: Եթե ձեզ ստորաբար օգտագործում են նրանք, ովքեր նավի վրա են, ովքեր չունեն համապատասխան ոգին, հիշեք նավն ինքնին կարգին է: Մենք չպետք է թույլ տանք մեր մտքերը դառնանան այն պատճառով, որ ինչ որ բան նավի մարդկանցից կարող են անել մեզ, նավը կարգին է և պաշտոնյաներն

են կարգին և մենք ճիշտ կանենք, եթե մնանք նավի վրա: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ այն ձեզ ուղիղ կտանի փառքի երկիր:[17]

Ես [կներակայցնեմ] մի օրինակ այն բանի վերաբերյալ, թե ինչպես է այդ ոգին առաջ գալիս և մեր մեջ մտնում ու խորանում, որպեսզի փոթորիկի ժամանակ դուրս չքշվենք: Դրեք վարունգը քացախով տակառի մեջ և այն շատ քիչ ազդեցության կենթարկվի ոչ առաջին ժամին, ոչ էլ առաջին 12 ժամերի ընթացքում: Ստուգեք այն և կտեսնեք, որ ազդեցությունը հագիվ կեղևի վրա է նշմարվում, քանի որ երկար ժամանակ է պահանջվում այն թթվեցնելու համար:Մարդ մկրտվելով այս եկեղեցում իր վրա ազդեցություն է կրում, բայց ոչ թե ազդեցություն՝ նրան անմիջապես թթվեցնելու: Այն չի հիմնադրում ճշտի և պարտականության օրենքը նրա մեջ առաջին 12 կամ 24 ժամերի ընթացքում, նա պետք է մնա եկեղեցում, ինչպես վարունգը քացախի մեջ, մինչև նա հագեցվի ճիշտ ոգով, մինչև թթվեցվի «Մորմոնականությամբ», Աստծո օրենքով, մենք պետք է այդ բաները միահյուսված ունենանք մեր հոգիներում:

. . . Եղբայրներ և քույրեր, ես . . . թողնում եմ այս թեման ձեր մանրակրկիտ ուշադրությանը, քննարկմանն ու խորհրդածությանը, աղոթելով մեր հայրերի Տեր Աստծուն՝ դուրս թափել Իր Հոգին Իր ժողովրդի վրա: Դուք նրանք եք, ում Տերն ընտրել է փառավորել Իրեն Իր ներկայության մեջ և թող որ Տերն օրհնի ձեզ և լցնի ձեզ Իր Հոգով և թող ձեր աչքերը պարզ լինեն զանազանելու այն բաները, որոնք վերաբերում են ձեր փրկությանը: Եվ եթե կա որևէ տղամարդ կամ կին, ովքեր լիովին արթուն չեն, թող շուտով գա ժամանակը, որ Հոգին և զորությունը Սուրբ Հոգու լինի նրանց վրա, որ այն ուսուցանի նրանց անցյալի ներկայի և ապագայի բաները, և Տիրոջ օգնությամբ ցանի արդարություն և ճշմարտության սկզբունքները իրենց հոգիներում, որ նրանք պատրաստված լինեն գալիք փոթորիկների դեմ[18] [տես առաջարկ 5, էջ 79]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք Լորենզո Մնոուի փորձառությունը, որն արձանագրված է էջեր 69, 71–72-ում։ Ինչպե՞ս ձեր վկայությունը իրական դարձավ ձեզ համար։ Կարող եք կիսվել ձեր վկայությամբ ընտանիքի որևէ անդամի կամ ընկերոջ հետ, ինչպես օրինակ որևէ մեկի հետ, ում դուք ծառայում եք որպես տնային ուսուցիչ կամ այցելող ուսուցիչ։
2. Նախագահ Մնոուն ասել է, որ վկայություն ձեռք բերելը «լավ մեկնարկային կետ է Վերջին Օրերի Սրբի համար» (էջ 73)։ Ինչո՞ւ է վկայությունը միայն մեկնարկային կետ, ոչ թե վերջնակետ։
3. Էջ 73-ի ներքևում սկսվող բաժնում Նախագահ Մնոուն հակադրում է աշխարհիկ կրթությունը «բարձրագույն» կրթությանը, որը Տերն է առաջարկում։ Ինչպե՞ս կարող ենք ձգտել այդ «բարձրագույն կրթությանը»։ Ի՞նչ օրհնություններ են եկել, ձեզ, երբ դուք այդպես եք արել։
4. Կարդացեք այն բաժինը, որը սկսվում է 74 էջում։ Ե՞րբ եք կարիք ունեցել «հույս դնել [ձեր] իսկ գիտելիքի վրա»։ Ի՞նչ կարող են անել ծնողներն ու ուսուցիչները օգնելու համար երեխաներին և երիտասարդությանը հույս դնել իրենց իսկ գիտելիքի վրա։
5. Վերանայեք Նախագահ Մնոուի խորհուրդը գլխի վերջին բաժնում (էջեր 76–79)։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «խորն ուսումնասիրել Աստծո բաները»։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում մեր կրոնը «միահյուսել մեր էության հետ»։

Առնչվող սուրբ գրություններ. 2 Նեփի 31.20, Մոսիա 5.1–4, 15, Ալմա 12.9–10, 3 Նեփի 9.20, Մորոնի 10.5, ՎԵՈՒ 50.24

Օգնություն ուսուցչին. «Բավական ուսուցում, որ կատարվում է Եկեղեցում կատարվում է ոչ շատ ճկուն, դա դասախոսությունն է: Մենք այնքան էլ լավ չենք արձագանքում դասախոսությանը դասասենյակներում: Դա մենք անում ենք հաղորդության ժողովներին և համաժողովների ժամանակ, բայց ուսուցումը կարող է լինել երկկողմանի, այնպես որ դուք կարող եք հարցեր տալ: Դասարանում դուք կարող եք հեշտորեն օժանդակել՝ հարցեր տալով» (Boyd K. Packer, "Principles of Teaching and Learning," *Ensign,* June 2007, 87):

Հղումներ

1. In Frank G. Carpenter, "A Chat with President Snow," quoted in *Deseret Semi-Weekly News,* Jan. 5, 1900, 12.
2. "The Grand Destiny of Man," *Deseret Evening News,* July 20, 1901, 22.
3. In "A Chat with President Snow," 12.
4. *Juvenile Instructor,* Jan. 15, 1887, 22–23.
5. "The Object of This Probation," *Deseret Semi-Weekly News,* May 4, 1894, 7.
6. *Millennial Star,* Apr. 18, 1887, 242.
7. "Glory Awaiting the Saints," *Deseret Semi-Weekly News,* Oct. 30, 1894, 1.
8. *Millennial Star,* Apr. 18, 1887, 244.
9. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 31, 1868, 2.
10. *Salt Lake Daily Herald,* Oct. 11, 1887, 2.
11. *Deseret News,* Apr. 11, 1888, 200; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1888 general conference.
12. *Deseret News,* June 13, 1877, 290.
13. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
14. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
15. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
16. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 31, 1868, 2.
17. *Deseret Semi-Weekly News,* Mar. 30, 1897, 1.
18. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.

Ամրացած Սուրբ Հոգու զորությամբ

«Մտքներումդ դրեք ապրել խոնարհաբար և այնպես, որ դուք միշտ ունենաք Տիրոջ Հոգին ձեզ հետ ընկեր լինի»:

Լորենզո Սնոուի կյանքից

Իր առաջին գերագույն համաժողովի ելույթում, որպես Եկեղեցու Նախագահ, Լորենզո Սնոուն ուսուցանեց. «Մենք կախված ենք Տիրոջ Հոգուց մեզ օգնելու և ժամանակ առ ժամանակ մեզ ցույց տալու, թե մեզ համար ինչն է անհրաժեշտ կատարել այն առանձնահատուկ հանգամանքներում, որոնք կարող են մեզ շրջապատել»:[1] Նախագահ Սնոուն գուցե կենդանի չլիներ արտահայտելու այդ միտքը, եթե նրա ընկերներից երկուսը, կախված չլինեին Տիրոջ Հոգուց 34 տարի առաջ:

1864 թվականին Երեց Լորենզո Սնոուն և Էզրա Թ. Բենսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, միսիայի գնացին Հավայան կղզիներ: Նրանց ուղեկցում էին երեք ուրիշ միսիոներներ՝ Երեց Ջոզեֆ Ֆ.Սմիթը, Վիլյամ Քլաֆը և Ալմա Լ.Սմիթը: Երբ նրանց նավը խարիսխ ձգեց Մաուի կղզու մոտերքում, բոլորը, բացի Ջոզեֆ Ֆ. Սմիթից նստեցին մի փոքրիկ նավակ, ափ հասնելու համար: Երբ նրանք մոտենում էին կղզուն բարձր ալիքները հարվածեցին, ստիպելով նավավարին, կորցնել նավի վերահսկողությունը: Նավը շրջվեց և բոլոր նստածները ջուրն ընկան: Շուտով բոլորը հայտնվեցին ջրի երեսին, բացի Երեց Սնոուից: Մի խումբ կղզիաբնակներ օգնության նետվեցին, վերցնելով Վիլյամ Քլաֆին և Ալմա Լ. Սմիթին փրկարար նավակի վրա՝ որոնելու իրենց ընկերոջը: Երեց Քլաֆը վերհիշում է.

«Առաջին բանը, որ ես տեսա Եղբայր Սնոուի մազերն էին, որ լողում էին ջրի երեսին շրջված նավակի մի ծայրում: Հենց որ



Վաղ միսիոներական աշխատանք Հայաստանի կղզիներում

Երբ Երեց Սնուն միսիա էր ծառայում Հարավյան կղզիներում, նրա կյանքը փրկվեց իր ընկերների ոգեշնչված ծառայության շնորհիվ:

մենք վերցրեցինք նրան մեր նավակի վրա, մենք ասացինք նավավարին, թիավարել նավակը ողջ հնարավոր արագությամբ: Նրա մարմինը փայտացած էր և թվում էր անկյանք:

Եղբայր Ա. Լ.Սմիթն ու ես նստած էինք կողք կողքի: Մենք դրեցինք Եղբայր Սնոուին մեր գոքին և դեպի ափ շարժվելու ճանապարհին անձայն սպասավորեցինք նրան և խնդրեցինք Տիրոջը խնայել նրա կյանքը, որպեսզի նա իր ընտանիք և տուն վերադառնա:

Ափ հասնելով, մենք նրան տարանք մի փոքր տարածություն դեպի մեծ տակառները, որոնք դրված էին ծովափի ավազին: Մենք նրան պառկացրեցինք երեսնիվայր դրանցից մեկի վրա

և սկսեցինք գլորել ետ ու առաջ, մինչև հաջողության հասանք դուրս հանելով նրա կուլ տված ջուրը իր ներսից։ . . .

Որոշ ժամանակ նրա վրա աշխատելուց հետո առանց կյանքի վերադարձի որևէ նշանների, դիտորդներն ասացին, որ այլևս ոչինչ հնարավոր չէր անել նրա համար։ Բայց մենք չէինք զգում, որ պիտի ձեռք քաշեինք և դեռ աղոթում էինք և աշխատում նրա վրա, համոզվածությամբ, որ Տերը կլսի և կպատասխանի մեր աղոթքներին։

Ի վերջո մենք ներգործվեցինք դնելու մեր բերանը նրա բերանին և ջանալու օդ փչել նրա թոքերը, ողջ ուժով ներս փչելով և դուրս քաշելով օդը, նմանակելով որքան հնարավոր է շնչառության բնական պրոցեսին։ Մենք սա շարունակեցինք մինչև որ նրա թոքերը հաջողվեց օդով լցնել։ Մի փոքր անց մենք նշմարեցինք կյանքի վերադարձի շատ թույլ նշաններ։ Աչքի թեթևակի թարթումը, որը մինչև այդ բաց էր՝ անկենդանի պես և շատ թույլ ձայն կոկորդում, կենդանության վերադարձի առաջին նշաններն էին։ Սրանք ավելի ու ավելի որոշակի դարձան, մինչև որ գիտակցությունը լրիվ վերականգվեց»։

Ետ նայելով այս փորձառությանը, Երեց Վիլյամ Քլաֆը հասկացավ, թե ինչու նա և Երեց Ալմա Լ. Սմիթը կարողացան փրկել Երեց Սնոուի կյանքը. «Մենք արեցինք ոչ միայն այն, ինչ սովորաբար անում էին այդպիսի դեպքերում,- ասաց նա,- այլ նաև այն, ինչ Հոգին էր կարծես շշնջում մեզ»[2] [տես առաջարկ 1, էջ 80]։

Լորենզո Սնոուի ուսմունքները

Սուրբ Հոգու պարգևի միջոցով մենք առաջնորդվում ենք դեպի ողջ ճշմարտությունը և զորացվում մեր հավատքում։

Կա որոշակի օրինություն, որը կապված է միայն ավետարանին հնազանդվելու հետ. դա Սուրբ Հոգու պարգևն է։ . . . Փրկիչը, որն անկասկած լավագույնս գիտեր այս պարգևի բնույթի և հատկության մասին, ասաց, որ այն պիտի առաջնորդի նրանց, ովքեր ստացել են այն, դեպի ամեն ճշմարտություն և ցույց տա նրանց գալիք բաները [տես Հովհաննես ԺԶ.13]։ Այն պետք է լինի ավելին, քան այն ոգին, որը գալիս է Աստծուց, լցնելով

տիեզերքի անսահմանությունը և լուսավորելով ամեն մարդու, որն աշխարհ է գալիս [տես ՎևՈՒ 84.46], Սուրբ Հոգու պարգևը պետք է առաջնորդի դեպի ամեն ճշմարտություն և ցույց տա նրանց գալիք բաները:

Բացիայդ, խոսելով դրա ազդեցությունների մասին [Պողոս] Առաքյալն ասում է. «Բայց ամեն մեկին տրուած է Հոգին . . . օգտի համար: Մեկին տրուած է հավատք» [տես Ա Կորնթացիս ԺԲ.7, 9]: Ոչ թե հասարակ , սովորական հավատք, որը որոշ մարդիկ ձևացնում են, որ ունեն ներկա օրերում, այլ հավատք, որը ի վիճակի դարձրեց ունեցողին սողցվել մեջտեղից, գցվել առյուծների որջը, վառվող հնոցը և դիմանալ ամեն ձևի տանջանքների: Սա այն տեսակի հավատք էր, որը Սուրբ Հոգին է շնորհում նրանց, ովքեր ունեն այն, ի վիճակի դարձնելով այն ունեցողին, դիմանալու ամեն դժվարության, արհամարհել ամեն ընդդիմություն և վար դնել իր կյանքը, եթե անհրաժեշտ է, այն գործի համար, որն ընդունել է:Այս հավատքում կա ամենազոր ոգեշնչող զորություն՝ տրված Տիրոջ կողմից Սուրբ Հոգու միջոցով, որը ոչ մի այլ սկզբունք չէր կարող հաղորդել: Մեկին տրվել էր հավատք, մյուսին գիտություն [տես Ա Կորնթացիս ԺԲ.8], ոչ թե այն ինչ ձեռք է բերվում պարզապես գրքեր կարդալով, այլ գիտություն՝ Ամենազորից: Ինքնաներշնչման սկզբունքը, որը նրանց վրա էր, ֆիզիկական էր, տալով նրանց գիտություն այն գործի վերաբերյալ, որ նա ընդունել էր: Նրանք գիտեին հայտնության միջոցով Աստծուց, որ գործը, որին նրանք հնազանդվել են, ճշմարիտ է, այն հայտնի էր դարձվել նրանց մի ձևով, որ նրանք չէին կարող վիճարկել և նրանք գիտեին ինքնուրույն: Նրանք այդ ժամանակ հաստատված էին . . . հայտնության վեմի վրա:[3]

Պետրոսը քարոզելով ժողովրդին ասաց.«Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, եւ Սուրբ Հոգու պարգեւը կընդունիք: Որովհետեւ ձեզ և ձեր որդկանց համար է այս խոստմունքը, եւ այն ամեն հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը կկանչէ» [Գործք Բ.38–39]: Սուրբ Հոգու այս պարգևը տարբեր սկզբունք է այն ամենից, ինչ մենք տեսնում ենք դրսևորված աղանդավորական աշխարհում: Այն խելամտության և հայտնության սկզբունք է: Դա մի սկզբունք է, որը բացահայտում է

անցյալ, ներկա և գալիք բաները և Սուրբ Հոգու այս պարգևները ստացվում էին ավետարանի պահանջներին հնազանդության միջոցով, ինչպես հայտարարվում էր այն օրերում և ինչպես հայտարարվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Երեցների կողմից այս օրերում: Այս վեմի վրա է, որ նրանց հավատքը պետք է հիմնվեր, այս մասից էր, որ նրանք պետք է ստանային գիտելիք այն վարդապետության վերաբերյալ, որ նրանք ընդունել էին, և մեզ ասվում է Փրկչի կողմից, «որ դժոխքի դռները չպիտի հաղթեն նրանց» [տես 3 Նեփի 11.39]: . . .

. . . Հիմքը, որի վրա կառուցված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, հայտնության վեմն է՝ այն վեմը, որի վրա Հիսուսն ասաց, որ կկառուցի Իր եկեղեցին և դժոխքի դռները չպիտի հաղթեն նրան [տես Մատթեոս ԺԶ.17–18]: Մենք չենք ստացել այս գիտությունը մսի և արյան միջոցով, մենք չենք ստացել այս վկայությունը մարդուց, մենք չենք ստացել դա, Աստվածաշունչը . . . կամ՝ Մորմոնի Գիրքը կարդալու միջոցով, բայց մենք ստացել ենք դա Սուրբ Հոգու ներգործումների միջոցով, որն ուսուցանում է Աստծո բաները, բաներ անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ, և այն վերցնում է Աստծո բաներից և դարձնում դրանք հստակորեն հասկանալի մեզ համար: Հնարավոր չէ այս գիտելիքը վերցնել մեզանից բանտարկությամբ կամ որևէ տեսակի հալածանքով: Մենք կդիմանանք դրա միջոցով մինչև մահ[4] [տես առաջարկ 2, էջ 92]:

Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ կարող է ունենալ Սուրբ Հոգին որպես ընկեր, որը խորհուրդ է տալիս:

Կա մի ուղի, որի միջոցով անձնավորությունը կարող է մաքուր պահել խիղճը Աստծո և մարդկանց առջև, և դա իրենց ներսում Աստծո Հոգին պահպանելն է, որը հայտնության ոգին է յուրաքանչյուր տղամարդու և կնոջ համար: Այն հայտնի կդարձնի նրանց, թե ինչ պետք է անեն նույնիսկ ամենահասարակ հարցերում, նրանց առաջարկություններ անելով: Մենք պետք է փորձենք սովորել այս Հոգու բնույթը, որ կարողանանք հասկանալ նրա առաջարկները, և այդ դեպքում մենք միշտ կարող ենք կատարել ճիշտը: Սա յուրաքանչյուրՎերջին Օրերի Սրբի հրաշալի արտոնությունն է: Մենք գիտենք, որ մեր իրավունքն է մեր կյանքի ամեն օր ունենալ Հոգու դրսևորումները:



«Մեր իրավունքն է՝ մեր կյանքի ամեն օր ունենալ Հոգու դրսևորումները»:

Մարդիկ ինձ մոտ են գալիս շատ մտահոգված խորհուրդ հարցնելու այս կամ այն նյութի վերաբերյալ։Նրանք չպետք է ինձ մոտ գան միշտ (որոշ դեպքերում, իհարկե, դա շատ ճիշտ կարող է լինել), քանի որ Հոգին իրենց մեջ է՝ բարին առաջ բերելու և Աստծո նպատակներն իրականացնելու համար։ . . . Միշտ չէ որ անհարժեշտ է նրանց համար գալ Եկեղեցու Նախագահի կամ Տասներկուսի կամ էլ Իսրայելի Երեցների մոտ խորհուրդ ստանալու, նրանք դա ունեն իրենց ներսում, կա ընկեր, որը ճշգրիտ գիտի ինչ ասել նրանց։ Այն ժամանակից սկսած, երբ ընդունում ենք ավետարանը, իջնում ենք վար մկրտության ջրերի մեջ և այնուհետև ձեռնադրվում Սուրբ Հոգու համար,

մենք ընկեր ունենք, եթե մենք չենք մեզանից հեռու քշում նրան, սխալ գործելով։ Այդ ընկերը Սուրբ Հոգին է, Սուրբ Հոգին, որը վերցնում է Աստծո բաներից և ցույց է տալիս դրանք մեզ։ Սա հիանալի միջոց է, որը Տերն ապահովել է մեզ համար, որ մենք կարողանանք իմանալ լույսը և անընդհատ չսողանք խավարում[5] [տես առաջարկ 5, էջ 93]։

Սուրբ Հոգին կարող է բերել մեզ երջանկություն և մտքի խաղաղություն

Տերը դրել է որոշակի բնական ցանկություններ և զգացմունքներ մեր սրտում, և դա այդպես է ողջ մարդկության դեպքում՝ ողջ մարդկային ընտանիքի։ Նրանց էության մեջ կան արմատավորված և միահյուսված որոշակի ցանկություններ և ընդունակություններ վայելքի, որոշ բաների հանդեպ ցանկությունների, որոնք նրանց բնության մեջ են, որոնք հաշվարկված են նպաստելու մեր խաղաղությանը և բարօրությանը, որոնք արձագանքում են նրանց զգացմունքներին և նպաստում նրանց երջանկությանը, բայց ինչպես ձեռք բերել գոհունակություն այն ընդունակությունների և ցանկությունների համար, որոնք աշխարհը չգիտի, ոչ էլ հասկանում է, բայց Տերը հարմար է տեսել դնել մեզ այդ իրավիճակում և այդ բաները հասկանալու ուղում՝ լինելով հավատարիմ և քայլելով Սուրբ Հոգու լույսի մեջ և ստանալով ճշմարտություն։[6]

Վերջին Օրերի Սրբերի արտոնությունն է այնպես ապրել Ավետարանով, որ նրանք զգան Աստծո հավանությունը։ Իհարկե մենք երբեմն անում ենք բաներ, որոնցից մենք ամաչում ենք, երբ սկսում ենք մտածել դրանց մասին, բայց մենք ապաշխարում ենք դրանցից մեր սրտերում և վճռում այլևս չանել դրանք։ Դա այն բոլորն է, ինչ Տերը խնդրում է մեզանից և տղամարդկանցից ու կանանցից, ովքեր այդպես են ապրում, ապրում են առանց դատապարտության։ Նրանք ունեն արդարակեցություն և ուրախություն Սուրբ Հոգում։[7]

Եթե մենք պահենք Հոգու լույսը մեր մեջ, մենք կարող ենք այնպես քայլել ավետարանում, որ կարող ենք չափավոր խաղաղություն և երջանկություն վայելել այս աշխարհում և մինչ մենք առաջ ենք շարժվում, ձգտելով խաղաղության և երջանկության, որը մեր ուղում է դրված, հեռվում, մենք կունենանք մտքի

մի խաղաղություն, որը ոչ ոք չի կարող վայելել, բացի նրանցից, ովքեր լցված են Սուրբ Հոգով[8] [տես առաջարկ 3, էջ 93]։

Մենք Սուրբ Հոգու օգնության կարիքն ունենք, երբ տանում ենք փորձություններ, կատարում մեր պարտականությունները և պատրաստվում սելեստիալ փառքին։

Մեր ձեռքից պահանջվող շատ կարևոր բաներ կան և շատ բաներ, որոնք մենք կարող ենք անել, երբ Տիրոջ Հոգին օգնում է մեզ, որը երբեմն, գրեթե անհնարին է թվում իրականացնել։[9]

Ես կամենում եմ հիշեցնել իմ եղբայրներին ու քույրերին . . . որ մենք կախված ենք մեր տեղեկացվածության և խելամտության համար Աստծո Հոգուց, որը կարող է մեր մեջ լինել, եթե պատշաճորեն զարգացվի, ոգեշնչման ոգի, հայտնության ոգի, հստակորեն ցույց տալով մեր հասկացողությանը Աստծո միտքն ու կամքը, ուսուցանելով մեր պարտականություններն ու պարտավորությունները և թե ինչ է պահանջվում մեր ձեռքից։ . . . Մենք օգնության կարիք ունենք։ Մենք հնարավոր է անենք այն ինչ մեզ կտանի դեպի անախորժություն և խավար, և դեպի այն բաները, որոնք չեն ծառայի մեր բարու համար, բայց այդ մխիթարիչի օգնությամբ, որը Տերը խոստացել է Իր Սրբերին, եթե մենք ուշադիր լինենք լսելու նրա հուշումներին և հասկանանք նրա լեզվի բնույթը, մենք կարող ենք խուսափել շատ անախորժություններից և լուրջ դժվարություններից։[10]

Մենք ամբողջապես կախված ենք ոգեշնչման Հոգուց և արդյոք երբևիցե եղել է ժամանակ Ադամից սկսած, երբ նա զբաղեցրեց Եդեմի պարտեզը, երբ Աստծո Հոգին ավելի անհրաժեշտ լիներ, քան ներկա ժամանակը, ես դրան տեղյակ չեմ։ Ժամանակի նշանները և իրադարձությունների արագ մոտենալը, որոնք կփորձեն Վերջին Օրերի Սրբերի սրտերը և նրանց հավատարմությունը, պահանջում են, որ մենք *այժմ* լրջորեն փնտրենք Աստծո Հոգին և Աստվածային օգնություն, քանզի այն անշուշտ անհրաժեշտ կլինի ներկայումս՝ արագ մոտեցող իրադարձությունների ժամանակ։ Մենք գիտենք, որ մենք անցյալում ունեցել ենք դրա կարիքը։ Մենք կարող ենք հեշտորեն տեսնել, որ եթե մենք չունենայինք Աստծո Հոգին մեզ առաջնորդող այն բազմաթիվ իրադարձությունների միջով, որոնցով

մենք անցել ենք, մենք չէինք լինի վեհացման և փառքի հույսի մեր ներկա վայելքի մեջ և մեր պայմանները շատ ավելի քիչ նպաստավոր կլինեին: Եվ եթե մենք Սուրբ Հոգու կարիքն ենք ունեցել անցյալում, մենք կարող ենք իսկապես հասկանալ, որ այն անհրաժեշտ կլինի ապագայում:[11]

Մենք պարտավոր ենք հասկանալ և ես ենթադրում եմ, որ ընդհանուր առմամբ մենք հասկանում ենք, որ աշխատանքը, որ մենք եկել ենք այս կյանք կատարելու, չի կարող արվել ի փառս Աստծո կամ ինքներս մեզ բավարարելու համար՝ պարզապես մեր սեփական բնական խելամտության միջոցով: Մենք կախված ենք Տիրոջ Հոգուց օգնելու մեզ և ժամանակ առ ժամանակ ցույց տալու մեզ, թե ինչ է մեզ անհրաժեշտ անել հատուկ հանգամանքներում, որոնք կարող են շրջապատել մեզ:[12]

Իսկապես ուղղակի հիմարություն կլիներ սպասել, որ Վերջին Օրերի Սրբերը այս օրերում պիտի ենթարկվեն սելեստիալ օրենքին, օրենք, որը դուրս է գալիս Աստծուց և իր ծրագրով բարձրացնի մարդկանց իր ներկայություն, եթե նրանք հաստատված չեն գերբնական [երկնային] զորությամբ: Ավետարանը խոստանում է այս: Այն խոստանում է Սուրբ Հոգու պարգևը, որը աստվածային է իր բնույթով և որը չեն վայելում որևէ այլ դասի մարդիկ և որը մեզ ասվել է Փրկչի կողմից պետք է առաջնորդի դեպի ամեն ճշմարտություն և ոգեշնչի նրանց, ովքեր ունեն այն և տա նրանց գիտելիք Հիսուսի մասին, գիտելիք Հոր մասին և այն բաների մասին, որոնք վերաբերվում են սելեստիալ աշխարհին, որ այն պիտի ոգեշնչի նրանց, ովքեր ունեն այն՝ գալիք բաների մասին գիտելիքով և բաների մասին, որոնք անցյալ են և ոգեշնչի նրանց այն չափով, որ նրանք պիտի վայելեն գերբնական պարգևներ՝ լեզուների և մարգարեության պարգևը, հիվանդների ձեռնադրման պարգևը, որով նրանք պետք է բժշկվեն:

Նրանք ովքեր ստացել են այս ավետարանը խոստացվել են այս գերբնական ուժերն ու պարգևները, և գիտելիք իրենց մասին, որպեսզի նրանք կախված չլինեն որևէ մարդուց կամ մարդկանց խմբից, կրոնի ճշմարտության վերաբերյալ, որ իրենք ստացել են, այլ որ նրանք պետք է ստանան գիտություն Հորից, որ կրոնը գա նրանից, որ ավետարանը եկել է նրանից և որ նրա ծառան ունենա իրավունք և իշխանություն

սպասավորելու այդ արարողությունները, որպեսզի ոչ մի վարդապետության քամի չցնցի նրանց կամ հեռացնի արահետից, որում նրանք քայլում էին, որպեսզի նրանք պատրաստվեն այն փառքի համար, որը պիտի հայտնի դարձվի և դրա մասնակիցները դարձվեն, որպեսզի նրանք կարողանան դիմանալ ամեն փորձության և տառապանքի, որը Աստծո կամքով պիտի բերվի նրանց վրա, նրանց ավելի լիովին պատրաստելու սելեստիալ փառքի համար, որպեսզի նրանք չքայլեն խավարում, այլ Աստծո լույսի ու զորության մեջ և բարձրանան աշխարհի բաներից վեր, վեր կանգնած իրենց շրջապատող բաներից, որպեսզի նրանք կարողանան անկախ քայլել սելեստիալ աշխարհի տակ և Աստծո և երկնքի աչքի առջև, որպես ազատ մարդիկ, հետևելով այն ուղուն, որով նրանք կարող են բարձրանալ դեպի գիտելիք և զորություն և այսպիսով նախապատրաստվել ստանալու այն փառքը, որ Աստված է առաջարկել շնորհել նրանց և զբաղեցնել վեհացած դիրքը, որն Աստված ծրագրել էր բարձրացնել նրանց։[13]

Մենք պետք է այնպես ապրենք, որ մենք իմանանք, որ մեր կյանքի ուղին ընդունելի է Աստծուն։ Մենք պետք է հասկանանք ձայնը և Սուրբ Հոգու շշունջները։ Այն օրը, երբ երկինքը ծածկված չի լինում ամպերով, մենք հայտնաբերում ենք շրջապատող առարկաները, նրանց գեղեցկությունն ու նպատակը։ Այդպես էլ մենք ենք կախված Աստծո Հոգուց, ճշմարտության և փրկության սկզբունքների վրա սփռվող լույսի համար ։ Ոչ մի դավանող Վերջին Օրերի Սուրբ չի կարող վայելել մեծ չափով երջանկություն, մինչև նա այդպես չապրի և այդ ձևով իրեն չդնի աստվածային առաջնորդության ներքո[14] [տես առաջարկ 4, էջ 93]։

Երբ ապրում ենք խոնարհաբար, Սուրբ Հոգին օգնում է մեզ մեր առաջընթացի ուղում։

Վճռեք ապրել խոնարհ և այն ձևով, որ դուք միշտ ունենաք Տիրոջ Հոգին՝ լինելու ձեր ընկերը, ժամանակ առ ժամանակ անելու ձեզ այնպիսի առաջարկներ, որոնք անհրաժեշտ կլինեն առանձնահատուկ պայմաններում, որոնցում գուցե հայտնվեք։ . . .

. . . Որքան երկար եմ ապրելու ես ոչինչ չգիտեմ այդ մասին և ես չեմ անհանգստանում դրա վերաբերյալ։ Ես իսկապես

ցանկանում եմ և դա մի բան է, որ դուք էլ պիտի ցանկանք՝ ունենալու այն համեստությունը և այն հեզությունը և այն պարզամտությունը վայելելու հայտնության հոգին։ Դա ձեր արտոնությունն է, ձեզանից յուրաքանչյուրի, ունենալ բավականաչափ հայտնության հոգին՝ ճշգրիտ իմանալու, թե ձեզ համար ինչն է պատշաճ անել։ Ձեր արտոնությունն է այն ունենալ նույնքանով, որքանով իմ արտոնությունն է իմանալ, թե ինչ անել վաղը, երբ վաղը գա, Եկեղեցու բարձրագույն շահերի համար, ընդհանրապես։[15]

Մենք պետք է ջանանք որքանով որ հնարավոր է մոռանալ բոլոր աշխարհիկ հարցերը, որոնք վշտացնում և տհաճություն են պատճառում մեզ և կենտրոնացնենք մեր մտքերը Տիրոջ վրա՝ բավականաչափ ունենալով Նրա Սուրբ Հոգին, որպեսզի մենք ի վիճակի լինենք ստանալ այնպիսի գիտելիք և առաջարկներ, որոնք կօգնեն մեզ մեր առաջընթացի ուղու վրա[16] [տես առաջարկ 5, էջ 93]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Երբ վերանայեք 81–84 էջերում գտնվող պատմությունը, մտածեք այն դեպքերի մասին, երբ դուք օրհնվել եք, որովհետև ինչ որ մեկ ուրիշը հետևել էր Սուրբ Հոգու հուշումներին։ Մտածեք նաև այն դեպքերի մասին, երբ դուք եք հետևել ուրիշ ինչ որ մեկին օգնելու հուշումին։
2. Կարդացեք այն բաժինը, որը սկսվում է 84 էջում։ Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում «հաստատված լինել . . . հայտնության վեմի վրա։ (Որոշ օրինակների համար տես էջեր 84–86)։ Ինչպե՞ս կարող է անձնական հայտնությունը մեզ ուժ տալ «դիմանալ ամեն դժվարության» և «արհամարհել ամեն ընդդիմություն»։

3. Նախագահ Մնոուն ասել է, որ Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ «խաղաղություն և երջանկություն վայելել այս աշխարհում» (էջ 88)։ Ե՞րբ է Սուրբ Հոգին օգնել ձեզ երջանիկ լինել և զգալ խաղաղություն։ Որո՞նք են որոշ այլ ուղիներ, որոնցով Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ (օրինակների համար տես էջեր 88–89)։
4. Երբ ուսումնասիրեք 89 էջում սկսվող բաժինը, մտածեք թե ինչպես սովորեցիք ճանաչել սուրբ Հոգու հուշումները։ Ինչպե՞ս կարող եք օգնել ընտանիքի անդամին կամ ընկերոջը սովորել ճանաչել Հոգու հուշումները։
5. Այս գլուխը պարունակում է երկու հղումներ Սուրբ Հոգուն որպես ընկերոջ (էջեր 86 և 88)։ Ինչո՞ւ եք կարծում, որ մենք կարիք ունենք համեստության և պարզության՝ Սուրբ Հոգին մեզ ընկեր ունենալու համար։

Սոնչվող սուրբ գրություններ. Ղուկաս ԺԲ.12, Հովհաննես ԺԴ.26–27, Հռովմեացիս ԺԴ.17, Ա Կորնթացիս ԺԲ.4–11, Գաղատացիս Ե.22–25, 1 Նեփի 10.17–19, 2 Նեփի 32.5

Օգնություն ուսուցչին. «Քննարկում խրախուսելու համար օգտագործեք յուրաքանչյուր գլխի հարցերը։ . . . Դուք կարող եք նաև կազմել ձեր սեփական հարցերը, հատկապես նրանց համար ում դուք ուսուցանում եք» (այս գրքի էջ ix)։

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1898, 2.
2. Տես Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 276–79:
3. *Deseret News,* Jan. 24, 1872, 597.
4. *Deseret News: Semi-Weekly,* Dec. 2, 1879, 1.
5. In Conference Report, Apr. 1899, 52.
6. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.
7. *Deseret Weekly,* Nov. 4, 1893, 609.
8. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.
9. In Conference Report, Apr. 1898, 12.
10. *Deseret News: Semi-Weekly,* July 16, 1878, 1.
11. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
12. In Conference Report, Oct. 1898, 2.
13. *Deseret News,* Jan. 14, 1880, 786.
14. *Millennial Star,* Oct. 31, 1895, 690–91; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the October 1895 general conference.
15. In “Anniversary Exercises,” *Deseret Evening News,* Apr. 7, 1899, 9.
16. *Millennial Star,* Nov. 25, 1889, 737; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the October 1889 general conference.



«Սքանչելի բավականություն է խոսել այն մեծ բաներից մասին, որոնք Աստված մտադիր է շնորհել Իր որդիներին ու դուստրերին»:

Հավատարիմների փայլուն ճակատագիրը

«Սքանչելի բավականություն է խոսել այն մեծ բաների մասին, որոնք Աստված մտադիր է շնորհել Իր որդիներին ու դուստրերին և որոնք մենք պիտի ձեռք բերենք, եթե մենք հավատարիմ լինենք»:

Լորենզո Սնոուի կյանքից

1840 թվականի գարնանը Լորենզո Սնոուն գտնվում էր Նավույում, Իլինոյս, պատրաստվելով Անգլիա մեկնելու միսիայի: Նա այցելեց իր ընկեր Հենրի Ջ. Շերվուդին և նա խնդրեց Եղբայր Շերվուդին բացատրել մի հատված սուրբ գրություններից: «Մինչ ուշադիր լսում էի բացատրությունը, - հետագայում վերհիշում է Նախագահ Սնոուն, - Տիրոջ Հոգին զորությամբ հանգչեց ինձ վրա, իմ հասկացողության աչքերը բացվեցին և ես տեսա այնպես պարզ ինչպես արևը կեսօրին, զարմանքով և ապշահար Աստծո և մարդու ուղին: Ես գրեցի հետևյալ երկտող ոտանավորը, որն արտահայտեց հայտնությունը, ինչպես որ այն ցույց տրվեց ինձ»: . . .

«Ինչպես մարդն այսօր է, մի ժամանակ Աստվածն էր,
Ինչպես այժմ Աստվածն է, կարող է լինել մարդը»:[1]

Զգալով, որ «սրբազան հաղորդակցություն» էր ստացել, որը նա պետք է զգուշորեն պահպաներ, Լորենզո Սնոուն բացահայտ չէր ուսուցանում վարդապետությունը, մինչև որ իմացավ, որ Ջոզեֆ Սմիթը ուսուցանել էր այն:[2] Երբ որ նա իմացավ, որ այդ վարդապետությունը հանրամատչելի գիտելիք է, նա այդ մասին սկսեց հաճախ վկայել:

Բացի նրանից, որ նա այս ճշմարտությունը դարձրեց իր բազմաթիվ քարոզների թեման, նա այն որդեգրեց որպես իր կյանքի թեման: Նրա որդի Լեռոյն ասել է. «Այս հայտնի դարձված

ճշմարտությունը ցնցեց Լորենզո Մնոուին ավելի, քան հավանաբար մնացած ամեն բան, այն այնքան խորը նստեց նրա հոգում, որ դարձավ նրա կյանքի ոգեշնչումը և տվեց նրան լայն տեսադաշտ իր սեփական մեծ ապագայի մասին և Եկեղեցու զորեղ առաքելության և աշխատանքի մասին»:[3] Դա նրա «հաստատուն լույսն էր և ուղեկիցը» և «պայծառ լուսավորող աստղ իր առջև ողջ ժամանակ՝ իր սրտում, իր հոգում և ողջ իր էությունում»:[4]

Այս գլխում Նախագահ Մնոուն ոսուցանում է այն վարդապետությունը, որ մենք կարող ենք դառնալ մեր Երկնային Հոր նման: Գլուխ 6-ում, նա գործնական խորհուրդ է տալիս, թե ինչպես մենք կարող ենք կիրառել այս վարդապետությունը մեր կյանքում:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Քանի որ մենք աստվածայնություն ունենք մեր մեջ, մենք կարող ենք նման դառնալ մեր Երկնային Հորը:

Մենք ծնվել ենք մեր Հայր Աստծո պատկերով, նա է ստեղծել մեզ իր նման: Մեր հոգևոր կառուցվածքում կա աստվածային էության բաղադրիչ, մեր հոգևոր ծննդի ժամանակ մեր Հայրը փոխանցեց մեզ այն ընդունակությունները, ուժերը և ձիրքերը, որոնք նա ինքն ուներ, ինչպես որ երեխան իր մոր ծոցում, չնայած ոչ զարգացած վիճակում, ունի իր ծնողների ձիրքերը, զորություններն ու զգայունակությունները:[5]

Ես հավատում եմ, որ մենք Աստծո որդիներն ու դուստերն ենք և Նա է շնորհել մեզ անսահման իմաստության և գիտելիքի ունակություն, որովհետև Նա է մեզ Իրենից մի բաժին տվել: Մեզ ասվել է, որ մենք ստեղծվել ենք Նրա իսկ պատկերով և մենք գտնում ենք, որ մարդու հոգում կա անմահության մի առանձնահատկություն: Կա հոգևոր մի կառուցվածք այս տաղավարի [ֆիզիկական մարմնի] ներսում և հոգևոր օրգանիզմն ինքն ունի աստվածային մի բան իրենում, թերևս չնայած մանկական վիճակում է, բայց այն ունի իրենում բարեփոխվելու և զարգանալու ունակություն, ինչպես մանուկը, որը սնունդ է ստանում իր մորից: Չնայած մանուկը կարող է լինել շատ անգիտակ, այնուամենայնիվ կան հնարավորություններ նրանում, որ անցնելով մանկության և հասունության տարբեր փորձությունները,

Երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, մենք խմանում ենք մեր աստվածային էության մասին։

հնարավորություն կտան նրան բարձրանալ ավելի գերազանց մի մակարդակի, որը կատարելապես սքանչելի է համեմատած նրա մանկական անգիտության հետ։[6]

Մենք աստվածայնություն ունենք մեր մեջ, մենք անմահություն ունենք մեր մեջ, մեր հոգևոր օրգանիզմն անմահ է, այն հնարավոր չէ կործանել, այն հնարավոր չէ բնաջնջել։ Մենք կապրենք ողջ հավերժությունից ողջ հավերժություն։[7]

Սքանչելի բավականություն է խոսել այն մեծ բաների մասին, որոնք Աստված մտադիր է շնորհել Իր որդիներին ու դուստրերին և որոնք մենք պիտի ձեռք բերենք, եթե հավատարիմ լինենք։ . . . Մեր ճամփորդությունը վեհացման այս ուղու վրա կբերի մեզ Տեր Հիսուս Քրիստոսի լիությանը՝ կանգնելու մեր Հոր ներկայության մեջ՝ ստանալու Նրա լիությունից, ունենալու բավականություն աճեցնելու մեր ժառանգությունում աշխարհներ առանց վերջի, վայելել այն հաճելի ընկերակցությունները, որոնք մենք ունեցել ենք այս կյանքում, ունենալ մեր որդիներն ու դուստրերը, մեր ամուսիններն ու մեր կանայք շրջապատված այն բոլոր վայելքներով, որ երկինքը կարող է շնորհել,

մեր մարմինները փառավորված Փրկչի մարմնի նման, զերծ հիվանդությունից և կյանքի բոլոր չարիքներից և զերծ հիասթափություններից ու անախորժություններից և տհաճ զոհաբերություններից, որոնք մենք կատարում ենք այստեղ:[8]

Անընդմեջ առաջադիմության ուղու միջոցով Երկնային Հայրը ստացավ վեհացում և փառք և նա մատնանշում է մեզ նույն ուղին և քանի որ նա հագած է զորություն, իշխանություն և փառք, նա ասում է.«քայլեք վեր և եկեք տիրացեք նույն փառքին և երջանկությանը, որ ես ունեմ»:[9]

Աստծո ժողովուրդը թանկ է Նրա աչքում, Նրա սերը նրանց հանդեպ միշտ կհարատևի և Նրա զորությամբ և ուժով ու քնքշությամբ, նրանք կցնծան և հաղթող դուրս կգան: Նրանք Նրա զավակներն են, ստեղծված Նրա պատկերով և Նրա օրենքներին իրենց հնազանդության շնորհիվ, կանխորոշված են դառնալ Նրա նման: . . .

. . . Սա Աստծո որդիների բարձր ճակատագիրն է, նրանք ովքեր հաղթահարում են, ովքեր հնազանդ են Նրա պատվիրաններին, ովքեր մաքրագործում են իրենց ճիշտ ինչպես Նա է մաքուր: Նրանք պետք է դառնան Նրա նման, նրանք կտեսնեն Նրան ինչպես որ Նա է, նրանք կտեսնեն Նրա դեմքը և կթագավորեն Նրա հետ Նրա փառքում, դառնալով Նրա նման ամեն ինչում[10] [տես առաջարկ 1, էջ 104]:

Սուրբ գրություններն ուսուցանում են մեր աստվածային ներուժի մասին:

Տերը մեր առջև դրել է ամենասքանչելի բնավորության ձգտելու դրդապատճառներ: Հայտնություններում, որոնք տրվել են Աստծո կողմից, մենք գտնում ենք, թե ինչի կարող է հասնել մարդը, ով կճամփորդի գիտության այս ուղում և կառաջնորդվի Աստծո Հոգու կողմից: Ես այս Եկեղեցու [շատ երկար ժամանակ] անդամ չէի, երբ ինձ հստակորեն ցույց տրվեց, թե ինչի կարող է մարդ հասնել Աստծո Որդու ավետարանին անընդհատ հնազանդվելու միջոցով: Այդ գիտելիքը եղել է անընդհատ ինչպես մի աստղ իմ առջևում և ստիպել է ինձ լինել բծախնդիր՝ փորձելով անել այն, ինչ ճիշտ է և ընդունելի Աստծո համար: . . . Թվում է, այն ողջ կրթությամբ հանդերձ, որ մենք ենք ունեցել

սելեստիալ աշխարհների վերաբերյալ, որ կան որոշ Վերջին Օրերի Սրբեր, ովքեր այնքան լիովին են բավարարված ուղղակի իմանալով, որ աշխատանքը ճշմարիտ է, որ երբ գալիս ենք նրանց հետ խոսելու մեր սքանչելի ապագայի մասին, նրանք զարմացած են թվում և մտածում, որ դա իրենց հետ առանձնապես ոչ մի կապ չունի։Հովհաննես Հայտնողը իր առաջին թղթի երրորդ գլխում ասում է.

«Հիմա Աստուծոյ որդիք ենք» [Ա Հովհաննես Գ.2]։

. . . Ապա շարունակում է.

«Եվ տակաւին յայտնուած չէ թե ինչ պիտի լինենք. բայց գիտենք թէ, երբոր նա կյայտնուի, նորան նման կլինենք, որովհետեւ կտեսնենք նորան ինչպես որ է։

Եւ ամեն ով որ այս յոյսն ունի իրանում, սրբում է իր անձն ինչպէս որ [Աստված] սուրբ է [տես Ա Հովհաննես Գ.2–3]։

. . . Աստծո Հոգին հաղորդել է մեզ, որ կան ամուր և լուրջ ճշմարտություններ այս տիպի արտահայտություններում։ Պողոսը խոսելով Փիլիպպեցիների հետ, առաջարկեց, որ նրանք մշակեին ձգտում, որը շատ տարօրինակ է ներկա ժամանակների մարդկանց, չնայած դա այդպես չէ Վերջին Օրերի Սրբերի վերաբերյալ, հատկապես նրանց համար, ովքեր բավարարված չեն լինել պարզապես մանուկներ Աստծուն վերաբերող բաներում։ Նա ասում է.

«Ձեր ամեն մեկը թող այն մտածէ, որ[ն] էլ Քրիստոս Հիսուսումն էր։

Որ Աստուծոյ կերպարանքումը լինելով, յափշտակութիւն չհամարեց Աստուծուն հաւասար լինել» [Փիլիպպեցիս Բ.5–6]։

. . . Սա այն է, ինչ Պողոսն է ուսուցանել, և նա հասկանում էր, թե ինչի մասին էր խոսում։ Նա հափշտակվել էր երրորդ երկինք և անասելի բաներ լսել, որ ոչ ոքի պետք չէր դրանք խոսել [տես Բ Կորնթացիս ԺԲ.1–7]։ Արդյոք սխալ կլինե՞ր խնդրել մարդկանց այստեղ այսպիսի ձգտում զարգացնել։ Կան մի քանի ասույթներ Աստվածաշնչում, հատկապես Նոր Կտակարանում, որոնք տարօրինակ են թվում մարդկանց, ովքեր չունեն Տիրոջ Հոգին։

«Ով որ յաղթէ, ամենը կժառանգէ» [Հայտնություն ԻԱ.7]։

Այս թղթում Պողոս Առաքյալը վկայել է Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին նման դառնալու, մեր ներքուժի մասին:

Ի՞նչ արտահայտություն է այդ: Ո՞վ է հավատում դրան: Եթե մի հայր իր որդուն ասեր. «Որդիս, հավատարիմ եղիր և հետևիր իմ խորհուրդներին և երբ որ մեծանաս դու կժառանգես այն ամենը ինչ ես ունեմ», մի՞թե դա կնշանակեր, որ ինչ-որ բան այնպես չէ: Եթե հայրը ճշմարտությունն էր ասում, այդ որդին կունենար խրախուսվելու ինչ որ բան՝ հավատարիմ լինելու համար: Արդյոք Հիսուսը կամենում էր խաբել մեզ, երբ Նա օգտագործեց այս արտահայտությունը: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ ոչ մի խաբեություն չկա խոսքում: Նա ճշգրտորեն ի նկատի ուներ այն, ինչ որ ասել էր: Բացի դրանից Հիսուսն ասել է.

Ով որ յաղթում է, կտամ նորան, որ ինձ հետ նստի իմ աթոռի վերայ, ինչպէս ես էլ յաղթեցի եւ նստեցի իմ Հոր հետ նորա աթոռի վերայ»: [Հայտնություն Գ.21]:

Դա սքանչելի ասույթ է։ Կա՞ որևէ ճշմարտություն դրանում։ Այս բոլորը ճշմարտություն է։ Ամենազոր Տերն է ասել դա։ Սուրբ գրություններում Պողոս Առաքյալի կողմից ասվում է մեզ.

«Որովհետեւ գիտենք որ եթե մեր վրանի երկրաւոր շինուածքը քանդուի, Աստուածանից մի շինուածք ունինք՝ անձեռագործ մի տուն, որ յաւիտենական է երկնքումը» [Բ Կորնթացիս Ե.1]։

Ես հավատում եմ դրան։ Եվ երբ նա ասում է, որ Հիսուսը «կնորոգէ մեր խոնարհ մարմինը որ իր փառաւոր մարմնին կերպարանակից լինի» Փիլիպպեցիս Գ.21], ես դրան էլ եմ հավատում։ Վերջին Օրերի Սրբերը արդյոք հավատո՞ւմ են այս բաներին, որոնց մասին ես խոսում եմ։ Դուք, իհարկե, պետք է հավատաք դրանց։ Բացի դրանից.

«Քանզի նա, ով ընդունում է իմ ծառաներին, ընդունում է ինձ.

Եվ նա, ով ընդունում է ինձ, ընդունում է իմ Հորը.

Եվ նա, ով ընդունում է իմ Հորը, ընդունում է իմ Հոր արքայությունը. Հետևաբար, այն ամենն, ինչ Հայրն ունի, կտրվի նրան» [ՎԿՈՒ 84.36–38]։

Մի՞թե որևէ մեկը կարող է մտածել ավելինի մասին, քան կարող էր տրվել։ . . . Պողոսը շատ լավ էր հասկանում այս բաները, քանզի նա ասել է. «Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստուծոյ վերին կոչումի մրցանակին Քրիստոս Յիսուսումը» [տես Փիլիպպեցիս Գ.14]։

Իմ կատարած այս դիտողություններում մենք կարող ենք տեսնել որոշ բան Հիսուս Քրիստոսում այս բարձր կոչման բնույթի մասին։ . . .

. . . Ես չգիտեմ թե քանիսն են այստեղ գտնվողներից, որ ստացել են գիտելիք այս բաների վերաբերյալ իրենց սրտերում։ Եթե դուք ունեք, ես կասեմ ձեզ, ինչպիսին կլինեն դրանց հետևանքները։ Ինչպես Հովհաննեսն է ասել.

«Եւ ամեն ով որ այս յոյսն ունի իրանում, սրբում է իր անձն ինչպէս որ [Աստված] սուրբ է» [տես Ա Հովհաննես Գ.3]։

. . . Աստված նշել է փառքի ու վեհացման այս ճանապարհով ճամփորդելու արդյունքները և խոստումները հավաստի են։ Տերը ճշգրիտ գիտեր, թե Ինքը ինչ կարող էր անել։ Նա գիտեր, թե ինչ նյութերի հետ պիտի գործ ունենար։ Եվ Նա ուղղակի

գիտեր, թե ինչ էր ասում: Եթե մենք անենք այն մասը, որը մեզ է հանձնարարված և պահենք մեր երկրորդ վիճակը, մենք համոզված կլինենք իրականացնել այս խոստումները ամենայն մանրամասնությամբ և ավելի, քան դուք և ես կարող ենք հնարավորինս պատկերացնել[11] [տես առաջարկ 2, էջ 104]:

Երբ մենք հիշում ենք այն օրհնությունները, որ Տերն է պատրաստել մեզ համար, մենք գտնում ենք ուրախություն կյանքի հոգսերի և անախորժությունների մեջ:

Չկա Վերջին Օրերի Սուրբ իմ ձայնի հասանելիության սահմաններում, որն անպայման չունենա առաջին հարության այդ առավոտյան դուրս գալու հեռանկարը և լինելով փառավորված, վեհացած Աստծո ներկայության մեջ, ունենալ արտոնություն խոսելու մեր Հոր հետ, ինչպես խոսում ենք մեր երկրային հոր հետ:[12]

Չեն կարող մարդկանց առջև դրվել ավելի փառահեղ հեռանկարներ, քան դրված են Սրբերի առջև: Ոչ մի մահկանացու մարդ չէր կարող ցանկանալ որևէ ավելի մեծ բան կամ որը վերջում ապացուցեր, որ ավելի բավականացնող է: Այն ամենը ինչ կապված է կատարյալ խաղաղության, երջանկության, փառքի և վեհացման հետ Վերջին Օրերի Սրբերի առջևում են: Մենք պետք է վայելենք այս ոգին և ակտիվորեն պահենք այն մեր առջևում: Մենք չպետք է թողնենք, որ մեր հեռանկարները նվազագույն իսկ չափով խավարեցվեն՝ անելով այն, ինչ ընդունելի չէ Տիրոջ առջև:[13]

Ապագա կյանքին վերաբերող իմ հույսերը գերազույն աստիճանի մեծ են ու փառահեղ և ես փորձում եմ անընդհատ պայծառ պահել այս հեռանկարները և դա յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի արտոնությունն է ու պարտականությունը:[14]

Մենք բոլորս լիովին չենք պատկերացնում այն օրհնություններն ու արտոնությունները, որոնք ավետարանում պատրաստված են ստանալու մեզ համար:Մենք լիովին չենք հասկանում և մենք մեր տեսադաշտում մեր առջև չունենք այն բաները, որոնք սպասում են մեզ հավերժական աշխարհներում, ոչ էլ իրականում այն բաները, որոնք սպասում են մեզ

այս կյանքում և որոնք նախատեսված են նպաստելու մեր խաղաղությանը և երջանկությանը և պատասխանելու մեր սրտերի ցանկություններին։ . . .

Մենք հաճախ մեզ շրջապատող հոգսերի բազմազանությունից դառնում ենք մոռացկոտ, և այս բաները մեր առջին չեն լինում, և այդ ժամանակ մենք չենք գիտակցում, որ ավետարանը ծրագրված է ու նախատեսված իր բնույթով մեզ շնորհելու այս բաները, որոնք կբերեն փառք, պատիվ և վեհացում, որոնք կբերեն երջանկություն, խաղաղություն և փառք։ Մենք միտված ենք մոռանալ այս բաները կյանքի հոգսերի և անախորժությունների մեջ և մենք լիովին չենք հասկանում, որ դա մեր արտոնությունն է և Տերը դրել է այն մեր հասանելության սահմանում ձգտելու, որ ավետարանի օգնությամբ մենք կարողանանք անընդհատ ունենալ խաղաղություն մեր ներսում։ . . .

Որտե՞ղ է սգալու պատճառը։ Որտե՞ղ է պատճառը Սրբերի համար ունենալ տխուր դեմքեր։ Որտե՞ղ է արտասվելու կամ դժգոհելու պատճառը։ Չկա ոչինչ, բայցի կյանքից ու մահից, որ դրված է մեր առջև, իշխանություններն ու զորությունները մերն են, եթե մենք հավատարիմ շարունակենք, իսկ եթե մենք անտեսենք ավետարանը՝ վիշտ և արտաքսում։

Ի՞նչ կարող ենք ավելին ցանկանալ քան պարունակվում է մեր կրոնում։ Եթե մենք ամուր կանգնենք վեմի վրա և հետևենք Հոգուն, որը դրվել է մեր ծոցում, մենք ճիշտ կվարվենք մեր պարտականությունների մեջ, մենք ճիշտ կվարվենք նրանց հանդեպ, ովքեր մեզ վերադաս են դրվել, մենք ճիշտ կվարվենք լույսում, թե՝ խավարում։

Ո՞ւր է այն մարդը, որը մի կողմ կշրջվի և դեն կնետի այդ հեռանկարները, որոնք պարունակվում են ավետարանում, որը մենք ենք ընդունել։Դրանում կա բավականություն, կա ուրախություն, կա կայունություն, կա մի բան, որի վրա կարող ենք դնել մեր ոտքը, կա վրան կառուցելու ամուր հիմք և որի վրա մատուցելու այն, ինչ պահանջվում է մեզանից։[15]

Եկեք երբեք թույլ չտանք, որ մեր հեռանկարները դառնան մշուշապատ, թող դրանք լինեն թարմ մեր առջև՝ ցերեկ, թե գիշեր, և ես հավաստիացնում եմ ձեզ, որ եթե մենք անենք այս, մեր աճը օրեցօր և տարեցտարի սքանչելի կլինի։[16]

Մենք բոլորս նպատակաուղղված ենք սելեստիալ փառքի վրա և մեր առջևի հեռանկարների սքանչելիքը չի կարող արտահայտվել մարդկային լեզվով: Եթե դուք հավատարիմ շարունակեք աշխատել այն բաներում, որոնցով դուք զբաղված եք, դուք ձեռք կբերեք այս փառքը և կցնծաք հավիտյան Աստծո և Գառի ներկայության մեջ: Արժե պայքարել սրա համար, արժե զոհաբերել սրա համար և օրհնված է այն մարդը կամ կինը, ով հավատարիմ է մնում, մինչև ձեռք բերի այն[17] [տես առաջարկ 3, ստորև]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Նախագահ Լորենզո Մնուոն հաճախ է ուսուցանել, որ մենք Աստծո զավակներն ենք (էջեր 96–98): Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունն ազդել, թե ինչպես մենք կզգանք մեր և ուրիշների հանդեպ: Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին և երիտասարդներին հիշել, որ նրանք Աստծո որդիներն ու դուստրերն են:
2. Ի՞նչ մտքեր ունեք այն սուրբ գրությունների մասին, որոնք Նախագահ Մնոուն է մեջբերել, ուսուցանելու մեր աստվածային ներուժի մասին (տես էջեր 98–102):
3. Կարդացեք 102 էջում սկսվող բաժինը: Ինչպե՞ս կարող են «կյանքի հոգսերն ու անախորժությունները» ստիպել մեզ մոռանալ ավետարանի հավերժական օրհնությունների մասին: Ի՞նչ կարող ենք անել մեր ներուժը «թարմ» և «ակտիվ մեր առջև» պահպանելու համար: Ի՞նչ ուղիներով կարող է մեր ճակատագիրը հիշելը, ազդել մեր ապրելակերպի վրա:
4. Երբ ուսումնասիրեցիք այս գլուխը, ի՞նչ սովորեցիք մեր Երկնային Հոր մասին: Ի՞նչ սովորեցիք ձեր ճակատագրի մասին, որպես Աստծո դուստր և որդի:

Սոնչվող սուրբ գրություններ. Հռովմայեցիս Ը.16–17, Ա Կորնթացիս Բ.9–10, Ալմա 5.15–16, Մորոնի 7.8, ՎևՈՒ 58.3–4, 78.17–22, 132.19–24

Օգնություն ուսուցչին. «Վկայեք, երբ որ Հոգին ձեզ հուշում է անել այդ, ոչ թե ուղղակի ամեն դասի վերջում: Ապահովեք հնարավորություններ նրանց համար, ում դուք ուսուցանում եք բերել իրենց վկայությունները» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 45):

Հղումներ

1. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 46; see also "The Grand Destiny of Man," *Deseret Evening News,* July 20, 1901, 22.
2. Տես *Biography and Family Record of Lorenzo Snow,* 46–47; "Glory Awaiting the Saints," *Deseret Semi-Weekly News,* Oct. 30, 1894, 1:
3. LeRoi C. Snow, "Devotion to a Divine Inspiration," *Improvement Era,* June 1919, 656.
4. LeRoi C. Snow, "Devotion to a Divine Inspiration," 661.
5. *Deseret News,* Jan. 24, 1872, 597.
6. In Conference Report, Apr. 1898, 63.
7. In "Anniversary Exercises," *Deseret Evening News,* Apr. 7, 1899, 10.
8. *Millennial Star,* Aug. 24, 1899, 530.
9. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.
10. *Deseret Semi-Weekly News,* Oct. 4, 1898, 1
11. "Glory Awaiting the Saints," 1.
12. In Conference Report, Oct. 1900, 4.
13. In Conference Report, Oct. 1898, 3.
14. In Conference Report, Oct. 1900, 4.
15. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.
16. In Conference Report, Apr. 1899, 2.
17. In "Prest. Snow to Relief Societies," *Deseret Evening News,* July 9, 1901, 1.

Լեռան քարոզում Փրկիչն ասաց. «Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը որ երկնքումն է, կատարեալ է» (Մատթեոս Ե.48):

Կատարյալ դառնալով Տիրոջ առջև. «Օրեցօր մի փոքր ավելի լավ»

«Մի սպասեք ավելի կատարյալ դառնալ միանգամից: Եթե այդպես անեք, դուք կհիասթափվեք: Եղեք ավելի լավն այսօր, քան դուք երեկ էիք և եղեք ավելի լավը վաղը, քան այսօր եք»:

Լորենզո Մնոուի կյանքից

Նախագահ Լորենզո Մնոուն մի անգամ այցելեց մի քահանայության ժողով, որի ժամանակ յուրաքանչյուր երեցների քվորումից մի ներկայացուցիչ էր կանգնում և զեկուցում, թե ինչ էր արել իր քվորումը: Երբ Նախագահ Մնոուն լսում էր այս երիտասարդ տղամարդկանց, նա հիշեց իրեն շատ տարիներ առաջ: Երբ նա կանգնեց խոսելու, նա ասաց.

«Ես ուզում եմ ասել մի բան, եթե հնարավոր է, որը դուք երբեք չեք մոռանա և կարծում եմ, որ երևի կարող եմ անել այդպես:

Ես տեսնում եմ, ինչպես գրեթե միշտ եմ նկատում , երբ երիտասարդ Երեցները միասին են և փաստորեն, երբ միջահասակ Երեցներն են միասին, մի տեսակ լսարանի առջև դժկամություն կա խոսելու: Ես տեսնում եմ դա այստեղ, այս առավոտ այն, երիտասարդ տղամարդկանց մոտ, ովքեր բարձրացան արտահայտվելու համար և տալու տեղեկություն այն առանձնահատուկ աշխատանքի մասին, որ նրանք են կատարել:

Հավանաբար, չեմ սխալվի, եթե պատմեմ ձեզ մի փոքր իմ փորձառությունից, երբ ես սկսեցի խոսել հասարակության առաջ, նույնիսկ նախքան իմ Երեց լինելը: Ես հիշում եմ առաջին անգամ ես կանչվեցի բերելու իմ վկայությունը: . . . Դա մի բան էր, որից ես շատ էի սարսափում, սակայն միևնույն

ժամանակ ես զգում էի, որ դա իմ պարտականությունն էր վեր կենալ, բայց ես սպասում էի ու սպասում։Մեկը բերեց վկայություն, մեկ ուրիշը բերեց վկայություն, ապա մեկ ուրիշը և նրանք գրեթե վերջացրեցին, բայց ես դեռ սարսափում էի վեր կենալ։ Ես երբեք չէի խոսել հանդիսականների առջև։ . . . Ի [վերջո] ես եզրակացրեցի, որ գրեթե իմ վեր կենալու ժամանակն էր։ Ես այդպես էլ արեցի։ Դեհ, ի՞նչ եք կարծում որքան ժամանակ տևեց իմ խոսքը։ Կարծում եմ մոտ կես րոպե, հնարավոր չէ, որ դա մեկ րոպեից ավելի տևած լիներ։ Դա իմ առաջին ճիգն էր, իսկ երկրորդը կարծում եմ գրեթե նույնն էր։ Ես ամաչկոտ էի,. . . բայց ես մտադրվեցի, ամուր և հաստատ, որ երբ էլ որ ես կանչվեմ այս տիպի որևէ պարտականություն կատարելու կամ որևէ այլ ձևի, ես կանեմ այն անկախ նրանից թե ինչպիսին կլինի արդյունքը։Դա, որպես Երեց Իսրայելում, իմ հաջողության հիմքի մի մասն է։

Նախագահ Մնոուն պատմեց երիտասարդ տղամարդկանց, որ ոչ շատ ժամանակ անց այս փորձառությունից, նա անցկացրեց իր առաջին ժողովը որպես լիաժամկետ միսիոներ։ «Ես երբեք չեմ սարսափել որևէ բանից այդքան շատ իմ կյանքում, որքան այդ ժողովից», վերհիշում էր նա։ «Ես աղոթեցի ողջ օրը, մեկուսացա և կանչեցի առ Տերը։ Ես երբեք չէի խոսել [հասարակության] առջև նախկինում, բացի վկայության ժողովներից։ Ես սարսափում էի դրանից։ Չեմ պատկերացնում, որ որևէ մեկը երբևէ այնպես սարսափած լիներ գործերի վիճակից, ինչպես ես այդ ժամանակ։ Ժողովը տեղի ունեցավ և սենյակը բավականին լեփ լեցուն էր։ . . . Ես սկսեցի խոսել և կարծում եմ զբաղեցրեցի մեկ ժամի մոտ երեք քառորդը։[1] Նույն ժողովի մեկ այլ պատմության մեջ նա գրել է.«Երբ ես կանգնեցի այդ բազմության առջև, չնայած ես չգիտեի թե կկարողանայի մեկ խոսք իսկ ասել, հենց որ ես բացեցի բերանս խոսելու համար Սուրբ Հոգին զորությամբ հանգչեց ինձ վրա, լցնելով միտքս լույսով և հաղորդակցվելու գաղափարներով և պատշաճ լեզվով նրանց հաղորդելու համար։ Մարդիկ ապշած էին մնացել և խնդրեցին ևս մեկ ժողով»։[2]

Նախագահ Մնոուն տվեց երիտասարդ տղամարդկանց դաս որով ցանկանում էր, որ սովորեին իր փորձառությունից. «Իմ երիտասարդ ընկերներ կա հնարավորություն ձեզ համար

դառնալ մեծ՝ ճիշտ այնքան մեծ, որքան դուք եք կամենում: Սկսելով ձեր կյանքը դուք կարող եք դնել ձեր սրտերը բաների վրա, որոնք շատ դժվար է ձեռք բերել, բայց հնարավոր է՝ ձեր հասանելիության սահմաններում:Ձեր առաջին ջանքերում ձեր ցանկությունները բավարարելու համար, դուք հնարավոր է ձախողվեք և ձեր շարունակական ջանքերը գուցե չապացուցեն, այն ինչ կոչվում է հաջողություն: Բայց այնքանով, որքանով ձեր ջանքերն ազնիվ են եղել և որքանով ձեր ցանկությունները հիմնված են եղել արդարության վրա, փորձառությունը, որ դուք ձեռք կբերեք, երբ հետամուտ լինեք ձեր սրտերի ցանկություններին, պետք է անհրաժեշտաբար օգտակար լինի ձեզ համար, և նույնիսկ ձեր սխալները, եթե սխալներ կատարեք, կդարձվեն ձեր առավելության համար»:[3]

Սա Նախագահ Մնոուի սիրելի թեման էր: Նա հաճախ էր հիշեցնում Սրբերին Տիրոջ կատարյալ լինելու պատվիրանի մասին և նա հավաստիացնում էր, որ իրենց իսկ ջանասիրության միջոցով և Տիրոջ օգնությամբ նրանք կկարողանային հնազանդվել այդ պատվիրանին: Նա ուսուցանել է. «Մենք պարտավոր ենք զգալ մեր սրտերում, որ Աստված մեր Հայրն է, և որ երբ մենք սխալներ ենք անում և դեռ թույլ ենք, եթե մենք ապրում ենք այնքան մոտիկ, կատարյալին որքան կարող ենք, ամեն ինչ լավ կլինի մեզ համար»:[4]

Լորենզո Մնոուի ուսմունքները

Ջանասիրությամբ, համբերությամբ և աստվածային օգնությամբ, մենք կարող ենք հնազանդվել կատարյալ լինելու Տիրոջ պատվիրանին:

«Եւ երբոր Աբրամն իննսունեւինը տարեկան էր, Եհովան երեւեցավ Աբրամին եւ ասեց նորան. Ես եմ Ամենակարող Աստուածը. Իմ առաջին վարուիր, եւ կատարեալ եղիր» [Ծննդոց ԺԷ.1]:

Սրա հետ կապված ես կմեջբերեմ Փրկչի խոսքերի մի մասը Լեռան վրայի Իր քարոզից, ինչպես պարունակվում է Մատթեոս Ե գլխի վերջին հատվածում:

«Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը, որ երկնքումն է, կատարեալ է» Մատթեոս Ե.48:. . .

Տերը պատվիրեց Աբրահամին. «Իմ առաջին վարուիր, եւ կատարեալ եղիր» (Ծննդոց 17.1):

Մենք իմանում ենք, որ Տերը հայտնվեց Աբրահամին և նրան շատ մեծ խոստումներ տվեց և նախքան նա կպատրաստվեր ստանալու դրանք, մի որոշակի պահանջ ներկայացվեց նրան, որ նա[Աբրահամը] պետք է կատարյալ դառնար Տիրոջ առաջին: Եվ նույն առաջարկն արվեց Փրկչի կողմից Իր Աշակերտներին, որ նրանք պետք է կատարյալ դառնան , նույնիսկ ինչպես Նա և Իր Հայրը, որ Երկնքում էր կատարյալ էին: Ես զգում եմ, որ սա մի թեմա է, որը մտահոգում է Վերջին Օրերի Սրբերին և ես ուզում եմ ներկայացնել մի քանի դիտողություններ առաջարկի ձևով, նրանց խորհրդածության համար, ովքեր մտահոգված են:

Տերն առաջարկում է շնորհել բարձրագույն օրհնությունները Վերջին Օրերի Սրբերին, բայց Աբրահամի նման, մենք էլ պետք է նախապատրաստվենք դրա համար և այս անելու համար այն նույն օրենքը, որը տրվել էր նրան Տիրոջ կողմից, տրվեց մեզ, որ մենք պահպանենք: Մեզանից ևս պահանջվում է հասնել կատարելության վիճակի Տիրոջ առջև և Տերն այս դեպքում, նմանապես յուրաքանչյուր այլ դեպքում, չի ներկայացնում

պահանջ, որը հնարավոր չլինի կատարել, բայց մյուս կողմից, նա դրել է Վերջին Օրերի Սրբերի օգտագործման համար, այն միջոցները, որոնցով նրանք կարող են ենթարկվել Իր սուրբ կարգին: Երբ Տերը ներկայացրեց այս պահանջն Աբրահամին, Նա տվեց նաև միջոց, որով նա կարողանար որակավորված դառնալ հնազանդվելու այդ օրենքին և լիովին հարմարվելու պահանջին: Նա ուներ Սուրբ Հոգու արտոնությունը, քանի որ մեզ ասվել է, որ ավետարանը քարոզվեց Աբրահամին և այդ ավետարանի միջոցով նա կարող էր ձեռք բերել այդ աստվածային օգնությունը, որը նրան հնարավորություն կտար հասկանալ Աստծո բաները և առանց դրա, ոչ մի մարդ չէր կարող հասնել կատարելության վիճակի Տիրոջ առջև:

Այսպիսով, ինչ վերաբերում է Վերջին Օրերի Սրբերին, նրանք չէին կարող հնարավորինս մոտենալ այդպիսի բարոյական և հոգևոր չափանիշի, բացի զերբնական [երկնային] օգնության և օժանդակության միջոցով: Մենք ոչ էլ ակնկալում ենք, որ Վերջին Օրերի Սրբերը միանգամից կարող են ենթարկվել այս օրենքին բոլոր պայմաններում: Դա ժամանակ է պահանջում, այն մեծ համբերություն է պահանջում և մտքի ու սրտի կարգապահություն, որպեսզի հնազանդվենք այս պատվիրանին: Եվ չնայած մենք մեր առաջին փորձերում կարող է ձախողվենք, սակայն դա չպետք է հուսահատեցնի Վերջին Օրերի Սրբերին ճիգ թափելու վճռականություն գործադրել՝ այս մեծ պահանջին ենթարկվելու համար: Աբրահամը, չնայած զուցե ուներ հավատք քայլելու Տիրոջ առջև համաձայն այս աստվածային օրենքի, սակայն կային դեպքեր, երբ նրա հավատքը ցավագին ձևով փորձվեց, բայց միևնույն է նա չհուսահատվեց, որովհետև նա գործադրեց վճռականություն ենթարկվելով Աստծո կամքին:

Մենք զուցե մտածենք, որ չենք կարող ապրել այդ կատարյալ օրենքով, որ ինքներս մեզ կատարելագործելու աշխատանքը խիստ դժվար է: Սա կարող է մասնակիորեն ճիշտ լինել, բայց փաստը դեռևս մնում է, որ դա հրաման է Ամենակարողից մեզ և մենք չենք կարող անտեսել այն: Երբ մենք անցնում ենք փորձության պահերով, այդ ժամանակ է, որ մենք պետք է օգտագործենք առ Տերն աղաղակելու այդ մեծ արտոնությունը՝ ուժի և հասկացողության, խելամտության և շնորհի համար, որի միջոցով մենք կարող ենք հաղթահարել մարմնի թուլությունը,

որի դեմ մենք պետք է անընդհատ պատերազմ մղենք[5] [տես առաջարկներ 1 և 2, էջ 120]։

Երբ մենք ենթարկվում ենք Տիրոջ պահանջին, մենք կատարյալ ենք դառնում այդ ոլորտում։

Աբրահամը կանչվեց թողնել իր գերդաստանն ու երկիրը [տես Աբրահամ 2.1–6]։ Եթե նա չենթարկվեր այս պահանջին, նա հավանության չէր արժանանա Տիրոջ կողմից։ Բայց նա իսկապես ենթարկվեց և երբ նա մեկնում էր իր տնից, նա անկասկած մեկնում էր հնազանդվելով կատարելագործման այդ աստվածային օրենքին։ Եթե նա ձախողվեր սրանում, նա անշուշտ չէր կարողանա հնազանդվել Ամենակարողի պահանջներին։ Եվ երբ նա հեռանում էր իր հոր տնից, երբ նա ենթարկվում էր այս փորձությանը, նա անում էր այն, ինչ նրա խիղճն ու Աստծո Հոգին էին արդարացնում նրան դա անելիս, և ոչ ոք չէր կարող ավելի լավ անել, քանի որ նա անիրավություն չէր անում, երբ կատարում էր այդ աշխատանքը։

Երբ Վերջին Օրերի Սրբերը ստացան ավետարանը հեռավոր ազգերի մեջ և երբ Ամենակարողի ձայնը եղավ նրանց, թողնել իրենց հայրերի երկրները, թողնել իրենց գերդաստանը ինչպես Աբրահամն արեց, քանի դեռ նրանք ենթարկվեցին այս պահանջին, այդքանով նրանք քայլում էին այս օրենքին հնազանդ և նրանք այնքան կատարյալ էին, որքան մարդը կարող է լինել այդ պայմաններում և այն ոլորտում, որում նրանք գործում էին, ոչ թե այն որ նրանք կատարյալ էին գիտելիքով կամ զորությամբ և այլն, բայց իրենց զգացմունքներով, իրենց նվիրվածությամբ, դրդապատճառներով և վճռականությամբ։ Եվ երբ նրանք անցնում էին մեծ անդունդով, քանի դեռ նրանք չէին տրտնջում կամ բողոքում, այլ հնազանդվում էին խորհուրդներին, որոնք տրվում էին նրանց և ամեն ձևով վարվում էին պատշաճ ձևով, նրանք այնքան կատարյալ էին ինչպես Աստված էր պահանջել նրանց լինել։

Տերը նախատեսել է դաստիարակել մեզ սելեստիալ արքայության համար։ Նա ուղիղ հայտնության միջոցով հայտնել է, որ մենք Նրա հետնորդներն ենք, ծնված հավերժական աշխարհներում, որ մենք եկել ենք այս երկիր հատուկ նպատակով՝ նախապատրաստվելու ստանալ մեր Հոր փառքի լիությունը,

երբ վերադառնանք Նրա ներկայություն: Ուստի մենք պետք է որոնենք կարողություն՝ պահելու այս օրենքը՝ սրբագործելու մեր դրդապատճառները, ցանկությունները, զգացմունքները և համակրանքները, որ նրանք անբիծ լինեն և սուրբ և մեր կամքը բոլոր բաներում ենթարկենք Աստծո կամքին և չունենանք մեր սեփական կամքը, բացի անելուց մեր Հոր կամքը: Այդպիսի մարդը իր ոլորտում կատարյալ է և հրավիրում է Աստծո օրհնությունը բոլոր բաներում, որ նա անում է և ուր էլ որ գնում է:

Բայց մենք ենթակա ենք անմտության, մարմնական թուլության և մենք քիչ թե շատ անտեղյակ ենք, այդ պատճառով հակված ենք սխալվելու: Այո, բայց դա պատճառ չէ, որ մենք ցանկություն չզգանք ենթարկվելու Աստծո այս հրամանին, հատկապես տեսնելով, որ նա դրել է մեր հասանելիության սահմաններում միջոցներ, իրականացնելու այս աշխատանքը: Այս ես հասկանում եմ կատարելագործում բառի իմաստն է, ինչպես արտահայտվել է մեր Փրկչի կողմից և Տիրոջ կողմից՝ Աբրահամին:

Մարդը կարող է կատարյալ լինել որոշ բաներում , իսկ մյուսներում ոչ: Մարդը, որը հավատարմորեն հնազանդվում է իմաստության խոսքին, կատարյալ է այնքանով, որքանով դա վերաբերում է այդ օրենքին: Երբ մենք ապաշխարեցինք մեր մեղքերից և մկրտվեցինք դրանց թողության համար, մենք կատարյալ էինք այնքանով, որքանով այդ հարցին էր վերաբերում[6] [տես առաջարկ 3, էջ 120]:

Հուսահատվելու փոխարեն, երբ մենք ձախողվում ենք, կարող ենք ապաշխարել և Աստծուց ուժ խնդրել ավելի լավ գործելու համար:

Այժմ մեզ ասվում է Հովհաննես Առաքյալի կողմից, որ մենք «Աստուծոյ որդիք ենք, եւ տակաւին յայտնուածչէ թէ ինչ պիտի լինենք. Բայց գիտենք թէ, երբոր նա կյայտնուի, նորան նման կլինենք, որովհետեւ կտեսնենք նորան ինչպես որ է: Եւ ամեն ով որ այս յոյսն ունի իրանում, սրբում է իր անձն ինչպէս որ նա [Քրիստոսը] սուրբ է» [տես Ա Հովհաննես Գ.2–3]: Վերջին Օրերի Սրբերը, սպասվում է, որ հասնեն կատարելության այս վիճակին, մենք ակնկալում ենք դառնալ ինչպես մեր Հայրն ու Աստվածը, համապատասխան և արժանի զավակներ բնակվելու

Մենք պետք է օրեցօր բարելավենք մեր հարաբերությունները ընտանիքի անդամների հետ:

Նրա ներկայության մեջ, մենք սպասում ենք, որ երբ Աստծո Որդին հայտնվի, մենք կստանանք մեր նորոգված և փառավորված մարմինները և որ «կնորոգէ այս խոնարհ մարմինը, որ փառավոր մարմնին կերպարանակից կլինի» [տես ՐՓիլիպպեցիս Գ.21]:

Սրանք են մեր սպասումները: Այժմ թող բոլոր ներկաները տան իրենց այս հարցը. Արդյոք մեր սպասումները լավ հիմնավորվա՞ծ են: Այլ խոսքով ասած արդյոք մենք ձգտում ենք մաքրագործվել: Ինչպե՞ս կարող է Վերջին Օրերի Սուրբը արդարացված զգալ իրեն, իր ներսում, մինչև նա չձգտի մաքրագործել իրեն ճիշտ ինչպես Աստված է մաքուր, մինչև նա չձգտի իր խիղճը մաքուր պահել վիրավորանքից Աստծո և մարդու առջև իր կյանքի յուրաքանչյուր օրը: Մենք անկասկած, մեզանից շատերը քայլում են օրեցօր, շաբաթից շաբաթ և ամսե ամիս, Աստծո առջև՝ չզգալով ոչ մի դատապարտություն, մեզ հանգստացնելով պատշաճորեն և լրջորեն ձգտելով և ողջ հեզությամբ, որ Սուրբ Հոգին թելադրի մեր ամենօրյա ընթացքը, և այնուամենայնիվ կարող է լինել որոշակի ժամանակ կամ ժամանակներ մեր կյանքում, երբ մենք խիստ փորձվում ենք

և գուցե ձախողվում, նույնիսկ եթե դա այդպես է լինում, դա պատճառ չէ, որ մենք կրկին չփորձենք և անենք դա կրկնապատկված էներգիայով և վճռականությամբ՝ մեր նպատակն իրականացնելու համար։[7]

Տերը կամենում է Իր զավակներին ներողամտություն ցույց տալ երկրի վրա, բայց Նա պահանջում է նրանցից ճշմարիտ ապաշխարություն, երբ նրանք օրինազանցում են, կամ՝ ձախողվում որևէ պարտականության մեջ։ Նա ակնկալում է նրանցից հնազանդություն և որ նրանք ջանք գործադրեն մի կողմ նետելով բոլոր մեղքերը, մաքրագործելով իրենց և իսկապես դառնալով Իր ժողովուրդը, Իր սրբերը, որպեսզի նրանք պատրաստված լինեն գալ Իր ներկայությունը, դառնալու Իր նման բոլոր բաներում, թագավորելու Իր հետ Իր փառքում։ Այս իրականացնելու համար նրանք պետք է քայլեն նեղ և անձուկ արահետով, դարձնելով իրենց կյանքն ավելի պայծառ և ավելի լավը, լինելով լցված հավատքով և գթությամբ, որը Քրիստոսի մաքուր սերն է և հավատարմորեն կատարելով յուրաքանչյուր պարտականություն՝ Ավետարանում։[8]

Եթե մենք կարողանայինք կարդալ մանրամասնորեն Աբրահամի կամ այլ մեծ և սուրբ մարդկանց կյանքը, մենք անկասկած կգտնեինք, որ արդարակյաց լինելու նրանց ջանքերը միշտ չէ որ պսակվում էին հաջողությամբ։ Ուստի մենք չպետք է հուսահատվենք, եթե մենք թուլության պահին ձախողվել ենք, այլ ընդհակառակը, անմիջապես պետք է ապաշխարենք սխալից կամ այն անիրավությունից, որ մենք գուցե գործել ենք, և հնարավորին չափով ուղղենք սխալը և որոնենք Աստծուց նորոգված ուժ շարունակելու և ավելի լավ գործելու համար։

Աբրահամը կարողանում էր կատարելապես քայլել Աստծո առջև օրեցօր, երբ նա թողեց իր հոր տունը և ցույց տվեց զերազանց և լավ կարգավարժված մտքի ապացույցներ՝ այդ ընթացքում առաջարկներ կատարելով, երբ իր հովիվները վիճաբանեցին իր եղբոր որդի Ղովտի հովիվների հետ, [տես Ծննդոց ԺԳ.1–9]։Այնուամենայնիվ եկավ ժամանակ Աբրահամի կյանքում, որը պետք է որ խիստ փորձիչ լիներ, փաստորեն ,շատ ավելի դաժան քան երբևէ կարելի էր սպասել, դա այն ժամանակ էր, երբ Տերը նրան կանչեց իր սիրելի և միակ որդուն զոհաբերություն մատուցելու, այսինքն՝ նրան, ում միջոցով

նա սպասում էր, որ կկատարվի Տիրոջ կողմից իրեն տրված մեծ խոստումը, սակայն դրսևորելով ճիշտ դիրքորոշում, նա կարողացավ հաղթահարել փորձությունը և ապացուցել իր հավատքն ու հավատարմությունն առ Աստված [տես Ծննդոց ԻԲ.1–14]: Հազիվ թե կարելի է ենթադրել, որ այդպիսի մտքի մակարդակ Աբրահամը ժառանգած լիներ իր կռապաշտ ծնողներից, բայց, տրամաբանական է հավատալ, որ Աստծո օրհությամբ նա կարողացավ ձեռք բերել այն՝ անցնելով նմանատիպ մի պայքարով մարմնի հետ, ինչպես մենք և անկասկած երբեմն ձախողվելով, մինչև նա ի վիճակի դարձավ դիմանալու այդքան դաժան քննությանը:

«Թող այս նույն միտքը լինի ձեր մեջ, - ասում է Պողոս Առաքյալը,- որ էլ Քրիստոս Յիսուսումն էր. Աստուծոյ կերպարանքումը լինելով, յափշտակութիւն չհամարեց Աստուծուն հաւասար լինել» [տես Փիլիպպեցիս Բ.5–6]: Այժմ ամեն մարդ, ով այս նպատակն ունի իր առջև կմաքրի իրեն ինչպես Աստված է մաքուր և կփորձի կատարյալ քայլել Նրա առջև: Մենք ունենք մեր փոքրիկ սխալներն ու թուլությունները, մենք պետք է փորձենք հաղթահարել դրանք այնքան արագ, որքան հնարավոր է, և մենք պետք է սերմանենք այս զգացումը մեր երեխաների սրտերում, որ Աստծո երկյուղը կարողանա աճել նրանց հետ իրենց շատ փոքր հասակից, և որպեսզի նրանք կարողանան սովորել իրենց պատշաճ ձևով պահել Նրա առջև, բոլոր հանգամանքներում:

Եթե ամուսինը կարողանում է ապրել իր կնոջ հետ մի օր առանց վիճելու կամ առանց որևէ մեկի հանդեպ անբարյացակամ վարվելու կամ առանց տրտմեցնելու Աստծո Հոգին որևէ ձևով, դա լավ է այդքանով և այդքանով նա կատարյալ է: Ուրեմն թող նա փորձի լինել նույնը հաջորդ օրը: Բայց ենթադրենք նա ձախողվում է սրանում հաջորդ օրվա իր փորձերում, դա պատճառ չէ, որ նա հաջողության չհասնի այդ անելիս՝ երրորդ օրը: . . .

Վերջին Օրերի Սրբերը պետք է անընդհատ մշակեն այս ձգտումը, որն այնքան հստակորեն դրված են եղել առաքյալների կողմից նախկին օրերում: Մենք պետք է փորձենք քայլել ամեն օր այնպես, որ մեր խիղճը մաքուր լինի ամենքի առջև վիրավորանքից: Եվ Աստված դրել է Եկեղեցում որոշակի

միջոցներ, որոնցով մենք կարող ենք օժանդակվել, այսինքն՝Առաքյալներ և Մարգարեներ և Ավետարանիչներ և այլն, «սուրբերի կատարելութեանը համար» և այլն [տես Եփեսացիս Դ.11–12]: Եվ Նա նաև շնորհեց մեզ Սուրբ Հոգին, որն անսխալ ուղեկից է, կանգնած որպես Աստծո հրեշտակ մեր կողքին, ասելով մեզ ինչ անել և տալով մեզ ուժ և օգնություն, երբ ձախորդ հանգամանքներ են հայտնվում մեր ճանապարհին: Մենք չպետք է թույլ տանք մեզ հուսահատվել, երբ որ հայտնաբերում ենք մեր թուլությունները: Մենք հազիվ թե որևէ օրինակ գտնենք բոլոր փառահեղ օրինակներից, որոնք տրվել են մեզ մարգարեների կողմից՝ հնադարյան թե ժամանակակից, երբ նրանք թույլ տված լինեն այն չար մեկին իրենց հուսահատեցնել, այլ մյուս կողմից՝ նրանք անընդհատ ձգտել են հաղթահարել, շահել պարգևը և այսպիսով պատրաստվել փառքի լիությանը[9] [տես առաջարկ 4, էջ 120]:

Աստվածային օգնությամբ մենք կարող ենք ապրել աշխարհի անմտություններից և սնապարծությունից վեր:

Երբ մենք մեկընդմիշտ ընդունում ենք մեր մտքում, որ մենք իսկապես ունենք այդ ուժը մեր ներսում, ավետարանի միջոցով, որ մենք ստացել ենք, հաղթելու մեր կրքերը, մեր ախորժակները և բոլոր բաներում ենթարկել մեր կամքը Երկնային Հոր կամքին և մեր ընտանեկան շրջանակում և նրանց մեջ ում հետ առնչվում ենք, փոխարենը տհաճ զգացումներ առաջացնելու, այլ օգնենք մի փոքրիկ երկինք ստեղծել երկրի վրա, ապա ճակատամարտը կարելի է ասել, որ կիսով չափ շահված է: Գլխավոր դժվարություններից մեկը, որից շատերն են տառապում այն է, որ մենք խիստ միտված ենք մոռանալ կյանքի մեծ նպատակը, մեր Երկնային Հոր դրդապատճառը մեզ այստեղ ուղարկելիս՝ հագնելու մահկանացություն, ինչպես նաև սուրբ կոչումը, որով մենք կանչվել ենք, և ուստի փոխարենը բարձրանալու ժամանակի փոքրիկ անցողիկ բաներից վեր, մենք խիստ հաճախ թույլ ենք տալիս մեզ վար իջնել մինչև աշխարհիկ մակարդակը, առանց օգտագործելու աստվածային օգնությունը, որը հաստատել է Աստված, որը միայն կարող է հնարավորություն տալ մեզ հաղթահարել դրանք: Մենք ավելի լավը չենք, քան աշխարհի մնացած մասը, եթե մենք չենք մշակում կատարյալ

լինելու զգացումը, այսինքն, ինչպես մեր Հայրը, որ երկնքում է կատարյալ է:

Փրկչի հորդորը սա էր նախկին օրերի սրբերին, ովքեր նույն կրքերով մարդիկ էին և ովքեր ենթակա էին նույն գայթակղություններին, ինչպես մենք և Նա գիտեր, թե մարդիկ կկարողանային պահել դրանք թե ոչ, Տերը երբեք չի պահանջել, ոչ էլ Նա կպահանջի բաներ Իր զավակներից, որոնք նրանց համար անհնարին է կատարել: Իսրայելի Երեցները, ովքեր սպասում են առաջ գնալ աշխարհ՝ քարոզելու փրկության ավետարանը ծռված և այլասերված մի սերնդի, մի ժողովրդի, ովքեր լցված են չարիքով և անօրինությամբ, պետք է հատկապես զարգացնեն այս հոգին: Եվ ոչ միայն նրանք, այլ բոլորը, յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ և կին, ովքեր պատկանում են այս Եկեղեցուն, ովքեր արժանի են սուրբ կոչվել, պետք զարգացնեն ըստ այս պահանջի ապրելու այդ ցանկությունը, որպեսզի նրանց խիղճը կարողանա մաքուր լինել Աստծո առջև: Այս նպատակը հեռանկարում ունենալը գեղեցիկ բան է, լինի երիտասարդ թե ծեր, հատկապես սքանչելի է տեսնել մեր երիտասարդներին, ովքեր բռնում են ուղի, որ Աստծո լույսն ու խելամտությունը կարողանա ճառագել նրանց դեմքերից, որպեսզի նրանք կարողանան ունենալ ճիշտ հասկացողություն կյանքի մասին և կարողանան ապրել աշխարհի անմտություններից և սնապարծություններից և մարդկանց սխալներից ու ամբարշտությունից վեր:[10]

Վերջին Օրերի Սրբերի համար անհրաժեշտություն չկա անհանգստանալու այս աշխարհի բաների համար: Դրանք բոլորը կանցնեն կգնան: Մեր սրտերը պետք է դրվեն վերին բաների վրա, ձգտելով այն կատարելությանը, որը Քրիստոս Հիսուսումն է, որը կատարելապես հնազանդ էր բոլոր բաներում Հորը և այդպես ձեռք բերեց Իր մեծ վեհացումը և դարձավ օրինակ Իր եղբայրների համար: Ինչո՞ւ մենք պետք է մտահոգվենք և անհանգստանանք այս ժամանակավոր բաների համար, երբ մեր ճակատագիրը այդքան մեծ է և փառահեղ: Եթե մենք կառչենք Տիրոջից, պահենք Նրա պատվիրանները, ընդօրինակենք Նրա կատարելությանը և հասնենք Նրա երկնային արքայության հավերժական իրականութանը,ամեն ինչ լավ կլինի մեզ համար և մենք կհաղթենք և ձեռք կբերենք հաղթանակ վերում:[11]

Ձեր բոլոր գործերում և հարաբերություններում միշտ ունեցեք այն գիտակցությունը, որ դուք այժմ նախապատրաստվում եք և ստեղծում ձեզ մի կյանք, որը պետք է շարունակվի հավերժություններում, մի գործեք որևէ սկզբունքով, որի համար դուք կամաչեիք կամ դժկամություն կզգայիք գործադրելու երկնքում, մի կիրառեք որևէ սկզբունք ինչ որ նպատակի հասնելու համար, որը սելեստիալ լուսավորված գիտակցությունը հավանության չի արժանացնում:Մինչ զգացմունքներն ու կրքերը մղում են ձեզ գործելու, թողեք, որ մաքուր, անբիծ, պատվավոր, սուրբ և առաքինի սկզբունքները միշտ ղեկավարեն ու կառավարեն:[12]

Մենք չենք կարող կատարյալ դառնալ միանգամից, բայց մենք օրեցօր կարող ենք լինել մի քիչ ավելի լավը:

Երեխան մեծանում է մանկությունից դեպի պատանեկություն և պատանեկությունից դեպի տղամարդկություն մշտական և հաստատուն աճով, բայց նա չի կարող ասել թե ինչպես կամ երբ է տեղի ունենում այդ աճը: Նա չի հասկանում, որ մեծանում է, բայց հետևելով առողջության և խելամտության օրենքներին, նա ի վերջո հասնում է տղամարդկության: Այսպիսով, ինչ վերաբերում է մեզ, որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք աճում ենք և մեծանում:Մենք տեղյակ չենք դրան այս պահին, բայց մի տարի կամ մի քիչ անց մենք հայտնաբերում ենք, որ մենք այսպես ասած սարի վրա ենք, մոտենում ենք սարի գագաթին:Մենք զգում ենք, որ հավատք ունենք առ Տերը, որ Նրա կանխատեսությունը միշտ օգտակար է, որ մենք կապված ենք Նրա հետ, որ Նա փաստորեն մեր Հայրն է և որ Նա առաջնորդում է մեզ կյանքում:[13]

Մի սպասեք կատարյալ դառնալ միանգամից: Եթե այսպես անեք, դու կհիասթափվեք: Եղեք ավելի լավը, քան երեկ էիք և եղեք ավելի լավը վաղը, քան դուք այսօր եք: Գայթակղությունները, որոնք հավանաբար մասնակիորեն հաղթում են մեզ այսօր, թող այլևս չհաղթեն մեզ՝ վաղը: Այսպիսով շարունակեք մի փոքր ավելի լավը լինել օրեցօր, և թույլ մի տվեք, որ ձեր կյանքը վատնվի առանց գործելու բարին ուրիշների հանդեպ, ինչպես նաև՝ ինքներս մեր հանդեպ:[14]

Յուրաքանչյուր վերջին օրը կամ յուրաքանչյուր վերջին շաբաթը, պետք է լինի լավագույնը, որ մենք երբևէ ապրել ենք, այսինքն, մենք պետք է առաջընթաց ապրենք անեն օր մի քիչ՝ գիտելիքով և իմաստությամբ և բարին գործելու ունակությամբ: Երբ հասակ ենք առնում, մենք պետք է ավելի մոտ ապրենք Տիրոջը յուրաքանչյուր հաջորդ օրը[15] [տես առաջարկ 5, էջ 121]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Նախագահ Մնոուն ընդունեց, որ կատարյալ լինելու հրամանը որոշ Վերջին Օրերի Սրբերի մոտ մտահոգություն է առաջացնում (էջեր 109–112): Երբ ուսումնասիրեք այս գլուխը, որոնեք խորհուրդ, որը կմխիթարի ինչ որ մեկին, որն անհանգստացած է կատարյալ լինելու հրամանով:
2. Բաժինը, որը սկսվում է էջ 109-ում, «գերբնական օգնություն» արտահայտությունը վերաբերում է Տիրոջ կողմից օգնությանը: Ինչ ուղիներով է Տերը օգնում մեզ կատարյալ դառնալ:
3. Էջ 112-ում, քննեք Նախագահ Մնոուի դիտողությունները Աբրահամի և վաղ օրերի Վերջին Օրերի Սուրբ ռահվիրաների մասին: Ի՞նչ է նշանակում ձեր կարծիքով կատարյալ լինել «այն ոլորտում, որում մենք ենք գործում»: Խորհեք, թե ինչ կարող եք անել ավելի կատարյալ դառնալու ձեր «զգացմունքներում, . . . հավատարմությունում, դրդապատճառներում և վճռականությունում»:
4. Նախագահ Մնոուն ասել է. «Մենք չպետք է թույլ տանք մեզ հուսահատվել, երբ հայտնաբերում ենք մեր թուլությունը» (էջ 117): Ինչպե՞ս կարող ենք բարձր լինել հուսալքման զգացումներից (օրինակների համար տես էջեր 113–117):

5. Ինչպե՞ս է դա օգնում ձեզ իմանալ, որ դուք չպետք է «սպասեք միանգամից կատարյալ դառնալ» (տես 119)։ Մտածեք հատուկ ուղիներ, որոնցով կարող եք հետևել Նախագահ Մնոուի խորհրդին՝ «օրեցօր լինել մի փոքր ավելի լավը»։
6. Փնտրեք մեկ կամ երկու մտքեր այս գլխից, որոնք հատկապես ոգեշնչող են ձեզ համար։ Ի՞նչն եք հավանում այս մտքերում։

Առնչվող սուրբ գրություններ. 1 Նեփի 3.7, 3 Նեփի 12.48, Եթեր 12.27, Մորոնի 10.32–33, ՎևՈՒ 64.32–34, 67.13, 76.69–70

Օգնություն ուսուցչին. «Մարդիկ զգացվում են, երբ նրանց ներդրումները գնահատվում են։ Դուք կարող եք հատուկ ջանք գործադրել գնահատելով յուրաքանչյուր մարդու դիտողությունները և հնարավորության դեպքում դարձնել դիտողությունները, դասարանային քննարկման մաս» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 35–36)։

Հղումներ

1. In “Anniversary Exercises,” *Deseret Evening News,* Apr. 7, 1899, 9.
2. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 16.
3. In “Anniversary Exercises,” 9.
4. In “Impressive Funeral Services,” *Woman’s Exponent,* Oct. 1901, 36.
5. *Deseret News: Semi-Weekly,* June 3, 1879, 1.
6. *Deseret News: Semi-Weekly,* June 3, 1879, 1.
7. *Deseret News: Semi-Weekly,* June 3, 1879, 1.
8. *Deseret Semi-Weekly News,* Oct. 4, 1898, 1.
9. *Deseret News: Semi-Weekly,* June 3, 1879, 1.
10. *Deseret News: Semi-Weekly,* June 3, 1879, 1.
11. *Deseret Semi-Weekly News,* Oct. 4, 1898, 1.
12. *Millennial Star,* Dec. 1, 1851, 363.
13. In Conference Report, Apr. 1899, 2.
14. *Improvement Era,* July 1901, 714.
15. *Improvement Era,* July 1899, 709.



Երբ Վերջին Օրերի Սրբերը քշվեցին Նավուից, Իլինոյս, շատերը ուրախություն էին զգնում իրենց տառապանքների մեջ:

Հավատարմություն փորձության ժամանակներում. «Ստվերներից դեպի փառահեղ արևափայլը»

«Յուրաքանչյուր տղամարդ կամ կին, ով ծառայում է Տիրոջը, անկախ նրանից, թե որքան հավատարիմ նա կարող է լինել, ունի իր խավարի ժամերը, բայց եթե նա ապրել է հավատարմորեն, լույս կհորդի նա վրա և սփոփանք կհասցվի նրան»:

Լորենզո Սնոուի կյանքից

1846 թվականի փետրվարին Վերջին Օրերի Սրբերը հարկադրվեցին թողնել իրենց տները Նավույում, Իլինոյիս: Երբ նրանք պատրաստվեցին դեպի արևմուտք գաղթին, դեպի իրենց խոստացված նոր երկիրը, նրանք հետևեցին Նախագահ Բրիգամ Յանգի խորհրդին՝ ճանապարհին բնակավայրեր հաստատելով: Նրանք ապրեցին ժամանակավոր ապաստաններում և բերք էին աճեցնում Սրբերի համար, ովքեր գալու էին իրենցից հետո: Մի կարճ ժամանակ անցկացնելով Այովայի մի բնակավայրում, որը կոչվում էր Գարդեն Գրով, Լորենզո Սնոուն և նրա ընտանիքը տեղափոխվեցին մի վայր, որը Սրբերը կոչել էին Փասգա լեռ, որը նույնպես Այովայում էր: Այս բնակավայրը անվանվել էր այն լեռան անունով, որտեղից Մովսես մարգարեն տեսել էր իր ժողովրդին խոստացված երկիրը:

Փասգա լեռ հասնելուց մի քանի ամիս անց, Լորենզոն կանչվեց նախագահելու բնակավայրի վրա: «Մինչև այդ ժամանակը, - գրել է նա հետագայում, - Սրբերը Փասգայում շատ թշվառ վիճակում էին գտնվում, ոչ միայն ուտելիքի և հագուստի պատճառով, այլ նաև զույգ ձիերով սայլերով՝ իրենց

ճանապարհորդությունը շարունակելու համար: Մի քանի ընտանիքներ լիովին զուրկ էին մթերքներից և կախված էին իրենց հարևանների գթությունից, ովքեր մեծ մասամբ վատ էին նախապատրաստված գործի դնելու այդ առաքինությունը: Սակայն, դրանից բացի մի համատարած հիվանդություն էր տարածվել բնակավայրում, երբ չկային բավականին լավ վիճակում գտնվողներ՝ հիվանդներին խնամելու համար և մահը հետևում էր հիվանդությանը և հայրեր, մայրեր, երեխաներ, եղբայրներ, քույրեր և ամենասիրելի ընկերներ զոհ դարձան կործանիչին և թաղվեցին մի փոքրիկ արարողությամբ և թաղման արարողության որոշ հանդերձներից զուրկ: Այսպիսով սուգն ու վիշտն ավելացավ զրկանքին»:

Լորենզոն տարավ այդ փորձություններն իր մաշկի վրա: Նա և նրա ընտանիքը տարավ հիվանդություն, հուսահատություններ և սրտաբեկություն, ներառյալ իր նորածին դստեր՝ Լեանորայի մահը: Նա գրել է. «Փոքրիկ Լեանորան հիվանդացավ և մահացավ և խորը վշտով մենք հողին հանձնեցինք նրա աճյունը իրենց լուռ հանգստավայրում, միայնակ թողնվելով հոր և իր մոր կողմից, ով ծնել էր նրան»:

Այս պայմաններում Լորենզոն օգնեց Սրբերին հավատքով դիմակայել իրենց փորձություններին: Նրա քույր Էլիզան գրել է. «Վճռական ջանքերով և գործունյա մտքով և նպատակի անսասանությամբ, որը երբեք չէր հանձնվում հուսահատությանը, պարզվեց որ նա համապատասխանում էր իր կարողությամբ արտակարգ իրավիճակներին, որը սովորական ունակություններով տղամարդկանց կսարսափեցնեին»: Նա վերհիշում է. «Առաջինը, նա աշխատում էր ոգեշնչել և միավորել մարդկանց ջանքերը»: Նա կազմակերպեց տղամարդկանց՝ բաժանելով աշխատանքային խմբերի:Ոմանք գնում էին մոտակա քաղաքները փող վաստակելու՝ մթերքների և հագուստների համար: Մյուսները մնում էին ճամբարներում, ովքեր հսկում էին ընտանիքներին այնտեղ, տնկում էին հացահատկեղեն և արտադրում և վերանորոգում իրեր, որոնք կարող էին օգտագործվել հարևան բնակավայրերում:

Բացի Սրբերին օգնելուց, որ միասին աշխատեին, Լորենզոն քաջալերում էր նրանց սնուցվել հոգեպես և վայելել օգտակար զվաճություններ: «Ձմեռային երկար ամիսների

Վերջին Օրերի Սրբերից մեկը, որը բնակվել էր Փասգա լեռան մոտ գծել է այս ուրվանկարը օրագրում:

ընթացքում,-ասում էր նա,- ես ձգտում էի բարձր պահել ոգին և Փասգայի Սրբերի խիզախությունը, ոչ միայն կազմակերպելով ժողովներ կրոնական երկրպագության և գործունեության համար բնակավայրի տարբեր մասերում, այլ նաև մթերքի պաշարներ ստեղծելով և խրախուսելով տարբեր տեսակի պատշաճ զվարճություններ»: . . .

«Որպես օրինակ ես կփորձեմ նկարագրել դրանցից մեկը, որը ես հորինեցի հրավերքի համար, բոլոր նրանց համար, ում ես հնարավորինս կարողացա հավաքել միասին իմ համեստ ընտանեկան հարկի տակ, որը մեկ հարկանի շենք էր՝ տասնհինգը երեսունի վրա [մոտ չորս ու կես մետրը ինը մետրի վրա], գերանաշեն, հողե տանիքով, գետինե հատակով, մի ծայրում երևում էր միջին բարձրության բուխարին, որը սարքված էր ճիմահողից, որը հանվել էր մայր հողից: Հատուկ այդ առիթով մենք ծածկեցինք հատակը մաքուր ծղոտի բարակ շերտով և վարագուրեցինք պատերը սպիտակ սավաններով, որը վերցրեցինք մեր փետրազուրկ մահճակալներից:

Թե ինչպես էինք լուսավորելու մեր դահլիճը, որ հարմար լիներ մոտեցող իրադարձությանը, պակաս նշանակություն ունեցող հարց չէր և պահանջում էր մեր հնարամտության շռայլ ներդրումը:Բայց մենք հաջողության հասանք: Փոսից, ուր դրանք թաղված էին, մենք ընտրեցինք ամենամեծ և ամենագեղեցիկ շաղգամները՝ փորեցինք հանեցինք միջուկը և ամրացրեցինք կարճ մոմեր դրանց մեջ, դրանք դնելով պատերի շուրջ բոլորը հավասար հեռավորության վրա, կախելով մյուսները առաստաղից, որը սարքված էր հողից և եղեգից: Այդ լույսերը շատ հանդարտ լույս էին արձակում, խաղաղ . . . ազդեցություն գործում, իսկ լույսը, որն արտացոլվում է շաղգամի կեղևների միջից, շատ հաճելի տեսք էր տալիս:

Հրավերքի ընթացքում իմ ընկերներից մի քանիսը հնարավոր ամենաջերմ արտահայտություններով հաճոյախոսեցին ինձ և իմ ընտանիքին առանձնահատուկ ճաշակի և հնարամտության համար, որոնք դրսևորվել էին այդ անզուգական և ոչ թանկ զարդարանքների մեջ»:

Լորենզոն հիշում էր, որ «ժամերն անցան աշխույժ և երջանիկ: Նա և նրա հյուրերը զվարճացրեցին միմյանց ելույթներով, երգերով և արտասանություններով: Նա ասել է. Վերջում բոլորը կատարելապես բավարարված էին և հեռացան զգալով այնքան երջանիկ, որ կարծես իրենք անտուններ չէին»[1] [տես առաջարկ 1, էջ 133]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Փորձանքներն ու տառապանքներն օգնում են մեզ բարելավվել հոգեպես և պատրաստվել սելեստիալ փառքի համար:

Մեզ համար անհնարին է գործել մեր փրկությունը և իրականացնել Աստծո նպատակներն առանց փորձությունների կամ առանց զոհաբերությունների:[2]

Փորձություններն ու չարչարանքները եղել են Վերջին Օրերի Սրբերի փորձառությունը: Աստված այդպես է ծրագրել, որ դա պետք է լինի: Համարձակվում եմ ասել, որ նախամահկանացու հոգևոր աշխարհում, երբ մեզ առաջարկվեց գալ այս փորձարկմանը և անցնել այն փորձառությամբ, որը մենք հիմա ստանում ենք, ոչ ամեն ինչ էր ամբողջությամբ հաճելի և ընդունելի, հեռանկարները այդքան էլ սքանչելի չէին բոլոր կողմերից, ինչպես ցանակալի կլիներ: Այնուամենայնիվ, կասկած չկա, որ մենք այնտեղ տեսանք և հստակորեն հասկացանք այդ, որպեսզի իրականացնեինք մեր վեհացումը և փառքը, այս փորձառությունն անհրաժեշտ էր և որքանով էլ այն անընդունելի երևար մեզ, մենք հոժար էինք համակերպվել Աստծո կամքի հետ, և հետևաբար մենք այստեղ ենք:[3]

Տերը վճռել է Իր սրտում, որ Նա կփորձի մեզ, մինչև որ իմանա, թե ինչ Նա կարող է անել մեր հետ: Նա փորձեց Իր Որդի Հիսուսին:. . . Նախքան Նրա [Հիսուսի] այս երկիր գալը, Հայրը հետևել էր Նրա ընթացքին և գիտեր, որ Ինքը կարող էր վստահել Նրան, երբ աշխարհների փրկությունը վտանգված լիներ, և Նա չհիասթափվեց: Նույնն է և մեր դեպքում: Նա կփորձի մեզ և կշարունակի փորձել մեզ, որպեսզի մեզ դնի բարձրագույն դիրքերում կյանքում և մեզ վրա դնի ամենասուրբ պարտականությունները:[4]

Եթե մենք հաջողություն ենք ունենում կրակով փորձության մոտեցող ժամանակն անցնելով մեր հավատարմությամբ և նվիրվածությամբ անեղծ մնալով, մենք կարող ենք ակնկալել մեր փորձությունների վերջում Աստծո Հոգու և զորության մի մեծ և հզոր դուրս թափում՝ մի մեծ օժտում բոլորի վրա, ովքեր հավատարիմ են մնացել իրենց ուխտերին: . . .

Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայությունը կարող է հաստատել և սփոփել մեզ փորձության ժամանակ:

Մեր եղբայրներից ոմանք հարցրել են, թե արդյոք այս ժամանակից հետո, նրանք իրենց արժանի կզգա՞ն լիակատար ընկերակցության համար հնադարյան Մարգարեների և Սրբերի հետ, ովքեր դիմացան փորձությունների և հալածանքների, և այն Սրբերի հետ, ովքեր տառապեցին Կիրթլենդում, Միսսուրիում և Իլինոյսում: Այդ վերոհիշյալ եղբայրները ափսոսանք հայտնեցին, որ նրանք մասնակից չէին եղել չարչարանքի այդ պահերին: Եթե այդպիսիներից որևէ մեկը ներկա է, ես կասեմ որպես մխիթարություն նրանց, դուք պետք է սպասեք, բայց կարճ մի պահ և դուք կունենաք նմանատիպ հնարավորություններ, ձեր սրտի ուզածի պես: Ես և դուք չենք կարող կատարյալ դարձվել առանց տառապելու՝ Հիսուսը չկարողացավ [տես Եբրայեցիս Բ.10]: Գեթսեմանի Պարտեզում Իր աղոթքում և չարչարանքում Նա նախանշան հանդիսացավ մաքրագործող անհրաժեշտ գործընթացի համար նրանց կյանքում, ում ձգտումը հուշում է նրանց ապահովել սելեստիալ արքայության փառքը: Ոչ ոք չպետք է փորձի խուսափել՝ դիմելով որևէ կոմպրոմիսային միջոցների:[5]

Չկա այլ ուղի, որով Սրբերը կարողանան հասնել հոգևոր բարելավվման և պատրաստված լինեն ժառանգության սելեստիալ արքայությունում, բացի տառապանքների միջոցով: Դա մի գործընթաց է, որի միջոցով մեծանում է գիտելիքը և վերջնականապես համընդհանուր խաղաղություն հաստատվում: Ասվել է, որ այժմ, եթե մեր ողջ շրջապատը խաղաղ լինի և բարգավաճ, մենք կդառնանք անտարբեր: Դա կլինի մի վիճակ, որը կլինի այն ամենը, ինչը ցանկալի կլինի խիստ շատ մարդկանց կողմից, նրանք չեն ձգտի հավերժության բաներին:[6]

Լինի դա անհատապես թե լինի դա համատեղ, մենք տառապել ենք և մենք ստիպված կլինենք կրկին տառապել և ինչո՞ւ: Որովհետև Տերը պահանջում է դա մեր կողմից՝ մեր սրբագործման համար[7] [տես առաջարկ 2, էջ 133]:

Երբ մենք հավատարիմ մնանք փորձությունների և գայթակղությունների ընթացքում, մենք ցույց կտանք, որ Աստծուն ավելի ենք սիրում, քան՝ աշխարհը:

Մեր փորձությունների և գայթակաղությունների մեջ է, որոնց միջոցով մենք հնարավորություն ենք ունենում ցույց տալ, թե որքան ենք գնահատում մեր կրոնը: Դուք ծանոթ եք դրա հետ կապված Յոբի փորձառության հետ: Նրան տրվել էր հարության և Քավիչի մասին գիտելիք և նա գիտեր, որ չնայած նա մեռնելու էր, սակայն պետք է վերջին օրերում տեսներ իր Քավիչին երկրի վրա [տես Յոբ ԺԹ.25–26]:Այն գայթակղությունները , որոնց նա ենթարկվեց, ցույց տվեցին, որ նա այդ երկնային գիտելիքները մնացած բոլոր այլ բաներից վեր էր գնահատում: . . .

. . . Քանի որ Աստված մեր Ընկերն է, մենք չենք վախենում: Մենք ստիպված կլինենք շարունակել ենթարկվել բազմաթիվ պայմանների, որոնց հետ համաձայն չենք: Դրանց միջոցով մեզ հնարավորություն է տրվում ցույց տալ հրեշտակներին, որ մենք Աստծո բաներն ավելի շատ ենք սիրում, քան աշխարհի բաները[8] [տես առաջարկ 3, էջ 133]:

Երբ մենք հավատարիմ ենք մնում, Տերը զորացնում է մեզ՝ գայթակղությունները հաղթահարելու և փորձություններին դիմանալու համար։

Ձեզանից շատերը գուցե ունեցած լինեն դաժան փորձություններ, որպեսզի ձեր հավատքը դառնա ավելի կատարյալ, ձեր վստահությունը մեծանա, երկնային ուժերի վերաբերյալ ձեր գիտելիքն աճի և սա նախքան ձեր քավության տեղի ունենալը։ Եթե փոթորկաբեր մի ամպ անցնի հորիզոնով . . . , եթե տառապանքի դառը գավաթն առաջարկվի, և դուք ստիպված լինեք ճաշակել, սատանան բաց թողվի զնալու ձեր միջով, իր բոլոր խաբկանքների և խորամանկ նենգությունների գայթակղիչ զորություններով, հալածանքի ուժեղ, անողորմ բազուկը բարձրանա ձեր դեմ, ապա *այդ* ժամին, բարձրացրեք ձեր գլուխները և ցնծացեք, որ դուք արժանի եք համարվել տառապելու այդպես Հիսուսի, Սրբերի և սուրբ մարգարեների հետ, և իմացեք, որ ձեր փրկագնումը մոտեցել է։

Իմ եղբայրներ և քույրեր, զգում եմ, որ ձեզ պիտի հորդորեմ սրտառուչ արտահայտությամբ. Մի վախեցեք, մի վհատվեք, քանզի անկասկած արագ գալիս է ժամանակը, երբ ձեր արցունքները պիտի մաքրվեն, ձեր սրտերը մխիթարվեն և դուք կուտեք ձեր աշխատանքի պտուղները։ . . .

Եղեք ազնիվ, եղեք առաքինի, եղեք պատվավոր, եղեք հեզ և համեստ, քաջարի և համարձակ, մշակեք պարզամտություն, եղեք Տիրոջ նման, բռնած պահեք ճշմարտությունը կրակի թե սրի, տանջանքի թե՝ մահվան միջով։[9]

Ավետարանն ընդունելու ժամանակից սկսած մինչև ներկա ժամանակը, Տերը ժամանակ առ ժամանակ տվել է մեզ փորձություններ և չարչարանքներ, եթե մենք կարող ենք դա այդպես կոչել և երբեմն այդ փորձությունները այն բնույթի են եղել, որ մենք դրանք դժվար ենք համարել ընդունե՝լ առանց տրտնջալու և բողոքելու։ Սակայն այդպիսի դեպքերում Տերն օրհնել է մեզ և տվել մեզ բավականաչափ Իր Հոգուց ի վիճակի լինելու հաղթահարել գայթակղություններն ու դիմանալու փորձություններին։[10]

Յուրաքանչյուր տղամարդ և կին, ովքեր ծառայում են Տիրոջը, անկախ նրանից, թե որքան հավատարիմ կարող են լինել, ունեն իրենց խավարի ժամերը, բայց եթե նրանք ապրել

են հավատարմորեն, լույս կփայլի նրանց վրա և կհասցվի մխիթարություն:[11]

Այն ամենը, ինչ պահանջվում է մեզանից, կատարելապես ապահով դառնալու համար դժբախտության և հալածանքի բոլոր հանգամանքներում, Աստծո կամքը կատարելն է, լինել ազնիվ, հավատարիմ և մեզ նվիրված պահել այն սկզբունքներին, որոնք մենք ստացել ենք, ճիշտն անել միմյանց հանդեպ, զանց չառնել մարդկանց իրավունքները, ապրել ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից և Նրա Սուրբ Հոգին կօգնի և կաջակցի բոլոր հանգամանքներում և մենք դուրս կգանք դրա միջից բոլորս առատորեն օրհնվելով մեր տներում, մեր ընտանիքներում, մեր հոտերում, մեր դաշտերում և ամեն բաներում Աստված կօրհնի մեզ: Նա մեզ կտա գիտելիք գիտելիքի վրա, խելամտություն խելամտության վրա, իմաստություն իմաստության վրա:

Թող Աստված ավելացնի իր օրհնությունները այս ժողովրդի վրա: Թող որ մենք հավատարիմ լինենք ինքներս մեզ, հավատարիմ բոլոր սկզբունքներին, որոնք մենք ստացել ենք, փնտրելով միմյանց շահերը ողջ մեր սրտով, և Աստված դուրս կթափի Իր Հոգին մեզ վրա և մենք վերջում դուրս կգանք հաղթանակով[12] [տես առաջարկ 3, էջ 133]:

Ետ նայելով դժվար ժամանակներին, մենք տեսնում ենք, որ մեր փորձություններն օգնել են մեզ ավելի մոտենալ Աստծուն:

Երբ մենք խորհրդածում ենք, թե ինչ է Տերն արել մեզ համար անցյալում, մեր ներկա շրջապատը և մեր ապագա հեռանկարները, որքան օրհնված ժողովուրդ ենք մենք: Ես երբեմն մտածել եմ, որ մեծագույն արժանիքներից մեկը, որ Վերջին Օրերի Սրբերը կարող են ունենալ մեր Երկնային Հոր հանդեպ երախտագիտությունն է, այն բանի համար, ինչ Նա շնորհել է մեզ և այն ուղու համար դեպի ուր Նա մեզ առաջնորդել է: Հնարավոր է այդ ուղով քայլելը միշտ չէ որ եղել է ամենահաճելի փորձառությունը, բայց մենք հետագայում պարզել ենք, որ այդ հանգամանքները, որոնք շատ տհաճ են եղել, մեծագույն առավելություն են դարձել մեզ համար:[13]

Յուրաքանչյուր փորձություն, որով մարդն անցնում է, եթե նա հավատարիմ է այդ փորձությունում և պատվում է Աստծուն և իր ընդունած կրոնը, այդ փորձության կամ տանջանքի վերջում, այդ անձնավորությունն ավելի մոտ է լինում Աստծուն, ավելի մոտիկ կապված հավատքի, իմաստության, գիտելիքի ու զորության մեծացման հետ և ուստի ավելի վստահ առ Տերը կանչելիս այն բաների համար, որոնք ինքն է կամենում: Ես գիտեմ մարդկանց, ովքեր դողացել են որոշ փորձություններով անցնելու մտքից, ովքեր գայթակղության միջով անցնելուց հետո, ասել են, որ կարող են մոտենալ Տիրոջը ավելի մեծ վստահությամբ և խնդրել այն օրհնությունները, ինչ իրենք էին կամենում: . . .

Մենք ամեն պատճառ ունենք ցնծալու, ուրախությամբ լցված լինելու և բավարարվածությամբ չնայած այն դժվարություններին, որոնք շրջապատում են մեզ: Իսկ որքան հեռու ենք մենք առաջացել, որքան գիտելիք ենք մենք ձեռք բերել, որքան ավելի շատ ենք ի վիճակի կրելու այժմ, քան մեկ, երկու կամ հինգ տարի առաջ: Տերը զորացրել է մեզ և մեր աճի ընթացքում մեզ մեծացրել: Ինչպես երեխան, երբ նա աճում է, նա չգիտի թե ինչպես է աստիճանաբար ուժ ստանում և ինչ ձևով մեծանում հասակով: Նա ավելի խոշոր է այս տարի, քան անցած: Նույնն է մեր հոգևոր առաջընթացի հետ: Մենք ավելի ուժեղ ենք զգում մեզ այսօր, քան մեկ տարի առաջ:[14]

Այն զոհաբերությունները, որոնք դուք կատարել եք, այն դժվարությունները, որոնց դուք դիմացել եք և այն զրկանքները, որ դուք տարել եք . . . կմոռացվեն, և դուք կուրախանաք, որ ձեռք եք բերել փորձառությունը, որը դրանք են ձեզ տվել: . . . Որոշ բաներ մենք պետք է սովորենք այն բաներից, որոնցով մենք տառապում ենք և գիտելիքը, որ մենք ստանում ենք այդ ուղով, չնայած գործընթացը կարող է ցավոտ լինել, կլինի մեզ համար խիստ արժեքավոր, մյուս կյանքում: . . .

. . . Ես գիտեմ, որ ձեր կյանքերը ամբողջովին բաղկացած չեն եղել արևի շողերից, դուք անկասկած անցել եք շատ փորձությունների միջով և հավանաբար և բարձրացել շատ դժբախտությունների միջից, բայց անընդմեջ հավատարմության միջոցով դուք շուտով ստվերներից կմխրճվեք սելեստիալ աշխարհի փառահեղ արևաշողի մեջ[15] [տես առաջարկ 4, էջ 133]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ նախապատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Խորհեք այն պատմության շուրջ, որը գտնվում է էջեր 123–26-ում։ Ինչպե՞ս էին այս պատմության մեջ շատ Սրբեր կարողանում երջանիկ լինել, չնայած իրենց տառապանքին։ Ի՞նչ կարող ենք անել մենք քաջալերելու մարդկանց, ովքեր փորձությունների մեջ են գտնվում։
2. Ուսումնասիրեք Նախագահ Մնոուի ուսմունքները այն մասին, թե ինչու մենք պետք է ունենանք փորձություններ (էջեր 127–28)։ Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում «ձգտել հավերժության բաներին»։ Ինչո՞ւ եք կարծում, որ շատ մարդիկ չեն «ձգտում հավերժության բաներին» առանց փորձությունների։
3. Ի՞նչ ուղիներով պետք է մենք արձագանքենք փորձություններին ու գայթակղություններին (օրինակների համար տես էջեր 129–131)։ Ինչպե՞ս է Տերն օգնում մեզ փորձության ժամանակ։
4. Կարդացեք այս գլխի վերջին բաժինը։ Ի՞նչ օգուտ եք քաղել այն մարտահրավերներից, որոնցով դուք եք անցել։
5. Գտեք այն մեկ կամ երկու մտքերը, որոնք ձեզ հույս են տալիս։ Ի՞նչն եք գնահատում ձեր ընտրած մտքերի մեջ։

Առնչվող սուրբ գրություններ. Երկրորդ Օրինաց Դ.29–31, Սաղմոսներ ԽԶ.1, Հովհաննես ԺԶ.33, Հռովմայեցիս Ը.35–39, Բ Կորնթացիս Դ.17–18, Մոսիա 23.21–22, 24.9–16, ՎևՈՒ 58.2–4

Օգնություն ուսուցչին. Մտածեք մի քանի մասնակիցների հետ նախապես կապվել, խնդրելով նրանց պատրաստվել կիսվելու փորձառություններով, որոնք կապված են այդ գլխի հետ։ Օրինակ, նախքան այս գլուխը ուսուցանելը, օգտակար կլինի խնդրել մի քանի մարդկանց պատրաստվել խոսելու, թե ինչ են նրանք սովորել իրենց փորձություններից։

Հղումներ

1. Տես Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 89–93:
2. *Millennial Star,* Apr. 18, 1887, 245.
3. *Deseret Weekly,* Nov. 4, 1893, 609.
4. *Millennial Star,* Aug. 24, 1899, 532.
5. *Deseret News: Semi-Weekly,* Feb. 9, 1886, 1.
6. *Deseret News,* Apr. 11, 1888, 200; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1888 general conference.
7. *Deseret News,* Oct. 28, 1857, 270.
8. *Deseret News,* Apr. 11, 1888, 200.
9. "Address to the Saints in Great Britain," *Millennial Star,* Dec. 1, 1851, 364.
10. *Deseret Weekly,* Nov. 4, 1893, 609.
11. *Millennial Star,* Aug. 24, 1899, 531.
12. *Deseret News: Semi-Weekly,* Dec. 2, 1879, 1.
13. In Conference Report, Apr. 1899, 2.
14. *Deseret News,* Apr. 11, 1888, 200.
15. "Old Folks Are at Saltair Today," *Deseret Evening News,* հուլիս 2, 1901, 1, այս ուղերձը ուղղված է մի խումբ մեծահասակ Եկեղեցու անդամների, որը պատրաստվել էր Լորենզո Սնոուի կողմից 88 տարեկան հասակում և կարդացվել է իր որդու՝ ԷԵՌոյի կողմից:

«Քննիր ինձ, ով Աստուած, եւ ճանաչիր իմ սիրտը»

Արդարակյաց Վերջին Օրերի Սրբերը ձգտում են «հաստատել մի բնավորություն Աստծո առջև, որի վրա կարելի է հույս դնել փորձության ժամին»:

Լորենզո Մնոուի կյանքից

1899 թվականի դեկտեմբերի 15-ին Նախագահ Լորենզո Մնոուն՝ այդ ժամանակ Եկեղեցու Նախագահը, խոսեց Նախագահ Ֆրանկլին Դ. Ռիչարդսի թաղմանը, որը ծառայել էր որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ: Իր քարոզի ավարտի մոտ Նախագահ Մնոուն ասաց. «Ես խնդրում եմ Իսրայելի Տիրոջն օրհնել Վերջին Օրերի Սրբերին, որպեսզի մենք կարողանանք նախապատրաստվել մոտ ապագայի իրադարձություններին, մեր սրտերն ուղիղ պահելով Տիրոջ առաջին»:

Բացատրելով «մեր սրտերն ուղիղ Տիրոջ առաջին» պահելու անհրաժեշտությունը, Նախագահ Մնոուն պատմեց մի փորձառության մասին, որն ինքն ու Նախագահ Ռիչարդսն ունեցել էին 1850-ական թվականներին, երբ նրանք նոր Առաքյալներ էին: Այդ ժամանակ Նախագահ Բրիգամ Յանգը մի վերփոխում էր անում Եկեղեցում, կոչ անելով Վերջին Օրերի Սրբերին ամենուրեք ապաշխարել և նորոգել արդարակյաց կյանքի իրենց պարտավորությունները:

«Երբ Նախագահ Յանգը բարձրացավ կոչ անելու ժողովրդին ապաշխարել և վերափոխվել,- հիշում էր Նախագահ Մնոուն,- նա շատ խիստ խոսեց այն մասին, թե ինչ պետք է արվեր որոշ մարդկանց հետ, որ նրանց Քահանայությունը պետք է վերցվեր նրանցից, այն մեծարելու, ինչպես պետք է արած լինեին՝ իրենց ձախողման պատճառով: Եղբայրները, ովքեր ապրում էին այդ օրերում կհիշեն, թե որքան վճռական նա խոսեց այդ



Նախագահ Ֆրանկլին Դ. Ռիչարդս

ուղղությամբ: Դեհ, դա հուզեց Եղբայր Ֆրանկլինի սիրտը և այն իմ սիրտն էլ հուզեց և մենք միասին քննարկեցինք այդ հարցը: Մենք եզրակացրեցինք, որ գնանք Նախագահ Յանգի մոտ և առաջարկենք նրան մեր Քահանայությունը: Եթե նա զգար Տիրոջ անունով, որ մենք չէինք մեծարել մեր Քահանայությունը, մենք կհրաժարվեինք դրանից: Մենք գնացինք նրա մոտ, նրան տեսանք մենակ և ասացինք այդ մասին: Կարծում եմ նրա աչքերում արցունքներ կային, երբ նա ասաց. «Եղբայր Լորենզո, Եղբայր Ֆրանկլին, դուք բավականաչափ մեծարել եք ձեր Քահանայությունը Տիրոջ առաջին: Աստված օրհնի ձեզ»:[1]

Ողջ իր կյանքում Նախագահ Մնոուն ցանկանում էր, որ իր սիրտն ուղիղ լիներ Տիրոջ առաջին և նա նաև քաջալերում էր Սրբերին քննել իրենց սեփական արժանավորությունը: Նա խոսեց «մեր հասկացողությունն ավելի մեծացնելու ուղու մասին», անհրաժեշտություն հաստատելու «ճիշտ բնավորություն, որպես Վերջին Օրերի Սրբեր, Աստծո՝ մեր Հոր առաջին»[2] [տես առաջարկ 1, էջ 144]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Եթե մենք ճիշտ բնավորություն հաստատենք, մենք կարող ենք վստահորեն հրավիրել Աստծուն քննել մեր սրտերը:

Ես ուժեղագույն տպավորության տակ եմ, որ ամենաարժեքավոր միտքը և այն ինչը կլինի ամենամեծ ծառայությունն այն է, որ երբ մենք վերադառնանք հոգևոր աշխարհ, որ մենք այս փորձնական վիճակում հաստատած լինենք ճիշտ և լավ ձևավորված բնավորություն, որպես հավատարիմ ու հետևողական Վերջին Օրերի Սրբեր:

Այն դեպքերում, երբ որևէ օտարական դիմում է աշխատանքի կամ վստահելի պաշտոնի համար, հաճախ պահանջվում է, որ նա ներկայացնի իր արժանավորությունը հաստատող թղթեր վստահելի մարդկանցից, երաշխավորագրեր կամ բնութագրեր, որոնք չափազանց օգտակար են իրենց բնույթով, նպաստելով բարեհաճություն կամ արտոնություն ձեռք բերելուն, որն այլապես դժվար կլիներ ապահովել: Այնուամենայնիվ, համեմատաբար հեշտ է ձեռք բերել այսպես կոչված գրված բնութագիր,

մի բնութագիր, որը կարելի է դնել գրպանում և իրականում, համաձայն իմ դիտարկումների, հաճախ են պատահում դեպքեր, երբ մարդիկ գրված այնպիսի բնութագրերի կրողներ են, որոնք իրենց իրական և ճշմարիտ բնավորությունը ձախողվում է հաստատել։

Մեր շարքերում կան այնպիսիք, ովքեր հայտնի են որպես այս Եկեղեցու անդամներ, ովքեր մեծ ջանքեր են գործադրում լավ տպավորություն թողնելու իրենց շրջապատում գտնվողների վրա, բայց իրենց իրական բնավորությունը, կամ՝ այդպիսի մարդկանց այսպես ասած ներքինը, վարագուրված է, կամ՝ թաքնված։ . . . Այսպիսով այս աղոթքը, որը ես [ակնարկեցի]. «Քննիր ինձ, ով Աստուած, եւ ճանաչիր իմ սիրտը. փորձիր ինձ եւ ճանաչիր իմ մտածմունքները.Եւ տես, թէ որ չար ճանապարհում լինեմ, եւ առաջնորդիր ինձ դէպի յաւիտենական ճանապարհը»[Սաղմոս ՃԼԹ.23–24] շատ կարևոր է, դա մի աղոթք է, որ Դավիթը խղճմտանքով և որոշ չափով վստահությամբ իր կյանքի գլխավոր անցքերի ընթացքում հղեց առ Տերը։ Բայց եղան ժամանակներ, երբ նա զգաց թուլության փոփոխական և դողացնող զգացում՝ այս տիպի աղոթք մատուցելու համար։

Ես պատճառ ունեմ հավատալու, որ շատ Վերջին Օրերի Սրբեր իրենց կյանքի մեծ մասի ընթացքում, կարող էին մոտենալ Տիրոջը ողջ վստահությամբ և այս նույն աղոթքը հղել. «Քննիր ինձ, ով Աստուած, եւ ճանաչիր իմ սիրտը, և տես, թէ որ չար ճանապարհում լինեմ», բայց եթե մենք որպես ժողովուրդ կարողանայինք ապրել այնպես, որ կարողանայինք բոլոր դեպքերում խոնարհվել Տիրոջ առջև և մատուցել այսպիսի աղոթք, ինչպիսի սքանչելի բան կարող էր լինել, ինչպիսի նվաճում ձեռք բերած կլինեինք արդարության և բարի գործերի մեջ։ . . . Ես խորհուրդ կտայի, որ [յուրաքանչյուր մարդ] որդեգրեր Դավթի այս աղոթքը և տեսներ, թե որքան մոտիկ կարող է նա ապրել համաձայն այն լույսին, որն ինքն ունի, որպեսզի դարձնի դա ողջ անկեղծությամբ Աստծո երկրպագության իր մասը։ Շատերը ձախողվում են հասնել զերազանցության այդ չափանիշին, որովհետև նրանք գաղտնի բաներ են անում, ուր չի կարող ներթափանցել մահկանացու մարդու աչքը, որոնք ուղղակի միտում ունեն օտարացնել նրանց Ամենազորից և

տրտմեցնել Աստծո Հոգին: Այդպիսի մարդիկ չեն կարող իրենց առանձին սենյակում օգտագործել այս աղոթքը, նրանք չեն կարողանա, մինչև չապաշխարեն իրենց մեղքերից և ուղղեն այն անիրավությունը, որ իրենք գործել են և վճռեն ավելի լավ վարվել ապագայում, քան նրանք արել են անցյալում և հաստատել այնպիսի բնավորություն Աստծո առջև, որի վրա կարելի լինի հույս դնել փորձության ժամին և որը կհամապատասխանեցնի նրանց ընկերակցելու սուրբ էակների հետ և հենց Հոր հետ, երբ նրանք անցնեն հոգևոր աշխարհ:

. . . Մենք պետք է իսկական տղամարդիկ և իսկական կանայք լինենք , մենք պետք է մեծապես զարգացնենք հավատքը և պետք է արժանի լինենք Սուրբ Հոգու ընկերակցությանը՝ օգնելու մեզ արդարակեցության գործում ողջ օրը, ի վիճակի դարձնելու մեզ զոհաբերելու մեր սեփական կամքը Հոր կամքին, պայքարելու մեր ընկած էության հետ և գործելու ճիշտը՝ ճիշտը գործելու սիրո համար, պահելով մեր աչքը ուղղված միայն դեպի Աստծո պատվին ու փառքին: Այդ անելու համար պետք է լինի մտքի ներքին զգացում, որը պարտականության գիտակցումն է, որի ներքո ենք մենք, որն ընդունում է փաստը, որ Աստծո աչքը մեզ վրա է և որ մեր ամեն մի քայլը և դրդապատճառները, որոնք հուշում են, որ դա պետք է հաշվի առնենք և մենք անընդհատ պետք է *հաշվետու լինենք* , [ներդաշնակության մեջ] լինենք Տիրոջ Հոգու հետ[3] [տես առաջարկ 2, էջ 145]:

Սուրբ գրության օրինակներն ուսուցանում են մեզ, թե ինչպես բարելավենք մեր բնավորությունը:

Կան շատ բաներ մարգարեների բնավորության մեջ, որոնցով ես հիանում եմ, հատկապես հիանում եմ Մովսեսով: Ես հիանում եմ նրա վճռականությամբ Իսրայելի հետ կապված Աստծո կամքն ու խոսքն իրականացնելիս, և նրա պատրաստակամությամբ՝ անելու ամեն ինչ, ինչ մարդու ուժում էր, որն աջակցվում էր Ամենազորի կողմից և ամենից շատ, ես հիանում եմ Տիրոջ հանդեպ նրա հավատարմությամբ և նվիրվածությամբ: . . .

Այսօր Աստված հիանում է տղամարդկանցով և կանանցով, ովքեր հետամուտ են շիտակության ուղուն և, չնայած սատանայի զորություններին, որ ուղղված են նրանց դեմ, կարողանում են ասել. Գնա յետս, սատանայ [տես Ղուկաս Դ.8], և ովքեր

Չնայած Հովնանը «ցույց տվեց թուլություններ», մենք կարող ենք սովորել նրա «աքանչելի և հիացմունքի արժանի» բնավորության գծերից:

ապրում են արդար. Աստվածային կյանքով և այսպիսի մարդիկ ազդեցություն ունեն Աստծո մոտ և նրանց աղոթքները շատ օգուտ են բերում [տես Հակոբոս Ե.16]: Օրինակ Մովսեսն ուներ այդպիսի զորություն Ամենակարողի հետ, որ փոխեր Նրա [Աստծո] նպատակը որոշակի առիթով: Հիշում եք, որ Տերը բարկացավ Իսրայելացիների վրա և հայտարարեց Մովսեսին, որ Նա կործանելու էր նրանց և վերցնելու էր Մովսեսին և դարձնելու էր նրան մեծ ժողովուրդ և նրան ու նրա ժառանգներին էր շնորհելու այն, ինչ խոստացել էր Իսրայելին: Բայց այդ մեծ առաջնորդն ու օրենսդիրը հավատարիմ իր պարտավորությանը, կանգնեց կիրճում և աղերսեց իր ժողովրդի համար, այն ուժով, որով նա կարողանում էր գործադրել և իսկապես գործադրում էր, նա էր միջոցը ժողովրդին փրկելու սպառնացող կործանումից [տես Ելից ԼԲ.9–11, Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ելից 32.12]: Որքան ազնիվ և փառահեղ պետք է Մովսեսը երևար Տիրոջ աչքին և ինչպիսի բավարարվածության աղբյուր պետք է որ լիներ Նրա համար գիտենալ, որ Իր ընտրյալ

ժողովուրդը իր կամակոր և տգետ վիճակում իրեն գլխավորող այդպիսի մարդ ուներ։

Հովնանի մեջ մենք կրկին գտնում ենք բնավորության հետաքրքիր գիծ։ Երբ կատաղի ջրերի վրա նավաստիները վախ հայտնեցին, որ չէին կարողանա փրկել նավը, Հովնանը խղճի խայթ զգալով այն ուղու համար, որ ինքն էր բռնել՝ չգնալով Նինվե, ինչպես հրամայվել էր Տիրոջ կողմից, առաջ եկավ և խոստովանեց, որ ինքն էր այն աղետի պատճառը, որը պետք է պատահեր նրանց և հոժարակամություն ցույց տվեց զոհաբերվել հանուն նավի վրա գտնվողների [տես Հովնան Ա.4–12]։ Մյուս մարգարեների և Աստծո մարդկանց մեջ էլ, չնայած որոշ հանգամանքներում Հովնանի նման թուլություն էին հանդես բերում, բայց՝ կա ինչ որ մեծ և հիացմունքի արժանի բան նրանց բնավորությունում[4] [տես առաջարկ 3, էջ 145]։

Բնավորության արդար գծերը աստիճանաբար զարգանում են մեր մեջ, երբ մենք հավատք ենք գործադրում և ապաշխարում մեր սխալներից։

Բնավորության այնպիսի գծեր, որոնք մենք հայտնաբերում ենք հնադարյան արժանի մարդկանց մոտ, պատահականության կամ դիպվածի արդյունք չեն, ոչ էլ դրանք ձեռք են բերվում մեկ օրում, մեկ շաբաթում, մեկ ամսում կամ տարում, այլ աստիճանական զարգացման հետևանքով՝ Աստծուն անընդհատ հավատարմության միջոցով, անկախ մարդկանց հավանությունից կամ քննադատությունից։

. . . Կարևոր է որ մենք՝ որպես Վերջին Օրերի Սրբեր հասկանանք և մեր մտքում պահենք, որ փրկությունը գալիս է Աստծո շնորհի միջոցով և մեր մեջ այն սկզբունքների զարգացման շնորհիվ, որոնցով առաջնորդվում էին վերոհիշյալ արդար մարդիկ։ Գաղափարն այն չէ, որ բարիք անենք մարդկանց գովասանքի համար, այլ բարիք անենք, որովհետև բարիք անելով մենք զարգացնում ենք բարեպաշտություն, որը ժամանակի ընթացքում կդառնա մեր էության անբաժանելի մասը։ . . .

Մի՞թե չեն լինում դեպքեր, երբ մենք անում ենք ինչ որ բաներ, որոնց համար զղջում ենք։ Ամեն ինչ լավ կլինի, եթե մենք դադարենք այդ բաներն անելուց, երբ իմանում ենք, որ դրանք

սխալ են, երբ տեսնենք չարը և փոխվենք, դա այն բոլորն է, ինչ կարող ենք անել և այդ բոլորը կարող է պահանջվել բոլոր մարդկանցից։ Բայց անկասկածորեն, դա հենց նույն դեպքն է որոշ մարդկանց դեպքում, որ նրանք ավելի շատ հաշվի են առնում և վախենում այդ սխալի հասարակայնացումից, որ կատարել են, քան ինքնին սխալը կատարելուց, նրանք անհանգստանում են, թե ինչ կասեն մարդիկ, երբ լսեն այդ մասին, և այլն։ Իսկ մյուս կողմից, ոմանք դրդվում են անել որոշ բաներ, որպեսզի ստանան իրենց ընկերների հավանությունը և եթե իրենց գործերը նպաստավոր արձագանքներ չեն առաջացնում կամ չեն ընդունվում, նրանք այնպես են զգում, որ իրենց աշխատանքը զուր կորավ և այն բարիքը, որ իրենք կատարել են, լիակատար ձախողում էր։

Այսպիսով, եթե մենք իսկապես ուզում ենք ավելի մոտենալ Աստծուն, եթե մենք ուզում ենք մեզ ներդաշնակության մեջ դնել հավերժական աշխարհների լավ հոգիների հետ, եթե կամենում ենք մեր մեջ հաստատել այնպիսի հավատք, որի մասին մենք կարդում ենք և որի միջոցով հնադարյան Սրբերը կատարեցին այնպիսի սքանչելի գործեր, մենք պետք է Սուրբ Հոգին ձեռք բերելուց հետո, ականջ դնենք նրա շշունջներին և համաձայնվենք նրա առաջարկներին և մեր կյանքի ոչ մի վարմունքով չհեռացնենք նրան մեզանից։ Ճիշտ է, որ մենք թույլ, սխալական արարածներ ենք՝ հակված ամեն ժամանակ տրտմեցնելու Աստծո Հոգին, բայց հենց որ մենք հայտնաբերում ենք ինքներս մեզ հանցանքի մեջ, մենք պետք է ապաշխարենք այդ սխալը գործելուց և որքան հնարավոր է ուղղենք կամ դարձնենք բարի այն սխալը, որը մենք գործել ենք։ Այդ ուղղությունը բռնելով մենք ուժեղացնում ենք մեր բնավորությունը, մենք առաջ ենք տանում մեր նպատակը և զորացնում մեզ գայթակղության դեմ և ժամանակի ընթացքում այդքանով մենք կհաղթահարենք այնքան շատ բաներ, որ կապշենք այն առաջընթացի վրա, որ մենք ենք հասել ինքնակառավարման և բարեփոխման մեջ[5] [տես առաջարկ 4, էջ 145]։

Երբ մենք պահպանում ենք մեր արդար բնավորությունը, մենք ավելի ենք մոտենում Տիրոջը:

Մենք ստացել ենք մի Ավետարան, որը սքանչելի է իր ներգործությամբ. նրա պահանջներին ենթարկվելու միջոցով մենք կարող ենք ստանալ ամենաընտիր օրհնությունները, որոնք երբևէ խոստացվել են շնորհվել մարդկությանը աշխարհի որևէ դարաշրջանում: Բայց խաղալիքով կամ խաղալու որևէ բանով տարվող երեխայի նման, մենք խիստ հաճախ բավարարում ենք մեզ ժամանակի անցողիկ բաներով, մոռանալով մեր մեջ կյանքի և ճշմարտության հավերժական սկզբունքներ զարգացնելու հնարավորությունների մասին: Տերը ցանկանում է հաստատել ավելի մոտիկ և ավելի մտերիմ հարաբերություններ Իր և մեր միջև, Նա կամենում է բարձրացնել մեզ գոյության և բանականության աստիճաններով, իսկ սա կարող է արվել միայն հավիտենական Ավետարանի միջոցով, որը պատրաստվել է այս նպատակով: Հովհաննես Առաքյալն ասում է.«Եւ ամեն ով որ այս յոյսն ունի իրանում, սրբում է իր անձն ինչպէս որ Նա [Քրիստոսը] սուրբ է» [Ա Հովհաննես Գ.3]: Արդյոք Վերջին Օրերի Սրբերը կիրառո՞ւմ են Ավետարանի սկզբունքներն իրենց կյանքում և այդպիսով իրականացնում Աստծո ծրագիրը:

. . . Ի՞նչ կարող ենք մենք անել այս հանգամանքներում՝ մեզ, էլ ավելի վեր բարձրացնելու մեր Աստծո արդարության մեջ: Ինչպիսի՞ առավելություններ, օրհնություններ և արտոնություններ է ընձեռում փրկության այս համակարգը, որին մենք ենք հնազանդվել, և ի՞նչ միջոցներ պետք է գործածվեն՝ դրանք իրականացնելու համար: Եթե զոհաբերություն է պահանջվում, դա շատ հարմար կլինի բոլոր նրանց համար, ովքեր կամենում են դարձնել իրենց կրոնը ուսումնասիրության առարկա, և ովքեր ջանում են ենթարկվել դրա պահանջներին, ապրելով դրանով իրենց ամենօրյա կյանքում, ցույց տալու իրենց հոժարակամությունը խոնարհվելու Եհովայի կամքին, ճանաչելով նրա ձեռքը ինչպես ձախորդության, այնպես էլ՝ բարգավաճման մեջ:

. . . Լավ կլիներ քննեինք ինքներս մեզ, ինքներս մեզ հետ զրուցեինք առանձին սենյակում, հավաստիանալու թե ինչպես ենք կանգնած . . . Տիրոջ առջև, որպեսզի երբ կարիք լինի մենք

կարողանանք նորոգել մեր ջանասիրությունը և հավատարմությունը և առատացնենք մեր բարի գործերը։

Կասկած չկա՝ խոսելով ժողովրդի մասին որպես ամբողջություն, որ մենք մեծապես բարելավվում ենք Աստծո աչքում։ Բայց չնայած գործն անկասկած սրանում է, ես համոզված եմ, որ մեր մեջ կան մարդիկ, ովքեր օժտված են հոգևոր պարգևներով, լինելով զարգացման համար ընկալունակ, որոնք կարող էին գործադրվել, եթե նրանք ընտրեին, շատ ավելի մեծ չափով գործադրել դրանք, քան անում են, և ովքեր կարող էին շատ ավելի արագ շարժվել սրբության ուղիներում և շատ ավելի մոտենալ Տիրոջը։ Բայց այս աշխարհի բաներին հետևելու ոգին ներգործում է նրանց վրա այն չափով, որ նրանք չեն զարգացնում այդ հոգևոր ուժերն ու օրհնությունները, նրանք չեն դնում իրենց այն մոտիկ հարաբերության մեջ Տիրոջ հետ, որի արտոնությունը նրանք ունեն։[6]

Մեր բնավորությունը, որպես Վերջին Օրերի Սրբեր պետք է պահպանվի սրբազան, ինչպիսին էլ որ լինի գինը կամ զոհաբերությունը։ Բնավորությունը, որը հավանության է արժանանում Աստծո կողմից, արժե ամրացնել, նույնիսկ, ողջ կյանքի ժամանակաընթացքում անընդհատ ինքնահրաժարմամբ։

Այսպես ապրելով մենք կարող ենք առաջ նայել . . . . . , լիակատար համոզվածությամբ, որ . . . մենք կթագադրվենք Աստծո որդիների և դուստրերի հետ և կտիրանանք Մելեստիալ արքայության հարստությանն ու փառքին[7] [տես առաջարկ 5, էջ 145]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայելով 135 և 137 էջերը, ի՞նչ եք սովորում Երեց Լորենզո Սնոուի և Երեց Ֆրանկլին Դ. Ռիչարդսի գործողություններից։ Խորհեք, թե ինչպես կարող եք կիսվել այս սկզբունքներով ընտանիքի անդամների կամ ուրիշների հետ։

2. Նախագահ Մնոուն ասել է. «Մենք պետք է իսկական տղամարդիկ և կանայք լինենք» (էջ 139)։ Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում լինել իսկական տղամարդ կամ իսկական կին։
3. Խորհեք Մովսեսի և Հովնանի օրինակների վերաբերյալ Նախագահ Մնոուի դիտարկումների մասին (էջեր 139–141)։ Ի՞նչ եք տեսնում այս պատմություններից յուրաքանչյուրում, որոնք կարող են օգնել մեզ բարելավել մեր բնավորությունը։
4. Մտածեք էջ 142-ում երկրորդ լրիվ պարբերության մասին։ Ինչո՞ւ եք կարծում, որ մենք պետք է տեղյակ լինենք մեր հանցանքների մասին, որպեսզի ուժեղացնենք մեր բնավորությունը։ Ինչպե՞ս կարող ենք առանց հուսալքվելու, թույլ տալ ինքներս մեզ տեսնել մեր իսկ թերությունները։
5. Վերանայեք Նախագահ Մնոուի խորհուրդը գլխի վերջին բաժնում (էջեր 143–44)։ Մտածեք ժամանակ գտնել ինքներդ ձեզ քննելու և որոշելու, թե ինչպե՞ս եք կանգնած Տիրոջ առջև։

Սոնչվող սուրբ գրություններ. Սաղմոս ԻԴ.3–5, Բ Պետրոս Ա.2–11, Մոսիա 3.19, Ալմա 48.11–13, 17, Եթեր 12.25–28, ՎևՈՒ 11.12–14, 88.63–68

Օգնություն ուսուցչին. Խնդրեք մասնակիցներին գլխից ընտրել մեկ բաժին և այն կարդալ անձայն։ Հրավիրեք նրանց հավաքվել երկու կամ երեք հոգուց կազմված խմբերով, ովքեր ընտրել են նույն բաժինը, և քննարկեք այն, ինչ նրանք սովորեցին։

Հղումներ

1. *Deseret Semi-Weekly News,* Dec. 19, 1899, 5.
2. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
3. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
4. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
5. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
6. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
7. *Deseret News: Semi-Weekly,* Feb. 9, 1886, 1.

Երեխաները «թանկարժեք ժառանգություն են Տիրոջից»:

Սրբազան ընտանեկան հարաբերություններ

«Եթե մենք հավատարիմ լինենք, մենք կհաղորդակցվենք միմյանց հետ անմահական և փառահեղ վիճակում: Այն կապերը, որոնք ստեղծվում են այստեղ, որոնք ամենահարատև բնույթն ունեն, կգոյատևեն հավերժության մեջ»:

Լորենզո Սնոուի կյանքից

Ի 70-ամյակի տարեդարձի առիթով Լորենզո Սնոուն հրավիրեց բոլոր իր երեխաներին և նրանց ընտանիքներին հավաքվել Բրիգամ քաղաքում, Յուտա «սքանչելի վերամիավորման և տարեդարձի տոնակատարության»: Նա պատրաստեց նրանց գիշերելու տեղը, սնունդը և ծրագրեր կազմեց, որպեսզի բոլորը, ներառյալ փոքր երեխաները զվարճանային: «Որքան ավելի շատ եմ մտածում այս թեմայի շուրջ [ընտանեկան վերամիավորման մասին], - գրել է նա, - ավելի շատ եմ անհանգստանում և ցանկանում ընտանեկան հավաք կազմակերպել, որպեսզի կարողանամ տեսնել ձեզ բոլորիդ միանգամից իմ կյանքում և տալ ձեզ հայրական օրհնություն»: Նա հորդորեց նրանց, որ թույլ չտան, որ որևէ բան խանգարեր նրանց մասնակցությանը «բացի ամենալուրջ և ամենա անխուսափելի խոչընդոտներից»:[1]

Սնոուների ընտանիքը հավաքվեց 1884 թվականի մայիսի 7-9-ը և վայելեց երաժշտություն, թատերական ներկայացումներ, ելույթներ, բանաստեղծություններ, խաղեր, ուտելիք և ընկերական զրույցներ:[2] Նախագահ Սնոուի քույրը՝ Էլիզան գրել է, որ նա այդ իրադարձության ընթացքում մասնակցում էր «տարբեր ընտանեկան ժողովներին Հայրապետի դերում, . . . զբաղված օրհնություններ շնորհելով անդամներին, և տալով շատ հայրական խորհուրդներ, հրահանգներ և հորդորներ»: Երբ

վերամիավորումը մոտենում էր իր ավարտին, ողջ ընտանիքը հավաքվեց միասին՝ լսելու նրա խոսքը: Ինչպես գրում է Էլիզան, նա արտահայտեց «իր գոհությունն ու երախտագիտությունն առ Աստված, որ նա այժմ վայելում էր իր մեծ ընտանիքի հաճելի և ժպտացող դեմքերը տեսնելու երջանկությունը և այն բարիքը, որ նա սպասում էր այդ վերամիավորման արդյունքում»: Նայելով իր ընտանիքին Նախագահ Մնոուն բացականչեց. «Միրտս ծայրեծայր լցված է իմ Երկնային Հոր հանդեպ ամենաջերմագին զգացումներով: . . . Լեզուն ի զորու չէ արտահայտելու սրտիս խորը զգացումները իմ յոթանասունամյա տարեդարձի տոնակատարության այս սուրբ և սրբազան հնարավորության համար, կանգնելով այստեղ և նայելով այս փառահեղ և երկնային ոգեշնչող ներկայացմանը»:

Նախագահ Մնոուն շարունակեց. «Սա վերջին ընտանեկան վերամիավորումն էր, որ մենք պատճառ ունենք սպասելու հոգևոր աշխարհի այս կողմում: Թող որ մեր հայրերի Աստվածը օգնի մեզ պահել Նրա օրենքները, ապրել պատվավոր կյանք, անխախտ պահել մեր առաքինությունն ու հավատարմությունը, լսել Սուրբ Հոգու շշունջները և ջանասիրաբար ձգտել մաքրագործել ինքներս մեզ, որպեսզի ոչ մի անդամ այս ընտանիքից չկորչի՝ հեռանալով նեղ ու անձուկ արահետից, այլ որ մենք բոլորս ապացուցենք, որ արժանի ենք դուրս գալու առաջին հարության առավոտյան, պսակված փառքով, հավերժացնելով անմահության մեջ ընտանեկան միավորը և շարունակելով աճել հավերժության անվերջ դարերի միջով»[3] [տես առաջարկ 1, էջ 155]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Ընտանեկան հարաբերությունները սրբազան են և կարող են ավելի ուժեղանալ հավերժության մեջ:

Խրախուսեք ամուսնությունը,. . . ներգործեք [ուրիշների վրա] այդ հարաբերության և պարտավորության սրբազանությամբ, որի ներքո են իրենք՝ հետևելու այդ մեծ պատվիրանին, որը տրվել է Աստծո կողմից մեր առաջին ծնողներին՝ շատանալու և լցնելու աշխարհը [տես Ծննդոց Ա.28]: Այս բոլորն ավելի անհրաժեշտ է, հաշվի առնելով աշխարհում այդ օրենքը անտեսելու և

ամուսնական ուխտն անպատվելու ներկա միտումը: Տխրեցնող է նշել ամուսնալուծությունների հաճախացումը երկրում և երեխաներին որպես բեռ նայելու միտման աճը, փոխարենը նրանց համարելու արժեքավոր ժառանգություն՝ Տիրոջից:[4]

[Տերը] ցույց է տվել մեզ, որ եթե մենք հավատարիմ լինենք, մենք միավորված կլինենք միմյանց հետ անմահ և փառահեղ վիճակում, որպեսզի ամենահարատև բնույթով այն կապերը, որոնք հաստատվել են այստեղ, գոյատևեն հավերժության մեջ:[5]

Ընկերակցությունները, որոնք ձևավորվում են այստեղ, [մենք] կունենանք հավերժական աշխարհներում: Հայրեր, մայրեր, քույրեր, եղբայրներ, այո, մայրեր, ովքեր տեսնում են իրենց սիրելիներին իրենց կողքից հեռանալիս, գիտեն, որ նրանք իրենցը կլինեն հոգևոր աշխարհում և նրանք կունենան նրանց ինչպես որ նրանց վար կդնեն: Կինը երբ տեսնի իր ամուսնուն մահանալիս, երբ կյանքը հեռանում է նրանից, նա գիտի, որ կրկին կունենա նրան, և նա տեսնում է սփոփանք, մխիթարություն և ուրախություն, որոնք տրվում են Ամենակարողի հայտնությունների միջոցով, որ նա իր ամուսնուն կունենա հավերժական աշխարհներում: Այստեղի հարաբերությունների նույն ձևերը վարագույրից այն կողմ էլ գոյություն կունենան, այստեղ ձևավորված կապերը կուժեղանան մյուս կյանքում, որը պիտի գա: Եվ Վերջին Օրերի Սրբերը համոզված են զգում, որովհետև Աստված է տվել դա իրենց[6] [տես առաջարկ 2, էջ 155]:

Հավատարիմ Վերջին Օրերի Սրբերը, ովքեր ի վիճակի չեն ամուսնանալ կամ երեխաներ մեծացնել այս կյանքում, կկարողանան ստանալ վեհացման բոլոր օրհնությունները՝ գալիք կյանքում:

Մի կին մեր գրասենյակ եկավ անցած օրը և խնդրեց հանդիպել ինձ անձնական գործով: Նա տեղեկացրեց ինձ, որ շատ վատ էր զգում, որովհետև ամուսին գտնելու իր հնարավորությունները շատ անբարենպաստ էին եղել: . . . Նա ուզում էր իմանալ, թե ինչպիսին էր լինելու իր վիճակը մյուս կյանքում, եթե նա հաջողություն չունենար գտնելու ամուսին այս կյանքում: Կարծում եմ այս հարցը բարձրանում է մեր երիտասարդ մարդկանց սրտերում՝ ևս: . . . Ցանկանում եմ մի փոքրիկ բացատրություն տալ կողմերի սփոփանքի և մխիթարության

համար այս իրավիճակում: Չկա Վերջին Օրերի Սուրբ, ով մահանում է հավատարիմ կյանքով ապրելուց հետո, որը կկորցնի որևէ բան, որովհետև նրան չի հաջողվել անել որոշ բաներ, երբ հնարավորություններ չեն տրվել իրենց: Այլ խոսքով ասած, եթե մի երիտասարդ տղամարդ կամ երիտասարդ կին հնարավորություն չունի ամուսնանալու, բայց ապրում են հաավատարիմ կյանքով մինչև իրենց մահվան ժամանակը, նրանք կունենան բոլոր օրհնությունները, վեհացում և փառք, որը կունենա ամեն տղամարդ կամ կին, ովքեր ունեցել են այդ հնարավորությունը և օգտվել այդ հնարավորությունից: Դա հաստատ է, համոզված եմ: . . .

Մարդիկ, ովքեր ամուսնանալու հնարավորություն չունեն այս կյանքում, եթե նրանք մահանում են Տերում, կունենան իրենց տրված միջոցներ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան ապահովել բոլոր օրհնությունները, որոնք անհրաժեշտ են մարդկանց ամուսնացած վիճակում: Տերը ողորմած է և բարի և Նա անարդար չէ: Նրա մեջ չկա անարդարություն, սակայն մենք չենք կարող համարել արդար, երբ որևէ տղամարդ կամ կին մահանում է առանց ամուսնանալու հնարավորություն ունենալու, եթե դա չհատուցվեր մյուս կյանքում: Դա անարդար կլիներ, իսկ մենք գիտենք, որ Տերն անարդար էակ չէ: Իմ քուր Էլիզա Ռ. Սնոուն, համոզված եմ, ճիշտ նույնքան լավ կին էր որքան որևէ Վերջին Օրերի որևէ Սուրբ կին, որ երբևէ ապրել է և նա ապրում էր չամուսնացած վիճակում, մինչև նա ընտանիք մեծացնելու վիճակից այն կողմ էր:. . . Ես չեմ կարող մտածել նույնիսկ մի պահ, որ նա կարող է կորցնել մի հատիկ բան այդ պատճառով: Դա կտրվի նրան մյուս կյանքում, և նա կունենա ճիշտ նույնպիսի մեծ թագավորություն, ինչպիսին նա կունենար, եթե հնարավորություն ունենար այս կյանքում ընտանիք աճեցնել:[7]

Երբ ամուսինն ու կինը վայելում են զգացմունքի միասնականություն, նրանք խրախուսում են սեր և բարություն տանը:

Տեսեք որ փոքր, աննշան թյուրըմբռնումները ընտանեկան հոգսերում, չթունավորեն ձեր երջանկությունը:[8]

Կանայք, հավատարիմ եղեք ձեր ամուսիններին: Ես գիտեմ, որ դուք ստիպված եք տանել բազմաթիվ տհաճ բաներ, և ձեր

ամուսինները ևս ստիպված են տանել որոշ բաներ։ Անկասկած, երբեմն դուք փորձվում եք ձեր ամուսինների կողմից, ձեր ամուսինների անիրազեկության պատճառով, կամ՝ գուցե երբեմն էլ ձեր իսկ անիրազեկության պատճառով։ . . .

. . . Ես ընդամենը ասում եմ, որ ձեր ամուսինները վատն են՝ ճիշտ նույնքան վատը, որքան դուք եք, և հավանաբար նրանցից ոմանք ավելի վատն են, բայց ուշադրություն մի դարձրեք՝ փորձեք դիմանալ տհաճություններին, որոնք երբեմն առաջանում են, իսկ երբ հանդիպեք միմյանց հաջորդ կյանքում, դուք ուրախ կզգաք, որ դուք դիմացել եք այդ բաներին։

Ամուսիններին ես ասում եմ. Ձեզանից շատերը չեն գնահատում իրենց կանանց, ինչպես պարտավոր են։. . . Բարի եղեք նրանց հետ։ Երբ նրանք ժողով են գնում, դուք պահեք երեխային առնվազն ժամանակի կեսը։Երբ նա օրորելու կարիք ունի և եթե շատ բան չունեք անելու, օրորեք նրան։ Եղեք բարի, երբ որոշ դեպքերում դուք ստիպված եք լինում մի փոքրիկ զոհաբերություն կատարել դա անելու համար, բարությամբ վարվեք ամեն դեպքում, անկախ նրանից, թե ինչ զոհաբերություն է։[9]

Տղամարդիկ պարտավոր են ավելի հայրաբար վարվել տանը, ունենալով ավելի նուրբ զգացումներ իրենց կանանց և երեխաների, հարևանների ու ընկերների հանդեպ, ավելի բարյացակամ և աստվածանման լինեն։ Երբ ես որևէ ընտանիք եմ մտնում, ես իսկապես հիանում եմ՝ տեսնելով այդ ընտանիքի գլխավորին նրանց սպասավորելիս՝ որպես Աստծո մարդ, բարի և մեղմ, լցված Սուրբ Հոգով և իմաստությամբ ու երկնային հասկացողությամբ։[10]

Եթե դուք երբևէ միություն եք ապահովում Սիոնի որևէ ընտանիքում, եթե դուք երբևէ ձեռք եք բերում այդ երկնային միությունը, որն անհրաժեշտ է այնտեղ գոյատևելու համար, դուք պետք է միմյանց կապեք այդ ընտանիքը՝ մեկ միասնության մեջ, և այնտեղ այդ ընտանիքի ղեկավարի մեջ պետք է լինի Տիրոջ Հոգին և նա պետք է ունենա այդ լույսը և այդ բանականությունը, որը եթե իրականացվի ամենօրյա կյանքում և այդ անձնավորությունների վարքում, կվավերացնի այդ ընտանիքի փրկությունը, քանի որ նա [հայրն] է պահում նրանց փրկությունը իր ձեռքերում։

Ծնողները պետք է ձգտեն «[իրենց] ընտանիքը միմյանց կապել, մեկ դարձնելով այն»:

Նա գործի է անցնում և միավորում իր զգացմունքները և մտերմությունը նրանց հետ, որքանով որ դա իր զորությունում է և ջանում է ապահովել բոլոր այն բաները, որոնք անհրաժեշտ են նրանց հարմարավետության և բարօրության համար և նրանք մյուս կողմից պետք է շրջվեն և դրսևորեն նույն զգացմունքները, նույն բարությունը և նույն տրամադրվածությունը և իրենց ողջ ունակությամբ ցույց տան երախտագիտության զգացումներ այն օրհնությունների համար, որոնք իրենք ստանում են:

Անհրաժեշտ է, որ լինի զգացմունքների միասնություն կամ կարծիքի միասնականություն և համապատասխան մտերմություն, որ նրանք, լինելով մեկ, կարողանան կապված լինել այս ձևով:[11]

Երբ [տղամարդիկ] ծնկի են իջնում իրենց կանանց և երեխաների ներկայությամբ, նրանք պետք է ոգեշնչված լինեն Սուրբ Հոգու պարգևով և զորությամբ, որպեսզի ամուսինը

լինի այնպիսի մարդ, որ բարի կինը պատվի նրան և որպեսզի Աստծո պարգևն ու զորությունը կարողանա լինել նրանց վրա անընդհատ: Նրանք պարտավոր են լինել մեկ իրենց ընտանիքներում, որ Սուրբ Հոգին կարողանա իջնել նրանց վրա, և նրանք պարտավոր են այնպես ապրել, որ կինը աղոթքի միջոցով սրբագործված դառնա, որ նա ինքը տեսնի սրբագործվելու անհրաժեշտությունը իր ամուսնու ներկայությամբ և իր երեխաների ներկայությամբ, որպեսզի նրանք միասին մեկ լինեն, որպեսզի տղամարդն ու կինը անբիծ տարր լինեն, հարմար լինեն՝ տեղ զբաղեցնելու Աստծո թագավորության հիմնադրման և ձևավորման մեջ, որ կարողանան ապրել մաքուր ոգով և տան մաքուր հրահանգներ իրենց երեխաներին և իրենց երեխաների երեխաներին[12] [տես առաջարկ 3, էջ 155]:

Երեխաները լավագույն ձևով են սովորում ավետարանը, երբ նրանց ծնողները ոգեշնչում են որոնում և լավ օրինակ հանդիսանում:

Սա մեր աշխատանքը չէ, որով զբաղված ենք, սա Աստծո աշխատանքն է: Մենք ուղղորդվում ենք մեր գործերում գերագույն բանականությամբ: . . . Այս թագավորության ապագան կախված է լինելու մեր հետնորդից, իսկ դրա զորությունն ու վերջնական հաղթանակը, նրանց կրթությունից և ճիշտ ուսուցումից: Եթե ուզում ենք ճիշտ ազդեցություն գործել մեր ընտանիքների վրա, մենք պետք է լավ օրինակ լինենք նրանց համար, ինչպես նաև տանք նրանց լավ ցուցումներ: Մենք պետք է կարողանանք ասել՝ արա ինչպես ես, ինչպես նաև ասել՝ արա ինչպես ես եմ ասում:[13]

Ձգտեք ձեր երեխաներին այնպես ուսուցանել, և օրինակով և ցուցումով, որ նրանք առանց տատանվելու հետևեն ձեր ոտնահետքերին և դառնան այնպես քաջարի ճշմարտության համար, ինչպես դուք եք եղել:[14]

Տղամարդիկ, ովքեր ցանկանում են պահպանել իրենց դիրքը Աստծո առջև սուրբ քահանայությունում, պետք է ունենան մարգարեության ոգին և որակավորվեն սպասավորելու կյանք և փրկություն ժողովրդին, և եթե [նույնիսկ] նրանք չեն կարողանում անել դա աշխարհին, նրանք պետք է դա անեն տանը՝ իրենց ընտանիքներում, իրենց խանութներում և փողոցներում,

որ նրանց սրտերը ոգեշնչվեն կենաց խոսքերով իրենց հավաքույթներում, իրենց երեխաներին և հարևաններին ավետարանն ուսուցանելիս, այնքան շատ, որքան նրանք խոսում են իրենց եղբայրների համար այս ամբիոնից: Այդ ընթացքում Հոգուց մի քիչ ունենալ , երբ մարդկանց առջև են, իսկ հետո այն մի կողմ դնելն ընդունելի չէ:Որոշ մարդիկ խոսում են ժողովրդի համար, իսկ հետո տուն գնում, և փոխարենը կյանքի խոսքերն իրենց մեջ ունենալու, նրանք դառնում են կատարելապես չոր և մեռած, բայց դա այլևս չի կարող շարունակվել:

Իսրայելի հայրերի պարտականությունն է դառնում արթնանալ և փրկիչներ դառնալ մարդկանց համար, որ նրանք կարողանան քայլել Տիրոջ առջև հավատքի այդ ուժով և այն վճռական էներգիայով, որը կապահովի նրանց Ամենազորի ոգեշնչումը՝ ուսուցանելու կյանքի խոսքերն իրենց ընտանիքներին: . . .

Սրանում մենք կտեսնենք վճռականության ոգի, որը մեզ հնարավորություն կտա դառնալ մեկ, որպեսզի մենք կարողանանք սովորել, թե ինչպես սիրենք միմյանց, և ես աղոթում եմ Տիրոջը, որ նա ավանդի այդ սերը մեր սրտերից յուրաքանչյուրում, որը նա ավանդել էր Հիսուսում՝ իր Որդու մեջ, և որ նա շարունակի ավանդել գիտելիք այն մասին, թե ինչն է բարի:[15]

Հոր գործն է որակավորված լինել ուսուցանելու և հրահանգելու իր երեխաներին և նրանց առջև դնելու սկզբունքներ, որպեսզի այդ հրահանգներին ենթարկվելով նրանք կարողանան ամենաերջանիկը լինել, որին նրանց էությունը զգայունակ է մանկական հասակում, մինչդեռ միևնույն ժամանակ նրանք սովորում են սկզբունքներ, որոնց միջոցով նրանք կարող են ձեռք բերել մեծագույն երջանկություն և բավականություն, չափահաս տարիքում:[16]

Մեր երեխաները, եթե մենք ջանասեր լինենք զարգացնել մեր մեջ կյանքի և փրկության մաքուր սկզբունքներ, կմեծանան այս բաների գիտությամբ և ի վիճակի կլինեն ավելի մեծ կարողությամբ, քան մենք, առաջ տանել երկնքի կարգը և հաստատել երջանկություն և խաղաղություն իրենց շրջապատում[17] [տես առաջարկներ 4 և 5, էջ 155]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք Նախագահ Մնոուի զգացումները իր ողջ ընտանիքը միասին հավաքելու վերաբերյալ (էջեր 147, 148)։ Որո՞նք են այն մի քանի լավ արդյունքները, որոնք կարող են գալ, երբ մենք հավաքում ենք միասին մեր ընտանիքներին։ Ինչպե՞ս կարող ենք օգնել մեր ընտանիքներին միասնական մնալ։
2. Ինչպե՞ս է էջ 149-ի երկրորդ լրիվ պարբերությունը տեղին այսօր։ Ի՞նչ կարող ենք անել օգնելու համար Եկեղեցու երիտասարդությանն այսօր հասկանալ ամուսնական ուխտի սրբազան լինելը։ Ի՞նչ կարող ենք անել օգնելու համար նրանց անհամբեր սպասել ամուսնությանն ու ծնող լինելուն։
3. Նախագահ Մնոուն ասել է, որ «փոքրիկ, աննշան թյուրըմբռնումները» կարող են «թունավորել [մեր] երջանկությունը» տանը (էջ 150)։ Որո՞նք են մի քանի հատուկ գաղափարները, որոնք կարող են օգնել մեզ խուսափել այդ «թույնից» (օրինակների համար տես էջեր 150–53)։
4. Ուսումանսիրեք բաժինը, որը սկսվում է 153 էջում։ Ինչո՞ւ եք կարծում, որ ծնողները պետք է կարողանան ասել «արա ինչպես ես», բացի ասելուց՝ «արա, ինչ ասում եմ»։ Ի՞նչ ուղիներով կարող են ծնողները ուսուցանել օրինակով։ Որոնք են այն սկզբունքները, որոնք դուք եք սովորել ձեր ծնողների լավ օրինակի շնորհիվ։
5. Նախագահ Մնոուն մտահոգություն է հայտնել այն ծնողների վերաբերյալ, ովքեր ուսուցանում են զորությամբ եկեղեցում, բայց ոչ տանը (էջեր 154–55)։ Մտածեք, թե ինչպես կարող եք կիսվել «կյանքի խոսքերով» ձեր ընտանիքի հետ։

Սոնչվող սուրբ գրություններ. 1 Նեփի 8.10–12, Հելաման 5.12, ՎԵՈՒ 68:25–28, 93.40–50, 132.19–20

Օգնություն ուսուցչին. «Դուք պետք է զգույշ լինեք չխոսել ավելին, քան անհրաժեշտ է կամ ձեր կարծիքը խիստ հաճախ արտահայտել: Այս գործողությունները կարող են ուսանողների մեջ առաջացնել հետաքրքրության կորուստ: . . . Ձեր հիմնական մտահոգությունը պետք է լինի օգնել մյուսներին սովորել ավետարանը, առանց տպավորիչ ներկայացում ստեղծելու: Սա ներառում է հնարավորություններ ապահովել ուսանողներին՝ միմյանց ուսուցանելու համար» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 64):

Հղումներ

1. Տես Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 453–54:
2. Տես *Biography and Family Record of Lorenzo Snow,* 461–83:
3. In *Biography and Family Record of Lorenzo Snow,* 484–86.
4. In "Prest. Snow to Relief Societies," *Deseret Evening News,* July 9, 1901, 1; this address was given directly to women in the Relief Society.
5. *Deseret News,* Apr. 11, 1888, 200; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1888 general conference.
6. *Salt Lake Daily Herald,* Oct. 11, 1887, 2.
7. *Millennial Star,* Aug. 31, 1899, 547–48.
8. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.
9. "The Grand Destiny of Man," *Deseret Evening News,* July 20, 1901, 22.
10. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 31, 1868, 2.
11. *Deseret News,* Mar. 11, 1857, 3; in the original source, page 3 is incorrectly labeled as page 419.
12. *Deseret News,* Jan. 14, 1857, 355.
13. *Deseret News,* July 26, 1865, 338.
14. In "Scandinavians at Saltair," *Deseret Evening News,* Aug. 17, 1901, 8
15. *Deseret News,* Jan. 14, 1857, 355.
16. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
17. *Deseret News,* Oct. 21, 1857, 259.

«Եկեք տաճարներ»

«Այն հեռանկարները, որոնք Աստված է բացել մեր տեսողությանը, սքանչելի են և վիթխարի, երևակայությունը չի կարող հասկանալ դա: Եկեք տաճարներ և մենք ցույց կտանք ձեզ»:

Լորենզո Սնոուի կյանքից

Իր մկրտությունից և հաստատումից հետո, շուտով Լորենզո Սնոուն սկսեց հաճախել ժողովների Կիրթլենդի Տաճարում: Այնտեղ Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Եկեղեցու մյուս ղեկավարների հետ նա ստացավ մեծ հոգևոր օրհնություններ: Իր օրագրում նա գրում է. «Այնտեղ մենք ունեինք մարգարեության պարգևը, լեզուների պարգևը, լեզուների թարգմանության պարգևը, պատմվում էին տեսիլքներ և սքանչելի երազներ, լսվում էր երկնային երգչախմբերի երգեցողությունը, և ականատես եղանք բժշկող զորության սքանչելի դրսևորումների՝ Երեցների սպասավորման միջոցով: Հիվանդները բժշկվեցին, խուլերը լսեցին, կույրերը տեսան և կաղերը քայլեցին խիստ շատ դեպքերում: Հստակորեն երևում էր, որ սրբազան և աստվածային ազդեցություն, հոգևոր մի մթնոլորտ էր տարածված ողջ այդ սուրբ շինությունում»:[1]

Լորենզո Սնոուն սիրում էր Կիրթլենդի Տաճարը՝ իմանալով, որ «Աստծո Որդին Իր փառքով պատվել էր այն Իր արքայական ներկայությամբ»: Հետևաբար նա լի էր երկյուղածությամբ, երբ առաջին անգամ կանգնեց այնտեղ ամբիոնի մոտ ուսուցանելու: «Ոչ մի լեզու չի կարող նկարագրել իմ զգացումները,-ասել է նա,- երբ առաջին անգամ կանգնեցի այդ ամբիոններից մեկի մոտ դիմելու լսարանին՝ ամբիոն, որի բազրիքին, ընդամենը կարճ ժամանակ առաջ կանգնած էր այդ սուրբ անձնավորությունը *«նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը. նրա աչքերը կարծես կրակի բոցեր լինեին»*, որտեղ նաև Մովսեսը,

1892 թվականի ապրիլի 6-ին հազարավոր մարդիկ էին հավաքվել ականատես լինելու Սոլթ Լեյքի Տաճարի ամենաբարձր աշտարակին վերնաքարի տեղադրմանը:

Եղիասը և Եղիան էին եկել և հանձնել իրենց տնտեսության բանալիները Ջոզեֆ Սմիթին [տես ՎևՈՒ 110][2]

Շատ տարիներ անց՝ 1892 թվականի ապրիլի 6-ին,Նախագահ Լորենզո Մնոուն կանգնած էր մեկ ուրիշ հավաքի առջև, այս անգամ գրեթե ավարտված Սոլթ Լեյքի Տաճարի առջևում: Մոտ 40,000 Վերջին Օրերի Սրբեր ամբոխվել էին Տաճարային Հրապարակի շուրջ բոլորը և մոտ 10,000 մարդ ևս «զբաղեցրել էին կից տների գագաթները և այն տեղերը, որտեղից ինչ որ բան կարելի էր տեսնել»:[3] Բազմությունը հավաքվել էր մի ծիսակատարության համար, որի ժամանակ վերնաքարն էր տեղադրվում տաճարի ամենաբարձր աշտարակի գագաթին: Առաջին Նախագահության հանձնարարությամբ Նախագահ Մնոուն, որը Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր, պետք է ղեկավարեր Սրբերին Օվսաննայի բացականչության ժամանակ: Երբ նա բացատրում էր Օվսաննայի Բացականչությունը բազմությանը, նա արտահայտեց իր սերն ու խանդավառությունը, տաճարային աշխատանքի հանդեպ:

«Օվսաննա բացականչության խոսքերը, - ասաց նա, - որոնք պիտի արտասանվեն այսօրվա վերնաքարի տեղադրելուց առաջ կամ հետո, ներկայացվել է Նախագահ Ջոզեֆ Սմիթի կողմից Կիրթլենդի Տաճարում և ասվել է հանդիսավոր ժողովի ժամանակ, որտեղ Աստծո զորությունն է դրսևորվել և Ամենակարողի տեսիլքն է բացվել եղբայրներին: Սա սովորական հայտարարություն չէ, այլ սրբազան բացականչություն, և մենք ուզում ենք, որ դուք հստակորեն հասկանաք, որ այն կիրառվում է միայն արտասովոր դեպքերում, ինչպիսին այս մեկն է, որն այժմ մեր առջևում է: Եվ մենք ուզում ենք նաև, որ հստակորեն հասկանաք, որ մենք ուզում ենք որ եղբայրներն ու քույրերը ոչ միայն արտահայտեն բառերը, այլ որ նրանց սրտերը լի լինեն զոհությամբ առ երկնքի Աստվածը, ով իրականացրել է մեր ազատ կամքի միջոցով այս հզոր և արտասովոր աշխատանքը: Երեսունհինը տարի առաջ այս օրը դրվեց Տաճարի հիմնաքարը՝ անկյունաքարը և մտածելով և խորհրդածելով այն սքանչելի օրհնությունների մասին, որոնք Աստված շնորհել է մեզ՝ Իր ժողովրդին այս մի շարք անցած տարիների ընթացքում այդ ժամանակից սկսած, մենք ուզում ենք, որ Սրբերը զգան, երբ արտասանեն այս բացականչությունը, որ այն գա

իրենց սրտերից: Թող ձեր սրտերը լցված լինեն շնորհակալությամբ»: Նա ցույց տվեց Օվսաննա Բացականչությունը և ապա ասաց.«Այժմ երբ մենք գնանք Տաճարի առջև և այս բացականչությունը գնա առաջ, մենք ուզում ենք յուրաքանչյուր տղամարդ և յուրաքանչյուր կին բացականչի այս խոսքերը իրենց ձայնի ամենբարձր աստիճանով, որպեսզի ամեն տուն այս քաղաքում դողա, մարդիկ այս քաղաքի բոլոր մասերում լսեն այն, և այն կարողանա հասնել հավերժական աշխարհներին»:[4]

Վերնաքարի ծիսակատարության հետևյալ հաղորդագրությունը ցույց է տալիս Սրբերի ակնածանքը և հուզմունքը այդ իրադարձության ընթացքում:

«Հենց որ մոտեցավ կեսօրվա ժամը, Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը առաջ եկավ հարթակի վրա՝ հավաքված բազմության լրիվ տեսադաշտում, որոնց մեջ հանդիսավոր լռություն էր տիրում: Դող անցավ մարդկանց սրտերով, երբ նա խոսեց.

«Ուշադրություն, բոլոր դուք Իսրայելի տուն և բոլոր դուք երկրագնդի ազգեր: Այժմ մենք կդնենք մեր Աստծո Տաճարի վերնաքարը, որի հիմքը դրվել է և նվիրագործվելՄարգարե, Տեսանող և Հայտնող Բրիգամ Յանգի կողմից»:

Այնուհետև Նախագահ Վուդրուֆը սեղմեց մի էլեկտրական կոճակ և Տաճարի վերնաքարը ապահով շարժվեց դեպի իր դիրքը: Տեսարանը, որը հետևեց խոսքերին՝ զորությունից վեր է նկարագրելու համար: Տասներկուսի պատկառելի Նախագահ, Առաքյալ Լորենզո Սնոուն առաջ եկավ և ղեկավարեց քառասուն հազար Սրբերի միաձայն բացականչությունը.

«Օվսաննա, օվսաննա, օվսաննա Աստծուն և Գառին: Ամեն, ամեն ու ամեն:

Օվսաննա, օվսաննա, օվսաննա Աստծուն և Գառին: Ամեն, ամեն ու ամեն:

Օվսաննա, օվսաննա, օվսաննա Աստծուն և Գառին: Ամեն, ամեն ու ամեն»:

Յուրաքանչյուր բացականչություն ուղեկցվում էր թաշկինակների ծածանումով: . . . Հազարավորների աչքերը թաց էին արցունքներից իրենց լիակատար ուրախությունից:Գետինը թվում է դողում էր ձայնի բարձրությունից, որն արձագանքներ

էր առաջացնում դեպի շրջակա բլուրները։ Ավելի վիթխարի և ազդեցիկ ներկայացում քան Տաճարի վերնաքարի տեղադրման այս ծիսակատարությունը, պատմության մեջ չի արձանագրվել։ Օվսաննաները հազիվ էին դադարել, երբ այդ վիթխարի բազմությունը պոռթկաց փառահեղ ոգեշնչող «Աստծո Հոգին կրակի պես վառվում է» օրհներգից»։[5]

Նախագահ Վուդրուֆը նվիրագործեց Սոլթ Լեյքի Տաճարը ուղիղ մեկ տարի հետո՝ 1893 թվականի ապրիլի 6-ին, այն վերջացնելու համար 40 տարի Սրբերի աշխատելուց հետո։ Նախագահ Լորենզո Սնոուն կանչվեց ծառայելու որպես այդ տաճարի առաջին նախագահ, և նա կատարեց այդ կոչումը, մինչև դարձավ Եկեղեցու Նախագահ՝ 1898 թվականի սեպտեմբերին։ Նախագահ Սնոուի դիմանկարը կախված է Սոլթ Լեյքի Տաճարում այսօր , ի հիշատակ նրա նվիրվածության այն աշխատաքին, որը կոչում էր «հզոր աշխատանք, որն իրականացնում ենք մենք» Տիրոջ տանը[6] [տես առաջարկ 1, էջ 167]։

Լորենզո Սնոուի ուսմունքները

Տաճարներում մենք սովորում ենք այն սքանչելի օրհնությունների մասին, որոնք Աստված պատրաստել է հավատարիմների համար։

Այն հեռանկարները, որոնք Աստված է բացել մեր տեսողությանը սքանչելի են և վիթխարի, երևակայությունը չի կարող հասկանալ դա։ Եկեք տաճարներ և մենք ցույց կտանք ձեզ։ Ձեզանից շատերը, կարծում եմ, եղել են այնտեղ, և լսել են սքանչելի բաներ, որոնք Աստված պատրաստել է նրանց համար, ովքեր սիրում են Նրան և շարունակում հավատարիմ՝ մինչև վերջ։ . . .

. . . Նա պատրաստել է ամեն ինչ Վերջին Օրերի Սրբերի համար, որոնք նրանք հնարավորինս կցանկանային կամ կպատկերացնեին, որպեսզի իրականացնի նրանց լիակատար երջանկությունը անսահման հավերժությունների ընթացքում[7] [տես առաջարկ 2, էջեր 167]։

Տաճարային արարողությունների միջոցով մենք ստեղծում ենք սրբազան կապեր, որոնք կարող են ընտանիքներին միմյանց կապել ժամանակի և հավերժության համար:

Մտածեք այն խոստումների մասին, որոնք տրվում են ձեզ գեղեցիկ և փառահեղ ծիսակատարության ժամանակ, որն օգտագործվում է Տաճարում ամուսնական ուխտ կապելիս: Երբ երկու Վերջին Օրերի Սրբեր միավորվում են միմյանց հետ ամուսնությամբ, նրանց խոստումներ են տրվում իրենց ժառանգների վերաբերյալ, որոնք հասնում են հավերժությունից հավերժություն:[8]

Մենք ստացել ենք մեծ իմաստություն և գիտություն բաների մասին, որոնք ապշեցնում են աշխարհին, երբ մենք խոսում են դրանց մասին: Մենք իմանում ենք, որ տաճարներում մենք կարող ենք ստեղծել կապեր, որոնք չեն քանդվում մահվան ժամանակ, բայց որոնք հասնում են հավերժություն, սրբազան կապեր, որոնք ընտանիքները միմյանց են կապում՝ ժամանակի և հավերժության համար[9] [տես առաջարկ 3, էջ 167]:

Տաճարներում մենք ստանում ենք վեհացման արարողություններ մեր մահացած ազգականների համար:

Աստծո յուրաքանչյուր որդի և դուստր կունենա անհրաժեշտ հնարավորություն վեհացման և փառքի համար: . . . Կա միայն մեկ ուղի, որով վեհացումն ու փառքը կարելի է ապահովել: Մենք պետք է մկրտվենք մեղքերի թողության համար և ձեռնադրվենք Սուրբ Հոգին ստանալու համար: Այս և մյուս արարողությունները բացարձակապես անհրաժեշտ են վեհացման և փառքի համար և որտեղ ապրել են մարդիկ, երբ Ավետարանը մատչելի չէր, այս բաները կարող են արվել նրանց ընկերների կողմից: Մենք եկել ենք այժմ աշխարհ, որպեսզի անենք այս բաները, համենայն դեպս, սա մեր գալու գլխավոր նպատակներից մեկն է: Բավական չէ միայն խիստ մեծ շեշտ դնել այս աշխատանքի կարևորության վրա:[10]

Մենք պատահականորեն չենք եկել այս աշխարհ: Մենք հատուկ նպատակով ենք եկել և որ մենք եկել ենք այս կյանք

Ծնողները կարող են օգնել պատրաստվել իրենց երեխաներին ընդունել տաճար գնալու իրավերը:

անկասկած որոշակի նախապատրաստություններով է եղել մյուս կյանքում, որտեղ մենք կենում էինք։ Դեհ, Տաճարներում մենք իրականացնում ենք մեծ աշխատանք մեր մահացած ազգականների համար։ Ժամանակ առ ժամանակ մենք կարևոր դրսևորումներ ենք ունենում, որ Աստված հավանություն է տալիս այս աշխատանքին, որ մենք կատարում ենք մեր Տաճարներում։ Ամենաարտասովոր դրսևորումները զգացել են այն անձինք, որոնք աշխատում են իրենց նախնիների համար։ Սա հզոր աշխատանք է, որ մենք կատարում ենք։ Տաճարներում հազարավոր մարդիկ են մկրտվել իրենց մահացածների համար, մեր աշխատանքների առաջընթացի ժամանակ։ . . .

Այժմ մենք թույլ ենք տալիս մարդկանց մտնել մեր Տաճարները, իրենց նախնիներին հայտնաբերելուց հետո, անկախ նրանից, թե որքան են ետ գնացել տոհմագծով, և մկրտվել իրենց մահացած հոր, պապի և նախապապի համար և այդպես շարունակ, ուղղակի այքան որքան կարողացել են հայտնաբերել իրենց տոհմագիծը։ Ապա մենք թույլ ենք տալիս, որ նրանց կանայք կնքվեն իրենց ամուսինների հետ, ողջ տոհմագծի երկայնքով, այնքանով որքանով նրանք կարողացել են հայտաբերել այն։ Վերցնենք օրինակ, մի առաքինի երիտասարդի, ով ապրել է մինչև Ավետարանի ներկայացվելը մարդկանց զավակներին։ . . . Նա ամուսնացավ մի կնոջ հետ և մեծացրեց ընտանիք, բայց նա երբեք արտոնություն չունեցավ ընդունելու Ավետարանը, ինչպես ես և դուք ենք արել։ Սակայն նա ուսուցանեց իր ընտանիքին բարոյականության սկզբունքները և նա սիրում էր և բարի էր իր կնոջ և երեխաների հանդեպ։ Էլ ի՞նչ կարող էր նա անել։ Նա չպետք է դատապարտվի, որովհետև նա չէր ընդունել Ավետարանը, քանի որ չկար Ավետարան, որ ընդուներ։ Նա չպետքէ կորցնի իր կնոջը, որովհետև, երբ նա ամուսնացավ նրա հետ, նա չկարողացավ գնալ Տաճար և նրա հետ կնքվել ժամանակի և հավերժության համար։ Նա գործեց համաձան այն լավագույն գիտելիքի, որն ինքն ուներ և նա[կինը] ամուսնացավ նրա հետ ժամանակի համար համաձայն երկրի սովորույթի։ Մենք հարգում ենք այդ ամուսնությունը, օրինականացված համաձայն իր երկրի օրենքների։ . . . Մենք կնքում ենք երեխաներին իրենց ծնողների հետ և կանանց իրենց ամուսինների հետ, ողջ տոհմագծի երկայնքով։[11]

Փրկիչն ասել է մի հատուկ առիթով. «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ թէ ժամանակ կգայ՝ եւ հիմա է, որ մեռելներն Աստուծոյ Որդու ձայնը կլսեն», և նա շարունակում է և կատարում հետևյալ նշանավոր արտահայտությունը. «եւ լսողները կապրին» [Հովհաննես Ե.25]: Ես հավատում եմ, որ կլինեն շատ քչերը, ովքեր չեն ընդունի ճշմարտությունը: Նրանք կլսեն Աստծո Որդու ձայնը, նրանք կլսեն Աստծո Որդու Քահանայության ձայնը, և նրանք կընդունեն ճշմարտությունը և կապրեն: Այս եղբայրներն ու քույրերը, որոնք այնպես ջանասիրաբար աշխատում են տաճարներում կունենան պատիվ `լինելու փրկիչներ իրենց ազգականների և ընկերների համար, ում համար նրանք սպասավորել են այս արարողությունները[12] [տես առաջարկ 4, էջ 167]:

Մենք պետք է ձգտենք կատարել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք, եթե նույնիսկ դա պահանջում է զոհաբերություն մեր կողմից:

Այժմ, սա պետք է լինի մի նպատակ յուրաքանչյուր տղամարդու և կնոջ մտքում՝ գալ մեր Տաճարները և կատարել այս աշխատանքը: Սա մեծ աշխատանք է և նաև շատ կարևոր: Երբ մենք ետ գնանք մյուս կյանք և գտնենք այնտեղ ապրող մեր մահացած ընկերներին, եթե մենք կատարած չլինենք անհրաժեշտ աշխատանքը նրանց վեհացման և փառքի համար, մենք երջանիկ չենք զգա և դա չի լինի հաճելի հանդիպում:

Մենք պարտավոր ենք միշտ չսպասել հաճելի և ընդունելի առիթների, այլ պետք է ձգտենք, եթե նույնիսկ մի փոքր զոհաբերություն է պահանջվում մեր կողմից, տրամադրելով մեզ կատարելու այս աշխատանքը: . . . Մենք շատ ենք ցանկանում, որ եղբայրներն ու քույրերը չանտեսեն այս կարևոր աշխատանքը: Արդյոք գիտե՞ք, թե որն է լինելու գլխավոր աշխատանքը հազար տարիների հանգստի ընթացքում [Հազարամյակ]: Դա կլինի այն, ինչ մենք փորձում ենք համոզել Վերջին Օրերի Սրբերին կատարել ներկա ժամանակաշրջանում: Տաճարներ կկառուցվեն ողջ այս երկրով մեկ և եղբայրներն ու քույրերը կգնան այնտեղ և հավանաբար կաշխատեն օր ու գիշեր, որպեսզի արագացնեն աշխատանքը և իրականացնեն անհրաժեշտ աշխատանքները, նախքան Մարդու Որդին

կներկայացնի Իր թագավորությունը Իր Հորը։ Այս աշխատանքը պետք է ավարտվի, նախքան Մարդու Որդին գա և ընդունի Իր թագավությունը, ներկայացնելու այն Իր Հորը[13] [տես առաջարկ 5, էջ 167]։

Երբ մենք տաճար ենք մտնում մաքուր սրտով, Տերն օրհնում է մեզ՝ համաձայն այն բանի, ինչը Նա գիտի, լավագույնն է մեզ համար։

Մենք զգում ենք, երբ ներս ենք մտնում տաճարներ, որ մենք վայելում ենք Տիրոջ Հոգին ավելի լիովին, քան որևէ այլ վայրում։ Դրանք Տիրոջ շենքերն են և Նրա ամենակարևոր աշխատանքը կատարվում է դրանց պատերի ներսում։ . . .

. . . Ես բավարարված եմ, որ երբ մարդիկ մտնում են տաճար, նրանք չեն [հեռանում] առանց ավելի լավ զգալու և առանց վճռականության իրենց մտքում մի քիչ ավելի լավ անել, քան իրենք արել են։ Դա այն զգացումն է, որ մենք կամենում ենք, որ Սրբերը ստանան։ . . .

. . . Եղեք հավատարիմ, եղբայրներ և քույրեր և հաստատակամությամբ եկեք տաճար ու կատարեք ձեր աշխատանքն այնտեղ, և դուք ինքներդ բավականություն կստանաք, և ավելի լավ կնախապատրաստվեք աշխարհի տհաճություններին դիմակայելու համար։[14]

Նրանք, ովքեր Տաճար են [մտնում] մաքուր սրտով և ապաշխարող հոգով, դուրս չեն գա այնտեղից առանց ստանալու հատուկ օրհնություններ, չնայած որոշ դեպքերում կամ հավանաբար շատ դեպքերում կարող է տարբեր լինել նրանից, ինչ ոմանք են ակնկալում։ . . . Որոշ Սրբեր հավանական է սպասեն ծառայող հրեշտակների երևալուն . . . կամ՝ սպասեն տեսնել Աստծո դեմքը։ Ձեզ համար օգտակար չի լինի կիսվել այդպիսի դրսևորումների մասին։ Տերը գիտի, թե ինչն է լավագույնը յուրաքանչյուր անձնավորության համար և կհարմարեցնի Իր պարգևները մեծագույն բարիք առաջացնելու նրանց համար, ովքեր ստանում են դրանք։ Կարելի է ապահով սպասել, որ ամեն մի հավատարիմ Սուրբ, ով մտնում է այդ Տունը կստանա մի օրհնություն, որը մեծ բավարարվածություն կառաջացնի ստացողի մեջ։ Նախքան նրանք, ովքեր տաճար են

մտել [հեռանան] այնտեղից, ինչ որ բան կբարձրանա նրանց սրտերում և հասկացողությունում, որն օգտակար կլինի նրանց համար, իրենց ապագա կյանքերում: Որպես ճշմարիտ Վերջին Օրերի Սրբեր նրանք սրա իրավունք ունեն[15] [տես առաջարկ 6, էջ 168]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Կարդացեք Սոլթ Լեյքի Տաճարի համար վերնաքարի ծիսակատարության պատմությունը (էջեր 159–161): Եթե դուք մասնակցել եք որևէ տաճարի նվիրագործման, մտածեք. թե ինչ էիք զգում այդ ժամանակ: Երբ մենք մասնակցում ենք Օվսաննա Բացականաչությանը, ի՞նչ ենք մենք արտահայտում Տիրոջը:
2. Վերանայեք Նախագահ Մնոուի «եկեք Տաճարներ» հրավերը (էջ 161): Մտածեք. թե ինչպես կարող եք ընդունել այս հրավերը և այն մասին թե ինչպես կարող եք տարածել այս հրավերը ընտանիքի անդամներին և ընկերներին:
3. Երբ ուսումնասիրեք երկրորդ բաժինը, էջ 162, խորհեք այն օրհնությունների մասին, որոնք կարող են գալ տաճարային արարողություններ ընդունելու միջոցով և տաճարային ուխտեր կապելով: Ինչպե՞ս են այս օրհնություններն ազդել ձեր և ձեր ընտանիքի վրա:
4. Կարդացեք էջ 162-ում սկսվող բաժինը: Ինչպե՞ս ենք մենք գործում որպես «փրկիչներ [մեր] ազգականների և ընկերների համար», երբ մենք կատարում ենք այս աշխատանքը: Ինչպիսի՞ ռեսուրսներ է Եկեղեցին ապահովել օգնելու մեզ:
5. Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի տաճարային և ընտանեկան պատմության աշխատաքին հատկացնենք այն ուշադրությունն ու ժամանակը, որին դրանք արժանի են (վերանայեք էջ165-ի վերևում սկսվող բաժինը):

6. Որո՞նք են որոշ անձնական, հոգևոր օրհնությունները, որոնք մենք կարող ենք ստանալ, երբ մասնակցենք տաճարային աշխատանքի: (Մի քանի օրինակների համար տես էջեր 166–67):

Սոնչվող սուրբ գրություններ. ՎևՈՒ 97.15–17, 109.1–23, 128.15–18, 132.19, 138.57–59

Օգնություն ուսուցչին. «Դուք կարող եք օգնել նրանց, ում դուք ուսուցանում եք ավելի վստահ զգալ քննարկմանը մասնակցելու իրենց ունակության վերաբերյալ, եթե դուք դրականապես արձագանքեք ամեն մի անկեղծ մեկնաբանությանը: Օրինակ, կարող եք ասել. «Շնորհակալություն պատասխանի համար: Այն շատ իմաստալից էր, . . . կամ՝ «Դա լավ օրինակ էր», կամ էլ՝«Շնորհակալ եմ այն ամենի համար ինչ դու այսօր ասացիր» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 64):

Հղումներ

1. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 11.
2. In *Biography and Family Record of Lorenzo Snow,* 11–12.
3. Տես J. H. A., *Millennial Star,* May 2, 1892, 281:
4. *Millennial Star,* July 4, 1892, 418.
5. *Millennial Star,* May 2, 1892, 281–82.
6. *Millennial Star,* June 27, 1895, 403.
7. *Deseret Semi-Weekly News,* Mar. 30, 1897, 1.
8. *Deseret Semi-Weekly News,* Mar. 30, 1897, 1.
9. In "Funeral Services of Apostle Erastus Snow," *Millennial Star,* July 2, 1888, 418.
10. *Millennial Star,* June 27, 1895, 405.
11. *Millennial Star,* June 27, 1895, 403–4; see also *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 177.
12. *Deseret Weekly,* Nov. 4, 1893, 609.
13. *Millennial Star,* June 27, 1895, 404–5.
14. *Deseret Semi-Weekly News,* Mar. 30, 1897, 1.
15. Adapted from a detailed paraphrase of an address by President Snow in *Deseret Weekly,* April 8, 1893, 495.

«Իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը»

«Մենք պետք է բերենք մեր կամքը ենթարկելու Հոր կամքին, և զգալ ասելու համար, Հոր կամքով լինի, ում՝ այստեղ ենք աշխարհում, ծառայելու համար: Այդ ժամանակ ամեն մի գործ, որ մենք կատարենք, հաջողությամբ կպսակվի»:

Լորենզո Մնոուի կյանքից

1899 թվականի մարտի 31-ին Նախագահ Լորենզո Մնոուն ուղևորվեց Բիգամ Յանգի Ակադեմիա (այժմ Բրիգամ Յանգի Համալսարան), որտեղ Վերջին Օրերի Սրբերի մի մեծ խումբ հավաքվել էր տոնելու նրա 85-րդ տարեդարձը: Առավոտյան նա ելույթ ունեցավ հավաքված տղամարդկանց համար: Միևնույն ժամանակ կանայք ունեցան նմանտիպ մի ժողով, Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կանանց ղեկավարությամբ: Կեսօրին բոլորը հավաքվեցին միասին:

Որպես կեսօրվա ժողովի մի մաս 23 երեխաներ «քայլեցին դեպի ամբիոն և նայելով Նախագահ Մնոուին, երգեցին երկու երգ, . . . որից հետո, յուրաքանչյուր երեխա Նախագահին նվիրեց մի ծաղկեփունջ»: Նախագահ Մնոուն արտահայտեց իր երախտագիտությունը երեխաներին և օրհնություն տվեց նրանց: Այնուհետև Բրիգամ Յանգի Ակադեմիայի ութ ուսանողներ մոտեցան ամբիոնին՝ մեկ առ մեկ: Յուրաքանչյուրը ներկայացնելով համալսարանի մի կազմակերպությունը, ներկայացրեցին խնամքով պատրաստված իրենց հարգանքի տուրքը, իրենց մարգարեին: Ի պատասխան սիրո և հիացմունքի այդ խոսքերի, Նախագահ Մնոուն ասաց.

«Այժմ եղբայրներ և քույրեր, ես չգիտեմ ինչ ասեմ այս բոլորի մասին: Ես կկամենայի տուն գնալ և մտածել այդ մասին, բայց



Գեթսեմանի պարտեզում Փրկչն ասաց. «Ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի» (Ղուկաս ԻԲ.42):

կարծում եմ ակնկալվում է մի քանի բաների մասին արտահայտվել և ես ենթադրում եմ, որ պետք է ասեմ ինչ որ բան, բայց իրականում չգիտեմ թե ինչ ասեմ: Համենայն դեպս կա այս մի բանը: Ես շատ հստակորեն հասկանում եմ, որ դուք չեք ցույց տալիս այս պատիվն ինձ, որպես Լորենզո Մնոուի, այլ այն գործի համար, որ ես ներկայացնում եմ՝ կապված իմ եղբայրների հետ, իմ խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների: . . . Ես զգում եմ, որ այն, ինչ ես իրականացրել եմ, դա ՝ Լորենզո Մնոուն չէ և փորձառությունները, որոնք բերել են ինձ դեպի այս պաշտոնը, որպես Եկեղեցու Նախագահ, դա՝ Լորենզո Մնոուն չէ, այլ Տերն է դա արել: Երբ Հիսուսը երկրի վրա էր, Նա արեց այս նշանավոր արտահայտությունը, ես մտածել եմ այդ մասին և դա իմ մտքում է անընդհատ, բոլոր իմ աշխատանքներում. «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դատում, եւ իմ դատաստանն արդար է»: Այսպիսով, ինչու է Նա ասում, որ Իր դատաստանն արդար է: Նա ասում է, որովհետև «Իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը» [տես Հովհաննես Ե.30]: Սա է սկզբունքը, իմ եղբայրներ և քույրեր, ըստ որի ես ջանացել եմ գործել այն ժամանակից ի վեր, երբ ինձ հայտնի դարձվեց, որ իմ Հայրը երկնքում և ձեր Հայրը երկնքում, գոյություն ունի: Ես ջանացել եմ Նրա կամքը կատարել: . . .

«Տիրոջն է, որ դուք պատվում եք, երբ պատվում եք ինձ և իմ խորհրդականներին և Տասներկուսի Քվորումին: Մենք դա հայտնաբերել ենք երկար ժամանակ առաջ, մեզանից յուրաքանչյուրս, որ մենք ինքնուրույն ոչինչ չենք կարող անել: Միայն այնքանով, որքանով մենք հետևել ենք այն սկզբունքին, որին Հիսուսը հետևեց, երբ Նա աշխարհում էր, մեր ջանքերը պսակվել են հաջողությամբ և դա այդպես կլինի ձեզ հետ»:[1]

Լորենզո Մնոուի ուսմունքները

Երբ մենք որոնում ենք Աստծո կամքը, մենք հետևում ենք մի ուղղության, որում ոչ մի ձախողում չի լինի:

Կա մի ուղղություն, որին տղամարդիկ և կանայք կարող են հետևել, որում ոչ մի ձախողում չի լինի: Ինչպիսի հուսախաբություններ էլ, որ բարձրանան կամ թվացող ձախողումներ

առաջանան, իրականում ոչ մի ձախողում չի լինի, որպես համընդհանուր մի բան։ . . . Եղել են անգամներ, երբ մեզ թվացել է, թե մենք ետ ենք շարժվում, առնվազն դա թվացել է նրանց, ովքեր լիովին լուսավորված չեն եղել Աստծո մտքի և կամքի վերաբերյալ։ Եկեղեցին անցել է շատ տարօրինակ փորձառությունների միջով և մարդիկ մեծ զոհաբերություններ են արել։. . . Բայց մենք անցել ենք այդ զոհաբերությունների միջով, և որպես ժողովուրդ ոչ մի ձախողում չի եղել։ Ինչո՞ւ ոչ մի ձախողում չի եղել։ Որովհետև ժողովուրդը, որպես ամբողջություն, իրենց մտքերը սևեռած է պահել կյանքի ճշմարիտ սկզբունքների վրա և նրանք կատարել են իրենց պարտավորությունը։ . . . Ժողովուրդն ընդհանրապես ունեցել է Տիրոջ Հոգին և հետևել նրան։ Ուստի ոչ մի ձախողում չի եղել։ Այսպիսով, դա գուցե եղել է անհատների հետ։ Կա ուղի, յուրաքանչյուր մարդու հետևելու համար, որում չի լինի ոչ մի ձախողում։ Դա կվերաբերի ինչպես անցողիկ, այնպես էլ՝ հոգևոր հարցերին։ Տերը տվել է մեզ մի հիմնական սկզբունք այս հատվածներում, որոնք ես կարդացի Վարդապետություն և Ուխտեր գրքից.

«Եթե ձեր աչքն ուղղված լինի միայն իմ փառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով, և ձեր մեջ չի լինի խավար. Եւ այն մարմինը, որը լցված է լույսով, ըմբռնում է բոլոր բաները։ Հետևաբար , սրբագործեք ձեզ, որ ձեր միտքն ուղղված լինի միայն առ Աստված» [ՎևՈՒ 88.67–68]։

Սա է բանալին, որի միջոցով մարդ կարող է միշտ հաջողակ լինել։ Պողոսն ասում է.

«Հետևում եմ դէպի նպատակը՝ Աստուծոյ վերին կոչումի մրցանակին Քրիստոս Յիսուսումը»[Փիլիպպեցիս Գ.14]։

Մեծ նպատակ, որը յուրաքանչյուր Վերջին Օրերի [Սուրբ] պարտավոր է ունենալ իր առջև անընդհատ։ Ի՞նչ մրցանակ է այդ։ . . . «այն ամենն, ինչ իմ Հայրն ունի, կտրվի նրան» [ՎևՈ 84.38]։

Փրկիչը մի առիթով տարօրինակ մի միտք է հայտնել։ Դա Սբ. Հովհաննեսի Ե գլխում է և ասում է հետևյալը.

«Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել» [Հովհաննես Ե.30]։

Զարմանալի է, որ Աստված, ով աշխարհները ստեղծեց, ով ներքև իջավ այստեղ մարմին հագած, կատարեց հզոր

հրաշքներ և զոհաբերեց իր կյանքը Գողգոթա լեռան վրա մարդկային ընտանիքի փրկության համար, որ Նա պիտի ասեր՝ «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել»: Եվ Նա շարունակում է ասելով.

«Ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դատում, եւ իմ դատաստանն արդար է. Որովհետեւ իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը» [Հովհաննես Ե.30]:

Դա հիանալի ասացվածք է և մեծ իմաստ կա դրանում: Այսպիսով, այն ինչ մենք ենք կամենում, այդ ոգին ունենալն է մեր կյանքի յուրաքանչյուր գործում և յուրաքանչյուր ձեռնարկման մեջ, լինի անցողիկ թե հոգևոր և չմտածել եսի մասին: Մենք պետք է հավաստիանանք, թե ինչպես պետք է ծախսենք փողը և այն տեղեկությունը, որ Աստված է տվել մեզ: Պատասխանը պարզ է՝ Աստծո փառքի համար: Մեր աչքը պետք է ուղղված լինի միայն Աստծո փառքին: Դա այն է, ինչի համար մենք թողել ենք մյուս կյանքը և [եկել] այստեղ: Մենք պետք է ձգտենք առաջ մղել Ամենաբարձրյալ Աստծո շահերը և զգալ ինչպես Հիսուսն էր զգում. «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել»: Այնքանով, որքանով մենք գործենք այսօր և վաղը, այս շաբաթ և հաջորդ շաբաթ ի օգուտ Աստծո և ունենանք մեր աչքը ուղղված միայն Նրա փառքին, չի կարող լինել որևէ ձախողում[2] [տես առաջարկ 1, էջ 178]:

Երբ մենք հնազանդվում ենք Աստծո կամքին, Նա մեզ ուժ է տալիս հաջողության հասնել Նրա գործում:

Մենք մեզանից ոչինչ չենք կարող անել: Ինչպես Հիսուսն ասաց. «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չտեսնէ Հօրն անելիս. որովհետեւ ինչ որ նա անում է, հէնց Որդին էլ այն բանը նորա նման է անում» [Հովհաննես Ե.19]: Նա այս կյանք էր եկել կատարելու իր Հոր կամքը և ոչ թե իր սեփական կամքը: Մեր ցանկությունն ու վճռականությունը պետք է լինի նույնը: Երբ գալիս են բաներ, որոնք պահանջում են մեր կողմից ուժերի լարում, մենք պետք է ենթարկենք մեր կամքը Հոր կամքին և զգանք ասելու. Հոր կամքով լինի, ում՝ այստեղ ենք աշխարհում ծառայելու համար: Ապա ամեն գործ, որ մենք կատարում ենք հաջող կլինի: Մենք

գուցե չտեսնենք դրա հաջողությունն այսօր կամ վաղը, այնուամենայնիվ, այն արդյունքում՝ հաջող կլինի։[3]

«Ես ո՞վ եմ որ Փարաւոնի մոտ գնամ, եւ Իսրայէլի որդիքը Եգիպտոսիցը հանեմ» [տես Ելից Գ.11]։ . . .

«Եւ Մովսէսն ասեց Եհովային. Ո՜հ, Տէր իմ, ես ճարտարախօս չեմ, ոչ երեկուտնից ու մէկէլ օրուանից, ոչ էլ ծառայիդ հետ խօսելուցդ յետոյ, այլ ես ծանրախօս եւ ծանրալեզու եմ» [տես Ելից Դ.10]։ . . .

Մենք այս հատվածներում, որ ես կարդացի տեսնում ենք, որ Աստված կանչեց Մովսեսին կատարելու որոշակի աշխատանք, Մովսեսը զգաց իր անկարողությունն ու թերարժեքությունը՝ անելու այն, ինչ պահանջվում էր իրենից։ Աշխատանքը խիստ մեծ էր։ Այն շատ խորն էր իր էությամբ և բնույթով և այն պահանջում էր այն, ինչ Մովսեսը զգում էր, որ ինքը չուներ զորության և ունակության մեջ, և նա զգում էր իր թուլությունը և նա խնդրեց Աստծուն, որ ուրիշներին դիմի։ . . . Նա առարկեց հուզված լինելով և այդպես խոսեց Տիրոջ հետ, ասելով. Ո՞վ եմ ես, որ պետք է ուղարկվեմ կատարելու այս մեծ աշխատանքը, քանզի անհնարին է, որ այն իրականանա այնպիսի ընդունակություն ունեցող մեկի կողմից, ինչպիսին ես եմ։ . . .

Սրանք են այն զգացմունքներն ու մտքերը, որ Մովսեսն ուներ և նա ցանկանում էր ներգործել Աստծո վրա, նույնով։ Այսպիսով դա ի սկզբանե այդպես է եղել, երբ Տերը կանչում էր մարդկանց, նրանք զգում էին իրենց անկարողությունը և նույն ձևով են զգում երեցները, երբ նրանց կանչում են խոսելու ձեզ համար։ Այդպես է այն երեցների հետ, երբ նրանք կանչվում են գնալու երկրագնդի ազգերի մոտ, որպես ավետարանի ծառայողներ։ Նրաք զգում են իրենց անհամապատասխանությունը։ Նրանք զգում են իրենց անկարողությունը։ . . .

Այն ժամանակ, երբ Երեմիան կանչվեց, նա զգաց նույնը, ինչ որ Մովսեսը։ Նա ասաց, որ Տերը կանչել էր նրան մարգարե լինելու, ոչ միայն Իսրայելի տան համար, այլ բոլոր շրջապատող ազգերի համար։ Նա ընդամենը մի երեխա էր Ջոզեֆ Սմիթի նման, երբ Աստված առաջին անգամ հայտնվեց նրան։ Ջոզեֆն ընդամենը 14 տարեկան էր, բայց լինելով երեխա հանրահայտ չէր, ինչ վերաբերում էր աշխարհի իմաստությանն ու

գիտությանը, այսպես էր նաև Երեմիայի հետ, երբ առաջին անգամ Աստված կանչեց նրան, նա ասաց.«Ես մանուկ եմ: Ինչպե՞ս կարող եմ իրականացնել այս մեծ գործը, որ դու պահանջում ես իմ ձեռքից, այս մեծ պարտականությունները կատարել, որոնք առաջարկում ես դնել իմ ուսերին»: Նա իր սիրտն ու զգացմունքները այդ մեծ աշխատանքը կատարելու գաղափարի դեմ դրեց: Բայց Աստված ասաց նրան, . . . իր հանգստության համար. «Քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ գիտէի»: Նա ասաց, որ Նա գիտեր նրան [նախաերկրային] հոգևոր աշխարհում, որ նա կիրականացներ այն, ինչ Տերը պահանջեր նրա ձեռքից. «եւ արգանդից դեռ դու դուրս չեկած ես քեզ սրբեցի, ես քեզ ազգերի մարգարէ եմ դրել» [տես ԵրեմիաԱ.5-6]: Նա առաջ գնաց և Ամենակարողի զորությամբ Երեմիան իրականացրեց այն, ինչ Տերը պահանջեց նրա ձեռքից: . . .

Այսպիսով, Տերը գործում է մարդկանց գործածներից խիստ տարբեր: Նա տարբեր է գործում: Պողոս Առաքյալը նշում է, որ Նա ասել է. «Դուք կանչված եք: Ոչ թե իմաստուններն են կանչվում, այլ Աստված կանչում է հիմարներին, որ ամաչեցնէ իմաստուններին» [տես Ա Կորնթացիս Ա.25–27]: Եվ առաքյալները, որոնց Աստված կանչեց, որոնց Հիսուսը՝ Աստծո Որդին կանչեց և ձեռնադրեց նրանց և շնորհեց նրանց իր քահանայությունը և իր իշխանությունը՝ իրականացնելու իր աշխատանքը, նրանք կրթված չէին, նրանք չէին հասկանում գիտություններից, նրանք բարձր դիրք չէին զբաղեցնում Հուդայում, նրանք աղքատ էին և անգրագետ, կյանքի համեստ կոչումներով: . . . Դեհ, ուրեմն Տերը տարբեր է: Նրա կանչելը տարբեր է մարդկանց կատարած կանչերից: Եվ մարդիկ խիստ հակված են [շփոթվելու] Աստծո գործողությունների վերաբերյալ, Նրա կողմից կանչվելիս, լավագույն մարդիկ, մարդկանցից ամենաիմաստունները հաճախակի,շատ դեպքերում [շփոթվում են]: Մովսեսը [շփոթվեց] այն բանի հետ կապված, թե ինչպես էր Աստված իրեն հնարավորություն տալու իրականացնել այն, ինչ ինքը պահանջում էր, բայց նա հրահանգվեց հետագայում: Տերն օգնում էր և աջակցում նրան սքանչելի ձևով, իր եղբայրներին, Իսրայելին, համոզելիս, երբ նա ուղեկցվում էր մեծ Եհովայի կողմից: Նա խորհրդակցում էր նրանց հետ և պատմում իր առաքելության մասին և ի վերջո նրանք համաձայնվեցին: Նրանք ընդունեցին և ստացան նրա

Մովսեսը «վերագրեց ողջ իր հաջողությունը Ամենազոր Աստծուն, ով կանչեց իրեն: Եվ մենք էլ ենք այդպես անում»:

խորհուրդները և ղեկավարությունը և նա նրանց դուրս բերեց գերության երկրից՝ Եգիպտոսից: Նա հաջողություն ունեցավ, ոչ թե հաջողակ իր սեփական իմաստությամբ, այլ նա բոլոր իր հաջողությունները վերագրեց Ամենակարող Աստծուն, ով կանչեց իրեն: Եվ մենք էլ ենք այդպես անում: . . .

Այսպիսով, հավանաբար բավական է նշել, որ Աստված կանչել է մեզ: Մենք չենք քարոզում, [մինչև] Աստված չպահանջի դա: Հազիվ թե Իսրայելի երեցների մեջ լինի մի մարդ, ում մատնացույց կարելի է անել, ում սիրտը չթուլացավ, երբ կանչվեց քարոզելու ավետարանը, կիսվելու իրենց վրա դրված պարտականություններով և պարտավորություններով: Ես նկատել եմ, որ լավագույն խոսնակներից մի քանիսը, ովքեր երբևէ խոսել են այս ամբիոնից, նրանք են, ովքեր կանչվել են, նրանք վախեցել են, նրանք զգացել են հանդիսականների հավատքի և աջակցության կարիքը: Բայց նրանք առաջ են կանգնել Եհովայի զորությամբ և հայտարարել նրա կամքը վախով և դողով,

բայց դա նրանց սեփական ուժով և իմաստությամբ չէր, որ նրանք այդպես խոսում էին Վերջին Օրերի Սրբերի համար: Չնայած նրանք գուցե երբեք չեն էլ ունեցել քոլեջի կրթության առավելությունները, այնուամենայնիվ, նրանք առաջ են գալիս, ոչ թե վստահելով իրենց իսկ ուժին, այլ ավետարանի ուժին և զորությանը:[4]

Մենք միշտ չէ, որ անում ենք այն ինչ կուզենայինք անել, բայց մենք կունենանք ուժ անելու այն, ինչ պետք է անենք: Տերը կտա մեզ ուժ անելու այդ[5] [տես առաջարկ 2, էջ 179]:

Մենք կանչվել ենք գործելու Աստծո անունից և մենք ճանաչում ենք Նրա ձեռքը այն բոլոր բարիքում, որ մենք անում ենք:

Ինչ որ մենք անում ենք, կատարում ենք Իսրայելի Տեր Աստծո անունով և հոժարակամ ընդունում ենք Ամենազորի ձեռքը բոլոր բաներում, որ մենք անում ենք: Երբ Մովսեսը առաջ կանգնեց, որպես Իսրայելի զավակների ազատարար, նա իրեն չներկայացրեց որպես սովորական ազատարար, այլ նա գնաց Իսրայելի Տեր Աստծո անունով, պատվիրված լինելով իրականացնելու նրանց փրկագնումը այն զորությամբ և իշխանությամբ, որ ստացել էր Աստծուց: Եվ այն պահից, երբ նա հայտնվեց նրանց առջև այս կարողությամբ, մինչև իր աշխատանքի ավարտը, նա գործեց Տիրոջ անունով և անվան միջոցով, և ոչ թե իր իսկ իմաստությամբ կամ հնարագիտությամբ, ոչ էլ այն պատճառով, որ նա ուներ բացառիկ խելամտություն, մարդկության մնացած մասի համեմատությամբ: Տերը հայտնվեց նրան այրվող մորենու միջից և պատվիրեց նրան գնալ առաջ իրականացնել որոշակի աշխատանք, որը վերաբերում էր մի մեծ ժողովրդի խաղաղությանը, երջանկությանը և փրկությանը, և նրանց հաջողությունը և բարգավաճումը կախված էր այն բաները կատարելուց, որոնք հայտնի էին դարձվել իրեն Երկնքի Աստծո կողմից: Նրա հաջողությունն ու բարգավաճումը կատարելապես հաստատ դարձավ այն փաստից, որ այն աշխատանքը, որը հանձնարարվել էր իրեն, իր իսկ հնարած ինչ որ բան չէր, այլ այն բխում էր Եհովայից: . . .

Դա այդպես է նաև՝ մեր վերաբերյալ: Այժմ կատարվող վիթխարի աշխատանքը՝ ժողովրդի հավաքումը երկրագնդի

ազգերի միջից, չի ծագել որևէ մարդու մտքում կամ որևէ մարդկանց խմբում, այլ դա բխել է Ամենազոր Տիրոջից։[6]

Մենք կախված ենք Աստծուց, և բոլոր մեր գործերում և աշխատանքներում, և բոլոր այն հաջողությունը, որն ուղեկցել է մեզ մեր աշխատանքներում, մենք զգում ենք, որ Աստված է, որ գործել է դրանք։[7]

Մենք աշխարհ ենք եկել մեծ նպատակի համար, նույնի համար ինչպես Հիսուսը, մեր ավագ եղբայրը, կատարելու մեր Հոր կամքն ու գործերը, սրանում կա խաղաղություն, ուրախություն և երջանկություն, իմաստության մեծացում, գիտելիք և Աստծո զորությունը, սրանից դուրս չկան խոստացված օրհնություններ։ Այսպիսով եկեք մեզ նվիրենք արդարակեցությանը, օգնենք յուրաքանչյուրին և բոլորին լինել ավելի լավը և ավելի երջանիկ, բոլորին բարիք անել և չարը չանել ոչ մեկին, պատվել Աստծուն և հնազանդվել Նրա Քահանայությանը, զարգացնել և պահպանել լուսավորված գիտակցություն և հետևել Սուրբ Հոգուն, չթուլանալ, ամուր բռնել այն, ինչը բարի է, համբերել միչև վերջ և ձեր ուրախության բաժակը լի կլինի, մինչև իսկ դուրս թափվելով, քանզի մեծ կլինի ձեր վարձքը ձեր փորձությունների, գայթակղությունների ներքո ձեր տառապանքների համար, ձեր կրակով փորձությունների, ձեր սրտի կարոտի և արցունքների, այո, մեր Աստվածը ձեզ կտա փառքի անթառամ պսակ[8] [տես առաջարկ 3, էջ 179]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Ուսումնասիրեք այն բաժինը, որը սկսվում է էջ 171-ում։ Ինչպե՞ս կարող եք իմանալ, երբ է ձեր աչքն ուղղված միայն Աստծո փառքին։ Այդքան շատ աշխարհիկ

զվարճություններով հանդերձ, ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին, իրենց աչքն ուղղված պահել միայն Աստծո փառքին:

2. Վերանայեք Նախագահ Մնոուի մեկնաբանությունները Մովսեսի և Երեմիայի մասին (էջեր 174–77): Ինչպե՞ս կարող են այս պատմություններն օգնել մեզ մեր ջանքերում՝ ծառայելու քահանայության քվորումներում, Սփոփող Միությունում և Եկեղեցու այլ կազմակերպություններում:
3. Նախագահ Մնոուն ուսուցանեց, որ մենք պետք է ծառայենք «Տիրոջ անունով» (էջ 177): Ինչպե՞ս կարող եք նկարագրել մի մարդու, որը գործում է Տիրոջ անունով: Մտածեք Տիրոջ անունով ծառայելու ձեր հնարավորությունների մասին:
4. Նախագահ Մնոուն այս գլխում օգտագործում է *հաջողություն* և *հաջողակ* բառերը մի քանի անգամ: Ինչպե՞ս է հաջողության Աստծո սահմանումը տարբերվում աշխարհիկ սահմանումից: Ինչո՞ւ կարող ենք համոզված լինել հաջողության մեջ, երբ հետևում ենք Աստծո կամքին:

Առնչվող սուրբ գրություններ. Փիլիպպեցիս Դ.13, 2 Նեփի 10.24, Մոսիա 3.19, Հելաման 3.35, 10.4–5, 3 Նեփի 11.10–11,13.19–24, ՎևՈՒ 20.77, 79, Մովսես 4.2

Օգնություն ուսուցչին. «Մի վախեցեք լռությունից: Մարդիկ հաճախ ժամանակի կարիք ունեն մտածելու և հարցերին պատասխանելու կամ իրենց զգացածը արտահայտելու համար: Դուք կարող եք կանգ առնել հարցը տալուց հետո, հոգևոր փորձառությունով կիսվելուց հետո, կամ՝ երբ մարդը դժվարություն է ունենում արտահայտվել» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 67):

Հղումներ

1. In “Anniversary Exercises,” *Deseret Evening News,* Apr. 7, 1899, 9–10.
2. “The Object of This Probation,” *Deseret Semi-Weekly News,* May 4, 1894, 7.
3. In Conference Report, Oct. 1899, 2.
4. *Salt Lake Daily Herald,* Oct. 11, 1887, 2.
5. *Deseret News,* May 15, 1861, 82.
6. *Deseret News,* Dec. 8, 1869, 517.
7. *Salt Lake Daily Herald,* Oct. 11, 1887, 2.
8. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 487.

Սենթ Ջորջի Թաբերնաքլը: Այս շենքում Նախագահ Լորենզո Սնոուն տվեց տասանորդի օրենքի վերաբերյալ իր բազմաթիվ ելույթներից առաջինը:

Տասանորդ՝ օրենք մեր պաշտպանվածության և առաջադիմության համար

«Տասանորդի օրենքը ամենակարևորներից մեկն է, որ երբևէ հայտնի է դարձվել մարդուն: . . . Այս օրենքին հնազանդվելու միջոցով բարգավաճման և հաջողության օրհնությունները կտրվեն Սրբերին»:

Լորենզո Մնոուի կյանքից

1899 թվականի մայիսին Նախագահ Մնոուն հուշում զգաց այցելել Սենթ Ջորջ քաղաքը և հարավային Յուտայի այլ բնակավայրեր: Նա արագ սկսեց կազմակերպել մի խումբ մարդկանց, ներառյալ մի քանի Գերագույն Իշխանավորների, գնալու այդ երկար ուղևորությունն իր հետ:

Երբ Նախագահ Մնոուն նախապատրաստվում էր ճամփորդությանը, նա ոչ ոքի չասաց, թե ինչու էին գնում, նա ինքը ևս չգիտեր պատճառը: «Երբ մենք թողեցինք Սոլթ Լեյքը, - ասաց նա հետագայում, - մենք չգիտեինք, թե ինչի համար էինք գնում այցելության այդ հարավային բնակավայրերը»:[1] Բայց մայիսի 17-ին, երբ շուտով ճանապարհորդները հասան Սենթ Ջորջ, Տիրոջ կամքը «հստակորեն դրսևորվեց» Իր Մարգարեին:[2] 1899 թվականի մայիսի 18-ին տեղի ունեցող մի ժողովում Նախագահ Մնոուն հայտարարեց.

«Սա Տիրոջ խոսքն է ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, որ դուք պետք է ենթարկվեք նրան, ինչ պահանջվում է ձեզանից, որպես ժողովուրդ, որ ունեք վեհացման ու փառքի այս փառահեղ հեռանկարները ձեր առջև: Ի՞նչ է սա: Ինչո՞ւ է դա մի բան, որը թմբկահարվում է ձեր ականջներում ժամանակ առ ժամանակ, մինչև որ դուք հավանաբար հոգնել եք այն լսելուց:

. . . Տիրոջ խոսքը ձեզ որևէ նոր բան չի, դա պարզապես այս է. ԺԱՄԱՆԱԿՆ ԱՅԺՄ ԵԿԵԼ Է, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԻ ՀԱՄԱՐ, ՈՎ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է, ՈՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է ԱՊԱԳԱՅԻՆ, ԵՎ ԻՐ ՈՏՔԵՐԸ ՃԻՇՏ ՀԻՄՔԻ ՎՐԱ ԱՄՈՒՐ Է ՊԱՀՈՒՄ, ՏԻՐՈՋ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԻ ԵՎ ԻՐ ԼՐԻՎ ՏԱՍԱՆՈՐԴԸ ՎՃԱՐԻ: Սա Տիրոջ խոսքն է ձեզ և դա կլինի Տիրոջ խոսքը Սիոնի ողջ երկրով մեկ յուրաքանչյուր բնակավայրի: Իմ հեռանալուց հետո, երբ դուք սկսեք մտածել այս մասին, դուք ինքներդ կտեսնեք, որ ժամանակը եկել է, երբ յուրաքանչյուր մարդ պետք է ոտքի կանգնի և լրիվ վճարի իր տասանորդը: Տերն օրհնել է մեզ և ողորմածություն է ունեցել մեզ վրա անցյալում, բայց գալիս են ժամանակները, երբ Տերը պահանջում է մեզանից ոտքի կանգնել և անել այն, ինչ Նա պատվիրել է և այլևս չուշացնել:Այն, ինչ ասում եմ Սիոնի այս Ցցում, ես ասելու եմ Սիոնի յուրաքանչյուր կազմավորված Ցցում: Չկա տղամարդ կամ կին, որն այժմ լսում է, թե ինչ եմ ասում, որն իրեն բավարարված զգա, եթե նա ձախողվում է վճարել լրիվ տասանորդը»:[3]

Իր նախորդ 50 տարիների ընթացքում որպես Առաքյալ, Նախագահ Սնոուն իր քարոզներում հազվադեպ էր նշել տասանորդի օրենքի մասին: Դա փոխվեց Սենթ Ջորջում, Յուտա, նրա ստացած հայտնության պատճառով: «Ես երբեք չեմ ունեցել ավելի կատարյալ հայտնություն,- ավելի ուշ ասաց նա,- քան [այդ հայտնությունը], որ ես ստացա տասանորդի այդ նյութի վերաբերյալ»:[4] Սենթբ Ջորջից նա և իր ճանապարհորդող ընկերակիցները գնացին քաղաքից քաղաք հարավային Յուտայում և իրենց տուն դեպի Սոլթ Լեյք Սիթի տանող ճանապարհին ունեցան 24 ժողով: Նախագահ Սնոուն տվեց 26 քարոզ: Ամեն անգամ խոսելով, նա խորհուրդ տվեց Սրբերին հնազանդվել տասանորդի օրենքին:

Խումբը Սոլթ Լեյք Սիթի վերադարձավ մայիսի 27-ին: Մի լրագրի թղթակից նկատել էր.«Նախագահն ավելի ուժեղ տեսք ունի և ավելի ակտիվ է այսօր, քան Սոլթ Լեյքից մեկնելու օրը»: Արձագանքելով մի մեկնաբանության, որ նա «նկատելիորեն լավ էր դիմացել ճանապարհորդությանը», 85-ամյա մարգարեն ասաց. «Այո, այդպես են ասում բոլորը: . . . Ուղևորությունն ինձ վրա լավ ազդեց: Կյանքումս երբեք ավելի լավ չեմ զգացել: Ես զգում եմ, որ Տերը կազդուրում է ինձ, ի պատասխան Սրբերի աղոթքների»:[5]

Բացի իր լավ ինքնազգացողության մասին մեկնաբանություն անելուց, նա կիսվեց իր զգացումներով հարավային Յուտայի Սրբերի հավատքի և արդարակեցության մասին: Նա ասաց, որ նա և իր ընկերախումբն ընդունվեցին «ուրախության և շնորհակալության ամենաջերմագին դրսևորումներով»:[6] Նա հաղորդեց, որ երբ խորհուրդ էր տվել Սրբերին հնազանդվել տասանորդի օրենքին «Տիրոջ Հոգին իջել էր ժողովրդի վրա, և նրանք չափազանց ուրախացել էին, և իրենց սրտերում նրանք հռչակել էին, որ իրենք կհետևեն այս սկզբունքի տառին իսկ, և՝ նրա ոգուն»:[7] Պատասխանելով մի հարցի ժողովրդի ընդհանուր վիճակի մասին, նա ասաց. «Նրանք ապրում են բարեկեցիկ տներում, նրանք հատկապես լավ են հագնված, և երևում է առատորեն ունեն երկրի բարիքներից ուտելու և խմելու համար: Մենթ Ջորջի ցցում մարդիկ տանջվում են սաստիկ երաշտից, ամենասաստիկը, որ երբևէ եղել է այդ երկրամասում, բայց նրանք հավատք ունեն, որ շուտով տեղումներ կունենան»:[8]

Մայիսի 29-ին և 30-ին Նախագահ Մնուն երկու քարոզ տվեց տասանորդի օրենքի վերաբերյալ, առաջինը Երիտասարդ Օրիորդների Փոխադարձ Բարելավման Ընկերության ծառայողների, և ապա՝ Երիտասարդ Տղամարդկանց Փոխադարձ Բարելավման Ընկերության ծառայողների համար:[9] Երկրորդ ելույթի ավարտին մոտ Երեց Բ.Հ. Ռոբերտսը՝ Յոթանասունից ներկայացրեց հետևյալ որոշումը. «Վճիռ՝ առ այն, որ մենք ընդունում ենք տասանորդի վարդապետությունը, ինչպես այժմ ներկայացվեց Նախագահ Մնոուի կողմից, մեզ համար որպես Տիրոջ ներկա խոսքը և կամքը և մենք իսկապես ընդունում ենք այն ողջ մեր սրտով, մենք ինքներս կհետևենք դրան և մենք կանենք մեզանից կախված ամեն ինչ Վերջին Օրերի Սրբերին հորդորելու անել նույնը»:[10] Հուլիսի 2-ին Եկեղեցու բոլոր Գերագույն Իշխանավորներն ու ներկայացուցիչները բոլոր ցցերից և ծխերից, մասնակցեցին մի հանդիսավոր հավաքի Սոլթ Լեյքի Տաճարում, ի պատրաստություն ժողովի՝ ծոմ պահելով և աղոթելով: Այնտեղ նրանք միաձայն ընդունեցին նույն որոշումը:[11] Նախագահ Մնոուն ինքն էլ հավատարիմ էր այդ որոշմանը՝ ուսուցանելով տասանորդի օրենքը բազմաթիվ ցցերում և ղեկավարելով Եկեղեցու մյուս ղեկավարների կողմից գործադրվող նույն ջանքերը:

Նախագահ Սնոուի հարավային Յուտա այցելությունից ամիսներ հետո, նա ստացավ Վերջին Օրերի Սրբերի խոսքը տասանորդի օրենքին նոր նվիրվածությամբ հնազանդվելու մասին: Այս նորությունը տվեց նրան «մեծագույն հաճույք ու բավարարվածություն»,[12] քանի որ նա գիտեր, որ այս օրենքին անընդհատ հնազանդվելու միջոցով «Ամենազորի օրհնությունները կթափվեն այս ժողովրդի գլխին, և Եկեղեցին կառաջադիմի այնպիսի մի ուժով և բուռն ձևով, որը երբեք չէր զգացվել նախկինում»:[13]

Նախագահ Սնոուն հաճախակի է հավաստիացրել Սրբերին, որ նրանք կօրհնվեն անհատապես, ինչպես աշխարհիկով, այնպես էլ հոգևորով, երբ հնազանդվեն տասանորդի օրենքին:[14] Այդ խոստումը մասնակիորեն իրականացավ 1899 թվականի օգոստոսին, երբ Սենթ Ջորջի ժողովուրդը ժամանակավոր մխիթարություն վայելեց երաշտից, նրանց հավատքը պարգևատրվեց 2.93 մատնաչափ անձրևով, ավելի քան նրանք ունեցել էին նախորդ 13 ամիսներին միասին վերցրած[15]: Նախագահ Սնոուն խոստացել էր նաև, որ տասանորդի օրենքին հնազանդվելը կբերեր օրհնություններ Եկեղեցուն որպես ամբողջություն: Նա համոզված էր ու զգում էր, որ հավատարիմների տասանորդները հնարավորություն կտային Եկեղեցուն ազատվել պարտքերից, որոնք մեծամասամբ եկել էին հալածանքի հետևանքով[16]: Այս խոստումը կատարվեց 1906 թվականին, նրա մահից հինգ տարի անց: 1907 թվականի գերագույն համաժողովում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հայտարարեց.

«Համոզված եմ, երբեք չի եղել ժամանակ Եկեղեցու պատմության մեջ, երբ տասանորդի օրենքը պահվեր ավելի համընդհանուր ձևով և ավելի ազնվորեն, քան այն պահվել է Վերջին Օրերի Սրբերի կողմից վերջերս»: 1906 թվականի ընթացքում մարդկանց տասանորդը գերազանցել է մնացած բոլոր տարիներից յուրաքանչյուրին: Սա լավ նշան է, որ Վերջին Օրերի Սրբերը կատարում են իրենց պարտականությունը և նրանք աշխատում են հավատարմորեն հնազանդվել տասանորդի օրենքին, ինչպես երբեք նախկինում: Ես ուզում եմ մեկ այլ բան ասել ձեզ և դա ես անում եմ շնորհավորանքի ձևով, և դա այն է, որ մենք Տիրոջ օրհնությամբ և Սրբերի կողմից հավատարմորեն իրենց տասանորդները վճարելու շնորհիվ, կարողացել

ենք վճարել մեր պարտքերը։ Այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին պարտք չէ ոչ մի դոլար, որ չկարողանա անմիջապես վճարել։ Վերջապես, այժմ մենք մի վիճակում ենք, երբ կարող ենք անմիջապես վճարել։ Մենք այլևս ստիպված չենք պարտք վերցնել և մենք ստիպված չենք լինի, եթե Վերջին Օրերի Սրբերը շարունակեն ապրել իրենց կրոնով և հետևեն տասանորդի այս օրենքին»[17] [տես առաջարկ 1, էջ 190]։

Լորենզո Սնոուի ուսմունքները

Տասանորդի օրենքը հեշտ է հասկանալ և կարող են հնազանդվել բոլորը։

Ես աղերսում եմ ձեզ Տիրոջ անունով և աղոթում եմ, որ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա . . . վճարի մեկ տասներորդը իրենց եկամտի, որպես տասանորդ։[18]

Տասանորդը դժվար օրենք չէ։ . . . Եթե մարդը ստանում է տասը դոլար, նրա տասանորդը մեկ դոլար է, եթե նա ստանում է մեկ հարյուր, նրա տասանորդը տասն է։ . . . Դա շատ հեշտ է հասկանալ։[19]

[Որևէ մարդ գուցե իրեն հարց տա] Այս տասանորդից ինչքա՞ն պիտի տամ։ Չե՞մ կարող մի քիչ ինձ պահել։ Տերը շատ հարուստ է և կասկածում եմ, թե Նա ընդհանրապես կանհանգստանա, եթե մի քիչ ինձ պահեմ և այսպիսով մի քիչ պահում է իր համար։ Բայց այն մի փոքրը, որը նա պահել էր, կանհանգստացնի այդ մարդում, եթե նրա խիղճը նման է Վերջին Օրերի Սրբերի մեծամասնության խղճին։ Այն կանահանգստացնի նրան քիչ թե շատ ցերեկվա ժամերին և նաև գիշերը, երբ նա մտածի այդ մասին։ Նա չի ունենա այն երջանկությունը, որի վայելելը նրա արտոնությունն է, այն կհեռանա նրանից։[20]

Տասանորդի մի մասը տասանորդ չէ ընդհանրապես, ինչպես մարդու մարմնի կիսով չափ ընկղմելը ջրում, մկրտություն չէ։[21]

Չկա տղամարդ կամ կին, որ չկարողանա վճարել իր ստացածի մեկ տասներորդ մասը։[22]

Նախագահ Սնոուն խորհուրդ տվեց ծնողներին և ուսուցիչներին երեխաներին ուսուցանել տաճանորդ վճարել։

Եղբայրներ և քույրեր, մենք ուզում ենք, որ դուք դարձնեք այս հարցը ձեր աղոթքի առարկան։. . . Այն, ինչ պահանջում է Տերը մեզանից, մեր տաճանորդն այժմ վճարելն է։ Եվ Նա ակնկալում է, որ յուրաքանչյուր անձնավորություն ապագայում կվճարի իր տաճանորդը։ Մենք գիտենք, թե ինչ է մեկ տաճներորդը, եկեք վճարենք այն Տիրոջը։ Այդ ժամանակ մենք կարող ենք գնալ մեր Եպիսկոպոսի մոտ բաց ճակատով և նրանից երաշխավորագիր խնդրել տաճար գնալու համար։[23]

Ես ասում եմ ձեզ Իսրայելի Տեր Աստծո անունով, եթե դուք տաճանորդ վճարեք այսօրվանից ի վեր, Տերը կների ձեզ անցած [չվճարած տաճանորդները] և Ամենակարողի օրհնությունները դուրս կթափվեն այս ժողովրդի վրա։[24]

Ես ուզում եմ այս սկզբունքն այնպես ամրացնենք մեր սրտերի վրա, որ մենք երբեք չմոռանանք այն։ Ինչպես ասել եմ ավելի քան մեկ անգամ, ես գիտեմ, որ Տերը կների Վերջին Օրերի Սրբերին, անցյալում տաճանորդի օրենքի նրանց թերացման համար, եթե նրանք այժմ ապաշխարեն և տաճանորդը վճարեն բարեխղճորեն այս ժամանակից ի վեր[25] [տես առաջարկ 2, էջ 190]։

Երբ տասանորդ ենք մուծում, մենք օգնում ենք Եկեղեցու աշխատանքին:

Այս Եկեղեցին չէր կարող շարունակվել, եթե չլիներ եկամուտ, և այս եկամուտը Աստված ապահովել է [տասանորդի օրենքի միջոցով]: Մեր տաճարները, որոնցում մենք ստանում ենք բարձրագույն օրհնությունները, որոնք երբևէ շնորհվել են մահկանացու մարդուն, կառուցվում են տարեկան եկամտի միջոցով: Մենք երբեք չէինք կարողանա ուղարկել . . . Երեցներին դուրս դեպի աշխարհ քարոզելու Ավետարանը, ինչպես մենք այժմ ենք անում, մինչև չլիներ տարեկան եկամուտ այդ անելու համար: . . . Հետո կան անընդհատ առաջացող հազարավոր այլ բաներ, որոնց համար պահանջվում են միջոցներ: . . .

Եթե Վերջին Օրերի Սրբերի որոշ մասը չվճարեին տասանորդ, այստեղի մեր չորս տաճարները երբեք չէին կառուցվի [1899թվականին] և վեհացմանն ու փառքին վերաբերող Աստծո դատաստաններն ու կանոնադրությունը, երբեք չէր կարող պահվել: Վերջին Օրերի Սրբերի համար գործունեության առաջին սկզբունքը երկիրը սրբագործելն է տասանորդի օրենքը պահելով և իրենց մի դիրքում դնելը, որտեղ նրանք կարող են ստանալ այն արարողությունները, որոնք կապված են վեհացման և մեր մահացածների փառքի հետ[26] [տես առաջարկ 3, էջ 190]:

Տերը կօրհնի մեզ ֆիզիկականով և հոգևորով, երբ մենք հնազանդվենք տասանորդի օրենքին:

Տասանորդի օրենքը ամենակարևորներից մեկն է, որ երբևէ հայտնի է դարձվել մարդուն: . . . Այս օրենքին հնազանդվելու միջոցով բարգավաճման և հաջողության օրհնությունները կտրվեն Սրբերին:[27]

Եթե մենք պահենք այդ օրենքը, . . . երկիրը կսրբագործվի և մենք արժանի կհամարվենք ստանալ Տիրոջ օրհնությունները և կհաստատվենք և կաջակցվենք մեր ֆինանսական գործերում և ամեն ինչում, որ անում ենք, ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգևոր:[28]

Այս Եկեղեցու ֆիզիկական փրկությունը . . . կախված է այս օրենքին հնազանդվելուց:[29]

Տաճարների ֆոնդերն օգտագործվում են օգնելու վճարել տաճարների շինարարության և վերանորոգման համար:

Վերջին Օրերի Սրբերի մեջ գոյություն ունի աղքատություն, և միշտ գոյություն կունենա, մինչև մենք առնվազն չենթարկվենք տասանորդի օրենքին:[30]

Ես հավատում եմ իսկապես, որ եթե Վերջին Օրերի Սրբերը ենթարկվեն այս օրենքին, մենք կարող ենք ազատում պահանջել ամեն չարիքից, որ կարող է գալ մեզ վրա:[31]

Ահա մի օրենք, որը հայտնի է դարձվել, հատկապես, մեր պաշտպանության և անվտանգության համար, ինչպես նաև արդարության և սրբության ուղում մեր առաջխաղացման համար, օրենք, որի միջոցով երկիրը, որի վրա մենք բնակվում ենք, կարողանա սրբագործվել, օրենք, որով Սիոնը կկառուցվի և կհաստատվի, երբեք այլևս վայր չգցվելու կամ իր տեղից շարժվելու՝ ամբարիշտ և անաստված մարդկանց կողմից:[32]

Մենք ունենք տաճարներ և մենք օրհնություններ ենք ստանում դրանց հետ կապված, այսինքն բարձրագույն արարողությունները, որ երբևէ մարդուն սպասավորվել է երկրի վրա, այս օրենքին մեր հնազանդության պատճառով:[33]

Մենք երբեք չենք կարող պատրաստվել տեսնել Աստծո երեսը, մինչև մենք բարեխիղճ ձևով չվճարենք մեր տասանորդներն ու մյուս պարտավորությունները:[34]

Ես խոսել եմ հստակորեն և ասում եմ, այն գալիս է Տիրոջից, ինչ ասել եմ ձեզ տասանորդի վերաբերյալ: Այժմ դուք գործեք ըստ Տիրոջ Հոգու և ձեր աչքերը կբացվեն[35] [տես առաջարկ 4, էջ 190]:

Ծնողներն ու ուսուցիչները պատասխանատվություն են կրում վճարել տասանորդ և ապա, նույնն ուսուցանել երեխաներին անել:

Սովորեցրեք [երեխաներին] վճարել իրենց տասանորդը, երբ նրանք երիտասարդ են: Դուք մայրեր, սովորեցրեք ձեր զավակներին, որ երբ նրանք որևէ փող են ստանում, նրանք պետք է վճարեն դրա մեկ տասներորդը Տիրոջը, որքան էլ այն փոքր լինի: Դաստիարակեք նրանց վճարել իրենց լրիվ տասանորդը:[36]

Տեղին է և ճիշտ, որ . . . [Եկեղեցում] ծառայողներն ու ուսուցիչները պետք է ընդունեն իրենց սրտերում և հենց իրենց հոգիներում այս օրենքի ոգին, որպեսզի նրանք լիովին որակավորվեն հաղորդելու նույնը և դրոշմելու աճող սերնդի մեջ դրա կարևորությունն ու սրբությունը: Դա պահանջվում է ձեզանից, եղբայրներ և քույրեր, ոչ միայն հնազանդվել օրենքին ինքներդ, այլ ուսուցանել այն ուրիշներին, այսինքն աճող սերնդին, . . . և որ չափով որ դուք կարողանում եք ընդունել դրա ոգին, նույնքանով կկարողանաք հաղորդել և ուսուցանել այն: . . .

. . . Ես պահանջում եմ դա ձեր ձեռքից, ոչ միայն հնազանդվել դրան, այլ սովորեցնել Վերջին Օրերի Սրբերի երեխաներին և դրոշմել այն նրանց հիշողության տախտակներին, որպեսզի երբ նրանք մեծանան մինչև պատասխանատվության տարիքի, որ կարողանա ասվել, որ դա ուսուցանվել է իրենց և որ նրանք հնազանդվել են դրան իրենց պատանեկությունից[37] [տես առաջարկ 5, էջ 190]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք Նախագահ Մնոուի պատմությունը տասանորդի վերաբերյալ հայտնություն ստանալու մասին (էջեր 181–85)։ Մտածեք Սենթ Ջորջ ճանապարհորդելու նրա հոժարակամության և տասանորդի օրենքին հնազանդվելու մարդկանց պատրաստակամության մասին։ Ի՞նչ օգուտ կարող ենք քաղել այս պատմությունից։
2. Ի՞նչ կողմերից է տասանորդը «ոչ դժվար օրենք» (օրինակների համար տես էջեր 185–86)։ Ինչո՞ւ են որոշ մարդիկ մտածում, որ տասանորդի օրենքին դժվար է հնազանդվել։ Ինչպե՞ս կարող են Նախագահ Մնոուի ուսմունքներն օգնել ինչ որ մեկին վկայություն ստանալ տասանորդ վճարելու վերաբերյալ։
3. Ուսումնասիրեք առաջին բաժինը, որը սկսվում է էջ 187-ում։ Որո՞նք են այն մի քանի օրհնությունները, որոնք ստացել եք դուք և ձեր սիրելիները այն շենքերի և ծրագրերի միջոցով, որոնք ֆինանսավորվում են տասանորդի միջոցով։ Ինչո՞ւ է տասանորդ վճարելը արտոնություն։
4. Նախագահ Մնոուն վկայեց, որ մենք կօրհնվենք, երբ հնազանդվենք տասանորդի օրենքին (էջեր 187–89)։ Որո՞նք են այն օրհնությունները, որոնք տասանորդի օրենքը բերել է ձեր կյանք, ձեր ընտանիքի անդամների և ընկերների կյանք։
5. Մտածեք ծնողներին և ուսուցիչներին ուղղված Նախագահ Մնոուի խորհրդի մասին (էջ 189)։ Ինչո՞ւ եք կարծում, որ երեխաների համար կարևոր է իրենց տասանորդը վճարելը, «որքան էլ որ այն փոքր լինի»։ Որո՞նք են այն ուղիները, որոնցով երեխաներին կարելի է սովորեցնել տասանորդներ և նվիրատվություններ վճարել։

Սոնչվող սուրբ գրություններ. Մաղաքիա Գ.8–10, ՎևՈՒ 64.23, 119.1–7

Օգնություն ուսուցչին. «Ուշադիր եղեք խիստ շուտ չավարտել լավ քննարկումը՝ փորձելով ներկայացնել ձեր պատրաստած ողջ նյութը: Չնայած կարևոր է ընդգրկել նյութը, բայց ավելի կարևոր է օգնել սովորողներին զգալ Հոգու ազդեցությունը, լուծել իրենց հարցերը, մեծացնել ավետարանի իրենց հասկացողությունը և խորացնել պատվիրանները պահելու իրենց պարտավորությունը» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 64):

Հղումներ

1. In "In Juab and Millard Stakes," *Deseret Evening News,* May 29, 1899, 5.
2. In "In Juab and Millard Stakes," 5.
3. *Millennial Star,* Aug. 24, 1899, 532–33; see also *Deseret Evening News,* May 17, 1899, 2; *Deseret Evening News,* May 18, 1899, 2. The *Millennial Star* says that President Snow delivered this discourse on May 8, but other contemporary sources show that he delivered it on May 18. President Snow also spoke about tithing on May 17.
4. In "President Snow in Cache Valley," *Deseret Evening News,* Aug. 7, 1899, 1.
5. In "Pres. Snow Is Home Again," *Deseret Evening News,* May 27, 1899, 1. The Church had 40 stakes at the time.
6. In "Pres. Snow Is Home Again," 1.
7. *Deseret Evening News,* June 24, 1899, 3.
8. In "Pres. Snow Is Home Again," 1.
9. Տես "The Annual Conference of the Young Men's and Young Ladies' Mutual Improvement Associations," *Improvement Era,* Aug. 1899, 792–95; see also Ann M. Cannon, "President Lorenzo Snow's Message on Tithing," *Young Woman's Journal,* Apr. 1924, 184–86:
10. B. H. Roberts, quoted in "The Annual Conference of the Young Men's and Young Ladies' Mutual Improvement Associations," 795.
11. Տես B. H. Roberts, *Comprehensive History of the Church,* 6:359–60:
12. In Conference Report, Oct. 1899, 28.
13. In "President Snow in Cache Valley," *Deseret Evening News,* Aug. 7, 1899, 2.
14. Տես օրինակ, *Deseret Evening News,* հունիս 24, 1899, 3: Նախագահ Սնոուի ելույթների այդ ժամանակվա պատճենները և այդ ժամանակվա լրագրերի հոդվածները իր ճանապարհորդությունների մասին, ցույց են տալիս, որ նա չնայած խոստացել էր Սրբերին, որ նա նրանք կօրհնվեն ինչպես ֆիզիկապես այնպես էլ հոգեպես, երբ հնազանդվեն տասանորդի օրենքին, նա հատուկ չէր խոստացել երաշտի ավարտ հարավային Յուտայում:
15. Տես Western Regional Climate Center, http://www.wrcc.dri.edu/cgi-bin/cliMONtpre.pl?utstge:
16. Տես օրինակ "The Annual Conference of the Young Men's and Young Ladies' Mutual Improvement Associations," 793:
17. In Conference Report, Apr. 1907, 7.
18. In Conference Report, Oct. 1899, 28.
19. *Deseret Semi-Weekly News,* July 28, 1899, 10.
20. In Conference Report, Apr. 1899, 51.
21. *Deseret Evening News,* June 24, 1899, 3.
22. In "President Lorenzo Snow's Message on Tithing," 185; from the minutes of a meeting held in the Assembly Hall in Salt Lake City on May 29, 1899.
23. *Deseret Semi-Weekly News,* July 28, 1899, 10.
24. In "President Snow in Cache Valley," 2.
25. In Conference Report, Oct. 1899, 28.
26. In Conference Report, Oct. 1899, 27–28.
27. In "In Juab and Millard Stakes," 5.

28. *Deseret Evening News,* June 24, 1899, 3.
29. In "The Annual Conference of the Young Men's and Young Ladies' Mutual Improvement Associations," 794.
30. *Deseret Semi-Weekly News,* July 28, 1899, 10.
31. In "President Lorenzo Snow's Message on Tithing," 185.
32. "Tithing" *Juvenile Instructor,* Apr. 1901, 216.
33. «Տասանորդ», 215
34. In "Conference of Granite Stake," *Deseret Evening News,* May 21, 1900, 2; from a detailed paraphrase of a discourse President Snow gave at the Granite Stake conference on May 20, 1900.
35. *Deseret Semi-Weekly News,* July 28, 1899, 10.
36. *Millennial Star,* Aug. 31, 1899, 546.
37. "Tithing," 215–16.

Սփոփող Միություն՝ ճշմարիտ գթություն և մաքուր կրոն

«Ոչ մի հաստատություն երբևէ չի հիմնադրվել ավելի ազնիվ նպատակով: Դրա հիմքը ճշմարիտ գթությունն է, որը Քրիստոսի մաքուր սերն է»:

Լորենզո Սնոուի կյանքից

1901 թվականի ամռանը, Սոլթ Լեյքի հովտում, Սփոփող Միության գերագույն Նախագահությունը կազմակերպեց մեկօրյա միջոցառում՝ Սփոփող Միության քույրերի համար: Նախագահ Լորենզո Սնոուն ընդունեց մասնակցելու և այդ խմբի համար խոսելու հրավերը: Նա սկսեց իր ելույթն, ասելով. «Ես շնորհակալ եմ այն արտոնության համար, որ կարող եմ կեսօրին մեկ կամ երկու ժամ անցկացնել ձեր ընկերակցությամբ և ես վստահ եմ, որ դուք բոլորդ բավականություն եք ստանում այսօր: Ճիշտ հանգիստն ու զվարճությունը լավ բաներ են և ես ուրախ եմ տեսնել ձեզ քույրեր, մի փոքր հանգստի և ուժերի վերականգման գործով զբաղված, քանի որ դուք, որ այնքան շատ եք աշխատում օրեցօր ձեր տներում և Սփոփող Միությունում, անշուշտ արժանի եք ողջ այն բավականությանը, որ ստանում եք»:

Նախագահ Սնոուն, որի քույրը՝ Էլիզա Ռ. Սնոուն, Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ նախագահն էր, արտահայտեց իր երախտագիտությունը Սփոփող Միության աշխատանքի համար: Խոսելով Եկեղեցու կանանց մասին, նա ասաց. «Դժվար է պատկերացնել թե ինչ կարող էինք անել կամ ինչ առաջընթաց կարող էր Տիրոջ աշխատանքն ունենալ առանց նրանց»: Բերելով մի օրինակ, նա անդրադարձավ այդ ժամանակվա Եկեղեցու միսիոներական ծրագրին, որի ընթացքում ամուսնացած տղամարդիկ հաճախ կանչվում

Եկեղեցու վաղ օրերից սկսած Ստուգող Միության քույրերն աշխատել են միասին և զորացրել մեկ մեկու ֆիզիկապես և հոգեպես։

էին ծառայելու լիաժամկետ միսիաներ. «Երբ մենք բացակայում էինք գտնվելով միսիայում օտար երկրներում, նրանց միսիաներն ընդհանուր առմամբ ավելի պակաս տանջալից չէին լինում տանը, քան մերը արտասահմանում և իրենց փորձությունների և զրկանքների մեջ նրանք դրսևորում էին համբերություն, քաջություն և ինքնաջակցություն, որոնք իսկապես ոգեշնչող էին: Շնորհակալություն Աստծուն այս Եկեղեցու կանանց համար: Այս ձևով եմ զգում ինձ այսօր՝ մասնակցելով այս հավաքին»[1] [տես առաջարկ 1, էջ 199]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Սփոփող Միության անդամները ճշմարիտ գթության և մաքուր կրոնիօրինակ են հանդիսանում:

Սփոփող Միությունը կազմակերպվել է . . . Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից, Տիրոջ ոգեշնչման ներքո: . . . Այժմ այն հայտնի է որպես Եկեղեցում բարիք գործելու ամենահզոր ուժերից մեկը: . . .

Սփոփող Միության առաքելությունն է սատարել թշվառներին, ծառայել հիվանդներին ու թույլերին, կերակրել աղքատներին, հագցնել մերկերին և օրհնել Աստծո բոլոր որդիներին և դուստրերին: Երբևէ ոչ մի հաստատություն չի հիմնադրվել ավելի ազնիվ նպատակով: Դրա հիմքը ճշմարիտ գթությունն է, որը Քրիստոսի մաքուր սերն է [տես Մորոնի 7.47], և այդ հոգին դրսևորվել է մարդկանց մեջ այդ Միության բոլոր ծառայություններում: Հակոբոս Առաքյալն ասել է, որ «Սուրբ եւ անարատ կրօնասիրությունն Աստուծոյ եւ Հօր առաջին սա է, որբերին և այրիներին այցելել նորանց նեղութեան մէջ, եւ իր անձն աշխարհքից անարատ պահել» [Հակոբոս Ա.27]: Ընդունելով դա որպես ճշմարտություն, Սփոփող Միության անդամներն իրենց կյանքում անհերքելիորեն սուրբ և անարատ կրոնասիրության օրիակ են հանդիսացել, քանի որ նրանք ծառայել են չարչարանքի մեջ գտնվողներին, նրանք սիրո բազուկներն են տարածել դեպի հայրազուրկներն ու այրիները և նրանք իրենց անարատ են պահել աշխարհից: Ես կարող եմ վկայել, որ չկան ավելի մաքուր և ավելի Աստվածավախ կանայք աշխարհում,

քան Սփոփող Միության շարքերում գտնվող կանայք[2] [տես առաջարկ 2, էջ 199]:

Սփոփող Միության քույրերն աշխատում են քահանայություն կրողների հետ, առաջ տանելով Աստծո թագավորության շահերը:

Ինձ համար բավականության աղբյուր է միշտ եղել նկատել, թե որքան հավատարմորեն եք դուք՝ Սփոփող Միության քույրեր, կանգնել Տիրոջ ծառաների կողքին բոլոր հանգամանքներում: Դուք միշտ գտնվել եք Քահանայության կողքին, պատրաստ զորացնելու նրանց ձեռքերը և անելու ձեր մասը՝ օգնելով առաջ տանել Աստծո արքայության շահերը, և ինչպես դուք կիսվել եք այս աշխատանքներում, այնպես էլ անկասկածորեն կկիսեք աշխատանքի հաղթանակը և վեհացումն ու փառքը, որը Տերը տալու է Իր հավատարիմ զավակներին:

. . . Ոչ մի իմաստուն եպիսկոպոս չի թերանա իր ծխում Սփոփող Միության աշխատանքը գնահատելիս: Ի՞նչ կարող է անել եպիսկոպոսն առանց Սփոփող Միության: Ես կասեի Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին՝ խրախուսեք Սփոփող Միության քույրերին և աջակցեք նրանց իրենց գթության և բարեգործության աշխատանքում, և նրանք կդառնան օրհնություն ձեզ համար և մարդկանց համար[3] [տես առաջարկ 3, էջ 199]:

Հրաշալի է Սփոփող Միության ազդեցությունն ունենալ յուրաքանչյուր տանը:

Ես խորհուրդ կտայի եղբայրներին խրախուսել իրենց կանանց [մասնակցել] միությանը . . . , քանի որ լավ կլինի ունենալ այս կազմակերպության ազդեցությունն ամեն տանը: Ես խնդրում եմ իմ քույրեր, Վերջին Օրերի Սրբերի տներ ձեր այցելություններում տանել այս ազդեցությունը, ուր որ էլ գնաք: Տերը հստակորեն ցույց է տվել Նրա հետ ձեր հարաբերության բնույթը և ինչ է սպասվում ձեր կողմից, որպես կանայք և մայրեր: Ուսուցանեք այս բաները նրանց, ում դուք այցելում եք, հատկապես երիտասարդ կանանց: . . .

Դուք, իմ քույրեր, որպես Սփոփող Միության անդամներ և որպես մայրեր Իսրայելում, պետք է գործադրեք ողջ ձեր

Սփոփող Միության անդամները, անհերքելիորեն, իրենց կյանքում սուրբ և անարատ կրոնի օրինակ են հանդիսացել:

ազդեցությունը . . . ի շահ անարատ մայրության և ամուսնական ուխտի հավատարմության[4] [տես առաջարկ 4, էջ 199]:

Եկեղեցու աճի հետ միասին քույրերը ծառայելու ավելի մեծ հնարավորություններ կունենան:

Ինձ համար անհրաժեշտ չէ մանրամասնել, թե ինչ է արել Սփոփող Միությունն անցյալում, նրա հրաշալի աշխատանքը հայտնի է ողջ Սիոնով մեկ և աշխարհի շատ մասերում: Բավական է ասել, որ այն հավատարիմ է իր առաքելությանը և նրա տարեգրությունը չի գերազանցվել, ոչ էլ հավասարվել որևէ այլ բարեգործական կազմակերպության հետ: Վերջին Օրերի Սրբերը հպարտ են նրանով և նրա նվաճումներով և երախտապարտ են մեր Երկնային Հորը, որ Նա ոգեշնչեց Իր ծառա Մարգարեին հիմնադրել այդպիսի հաստատություն: Միության ապագան լի է խոստումով: Եկեղեցու աճի հետ, դրա օգտակարության ոլորտը համապատասխանաբար կընդլայնվի և այն նույնիսկ ավելի ունակ կլինի բարու համար, քան եղել է անցյալում: Եթե բոլոր քույրերը համախմբվեն աջակցելով միությանը, այն կիրականացնի հզոր աշխատանք և կլինի շարունակվող

օրհնություն Եկեղեցու համար: Ուրախալի կլիներ տեսնել միջահասակներին այնպես հետաքրքրված այս հաստատությունով, ինչպես տարեցները և այդ անելով նրանք կտեսնեն, որ դա կուժեղացնի նրանց հավատքը, կտա իրենց կյանքի և դրա պարտականությունների ավելի լայն գաղափարներ և նյութապես առաջ կտանի նրանց, առաջընթացի և կատարելության ուղում:[5]

Իրենց աշխատանքի սկզբից ի վեր Աստծո օրհնությունը շնորհվել է [Եկեղեցու կանանց], և ես մեծ հիացմունքով և հաճույքով ու խորը հետաքրքրությամբ եմ հետևել նրանց առաջընթացին: . . . Նրանք ապշեցուցիչ հաջողության են հասել, և սքանչելի է, թե ինչպես է Աստված օրհնել նրանց և դուրս թափել նրանց վրա Իր Հոգին: Նրանք դարձել են, գրեթե պատշաճ կհամարեի ասել, որպես աշխարհի ժողովրդի ներկայությամբ կանգնած հրեշտակներ[6][տես առաջարկ 5, էջ 200]:

Սփոփող Միության քույրերը, ովքեր վստահում են Աստծուն և ծառայում Նրան, կօրհնվեն այս կյանքում և հավերժություններում:

Սա այն է, ինչ ուզում ենք պատվաստել քույրերի սրտերում՝ օգտակար լինել իրենց ոլորտում և չհուսահատվել ճանապարհին դժվարությունների պատճառով, այլ վստահել Աստծուն և դեպի Նրան նայել, և նրա սքանչելի օրհնությունները, ես խոստանում եմ, դուրս կթափվի ձեզ վրա: Եվ մի բան էլ այն մասին, ինչ կապված է ձեր հաջողության հեռանկարների հետ: Երբ մարդ սկսում է ճանապարհորդել մի ուղով, որը Տերն է նշել և որի միջոցով իրականացնելու է բարին հանուն Նրա շահերի, նա անպայման հաջողության կհասնի: Նա ճիշտ հենց այնտեղ է, որտեղ Աստված է ուզում, որ նա լինի, և տեղին կլինի, որ դուք մեծագույն պատշաճությամբ խնդրեք Աստծուն՝ Իր օրհնությունը:[7]

Ես ուզում են ասել Աստված օրհնի Սփոփող Միության ծառաներին և անդամներին: Դուք հիասքանչ առաքելություն եք կատարում և ես կհորդորեի ձեզ չձանձրանալ բարիք անելուց [տես ՎԼՈՒ 64.33]: Մենք բոլորս նպատակաուղղված ենք դեպի սելեստիալ արքայություն և մեր առջևում սպասվող հեռանկարների սքանչելիությունը հնարավոր չէ արտահայտել մարդկային լեզվով: Եթե դուք շարունակեք այն աշխատանքին

հավատարիմ, որում զբաղված եք, դուք կհասնեք այդ փառքին և կուրախանք ընդմիշտ Աստծո և Գառի ներկայության մեջ։ Արժե սրան ձգտել, արժե սրա համար զոհաբերել և օրհնված է այն տղամարդն ու կինը, ով հավատարիմ է՝ այն ձեռք բերելիս։ Աստված օրհնի ձեզ բոլորիդ[8] [տես առաջարկ 6, էջ 200]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Նախագահ Մնոուն հայտարարեց, որ դժվար կլիներ պատկերացնել Տիրոջ աշխատանքի առաջընթացը առանց Եկեղեցու կանանց։ Ի՞նչ ուղիներով են կանայք այսօր ներդրում կատարում Տիրոջ աշխատանքում։
2. Խորհեք Սփոփող Միության առաքելության վերաբերյալ Նախագահ Մնոուի խոսքերի մասին (էջ 195)։ Մտածեք այն ժամանակի մասին, երբ Սփոփող Միության քույրերը կատարեցին այս առաքելությունը, օգնելով ձեզ կամ ձեր ընտանիքին։ Ինչպե՞ս են այս գործերն ազդել ձեր կյանքի վրա։
3. Վերանայեք 196 էջի ներքևում սկսվող բաժինը։ Ի՞նչ ուղիներով են Սփոփող Միության քույրերը «առաջ տանում Աստծո թագավորության շահերը»։ Ի՞նչ օրինակների եք ականատես եղել Սփոփող Միության քույրերի և քահանայություն կրողների համատեղ աշխատանքի վերաբերյալ։
4. Խորհեք Նախագահ Մնոուի կողմից Սփոփող Միության քույրերին ուղղված իրենց ազդեցությունը «ի օգուտ անարատ մայրության և ամուսնական ուխտի հավատարմության» գործելու աղերսանքի մասին (էջ 196)։ Ինչո՞ւ է այս ազդեցությունն անհրաժեշտ այսօր աշխարհում։ Ի՞նչ ուղիներով կարող են Սփոփող Միության քույրերն օգնել երիտասարդ կանանց՝տաճարային ամուսնությանը և մայրությանը պատրաստվելու համար»։

5. Նախագահ Մնոուն ասել է. «Եկեղեցու աճի հետ, [Սփոփող Միության] օգտակարության ոլորտը համապատասխանաբար կընդլայնվի և այն, նույնիսկ, ավելի ունակ կլինի բարու համար, քան եղել է անցյալում» (էջ 197)։ Աշխարհում այսօր ի՞նչ կարող են Սփոփող Միության քույրերն անել՝ մեծացնելու իրենց ազդեցությունը բարու համար։
6. Ուսումնասիրեք բաժինը, որը սկսվում է էջ 198-ում։ Խորհեք այն մասին, թե ինչպես եք դուք առաջնորդվել դեպի այնտեղ, «որտեղ Աստված է ուզում, որ [դուք] լինեք»։ Ինչպե՞ս է Աստված օգնել ձեզ այս ջանքերում։

Առնչվող սուրբ գրություններ. Եսայիա Ա.17, Մատթեոս ԻԵ.34–40, Մոսիա 4.26–27, Ալմա 1.29–30, Մորոնի 7.44–48

Օգնություն ուսուցչին. «Երբ պատրաստվեք ուսուցանել, հավաստիացեք, որ դասից դաս օգտագործեք ուսուցանման տարբեր մեթոդներ»։ Սա կարող է նշանակել օգտագործել այնպիսի պարզ մի բան, ինչպիսին է գունավոր պլակատը կամ պատի աղյուսակը մի դասին, և գրատախտակի վրա հարցերի ցուցակ՝ մյուս դասին» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 89)։

Հղումներ

1. In “Prest. Snow to Relief Societies,” *Deseret Evening News,* July 9, 1901, 1.
2. In “Prest. Snow to Relief Societies,” 1.
3. In “Prest. Snow to Relief Societies,” 1.
4. In “Prest. Snow to Relief Societies,” 1.
5. In “Prest. Snow to Relief Societies,” 1.
6. *Young Woman’s Journal,* Sept. 1895, 577–78.
7. *Young Woman’s Journal,* Sept. 1895, 578.
8. In “Prest. Snow to Relief Societies,” 1.

«Աստծո հետ բոլոր բաները հնարավոր են»

«Մեզ վրա դրված պահանջների բնույթն այնպիսին է, որ ոչ մի մարդ չի կարող ենթարկվել դրանց, մինչև Ամենազորի աջակցությունը չլինի: . . . Նա խոստացել է այս օգնությունը»:

Լորենզո Մնոուի կյանքից

Նախագահ Լորենզո Մնոուն աշխատավոր էր՝ հետևելով իր իսկ հաճախ կրկնվող խորհրդին. «Մենք պետք է լարենք մեր ուժերը: . . . Պարապ մնալն առանց ինքներս մեզ գործի մեջ դնելու, ոչ մի բանի պետք չէ»:[1] Բայց նա գիտակցում էր, որ ցանկանալով կառուցել Աստծո թագավորությունը, իր սեփական ուժերի լարումը երբեք բավական չէր լինի առանց Աստծո շնորհի կամ «գերբնական օգնության»,[2] ինչպես դա հաճախ անվանում էր նա: Ուստի, չնայած նա խրախուսում էր Եկեղեցու անդամներին ջանասիրաբար աշխատել «զարգացնելով արդարի սկզբունքներ», միևնույն ժամանակ նա հայտարարում էր, որ.«մենք որպես Վերջին Օրերի Սրբեր պետք է հասկանանք և հիշենք, որ փրկությունը գալիս է Աստծո շնորհի միջոցով»:[3] Նա վկայում էր, որ Աստված կավելացնի Իր ուժը մեր ջանքերին. «Որտեղ Տերը տնկում է մեզ, մենք պետք է այնտեղ կանգնենք, երբ նա պահանջում է մեզանից լարել մեր ուժերը այս սուրբ սկզբունքներին աջակցելու համար, որոնք մենք պետք է անենք, դա է այն բոլորը, որի մասին մենք պետք է անհանգստանանք, մնացածի մասին՝ Երկնային Հայրը հոգ կտանի»:[4]

Նախագահ Մնոուի քույր Էլիզան նկատել էր, որ նա հավատարիմ էր ապրում այս ուսմունքին: Նա նկարագրում էր նրան որպես մի մարդու, որն «անսասան հավատք ուներ Աստծո աջակցող զորության ու շնորհի հանդեպ»: Նա ասում էր, որ

Նախքան մի կույր մարդու բժշկելը Փրկիչն ասաց. «Ինձ պէտք է նորա գործերը գործել, որ ինձ ուղարկեց» (Հովհաննէս Թ.4):

«գիտեր, թե ում էր վստահում» և այդ պատճառով կարողանում էր դիմանալ «ամեն դժվարության, ամեն ընդդիմության» և «հաղթահարում էր ամեն խոչընդոտ»:[5]

Լորենզո Սնոուն ցույց տվեց իր վստահությունն Աստծո աջակցող զորությանը, երբ նա ճանապարհորդեց՝ միսիա ծառայելու Անգլիայում 1840 թվականին: Ատլանտյան օվկիանոսով ճանապարհորդության 42-րդ օրը նա և իր ընկերակից ճանապարհորդները ենթարկվեցին երեք մեծ փոթորիկների: Հետագայում նա հաղորդեց, որ դրանք «սոսկալի փոթորիկներ էին՝ փոթորիկներ, որոնք օվկիանոսին սովոր մարդիկ անվանեցին շատ վտանգավոր»: Նա տարբերություն նկատեց փոթորիկների հանդեպ իր արձագանքի և մյուս ուղևորներից մի քանիսի արձագանքի միջև: «Մի քանի դեպքերում, ամենաքիչն ասած տեսարանը սոսկալիորեն ահաբեկիչ էր: Ես չէի զարմանում, որ տղամարդիկ, կանայք և երեխաները, ովքեր չէին սովորել վստահել Աստծուն, սեղմում էին իրենց ձեռքերը վախի տագնապից և լալիս: Իմ վստահությունը Նրա վրա էր, ով ստեղծել էր ծովերը և որոշել դրանց սահմանները: Ես նրա գործով էի, գիտեի որ ուղարկվել էի այս միսիային, այն իշխանությամբ, որ Նա ընդունում էր և չնայած տարերքը մոլեգնում էր և նավը ճոճվում և դողում բարձրացող ալիքներից, Նա ղեկի մոտ էր և իմ կյանքն ապահով էր՝ Նրա պահպանությամբ»:[6]

Շատ տարիներ անց, երբ Լորենզո Սնոուն դարձավ Եկեղեցու Նախագահ, նա կրկին հանգստություն գտավ իր գիտելիքում, որ Տերը ղեկի մոտ էր: 1898 թվականի սեպտեմբերի 13-ի մի ժողովում Տասներկու Առաքյալների Քվորումը միաձայն արտահայտեց իր որոշումը, հաստատել նրան, որպես Եկեղեցու Նախագահ: Ժողովի մի արձանագրություն նշում է, որ նա այն ժամանակ կանգնեց և ասաց, որ «օգուտ չկար պատճառներ բերելու անկարողության մասին և այլն, վերցնելու վիթխարի պարտականությունները, որոնք ընդգրկում էին այդ պաշտոնը: . . . Նա զգում էր, որ իրենից կախված ամենալավագույնը ինչ կարող էր, պետք է աներ և ապավիներ Տիրոջը»[7] [տես առաջարկ 1, էջ 209]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Աստծո օգնությամբ մենք կարող ենք անել մեզանից պահանջվող ամեն բան:

Ես ցանկանում եմ խոսել մի ձևով, որը մեր դաստիարակության և փոխադարձ բարեփոխման համար կլինի՝ այն բաներում, որոնք կապված են մեր փրկության հետ: Այս նպատակի համար ես կամենում եմ բոլոր նրանց հավատքն ու աղոթքները, ովքեր հավատում են հրահանգի և խելամտության համար դեպի Տերը նայելուն:

Մենք պետք է հասկանանք մեր հարաբերությունը, որը հաստատում ենք Տիրոջ՝ մեր Աստծո հետ և առանձնահատուկ պաշտոնը, որը մենք զբաղեցնում ենք: Մեզ վրա դրված պարտականությունները ճշտորեն բաշխելու համար, մենք կարիք ունենք գերբնական օգնության: . . .

Երիտասարդին, որը եկավ նրա մոտ և կամեցավ իմանալ, թե ինչ պետք է աներ հավերժական կյանքը ժառանգելու համար, Հիսուսն ասաց. «Պահիր պատվիրանները»: Երիտասարդը պատասխանեց, որ նա պահել էր նշված պատվիրանները իր մանկությունից սկսած: Փրկիչը, նայելով նրան, տեսավ, որ ինչ որ բան դեռևս պակաս էր: Երիտասարդը պահել էր բարոյականության օրենքը, Մովսեսին տրված օրենքը, և սրա համար Հիսուսը սիրեց նրան, բայց տեսավ , որ մի բան պակաս էր: Նա հարուստ մարդ էր, և իր շատ հարստության շնորհիվ ազդեցություն ուներ աշխարհում: Հիսուսը գիտեր, որ նախքան ինքը կկարողանար նրան բարձրացնել, կամ որևէ այլ մարդու սելեստիալ աշխարհ, անհրաժեշտ էր, որ նա ենթարկվող լիներ բոլոր բաներում և սելեստիալ օրենքին հնազանդվելը համարեր մեծագույն կարևորություն ունեցող մի բան: Հիսուսը գիտեր, թե ինչ էր պահանջվում յուրաքանչյուր մարդուց սելեստիալ թագը ձեռք բերելու համար, որ ոչինչ չպետք է ավելի սիրելի լիներ, քան երկնքի պահանջներին հնազանդվելը: Փրկիչը տեսավ այս երիտասարդի մեջ ինչ որ բանից կառչելը, որը չէր համապատասխանում սելեստիալ արքայության օրենքին: Նա հավանաբար տեսավ միտում նրա մեջ կառչել իր զգացմունքներում նրանից, ինչը վտանգավոր էր նրա համար և կդարձներ ավետարանի բոլոր պահանջներն անհարմար կամ անհնարին, այդ

պատճառով նա ասաց նրան, որ գնար և վաճառեր այն ամենն ինչ ուներ և «տար աղքատներին և հետևեր իրեն»։

Այս պատվիրանը երիտասարդին տխրեցրեց և վշտացրեց։ Նա նայում էր հարստությունների վրա, որպես կյանքի մեծ նպատակի, որպես իրեն աշխարհի ազդեցություն և բոլոր բաները բերող, որոնք ցանկալի էին, որպես իր կյանքի համար օրհնություններ ու վայելքներ հայթհայթող և որպես միջոց հասարակության մեջ բարձր դիրքերի հասնելու համար։ Նա չէր կարողանում հասկանալ մարդու կյանքի օրհնությունները, վայելքներն ու արտոնությունները և այնպիսի բաներ, որոնք նրա խառնվածքն էր տենչում, անկախ իր հարստությունից ապահովելու գաղափարը։ Բայց ավետարանը այդպիսին է իր էությամբ, որ տալիս է ամեն ինչ, որն անհրաժեշտ է մարդու կարիքներն ու պահանջները կատարելու համար և դարձնելու նրան երջանիկ։ Հարստությունները այդպես չէին հաշվարկված և Տերն ուզում էր, որ նա ձեռք քաշեր այդ գաղափարներից և հաներ դրանք իր մտքից ու զգացմունքներից, որպեսզի նա կարողանար ապահովել նրան որպես իր ծառա բոլոր բաներում։ Նա ցանկանում էր, որ այդ մարդն ամբողջապես նվիրվեր իր ծառայությանը և գնար իր աշխատանքին ողջ իր սրտի դիտավորությամբ և հետևեր Սուրբ Հոգու հուշումներին և պատրաստեր իրեն սելեստիալ փառքի համար։ Բայց այդ երիտասարդը չկամեցավ, դա խիստ մեծ զոհաբերություն էր։ Եվ Փրկիչն ասաց այդ առիթով. «Որքան դժուար է, որ հարստութեան վերայ յուսացողները Աստուծոյ արքայութիւնը մտնեն։ Ավելի հեշտ է, որ մի ուղտն ասեղի ծակովն անցնէ, քան թէ հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ»։

Աշակերտները «առաւել եւս զարմանում էին [սրա վրա] իրար ասելով. Ապա ո՞վ կարող է փրկուիլ»։ Նրանք մտածում էին, որ ոչ մի մարդ չի կարող ունենալ հարստություններ և փրկվել Աստծո արքայությունում։ Սա էր այն գաղափարը, որ նրանք ստացան Փրկչի դիտողություններից։ Բայց Հիսուսը պատասխանեց. «Մարդկանց կողմանէ անկարելի է, այլ ոչ թէ Աստուծոյ կողմանէ. որովհետեւ ամեն բան կարելի է Աստուծոյ կողմանէ» [տես Մատթեոս ԺԹ.16–26, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանությունմատթեոս ԺԹ.26, տողատակի ծանոթագրություն *ա,* և

Մարկոս Ժ.27, տողատակի ծանոթագրություն *ա*][8] [տես առաջարկ 2, էջ 209]:

Աստված խոստացել է օգնել մեզ ավետարանով ապրելու մեր անձնական ջանքերում:

Մենք մեզանից և ինքնուրույն չենք կարող ըստ երևույթին ենթարկվել բոլոր պատվիրաններին, որ Աստված է տվել մեզ: Հիսուսն Ինքը չկարողացավ առանց Իր Հորից աստվածային օգնության իրականացնել Նրա աշխատանքը: Նա ասել է մի առիթով. «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. Ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դատում, եւ իմ դատաստանն արդար է. որովհետեւ իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը» [Հովհաննես Ե.30]: Եվ եթե անհրաժեշտ էր Նրա՝ մեր Տիրոջ համար ունենալ աստվածային աջակցություն, ապա որքան ավելի շատ է անհրաժեշտ մեզ համար ստանալ Նրա աջակցությունը: Եվ ամեն հանգամանքներում և պայմաններում , որոնցով շրջապատված են Վերջին Օրերի Սրբերը, մինչ կատարում են իրենց պարտականությունները, նրանք իրավունք ունեն զերբնական օգնության Սուրբ Հոգուց, օժանդակելու իրենց շրջապատող տարբեր պայմաններում և պարտականություններում, որոնք նրանցից պահանջվում է կատարել:

. . . Ես չեմ կարող պատկերացնել որևէ բան, որն այնքան կարևոր լինի, որքան մարդու աշխատելն ու ձեռք բերելը իր իսկ անձնական վեհացումն ու փառքը: Դա անկասկածորեն մի մեծ նպատակ է, որի համար մենք եկել ենք այս աշխարհ: . . . Ոչ մի տղամարդ կամ կին չպետք է հուսալքվի, երբ նրանք զգում են, որ իրենք չեն կարողանում իրականացնել այն, ինչ նրանք կկամենային կատարել, բայց մենք բոլորս պետք է անենք այն, ինչ կարող ենք՝ իրագործելու այն վիթխարի աշխատանքը, որի համար մենք այստեղ ենք:[9]

Այն կրոնը, որը մենք ենք ընդունել, պահանջում է որոշակի վարվելակերպ, որը մեր իմացած որևէ ուրիշ կրոն չի պահանջում իր հետևորդներից, և այդ պահանջների բնույթը մեզ վրա այնպիսին է, որ ոչ մի մարդ չի կարող ենթարկվել դրանց, մինչև Ամենազորից աջակցություն չլինի: Կարևոր է, որ մենք խորհրդածենք, առնվազն մասնակիորեն այն մեծ և կարևոր օրհնությունների մասին, որոնք մենք պետք է ստանանք վերջում,

ենթարկվելով մեր ընդունած կրոնի կամ ավետարանի պահանջներին։ Այն զոհաբերությունները, որոնք պահանջվում են մեզանից, այնպիսին են, որ ոչ մի տղամարդ կամ կին չեն կարող դրանք կատարել, մինչև չօժանդակվեն գերբնական ուժերի կողմից, և Տերն առաջարկելով այս պայմանները, երբեք չի նախատեսել, որ իր ժողովրդից երբևէ պահանջվի ենթարկվել դրանց առանց գերբնական օգնության և այն տեսակի, որը չի դավանվել որևէ այլ դասի կամ կրոնի մարդկանց կողմից։ Նա խոստացել է այդ օգնությունը։ . . .

Այս պահանջները . . . դրվել են յուրաքանչյուր դարում և ժամանակաշրջանում, երբ Աստված կանչել է մարդկանց ծառայելու իրեն և ստանալու իր օրենքները։ Դրանք պահանջվել են Իսրայելի օրերում այդ ժողովրդի սկզբնական շրջանում։ Դրանք պահանջվել են Աբրահամից, Իսահակից և Հակոբից։ Դրանք պահանջվել են Մովսեսից և այն ժողովրդից, որոնց նա դուրս հանեց եգիպտական գերությունից։ Դրանք պահանջվել են բոլոր մարգարեներից, որոնք գոյություն են ունեցել Ադամի օրերից սկսած մինչև ներկա ժամանակաշրջանը։ Դրանք պահանջվել են առաքյալներից, ովքեր ստացան իրենց լիազորությունը Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու ձեռնադրմամբ և կրոնի հետևորդների կողմից, որոնց առաքյալները հռչակեցին և ուսուցանեցին ժողովրդին իրենց օրերում, և ոչ մի մարդ կամ մարդկանց խումբ կամ մարդկանց դաս, իրենց օրերում Ադամի օրերից սկսած մինչև ներկա ժամանակը, չէր կարող ենթարկվել այս պահանջներին, բացի Աստծո ժողովրդից, քանի որ նրանք օժտված էին զորությամբ ի վերուստ, որը կարող էր գալ միայն մեր Տեր Աստծուց[10] [տես առաջարկ 3, էջ 209]։

Երբ մենք մասնակցում ենք Աստծո աշխատանքին, մենք Աստծո օգնության կարիքն ունենք։

Ինչ էլ որ դուք ձեռնարկեք Սիոնի շահերն առաջ տանելու համար, դուք պետք է ապավինեք Տիրոջը դրա հաջողության համար։[11]

Մարդու միտքը պետք է ուղղված լինի միայն դեպի Աստծո փառքը ամեն ինչում, որ նա սկսում է իրականացնել։ Մենք պետք է հասկանանք, որ մենք մեզանից չենք կարող անել

«Աշխատանքները, որոնցով դուք և ես զբաղված ենք, կարող են բարգավաճել և առաջադիմել միայն մեր հավատարիմ և ազնիվ ջանքերի վրա Աստծո օրհնությունների միջոցով»։

ոչինչ։ Մենք Աստծո զավակներն ենք։ Մենք մթության մեջ ենք, [մինչև] Աստված չլուսավորի մեր հասկացողությունը։ Մենք անզոր ենք, [մինչև] Աստված չօգնի մեզ։ Աշխատանքը, որը մենք պետք է անենք այստեղ այն բնույթի է, որ մենք չենք կարող անել այն, մինչև չունենանք Ամենազորի աջակցությունը։ . . . Ահա այստեղ է աշխարհի տղամարդկանց դժբախտությունը և շատ ավելի Իսրայելի Երեցների. մենք մոռանում ենք, որ աշխատում ենք Աստծո համար, մենք մոռանում ենք, որ մենք այստեղ ենք, որպեսզի իրագործենք որոշակի նպատակներ, որ խոսք ենք տվել Տիրոջը, որ կիրագործենք։ Մենք զբաղված ենք փառահեղ մի աշխատանքով։ Դա Ամենազորի աշխատանքն է, և Նա է ընտրել տղամարդկանց և կանանց, ում Նա գիտի անցյալի փորձառությունից, որ նրանք կիրագործեն Իր նպատակները։[12]

Այս աշխատանքը, որում դուք և ես զբաղված ենք, կարող է բարգավաճել և առաջ գնալ մեր հավատարիմ և համեստ ճիգերի վրա և այն աշխատանքների, որոնց համար մենք եկել ենք այս կյանք, իրագործելու մեր վճռականությամբ, և՝միայն

Աստծո օրհնությունների միջոցով: Երբ մենք ետ ենք նայում այն փորձառությունների վրա, որոնցով մենք անցել ենք, մենք հեշտորեն հասկանում ենք, որ մեր բարգավաճումը կախված է եղել Աստծո աշխատանքն իրականացնելու ազնիվ ջանքերից, մարդկանց օգտի համար աշխատելուց և մեզ որքան հնարավոր է եսասիրությունից ազատելուց: Սա այդպես է եղել անցյալում, մենք կարող ենք լավ հասկանալ, որ մեր ապագա առաջընթացը կախված կլինի բոլոր հանգամանքերում Աստծո կամքը կատարելու մեր վճռականությունից և այն օգնությունից, որ Նա կտա մեզ[13] [տես առաջարկ 4, էջ 210]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Վերանայեք 201–203 էջերի պատմությունը: Ի՞նչ եք կարծում, ինչու մարդիկ, ովքեր վստահում են Աստծուն, փորձություններին արձագանքում են այլ ձևով, քան այն մարդիկ, ովքեր չեն վստահում Աստծուն:
2. Խորհեք Փրկչի և հարուստ երիտասարդի պատմության մասին (էջեր 204–206): Որո՞նք են այն բաները, որոնց վրա մարդիկ դնում են իրենց սրտերը, որոնք կարող են տանել նրանց դեպի «տրտմությամբ հեռանալուն»: Ինչո՞ւ մենք պետք է հանենք այդպիսի բաները մեր կյանքից նախքան Տիրոջ մեծագույն օրհնությունը ստանալը:
3. Նախագահ Մնոուն ուսուցանել է, որ նույնիսկ Փրկիչը կարիք ուներ «աստվածային օգնության»՝ «իրականացնելու Իր աշխատանքը» (էջ 206): Ինչպե՞ս կարող եք օգտագործել Նախագահ Մնոուի խոսքերը՝ օգնելու ինչ որ մեկին, ով անհամապատասխան է զգում բավարարելու ավետարանով ապրելու պահանջները:

4. Ուսումնասիրեք վերջին բաժինը (էջեր 207–208)։ Ինչո՞ւ եք կարծում, որ մենք երբեմն մոռանում ենք խնդրել Աստծուց Նրա օգնությունը։ Մտածեք այն մասին, թե ինչ կարող եք անել Նրա օգնությունը ձեր կյանքում ավելի շատ ստանալու համար։

Առնչվող սուրբ գրություններ. Փիլիպպեցիս Դ.13, 2 Նեփի 10.23–24, 25.23, Հակոբ 4.6–7, Մոսիա 24.8–22, Հավատո Հանգանակ 1.3

Օգնություն ուսուցչին. «Հանձնարարեք մասնակիցներին կարդալ ընտրված հարցերը գլխի վերջում (կամ անհատապես կամ էլ փոքր խմբերով)։ Խնդրեք նրանց այս գլխում փնտրել այն ուսմունքները, որոնք կապված են հարցերի հետ։ Այնուհետև հրավիրեք նրանց կիսվել իրենց մտքերով և ներըմբռնմամբ, խմբի մնացած մասի հետ» (այս գրքի էջ ix).։

Հղումներ

1. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
2. *Deseret News,* Jan. 14, 1880, 786.
3. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
4. *Deseret News,* Oct. 28, 1857, 270.
5. Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 116–17.
6. In *Biography and Family Record of Lorenzo Snow,* 49.
7. In Journal History, Sept. 13, 1898, 4.
8. *Deseret News,* Jan. 14, 1880, 786.
9. In Conference Report, Apr. 1898, 12.
10. *Deseret News,* Jan. 14, 1880, 786.
11. *Improvement Era,* July 1899, 708.
12. *Deseret Weekly,* May 12, 1894, 638.
13. In Conference Report, Apr. 1901, 1.

Հավատարիմ, եռանդուն ծառայություն Աստծո թագավորությունում

«Իմանալով, որ մեր կրոնը ճշմարիտ է, երկրագնդի երեսին մենք պարտավոր ենք լինել ամենանվիրված մարդիկ այն գործին, որ մենք ենք ընդունել»:

Լորենզո Սնոուի կյանքից

1851 թվականի վերջերին, Առաջին Նախագահությունը հրատարակեց մի նամակ, խնդրելով, որ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները «իրենց տարբեր միսիաներում կարգավորեին գործերը» և վերադառնային Սոլթ Լեյք Սիթի մինչև 1853 թվականի ապրիլը:[1] Այսպիսով, Երեց Լորենզո Սնոուի միսիան Իտալիայում մոտեցավ ավարտին: 1852 թվականի փետրվարին, նա աշխատանքը թողեց Եղբայր Ջոն Դանիել Մալանի ղեկավարության ներքո՝ մի նորադարձի, և ճանապարհորդեց Երեց Ջաբեզ Վուդարդի հետ Մալթա կղզին: Մալթայից Երեց Սնոուն հույս ուներ դեպի Հնդկաստան տանող որևէ նավ նստել: Այդ երկրում առաջին միսիոներներն աշխատում էին նրա ղեկավարության ներքո և նա մեծ ցանկություն ուներ միանալ նրանց: Այնտեղից նա ծրագրում էր «իրագործել շուրջերկրյա ճանապարհորդություն», տուն վերադառնալով Խաղաղ Օվկիանոսով դեպի արևմտյան Միացյալ Նահանգներ:[2]

Երեց Սնոուն փոխեց ծրագրերը, երբ նա և Երեց Վուդարդը հասան Մալթա: Նա իմացավ որ նրանք կղզում մի քանի շաբաթ մնալու էին, որովհետև շոգենավը վնասվել էր Կարմիր ծովում: Ուշացման վերաբերյալ բողոքելու փոխարեն, նա որոշեց գործի անցնել: Մի նամակում, որը թվագրված է 1852 թվականի մարտի 10-ով, նա գրել է. «Զգում եմ, որ շատ բարիք առաջ կգա



Երեց Լորենզո Սնոու

այն ձևից, որով Տերը կարող է այժմ ուղղորդել իմ տնօրինության տակ գտնվող ժամանակի օգտագործումը, քանի որ ես շրջապատված եմ մի հետաքրքիր ժողովրդով և աշխատանքի կարևորագույն մի ոլորտում, որտեղ հրաշալի աշխատանք կիրագործվի՝ տարածելով դեպի մոտակա ազգերը: Նա հաղորդել է, որ ուղարկել էր Երեց Թոմաս Օբրեյի՝ Իտալիայում գտնվող մի միսիոների հետևից «որ նա անմիջապես գար և բերեր գրքույկների և գրքերի մի մեծ պաշար»: Չնայած Երեց Սնոուն չգիտեր կոնկրետ, թե նա և իր ընկերակիցներն ինչ պիտի անեին Մալթայում, նա ցանկություն հայտնեց Եկեղեցու մի ճյուղ հաստատել այնտեղ: Այս գործն, ասաց նա. «կարձակի շատ ազգերի հոգևոր կապանքները, քանի որ Մալթացիները իրենց առևտրական կապերով տարածվում են Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ափերի երկայնքով»:[3]

1852 թվականի մայիսի 1-ին, Երեց Սնոուն ուղարկեց մի նամակ, հաղորդելով աշխատանքի առաջընթացի մասին, Մալթայում: Նա գրել է. «Մարդիկ այժմ անընդհատ զանգահարում են, հարցեր տալով այս «տարօրինակ կրոնի» մասին», մի քանի երեկո է սկսած այն ժամանակից, երբ մեկ անգամ մեր անձնական բնակարաններում ունեցանք ութ տարբեր ազգերի պարոնայք, որոնք եկել էին քաղաքի տարբեր մասերից, զրույց անցկացնելու մեր վարդապետությունների վերաբերյալ, այդ թվում կային Լեհաստանից և Հունաստանից եկածներ, ովքեր այժմ կարդում են մեր աշխատությունները մեծ հետաքրքրությամբ: Երկու խելամիտ և եռանդուն երիտասարդներ՝ այս կղզում մեր առաջնապտուղները, կկարողանան աջակցել գործն առաջ տանելուն, որում մենք ենք զբաղված, որոնցից մեկին մենք ձեռնադրել ենք Երեց, որը սահուն խոսում է մի քանի լեզուներով:[4]

Երեց Սնոուն երբեք այդպես էլ չիրականացրեց Հնդկաստանում ծառայելու և շուրջերկրյա ճանապարհորդություն կատարելու իր երազանքը: Դրա փոխարեն, նա ջանասիրաբար հետևեց Տիրոջ կամքին, Մալթայում իր անսպասելի կարճատև այցի ընթացքում, այնտեղ հիմք դնելով միսիոներական աշխատանքին: Երբ նա ի վերջո կարողացավ նավ նստել 1852 թվականի մայիսին, նա ավելի շուտ գնաց արևմուտք քան արևելք՝ հետևելով իր ղեկավարների հրահանգներին, վերադառնալով՝

Սոլթ Լեյք Սիթի: Մոտ երկու ամիս անց Երեց Վուդարդը և Օբրեյը Եկեղեցու ճյուղ կազմակերպեցին Մալթայում[5] [տես առաջարկ 1, էջ 223]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Քանի որ մենք ստացել ենք ավետարանի լրիվությունը, մենք ծառայում ենք որպես Քրիստոսի դեսպաններ:

Մենք վկայում ենք ողջ աշխարհին, որ մենք գիտենք, աստվածային հայտնությամբ, նույնիսկ Սուրբ Հոգու դրսևորումների միջոցով, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին և որ նա հայտնել է իրեն Ջոզեֆ Սմիթին անձնապես, ինչպես նա արել է իր առաքյալներին՝ հնում, գերեզմանից իր հարություն առնելուց հետո և որ նա հայտնի է դարձրել նրան երկնային ճշմարտությունների մասին, որոնց միջոցով միմիայն մարդկությունը կարող է փրկվել: Սա նշանակում է հանձն առնել շատ կարևոր և պատասխանատու պաշտոն, գիտենալով, ինչպես մենք գիտենք, որ Աստված պատասխանատվության կկանչի մեզ մեր վերաբերմունքի համար այս սրբազան վստահության կապակցությամբ, որը նա է մեզ հանձնարարել:

Երբ առաքյալները հայտնվեցին աշխարհի առջև, հարություն առած Քավիչից իրենց լիազորությունը ստանալուց հետո՝ թագավորության ավետարանը բոլոր ազգերին քարոզելու համար՝ խոստանալով բոլորին, ովքեր կհավատային իրենց խոսքերին Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրման միջոցով, այսպես էլ մենք ենք հայտնվում: Ինչպես նրանք իրենց լիազորության զորությամբ հայտարարեցին ողջ համոզվածությամբ հալածանքի և հակադրության մեջ, որ ավետարանը Աստծո ուժն է ի փրկություն բոլոր նրանց, ովքեր հավատացին և հնազանդվեցին, այնպես էլ մենք ենք հայտարարում: Ինչպես նրանք քարոզեցին հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս, մկրտություն մեղքերի թողության համար և ձեռնադրում, նրանց կողմից ովքեր, պատշաճ կերպով լիազորված էին՝ Սուրբ Հոգու ընդունման նպատակով, որպես փրկության համար էական, այդպես էլ մենք ենք քարոզում: Ինչպես նրանք Սուրբ Հոգու զորությամբ դարձան վկաներ Տեր Հիսուս Քրիստոսի մասին, և հավատարիմ կրողներ նրա ավետարանի ուղերձի վերաբերյալ ողջ Հեթանոս աշխարհին,

այնպես էլ մենք՝ նույն Սուրբ Հոգով և նրա միջոցով, դարձանք վկաներ նրա մասին և լինելով կանչված նույն աստվածային և սուրբ կոչումով, մենք էլ հետևաբար հանձն առանք նույն պաշտոնը։

Ապա, ստանձնելով այս պաշտոնը, մենք հանձն ենք առնում Քրիստոսի դեսպանների բոլոր պարտականությունները, մենք պատասխանատու ենք համարվում մեզ՝ մեր անձնական գործողությունների համար և այն ձևի համար, որով մենք օգտագործում ենք այն տաղանդներն ու ունակությունները, որոնք Տերը տվել է մեզ[6] [տես առաջարկ 2, էջ 223]։

Անդամակցությունը Եկեղեցում կանչ է՝ օգնելու ուրիշներին փրկություն ստանալու։

Երբ Տերը կանչում է աշխարհից որևէ անձնավորության կամ անձնավորությունների խմբի, դա միայն այն նպատակով չէ, որ միայն օգուտ տա տվյալ անձավորությանը կամ անձանց։ Տերն ի նկատի չունի միայն Վերջին Օրերի Սրբեր կոչվող մի քանի մարդկանց փրկությունը . . . , այլ բոլոր մարդկանց փրկությունը՝ ապրող և մահացած։ Երբ Տերը կանչեց Աբրահամին, Նա որոշակի խոստումներ տվեց նրան այն փառքի վերաբերյալ, որը պետք է գար նրա և նրա սերնդի վրա, և այս խոստումների մեջ մենք գտնում ենք այս նշանավոր ասույթը. որ նրանով և նրա սերնդով երկրի բոլոր ազգերը պիտի օրհնվեն [տես Ծննդոց ԻԲ.15–18, Աբրահամ 2.9–11]։ . . . Տիրոջ ծրագիրն էր՝ օրհնել ոչ միայն նրան և նրա սերնդին, այլ երկրի բոլոր ընտանիքները։ . . .

. . . Երբ Հիսուսն եկավ, Նա եկավ որպես զոհաբերություն ոչ միայն պարզապես Իսրայելի օգտի համար կամ Աբրահամի, Իսահակի և Հակոբի սերնդի համար, այլ ողջ մարդկության ընտանիքի համար, որպեսզի Նրանով բոլոր մարդիկ կարողանային փրկվել, և Նրա առաքելությունն էր նախապատրաստություններ անել, որոնցով ողջ մարդկության ընտանիքը կարողանար ստանալ հավիտենական ավետարանի օգուտները, ոչ թե ինչպես ասացի, միայն Իսրայելը, այլ ամբողջ մարդկային ցեղը, և ոչ միայն նրանք, ովքեր ապրում են երկրի վրա, այլ նաև նրանք, ովքեր հոգևոր աշխարհում են։ . . .

. . . Մենք ունենք նույն Քահանայությունը, ինչ որ Հիսուսն ուներ, և մենք պետք է անենք այնպես, ինչպես Նա արեց, զոհաբերելով մեր իսկ ցանկություններն ու զգացմունքները , ինչպես Նա արեց, ոչ թե մահանալու որպես նահատակներ, ինչպես Նա արեց, այլ պետք է զոհաբերություններ կատարենք, որպեսզի իրագործենք Աստծո նպատակները, այլապես մենք արժանի չենք լինի այս սուրբ Քահանայությանը և լինի աշխարհի փրկիչները: Աստված մտադիր է դարձնել մեզ փրկիչներ ոչ միայն շատերի համար, ովքեր այժմ ապրում են երկրի վրա, այլ շատերի համար, ովքեր հոգևոր աշխարհում են. Նա մեզ չի դնի մի պաշտոնում, որ մենք միայն ինքներս մեզ փրկենք, բայց Նա կդարձնի մեզ իրազեկ, աջակցելու Ամենազորի զավակներից շատերի փրկագնմանը[7] [տես առաջարկ 3, էջ 223]:

Յուրաքանչյուր կոչում և պարտականություն կարևոր է Տիրոջ աշխատանքի համար:

Այժմ հարցը նրանում է, թե մենք հասկանո՞ւմ ենք մեր պաշտոնը, արդյոք լիովին ըմբռնում ենք աշխատանքի բնույթը, որը մենք հանձն ենք առել իրականացնել: Ես երբեմն ստիպված եմ հավատալ, որ մեր եղբայրներից, Իսրայելի Երեցներից ոմանք, խիստ պատրաստ են և հոժարակամ՝ խուսափելու այն պարտավորություններից, որոնց ներքո են իրենց ուխտերի պատճառով, հավատքը, որ նրանք մի ժամանակ ունեին, թվում է սպառված է, և նրանք թվում է անխոս բավարարվում են, միայն անունով Եկեղեցու անդամ լինելու կարգավիճակին:

Կան ուրիշները, ովքեր մտածում են, քանի որ իրենց անունները շատ լայնորեն հայտնի չեն, որ գուցե իրենք . . . զբաղեցնում են նեղ ասպարեզներ, այնքան էլ նշանակություն չունի թե ինչ սովորույթներ են որդեգրում կամ ինչ օրինակ են հանդիսանում իրենց եղբայրների առջև: Բայց այն ժամանակ, եթե նրանք զբաղեցնեն պատասխանատու պաշտոններ, ինչպես օրինակ՝ Եկեղեցու Նախագահությունում, կամ խորհրդականների շարքում կամ, եթե պատկանեն Տասներկուսի Քվորումին, կամ՝ լինեն Բարձրագույն Խորհրդի Նախագահ, կամ՝ Քահանայապետերի կամ էլ Յոթանասունների անդամ, ապա նրանք հաշվի կառնեն, թե ինչպես են իրենց պահում: Սրանում նրանք ցույց են տալիս մեծ թուլություն կամ մեծ անտեղյակություն, կամ

«Եթե դու կատարում ես քո պարտականությունը, դու ունես այնպիսի մի բան, որն աշխարհը չի կարող տալ, ոչ էլ քեզանից վերցնել»:

նրանց լամպը խամրում է կամ էլ նրանք երբեք չեն հասկացել այն պաշտոնը, որն իրենք ստանձնել են՝ վերցնելով իրենց վրա ավետարանի պարտականությունները:

Փրկչի առակում մեզ ասվում է, որ երկնքի արքայությունը նման է մի տնտեսի, որը տվեց իր ապրանքները իր ծառաներին, քանի որ պատրաստվում էր ճանապարհորդել հեռավոր մի երկիր: Մեկին նա տվեց հինգ քանքար և մյուսին երկու, իսկ մյուսին մեկ: Այն մեկը, որը ստացավ հինգ քանքար, գնաց և առևտուր արեց և հինգ քանքար էլ շահեց՝ կրկնապատկելով այն բաժինը, որն իրեն էր վստահվել, իսկ նա, ով ստացել էր երկու քանքար, գնաց և երկուսն էլ շահեց: Բայց նա, ով ստացել էր մեկ քանքար, գնաց և գետինը փորեց և իր տիրոջ արծաթը թաքցրեց: Նա անկասկած մտածեց, որ իր պատասխանատվությունն այնքան փոքր էր, որ չէր կարող շատ բան անել և

հետևաբար նա գործի մեջ չդրեց այդ աննշան մեկ քանքարը [տես Մատթեոս ԻԵ.14–30]: Մի՞թե սա չի վերաբերում ուղղակիորեն մեր երեցներից մի քանիսին: Մեկն ասում է.«Ես ընդամենը հյուսն եմ, կամ՝ դերձակ կամ էլ՝ հնարավոր է, աղյուս կրող (որմնադիրի օգնական), ուստի չի կարող մեծ նշանակություն ունենալ, թե ինչպես եմ ինձ պահում, արդյոք ազնվորեն եմ կատարում իմ պարտականությունները, թե ոչ՝ իմ համեստ ասպարեզում: Բայց *շատ տարբեր* կլիներ, եթե ես գործեի մի ավելի պատասխանատու և աչքի ընկնող պաշտոնում»:

Կանգ առ եղբայրս, մի թույլ տուր որ խաբվես այդպիսի մոլորեցնող զգացումներով: Ճիշտ է, դու կարող է որմնադրի օգնական ես միայն, բայց հիշիր, որ դու երեց ես Իսրայելում, դու Տեր Հիսուս Քրիստոսի դեսպանն ես և եթե դու կատարում ես քո պարտականությունը, դու ունես այնպիսի մի բան, որն աշխարհը չի կարող տալ, ոչ էլ քեզանից վերցնել և դու հաշվետու ես Աստծուն քանքարի ազնիվ օգտագործման համար, որի վրա նա քեզ տնտես է դրել, լինի դա մեծ՝ թե փոքր:

Բացի այդ, դու որոշ չափով ազդեցություն ես թողնում և եթե դա լինի նույնիսկ շատ փոքր, այն ազդում է ինչ որ մի անձնավորության կամ անձնավորությունների վրա, և քո գործադրած ազդեցության հետևանքների համար քիչ թե շատ հաշվետու ես:Այդ պատճառով դու գիտակցում ես դա, թե ոչ, ձեռք ես բերել կարևորություն Աստծո և մարդու առջև, որը չի կարող անտեսվել և որից դու չես կարող ազատվել, եթե ուզում ես հաստատել այն անունը, որը դու կրում ես:

Իսկ ինչպիսի՞ն են այդ անձնավորության հեռանկարները: Ես ասում եմ, որ եթե նա պատվում է իր կոչումը և հավատարիմ է գտնվել այն վստահությանը, որը ցույց է տրվել նրան, փրկության և վեհացման նրա հեռանկարներն Աստծո արքայությունում ճիշտ նույնքան դրական են, որքան որևէ այլ մարդունը: Եթե նա ըմբռնում է իր պաշտոնի իմաստը և ապրում համապատասխանաբար, նրա հեռանկարները հավասարապես դրական են, որևէ այլ մարդու հետ համեմատած, որը երբևէ ապրել է հայր Ադամի օրերից ի վեր մինչև ներկա պահը և ճիշտ նույնքան կարևոր է, որ նա իրեն պատշաճ պահի համաձայն այն ասպարեզի, որում նա քայլում է, որքան դա կարևոր է որևէ այլ անձնավորության համար, որը կանչված է գործելու

ավելի բարձր պաշտոնում, կամ այլ խոսքով ասած, որը տնտես է կարգված ավելի մեծ թվով քանքարների վրա։ . . .

. . . Տերը չի պահանջում այնքան շատ այն մարդուց, ով ունի ընդամենը մեկ քանքար, որքան նրանից, ով ունի ավելի քան մեկը, բայց համաձայն նրա ինչ նա ունի, այնքան էլ նրանից կպահանջվի։ Ուրեմն թող բոլորը քաջալերվեն և ձգտեն բարելավել այն տաղանդները, որոնք մեկից ավելի ունեն և թող նա, ով ունի մեկ տաղանդ օգտագործի այն և չթաքցնի հողում, այսինքն, թող նա, ով օժտված է, բայց քիչ ունակությամբ, բարելավի իրեն և չբողոքի, որովհետև բնությունը գուցե այնքան շռայլ չի եղել իր հանդեպ որքան նրա ավելի հաջողակ եղբոր հանդեպ։ Եկեք բոլորս բավարարվենք մեր ճակատագրով կյանքում և այն չպիտի լինի այնքան ցանակալի, որքան կփափագեինք մենք, մենք պետք է ձգտենք պատշաճ ջանասիրությամբ բարելավել այն՝ միշտ երախտապարտ զգալով մեր երկրային գոյության համար, և ավելի շատ հատկապես Աստծո Հոգու համար, որը մենք ստացել ենք Ավետարանին հնազանդվելու միջոցով։ . . .

Հիշում եմ, որ մի անեկդոտ կարդացի . . . մի մարդու մասին, ով իր իմաստությամբ և հայրենասիրությամբ ձեռք էր բերել հեղինակություն, բայց նախանձության պատճառով նշանակվել էր մի պաշտոնում, որը համարվում էր շատ ստորացուցիչ։ Ստանձնելով իր պարտականությունները, ասվում է, որ նա կատարեց այս նշանավոր արտահայտությունը. «Եթե պաշտոնը ինձ չի պատվում, ես կպատվեմ պաշտոնը»։ Շատ դժվարություններից կխուսափեինք և մեր վիճակը և իրադրությունը շատ ավելի քաջալերող կլիներ, եթե մենք բոլորս պատվեինք մեր պաշտոնը, որին կանչվել ենք ծառայելու։ Մեզ ասվել է, որ Տերն ինքը հագուստներ պատարաստեց մեր առաջին ծնողների համար, կամ՝ այլ խոսքով ասած այդ առիթով, աշխատեց որպես դերձակ, Հիսուս Քրիստոսը նաև՝ հյուսն էր։ Ուրեմն Փրկիչը պետք է որ պատվավոր և ազնիվ հյուսն լիներ, այլապես նա երբեք չէր կարողանա արժանի լինել այն պաշտոնին, որը հետագայում զբաղեցրեց։ Եթե կարողանայինք եղբայրներին և քույրերին հասկացնել ազնվորեն և հավատարմորեն ծառայելու կարևորությունը իրենց համապատասխան կոչումներում, սրտնեղությունների և դժբախտությունների մեծ մասը, որոնք այժմ մենք

տանում ենք, կկասեցվեին և Աստծո աշխատանքն առաջ կընթանար կրկնապատկված ուժով և բոլոր նրա նպատակներն ավելի թափով և արագորեն կիրագործվեին, և բացի այդ, որպես ժողովուրդ մենք ավելի լավ պատրաստված կլինեինք, քան մենք հիմա ենք, նրա կամքն արտահայտելու համար: . . .

Թող Աստված օրհնի ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, և հնարավորություն տա ձեզ միշտ գործել որպես իմաստուն տնտեսներ այն բաների վրա, որոնք ձեզ են վստահված:[8]Խտես առաջարկ 4, էջ 223:

Երբ ծառայում ենք Աստծուն հավատքով, եռանդով և ուրախությամբ, Նա զորացնում է մեզ և օգնում մեզ հաջողության հասնել:

Ես ասում եմ՝ թող տղամարդիկ ծառայեն Աստծուն հավատարմորեն և եռանդագին ու զվարթ լինեն: . . . Լինում են դեպքեր, երբ մարդիկ բերվում են այնպիսի վիճակների, երբ շատ դժվար է լինում, եթե ոչ անհնարին, զվարթ տեսք ունենալ: Բայց այդպիսի դեպքերը շատ քիչ են:[9]

Գիտենալով, որ մեր կրոնը ճշմարիտ է, մենք պարտավոր ենք լինել ամենանվիրված ժողովուրդը երկրի երեսին, այն գործին, որ մենք ենք ընդունել: Գիտենալով, ինչպես մենք գիտենք կամ պետք է գիտենանք, որ ավետարանը, որ մենք ընդունել ենք, խոստանում է այն բոլորը, որ մեր սրտերը կարող են ցանկանալ կամ փափագել, եթե մենք հավատարիմ ենք, պարտավոր ենք ավելի հավատարիմ, նվիրված, եռանդուն և նպատակասլաց լինել, իրագործելով Տիրոջ ծրագրերն ու ցանկությունները, ինչպես որ Նա հայտնում է դրանք ժամանակ առ ժամանակ՝ Իր ծառաների միջոցով: Մենք չպետք է լինենք գաղջ կամ անփույթ մեր պարտականությունները կատարելիս, այլ պետք է ողջ մեր զորությամբ, ուժով և հոգով փորձենք հասկանալ մեր կոչման ոգին և աշխատանքի բնույթը, որով մենք զբաղվում ենք:

Երբ Հիսուսը երկրի վրա էր, Նա պատվիրեց իր աշակերտներին առաջ գնալ և քարոզել ավետարանը առանց քսակի և առանց պարկի, նախօրոք միտք չանելով, թե ինչ պիտի ուտեն կամ խմեն կամ ինչ պիտի հագնեն, այլ պարզապես առաջ գնալ և վկայել այն բաների մասին, որոնք հայտնի են դարձվել

իրենց: Այս անելով նրանք ապահովում էին իրենց Ամենազորի օրհնությունները և հաջողություն էր ուղեկցում նրանց բոլոր իրենց ճիգերում: Նրանք համոզված էին հաջողության հասնել, ոչ մի ուժ չէր կարող փակել նրանց ճանապարհը և խանգարել նրանց հնձել ամենակենսուրախ հաջողությունը, որովհետև նրանք առաջ էին գնում Ամենազորի ուժով՝ կատարելու Նրա կամքը և դա Նրա գործն էր հաստատել և աջակցել նրանց և ապահովել հաջողության բոլոր միջոցները: Տիրոջ հրամաններին հնազանդվելու միջոցով նրանք ապահովում էին իրենց համար կյանքի օրհնությունները՝ առաջին հարության առավոտյան դուրս գալու արտոնությունը և նրանք ունեին համոզվածություն, որ իրենց աշխատանքներում չկար ուժ երկրի վրա, որ կարողանար հաջողությամբ հակադրվել նրանց: Սրանք էին այն հեռանկարները, որոնց ես կձգտեի, եթե լինեի նրանց տեղում կամ որևէ ուրիշ տեղում, քանի որ խորամիտ մտքի համար որևէ գործում վերջնական հաջողության գաղափարը շատ հաճելի է:

Այսպիսով, եթե առաքյալները փոխարենը իրենց պատվիրված ի պես անելու պատկերացնեին, որ ինչ որ ուրիշ բան անելով նրանք կկարողանային հասնել նույն նպատակին, նրանք այնքան էլ մեծ հաջողության չէին հասնի իրենց գործողություններում, ոչ էլ նրանք կունենային այդ համոզվածությունը հաջողության, որը բոլոր փորձությունների և հալածանքների մեջ, որ նրանք ենթարկվում էին, անկասկած, նրանց համար մշտական հաճույքի և բավականության աղբյուրն էր:

. . . Եթե առաքյալները կամ յոթանասունականները Հիսուսի օրերում պատկերացնեին, որ իրենք կկարողանային կատարել իրենց տրված միսիաները՝ տապան կառուցելով ինչպես Նոյն արեց, կամ կառուցելով ցորենի ամբարներ և ցորեն ամբարել, ինչպես Հովսեփն արեց, նրանք խիստ սխալված կլինեին:

Հովսեփը Եգիպտոսի հողում կանչվեց կատարելու որոշակի տիպի պարտականություններ, որոնք պահանջվեցին նրանից: Նա չէր կանչվել քարոզելու ավետարանը՝ առանց պարկի կամ քսակի, այլ կառուցելու ամբարներ և օգտագործելու ողջ իր ազդեցությունը թագավորի, ազնվականների և Եգիպտոսի ժողովրդի վրա՝ ամբարելու նրանց ցորենը սովի ժամանակների համար: . . . Այժմ պատկերացնենք, որ Հովսեփը գնար

աշխատելու և տապան կառուցեր, նա չէր ընդունվի Տիրոջ կողմից, ոչ էլ կկարողանար փրկել Եգիպտոսի ժողովրդին, ոչ էլ իր հոր տունը: Երբ Նոյին հրամայվեց տապան կառուցել, պատկերացրեք, որ նա ամբարներ կառուցեր, նա և նրա տունը չէին փրկվի: Այսպես է նաև մեր պարագայում, երբ պարտականություններ են պահանջվում կատարել մեզանից . . . ինչ էլ որ մեզանից պահանջվի անել Ամենակարողի թագավորության սահմաններում, մենք պետք է քայլենք այդ պահանջների ոգու համաձայն և կատարենք դրանք, եթե ուզում ենք ձեռք բերել ուժ և ազդեցություն մեր Աստծուց[10] [տես առաջարկ 5, էջ 223]:

Տիրոջ աշխատանքը երբեմն դժվար է, բայց այն մեծ ուրախություն է բերում:

Մենք հանդիպում ենք շատ բաների այս աշխատանքի հետ կապված, որոնք հաճելի չեն, բայց կա մի մեծ հաճույք կապված դրա հետ: Երբ մենք ետ ենք նայում ճշմարտության գործին նվիրվելու և մեր ուխտերը պահելու մեր վճռականության վրա, մենք մեծ ուրախություն ենք ապրում, որովհետև մեր կոչումների ոգին զորությամբ հանգչում է մեզ վրա, առանց այդ ոգու մենք չենք կարող համաքայլ ընթանալ Աստծո թագավորության հետ:[11]

Մենք պետք է նորոգենք մեր ուխտերը Աստծո և սուրբ հրեշտակների առջև, որ Աստված լինելով մեզ օգնական, մենք կծառայենք Նրան ավելի հավատարմորեն, քան ծառայել ենք անցյալ տարում, որ մեր հասարակական և անձնական կյանքը, մեր գործողությունները և ոգին ու ազդեցությունը, որին մենք տիրապետում ենք՝ լինի պահելով «Աստծո թագավորությունը կամ ոչինչ» նշանաբանով: Ես վստահ եմ . . . որ մենք կարող ենք ամբողջովին նվիրվել մեր Աստծո ծառայությանը՝ հաստատելով Նրա Սիոնը երկրի վրա, խանդավառությամբ աշխատելով ի օգուտ ճշմարտության և արդարակեցության երկրի վրա, մինչև որ դրանով զբաղված լինելը դառնա ուրախություն մեզ համար, որպեսզի Աստծուն ծառայելը և Նրա պատվիրանները պահելը դառնա մեր երկրորդ էությունը և հետևել սելեստիալ օրենքին և որպեսզի մենք այնպես վայելենք մեր սրտերում Սուրբ Հոգին, որ կարողանանք հաղթել աշխարհին և հաստատենք սելստիալ օրենքը մեր մտքերում և մեր գործունեության մեջ,

որ մենք այնպես հասկանանք ինքներս մեզ և մեր արտոնությունները, որ մենք այս կյանքում ապահովենք բավականչափ օրհնություններ, որոնք վերաբերում են սելեստիալ օրենքին և որոնք պիտի վայելվեն սելեստիալ փառքում[12] [տես առաջարկ 6, էջ 224]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Վերանայեք 211–213 էջերի պատմությունը: Ի՞նչ խոսքեր կօգտագործեիք Տիրոջը ծառայելու վերաբերյալ Լորենզո Սնոուի վերաբերմունքը նկարագրելու համար:
2. Խորհեք այն բաժնի շուրջ, որը սկսվում է էջ 214-ում: Ինչո՞ւ եք կարծում, որ Եկեղեցում անդամակցությունը բերում է այդպիսի մեծ պարտականություններ: Ի՞նչ է նշանակում ձեզ համար լինել Քրիստոսի դեսպան:
3. Նախագահ Սնոուն ուսուցանեց, որ մեր կոչումները Եկեղեցում հնարավորություններ են Աստծո զավակների «փրկագնմանն օգնելու» համար (էջեր 215–16): Ինչպե՞ս կարող է այս հասկացողությունը ազդել այն ձևի վրա, որով մենք ծառայում ենք Եկեղեցում:
4. Նախագահ Սնոուն ասել է, որ մենք պետք է ջանասիրաբար ծառայենք, անկախ ,նրանից, թե որքան փոքր կարող է թվալ մեր պարտականությունը (էջեր 216–220): Երբևիցե տեսե՞լ որևէ մեկին իր փոքր թվացող կոչումը կամ հանձնարարությունը պատվելիս:
5. Կարդացեք բաժինը, որը գտնվում է էջ 220-ում: Ի՞նչ ուղիներով են հավատքը, եռանդը և ուրախությունը ազդում մեր ծառայության վրա:

6. Կարդացեք վերջին բաժնում գտնվող գլուխը (էջեր 222–23)։ Ե՞րբ եք զգացել Տիրոջ թագավորությունում ծառայելու ուրախությունը։ Ինչպե՞ս կարող ենք բավականություն գտնել մեր ծառայությունում, նույնիսկ, երբ հանձնարարությունները այնքան էլ հաճելի չեն։ Ի՞նչ կարող ենք անել օգնելու երեխաներին և երիտասարդներին հավատարմորեն ծառայելու Տիրոջը։

Սոնչվող սուրբ գրություններ. Սաղմոս ճ.2, Ա Կորնթացիս ԺԲ.12–31, Հակոբ 1.6–7, 2.3, Մոսիա 4.26–27, ՎևՈՒ 64.33–34, 72.3, 76.5–6, 107.99–100, 121.34–36

Օգնություն ուսուցչին. «Անկեղծորեն լսեք սովորողների մեկնաբանությունները։ Ձեր օրինակը կոգևորի նրանց ուշադիր լսել մեկ մեկու։ Եթե դուք չեք հասկանում որևէ մեկի մեկնաբանությունը, հարց տվեք։ Դուք կարող եք ասել՝«Համոզված չեմ, որ հասկացա։ Կարո՞ղ եք նորից բացատրել» կամ՝ «Կարո՞ղ եք օրինակ բերել, թե ինչ ի նկատի ունեք»։ (*Ուսուցում չկա ավելի մեծ կոչում* 64)։

Հղումներ

1. Տես Brigham Young, Heber C. Kimball, and Willard Richards, "Sixth General Epistle of the Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints," *Millennial Star,* Jan. 15, 1852, 25:
2. Տես "Address to the Saints in Great Britain," *Millennial Star,* Dec. 1, 1851, 365:
3. "The Gospel in Malta," *Millennial Star,* Apr. 24, 1852, 141–42.
4. "The Malta Mission," *Millennial Star,* June 5, 1852, 236.
5. Տես Jabez Woodard, "Italian Correspondence," *Millennial Star,* Sept. 18, 1852, 476:
6. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1877, 1.
7. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1883, 1.
8. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1877, 1.
9. *Deseret Semi-Weekly News,* Mar. 30, 1897, 1.
10. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 31, 1868, 2
11. *Millennial Star,* Oct. 29, 1888, 690.
12. In Conference Report, Apr. 1880, 81.

«Որպեսզի մենք մեկ դառնանք»

«Ամենազորի ձայնը կանչեց մեզ խառնաշփոթության միջից . . . ստեղծելու միություն և հաճելի եղբայրություն, որում մենք պետք է սիրենք միմյանց, ինչպես ինքներս մեզ ենք սիրում»:

Լորենզո Սնոուի կյանքից

Նախքան Սրբերի Նավուից դուրս քշվելը, Եկեղեցու առաջնորդ Եղբայրները հանդիպեցին տաճարում: Նրանք ուխտեցին, որ «երբեք չէին դադարեցնի [իրենց] ճիգերը, իրենց հասանելիության սահմաններում բոլոր միջոցներով և ազդեցությամբ, մինչև բոլոր Սրբերը, ովքեր ստիպված էին թողնել Նավուն, տեղավորվեին Սրբերի համար մի հավաքատեղում»:[1] Վճռելով պահել այս ուխտը, 1849 թվականին Նախագահ Բրիգամ Յանգը հիմնադրեց Ներգաղթի Մշտական Ֆոնդ: Այս ծրագրով Եկեղեցին փոխառություն վերցրեց ներգաղթող Սրբերի համար՝ այն մտադրությամբ, որ մարդիկ կվճարեին իրենց փոխառությունները՝ Յուտա տեղ հասնելուց և աշխատանք գտնելուց հետո:

Նախագահ Յանգը կանչեց Երեց Լորենզո Սնոուին և մյուսներին այս ջանքերի համար միջոցներ հայթայթելու նպատակով: Երեց Սնոուի համար դժվար էր խնդրել Սրբերին նվիրատվությունների համար՝ նրանք իրենք էլ էին աղքատ, քշված լինելով տեղից տեղ, մինչև Սոլթ Լեյք Սիթիում բնակություն հաստատելը: Նա գրել է իր օրագրում. «Կատարելով Սրբերից միջոցներ հայթհայթելու առաքելությունը, նրանց թալանվելուց և կողոպտվելուց և հազարավոր մղոններ ճանապարհորդություն կատարելուց և հենց նոր տեղավորվելուց հետո, Ամերիկյան անապատի անջուր և ամայի մի վայրում, ես ինձ ընդգրկված գտա մի դժվարին գործի մեջ: Շատ քիչ բացառություններով,



Մինչև Սրբերի Նավուից հեռանալը քահանայության առաջնորդներն ուխտեցին օգնել բոլոր Սրբերին, ովքեր կամենում էին միանալ արտագաղթին:

մարդիկ շատ քիչ բան ունեին, կամ ոչինչ չունեին, որ կարողանային հատկացնել»: Այնուամենայնիվ, ամենուրեք, որտեղ էլ Երեց Սնոուն գնաց, մարդիկ տվեցին այն ամենը, ինչ կարող էին: Նա հաղորդել է. « Ջանքերը և պատրաստակամությունն ամենուրեք ցույց տվեցին այն քչից, որ նրանք բաժին հանեցին, առատաձեռնության զգացումը և հոգու մեծությունը, որին ես ամեն տեղ հանդիպեցի աղքատության մեջ, սրտառուչ ողջույնները, որ ես ստացա, որտեղ աղքատությունը գոյության ամենասովորական վիճակն էր, լցրեց սիրտս չափազանց մեծ ուրախությամբ: Մի մարդ պնդում էր, որ ես վերցնեի նրա միակ կովը, ասելով, որ Տերն ազատել էր իրեն և օրհնել, որ նա հեռանար իր հայրենիքից և գար խաղաղության երկիր և տալով իր միակ կովը, նա զգում էր, որ անում էր, ինչ պարտականությունն էր պահանջում և որը նա կսպասեր ուրիշներից, եթե վիճակը փոխվեր դեպի վատը»:

Յուտայի հյուսիսային մասում նվիրատվություններ հավաքելուց հետո, Երեց Սնոուն նկատեց. «Սրբերի սրտերը բաց էին և հաշվի առնելով նրանց հանգամանքները, նրանք նվիրաբերեցին առատաձեռնորեն և շռայլորեն և իհարկե զվարթորեն»:[2]

Չնայած մարդիկ անհատապես քիչ ունեին տալու համար, նրանց միավորված ջանքերն օրհնեցին շատ կյանքեր: Ներգաղթի Մշտական ֆոնդն ընդարձակվեց իր սկզբնական նպատակից այն կողմ, օգնելով ավելի շատերին, քան հենց միայն Եկեղեցու անդամներին, ովքեր եղել էին Նավույում: Այն շարունակվեց 38 տարի, օգնելով տասնյակ հազարավոր նորադարձների շատ երկրներից հավաքվելու իրենց ընկերակից Սրբերի հետ [տես առաջարկ 1, էջ 235]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Երբ մենք միավորված ենք ավետարանով, Տերը ցույց է տալիս Իր բնավորությունը մեր միջոցով:

Հիսուսն աղոթեց իր Հորը, որ նրանց, ում նա տվել էր իրեն աշխարհից, ինչպես ինքը և Հայրն էին մեկ, և նա ասում է, աղոթում եմ, որ, դու տաս նրանց նույն սերը ինչպես ինձ սիրեցիր, որպեսզի ես լինեմ նրանց մեջ և դու իմ մեջ, որպեսզի բոլորը մեկ լինեն: Սրանում ինչ որ կարևոր բան կա և մենք պետք է

վարժեցնենք մեզ, մինչև դառնանք Հոր և Որդու նման, մեկ բոլոր բաներում:[3]

Հատվածներից, որոնք ես կարդացի [Հովհաննես ԺԷ.19–21] ցույց տրվեց Առաքյալների միավորված լինելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, որպեսզի Տիրոջ նպատակները կարողանային արդյունավետ լինել աշխարհում: Քանի որ մինչև Առաքյալները և նրանք, ովքեր հավատացին նրանց չմիավորվեին, աշխարհը չէր կարող հավատալ Փրկչի առաքելությանն ու նպատակներին: Այդ պատճառով Հիսուսն աղոթեց Հորը, որ բոլոր նրանք, ում Հայրը տվել էր Իրեն, մեկ լինեին, ինչպես Նա և Հայրն էին մեկ, որ աշխարհը կարողանար հավատալ, որ Հայրն էր ուղարկել Նրան: Փաստորեն սա այն է, ինչ Տերն էր ծրագրել Իսրայելի միջոցով իրականացնել՝ նրանց դուրս բերելով Եգիպտոսի գերությունից, նա ցանկանում էր դարձնել նրանց միավորված ժողովուրդ, հատուկ ազգ, մի ազգ ժողովրդի, ում Աստված կարողանար պատվել և հարգել, որպեսզի աշխարհը հավատար և որ նրանք էլ ստանային այն օրհնությունները, որոնք Նա ցանկանում էր շնորհել նրանց, քանի որ մարդկային ցեղը, բոլորը Աստծո զավակներն են, և եթե Իսրայելը կատարեր Նրա պահանջները, աշխարհն անկասկած մեծապես կօգտվեր դրա միջոցով և Աստծո նպատակներն ավելի լիովին գործի կդրվեին: Տերն ուզում էր ցույց տալ Իր բնավորությունը և երկնքի բնավորությունը և ուզում էր ցույց տալ իր սերն ու օրհնությունները Իսրայելի միջոցով, ողջ մարդկության ընտանիքին, բայց Իսրայելն անհնազանդ էր և չկամեցավ լսել Նրա ձայնին:

Եթե մենք բաժանում ունենք մեր միջև, եթե մենք բաժանված ենք հոգեպես, թե ֆիզիկապես, մենք երբեք չենք կարող լինել այն ժողովուրդը, որ Աստված է ծրագրում մեզ դառնալ, ոչ էլ կարող ենք երբևէ գործիք լինել Նրա ձեռքում, աշխարհին հավատացնելով, որ սուրբ Քահանայությունը վերականգվել է և որ մենք ունենք հավիտենական Ավետարանը:Որպեսզի մեզ համար գործի դրվեն Աստծո նպատակները, մենք պետք է անենք ինչպես Հիսուսն արեց՝ ենթարկելով Իր անձնական կամքը Աստծո կամքին, ոչ թե միայն մի բանում, բայց բոլոր բաներում և ապրել այնպես, որ Աստծո կամքը լինի մեր մեջ[4] [տես առաջարկ 2, էջ 235]:

Միասնությունը կարևոր է Եկեղեցում և մեր ընտանիքներում:

Մեր մեջ ավելի մեծ միասնություն պետք է լինի, քան զտնում ենք այժմ: Տասներկուսի քվորումում կատարյալ միսնություն կա: Չպե՞տք է արդյոք կատարյալ միասնություն լինի այդ քվորումում: Անկասկածորեն յուրաքանչյուրը կասեր. Այո, կատարյալ միասնություն Տասներկու Առաքյալների քվորումում: . . . Եվ Առաջին Նախագահությունում ևս կա կատարյալ միասնություն, և միթե՞ չպետք է լինի: Յուրաքանչյուրը կասի, անշուշտ պետք է լինի: Իսկ չպե՞տք է կատարյալ միասնություն լինի Յոթանասունների յոթ նախագահների միջև: Անկասկածորեն պետք է լինի, մենք բոլորս ասում ենք. Այո: Չպե՞տք է կատարյալ միասնություն լինի Սիոնի տարբեր Ցցերի Բարձրագույն Խորհուրդների միջև: Իհարկե պետք է լինի և կա մի ուղի այդ միասնությունն իրականացնելու համար: Եվ նույն կերպ, տարբեր այլ կազմակերպությունների և քվորումների միջև: Չպե՞տք է կատարյալ միասնություն լինի ցցերի նախագահությունների միջև: Իհարկե, և եթե ես ցցի նախագահ լինեի, ես չէի հանգստանա օր կամ գիշեր, մինչև ես միասնություն չունենայի իմ խորհրդականների հետ: Չպե՞տք է միասնություն լինի Եպիսկոպոսի և նրա Խորհրդականների միջև: Անկասկածորեն պետք է լինի:

Ուրեմն, ի՞նչն է ամենակարևորը: Չպե՞տք է միասնություն լինի ընտանիքում: . . . Անկասկածորեն, պետք է լինի: Իսկ ինչո՞ւ որևէ մարդ պետք է բավարարված լինի, ինչո՞ւ պետք է ընտանիքի որևէ ամուսին և հայր հանգստանա բավարարված, մինչև նա չստեղծի կատարյալ միասնություն, այսինքն՝ այնքանով որքանով կատարյալ միասնություն կարելի է իրականացնել: Եվ այս հարցում հայրը պետք է դարձնի իրեն այնքան կատարյալ, որքան մարդ կարող է այս կյանքում կատարյալ դարձվել իր ընտանիքի առջև: Եվ կինը պետք է իրեն ճիշտ այնքան կատարյալ դարձնի, որքան հնարավորինս կարող է անել դա այս կյանքում: Եվ այդ ժամանակ նրանք պատրաստ են իրենց երեխաներին դարձնել ճիշտ այնքան կատարյալ, որքան նրանք հոժար են և ունակ կատարյալ դարձվելու: Եվ հայրը, և մայրը պետք է շատ աչալուրջ լինեն: Կինը երբեք չպետք է անհարգալից խոսի իր ամուսնու մասին երեխաների առաջ: Եթե

«Չպե՞տք միասնություն լինի ընտանիքում:
. . . Անկասկածորեն պետք է լինի»:

նա կարծում է, որ իր ամուսինը սխալ է գործել (նա, գուցե և դա արել է) , նա երբեք չպետք է խոսի այդ մասին իր երեխաների մոտ: Նա պետք է դուրս տանի նրան երեխաների ներկայությունից և այնտեղ նրան ասի իր սխալները, հաճելի ձևով և երբեք երեխաների ներկայությամբ անհարգալից չխոսի հոր մասին: Եվ հայրը նույնպես: Նա իրավունք չունի անհարգալից խոսել իր կնոջ մասին իր երեխաների ներկայությամբ: Եվ ես աղոթում եմ Աստծուն տալ ամուսնուն և կնոջը այս հարցերում իրենց ուղղելու ոգին և հասկացողությունը: Ես գիտեմ, որ շատ դժվարությունների մեծ մասը, որոնք այսօր հանդիպում են և այն անհարգալից վերաբերմունքը, որ կա Քահանայության հանդեպ երիտասարդների մեջ, գալիս է այս փաստից, որ եղել են դժվարություններ ընտանեկան շրջանակներում և անհարգալից վերաբերմունք է արտահայտվել նրանց ներկայությամբ՝ հոր կողմից մոր նկատմամբ և մոր կողմից հոր նկատմամբ: Այժմ ես գիտեմ, որ այս բաները այդպես են:[5] [տես առաջարկ 3, էջ 235]:

Մենք միասնական ենք դառնում, երբ օգնում ենք միմյանց ձեռք բերել խաղաղություն և երջանկություն:

Մենք բավականաչափ խոսում ենք մեր մերձավորին ինչպես ինքներս մեզ սիրելու սկզբունքի մասին, մենք խոսում ենք այդ մասին և երբեմն մտածում դրա շուրջ, բայց որքանով ենք մտնում այս բաների ոգու մեջ և տեսնում, որ դժվարությունը գտնվում է մեր մեջ: Մենք պետք է հասկանանք, որ մենք պետք է գործենք ըստ որոշակի սկզբունքների, որոնցով մենք կարող ենք միավորվել, որ մենք դառնանք մեկ, և սա երբեք չի իրագործվի, մինչև որոշակի բաներ չարվեն, և բաներ, որոնք մեր կողմից պահանջում են ճիգեր:

Ինչպե՞ս կգնաք աշխատելու միավորվելով միմյանց հետ: Ինչպե՞ս մարդ կարող է գնալ աշխատելու միավորվելով իր մերձավորի հետ: Եթե երկու մարդու զուգակցեն, ովքեր երբեք ծանոթ չեն եղել միմյանց, ինչպես կգնան աշխատելու՝ ձեռք բերելով միմյանց ընկերությունը, կապվածություն և նվիրվածություն միմյանց հանդեպ: Ինչո՞ւ ինչ որ բան պիտի արվի և դա ոչ միայն մեկի կողմից, այլ պետք արվի ինչպես մեկի այնպես էլ մյուսի կողմից: Պատշաճ չի լինի մեկի համար աշխատանքն անել մենակ, պատշաճ չի լինի մեկի համար պատասխանել այդ զգացմունքներին և ինքնուրույն կատարել աշխատանքը, բայց որպեսզի դառնան մեկ իրենց զգացումներով և նվիրվածությամբ, անհրաժեշտ կլինեն երկուսի գործողություններն էլ: . . .

. . . Ինչ որ բան պիտի արվի [յուրաքանչյուրի] կողմից, որպեսզի ապահովվի միմյանց ընկերությունը և կապի մեզ միմյանց՝ որպես համայնք: . . .

. . . Թող ձեր մտքերն ընդլայնվեն՝ ըմբռնելու և հոգ տանելու ձեր ընկերների շահերը, որոնք ձեր շրջապատում են, և երբ ձեր ուժերի սահմանում է ապահովել ձեր ընկերների շահերը, արեք դա և այդ անելով, դուք կգտնեք, որ այն բաները, որոնք դուք կարիք ունեք, ձեր ձեռքն ավելի շուտ կգան, քան եթե դուք աշխատեիք ամբողջապես ապահովել դրանք ձեզ համար, անկախ ձեր ընկերների շահերի մասին մտածելու: Ես գիտեմ, սա լավ և կարևոր սկզբունք է: . . .

. . . Մենք պետք է իմանանք, որ մեր գործն է սովորել ապահովել նրանց խաղաղությունն ու երջանկությունը, ովքեր մեր

շրջապատում են և երբեք չընտրել մեր մերձավորների զգացմունքներն ու իրավունքները ոտնատակ տալու ուղին: Թող մի մարդ գնա և ոտնատակ տա մի եղբոր իրավունքները և որքան ժամանակ կպահանջվի նրանից կործանել վստահության այդ զգացումը, որը մինչև այդ գոյություն էր ունեցել նրանց միջև: Եվ եթե դա մի անգամ կործանվի, որքան երկար կտևի հաստատել այդ զգացումը, որը մի ժամանակ գոյություն էր ունեցել նրանց միջև: Դա մեծ ժամանակ կպահանջի: Սա այն է, ինչ մենք պետք է աչքի առաջ ունենանք, ես այդպես եմ զգում, մեր բոլոր մտածելակերպում, բոլոր մեր շարժումներում և մեր գաղտնի մտորումներում մենք ուզում ենք թույլ տալ, որ մեր միտքը խորհի ողջ շրջապատի շահերի համար և հաշվի առնենք, որ նրանք ունեն իրավունքներ և արտոնություններ, ինչպես որ մենք, սա մենք պետք է ամուր հաստատենք մեր մտքերում:

Այժմ վերցրեք մի մարդու, որը շարունակ հոգ է տանում իր շրջապատի մարդկանց շահերի մասին և ցանկանում, որ իր եղբայրներին օրհնություններ տրվեն բոլոր բաներում, և այս ձևով նա երջանկություն կհաստատի իր ներսում և իր շրջապատում: Եվ եթե մարդ վերցնի հակառակ ուղղությունը, և ուրիշների շահերի համար օրհնելու և աշխատելու փոխարեն, հանցանք գտնի ու ցած զցի, նա մի՞թե նույն բարելավումը կունենա: Իհարկե ոչ:

. . . Եթե մենք զգում ենք, որ մեր պարտքն է ավելի նպատակասլացորեն աշխատել, քան այն ինչ արել ենք վստահություն ապահովելու համար, մենք առաջ կգնանք, եթե դա մեր ուժերի սահմանում է՝ տալու աշխարհիկ օրհնություններ և շնորհներ ապահովելու նրանց ընկերությունը, ովքեր մեր շրջապատում են: Այս ձևով և ուրիշ ոչ մի ձևով մենք չենք կարող կապվել միմյանց և ցույց տալ, որ մենք ունենք բարի և եղբայրական զգացում: Մենք պետք է ցույց տանք այս զգացումը մեր գործերով . . . փոխարենը ինչ որ մեկի ձեռքը սեղմելու և ասելու Աստված օրհնի ձեզ իմ բարի ընկեր, իսկ հաջորդ օրը, առանց հաշվի առնելու թե ինչ ենք ասել նախորդ օրը, ոտնատակ անենք նրա լավագույն զգացումները:[6]

Երբ մարդ չի կամենում զոհաբերել իր եղբայրների օգտին, և երբ նա գիտի որ նա զանց է առնում իր եղբայրների

զգացմունքները, . . . այդ մարդը ճիշտ չէ Տիրոջ առաջին և որտե՞ղ է այդ անձնավորության սերն իր եղբոր հանդեպ։

Երբ մի եղբայր չի կամենում տառապել իր եղբոր համար, ինչպե՞ս նա կարող է ցույց տալ, որ նա սեր ունի իր եղբոր հանդեպ։ Ես ասում եմ ձեզ՝ դա մեր մեղքն է և թուլությունը, որ մենք չենք կամենում համբերել մեր եղբայրներին, բայց եթե նրանք զանց են առնում մեր իրավունքները, մենք անմիջապես փոխհատուցում ենք և եթե նրանք տրորում են մեր ոտնամատը, մենք անմիջապես հարձակվում ենք նրանց վրա։ . . . Երբ ես տեսնում եմ մի եղբոր, որին չարաշահել են և նա շրջվում և հարձակվում է վիրավորողի վրա, ապա ասում եմ որքան հեռու է այդ եղբայրը պարտականության ուղուց, և ես ասում եմ նրան՝ դու պետք է սովորես կառավարել ինքդ քեզ, այլապես դու երբեք չես փրկվի Աստծո արքայությունում։[7]

Ես կկարդամ որոշ հատվածներ Վարդապետություն և Ուխտեր գրքից.

Իմ աշակերտները, հին օրերում, մեղադրանք էին փնտրում մեկմեկու դեմ և միմյանց չէին ներում իրենց սրտերում. և այս չարիքի համար նրանք չարչարվեցին և դառնորեն խրատվեցին։

Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. Քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. Քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում [ՎևՈւ 64.8–9]։

Ինչպես կարդացի այստեղ, մի բան կար, որ Փրկչի աշակերտները չկատարեցին՝ նրանք հաջողության չհասան հոգու և զգացմունքների այն միասնականությունը հաստատելիս, որը նրանք պարտավոր էին անել, և Տերը նրանց խրատեց դրա համար։ Տերը պահանջում է, որ մարդիկ ներեն միմյանց, նույնիսկ յոթանասուն անգամ յոթ։ Եվ եթե նույնիսկ մյուս կողմը ներողություն չի խնդրում, մենք պետք է ներենք։ . . . Նա, ով չի ներում իր եղբորը, ինչպես մեզ ասվել է, որ նրանում մնում է ավելի մեծ մեղք, այսինքն, նա ավելի մեծ մեղսագործ է, քան այն մարդը, որը վիրավորել էր իրեն։ Տերը պահանջում է մեզանից սիրել մեր մերձավորին, ինչպես մենք ենք սիրում մեզ՝ բավականին դժվար հարց շատ դեպքերում, բայց մենք պետք է հասնենք

կատարելության այդ կետին, և մենք կհասնենք դրան[8] [տես առաջարկ 4, էջ 235]:

Երբ մենք միասնական ենք դառնում ավետարանում, մենք լույսով և խելամտությամբ աճում ենք և պատրաստվում բնակվել Աստծո ներկայությամբ:

Մենք պետք է միասնական լինենք և գործենք ինչպես Դավիթն ու Հովնաթանը որպես մեկ սիրտ ունեցող [տես 1 Սամուել ԺԸ.1] և ավելի շուտ թող մեր բազուկը կտրվի մեր մարմնից, քան վնասենք մեկս մյուսին: Ինչպիսի հզոր ժողովուրդ կլինեինք մենք, եթե մենք այդ վիճակում լինեինք, և մենք պետք է գնանք դրա միջով, որքան էլ ընկերասիրության փոքր զգացումներ մենք ունենանք գործադրելու ներկա պահին: Ես կարող եմ ուղղակի ասել, որ կգա օրը, որ մենք պիտի միասնական դառնանք այս ուղով, եթե մենք երբևէ տեսնենք Աստծո ներկայությունը: Մենք պետք է սովորենք սիրել մեր հարևաններին, ինչպես մեզ ենք սիրում: Մենք պետք է գնանք սրա միջով, որքան էլ որ հեռու լինենք դրանից ներկա պահին, սակայն անկախ դրանից մենք պետք է սովորենք այդ սկզբունքները և հաստատենք դրանք մեր սրտերում: Այժմ ես կարողանում եմ սա հստակորեն տեսնել և սա է պատճառը, թե ինչու եմ խոսում այս հարցերի շուրջ, այս ոճով, որ ես անում եմ, քանզի ես ուզում եմ սերմանել դրանք Սրբերի մեջ և ունենալ այս բաները իրենց ամենօրյա զգացմունքներում[9]:

«Ամենազորի ձայնը կանչեց մեզ խառնաշփոթության միջից, որը Բաբելոնն է, ստեղծելու միություն և հաճելի եղբայրություն, որում մենք պետք է սիրենք միմյանց, ինչպես ինքներս մեզ ենք սիրում»: Երբ մենք հեռանում ենք այս նպատակից, Աստծո Հոգին ետ է քաշվում մեզանից, այդ հեռացածության չափով: Բայց եթե մենք շարունակում ենք այն ուխտերի չափով, որոնք մենք կապել ենք, երբ ընդունեցինք Ավետարանը, լինում է համապատասխան լույսի և խելամտության աճ և լինում է հզոր նախապատրաստություն նրա համար, ինչը պիտի գա: Եվ մեր հավատարմության ու մեր կապած ուխտերին նվիրվածության շնորհիվ, հիմքը որի վրա մենք կանգնած ենք, դառնում է երկնքի սյուների նման՝ անսասան[10] [տես առաջարկ 5, էջ 235]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք Լորենզո Սնոուի փորձառությունը կապված Ներգաղթի Մշտական ֆոնդի հետ (էջեր 215–27)։ Եկեղեցում այսօր ի՞նչ հնարավորություններ կան փող կամ ապրանքներ տալու ուրիշներին օգնելու համար։ Ինչպե՞ս կարող են այս ջանքերն օգնել մեզ մեկ դառնալ։
2. Խորհեք Նախագահ Սնոուի ուսմունքերի մասին, թե ինչու է Տերն ուզում, որ մենք միասնական լինենք (էջեր 227–28)։ Ինչո՞ւ եք կարծում, որ այլ մարդիկ հավանաբար ավելի շուտ ձեռք կբերեն վկայություն Տիրոջ և Նրա վերականգնված Եկեղեցու մասին, երբ նրանք տեսնեն, որ մենք միավորված ենք։ Ինչպե՞ս կարող են նրանց զգացումները փոխվել, եթե նրանք տեսնեն, որ մենք բաժանված ենք։
3. Քննեք բաժինը, որը սկսվում է էջ 229-ի ներքևում։ Ինչպե՞ս է այս խորհուրդը վերաբերում մեր տներին։ Մտածեք, ինչ կարող եք դուք անել խրախուսելու ավելի շատ միասնականություն ձեր ընտանեկան հարաբերություններում։
4. Ինչպե՞ս կարող ենք զգալ միասնականություն մեր Սփոփող Միությունում կամ քահանայության քվորումում, նույնիսկ երբ մենք տարբեր հետաքրքրություններ և գաղափարներ ունենք (օրինակների համար տես էջեր 231–33)։ Ինչպե՞ս եք ձեր միասնությունից շահել ձեր ընտանիքում, Եկեղեցում, համայնքում։
5. Ինչո՞ւ եք կարծում, որ միմյանց նկատմամբ սերը կարող է դարձնել մեզ «հզոր ժողովուրդ»։ Ինչպե՞ս է միմյանց հանդեպ սերն ազդում մեր ապրելակերպի վրա։ Երբ դուք խորհում եք կամ քննարկում այս հարցերը, վերանայեք գլխի վերջին երկու պարբերությունները (էջեր 234)։

Սոնչվող սուրբ գրություններ. Սաղմոս ճԼԳ, Հովհաննես ԺԳ.34–35, Հռովմայեցիս ԺԲ.5, Մոսիա 18.21, 4 Նեփի 1.15–17; ՎևՈՒ 51.9, Մովսես 7.18

Օգնություն ուսուցչին.«Ավետարանի ուսուցման վերջնական, համոզիչ, դարձի բերող զորությունը դրսևորվում է, երբ ոգեշնչված ուսուցիչն ասում է. «Ես գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ, Սուրբ Հոգու հայտնություններով իմ հոգուն, որ վարդապետությունները, որոնք ես ուսուցանեցի, ճշմարիտ են» (Bruce R. McConkie, *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 43):

Հղումներ

1. Quoted in Brigham Young, Heber C. Kimball, and Willard Richards, "Important from Salt Lake City," *Millennial Star,* Apr. 15, 1850, 120; see also Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 107.
2. In *Biography and Family Record of Lorenzo Snow,* 108.
3. *Deseret News,* Jan. 14, 1857, 355.
4. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1883, 1.
5. In Conference Report, Oct. 1897, 32–33.
6. *Deseret News,* Mar. 11, 1857, 3–4; in the original source, page 3 is incorrectly labeled as page 419.
7. *Deseret News,* Jan. 14, 1857, 355.
8. In Conference Report, Apr. 1898, 61, 63.
9. *Deseret News,* Mar. 11, 1857, 4.
10. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.

Քահանայություն՝ «մարդկության ընտանիքի փրկության համար»

«Քահանայությունը, որը մենք կրում ենք, հայտնի է դարձվել մարդկության ընտանիքի փրկության համար: Մենք պետք է վառ պահենք դա մեր մտքերում»:

Լորենզո Մնոուի կյանքից

Երեց Լորենզո Մնոուն Առաքյալ կարգվեց 1849 թվականի փետրվարի 12-ին: Ութ ամիս անց նա կանչվեց՝ հիմնադրելու միսիա Իտալիայում: Մյուս եղբայրների հետ, ովքեր կանչվել էին ծառայելու, նա մեկնեց այդ միսիային՝ 1849 թվականի հոկտեմբերի 19-ին: Նա և նրա ընկերակիցները այդ երկար ճանապարհորդությունն անցան ոտքով, ձիով և նավով:

1850 թվականի հունիսին, հասնելով Իտալիա, նա և նրա ընկերակիցները պարզեցին, որ Իտալիայի մեծ քաղաքներում ժողովուրդը դեռ պատրաստ չէր ընդունելու ավետարանը: Բայց մի ժողովուրդ, որը կոչվում էր Վալդենսիաններ, գրավեց նրա ուշադրությունը և նա ոգեշնչում զգաց, աշխատելու նրանց մեջ: Վալդենսիաններն ապրել էին դարերի ընթացքում մեկուսացած Պիեդմոնտ շրջանում՝ լեռնահովիտ հենց Իտալիա-Շվեյցարիա սահմանի հարավային մասում և Իտալոիա- Ֆրանսիա սահմանի արևելյան մասում: Կազմակերպելով իրենց միությունը կրոնական բարեփոխման ցանկության պատճառով, նրանք նվիրվեցին Աստվածաշնչի ուսումասիրությանը և հետևելով Փրկչի Առաքյալների օրինակին:

Երեց Մնոուն ասել է, որ երբ նա մտածում էր ավետարանը Վալդենսիանների մոտ քարոզելու մասին «թվաց թե լույսի մի

Իտալիայի Պիեդիմոնթ շրջանի մի ժամանակակից լուսանկար, որտեղ Երեց Լորենզո Սնոուն ծառայել է որպես միսիոներ 1850-ական թվականների սկզբին:

հեղեղ հորդեց մտքումս»:[1] Բայց չնայած այս հավաստիացումներին, նա զգում էր, որ իմաստուն չէր անմիջապես սկսել ակտիվ միսիոներական աշխատանք, որովհետև Եկեղեցու թշնամիները բաժանել էին հրատարակություններ ժողովրդի մեջ, տարածելով ստեր Եկեղեցու մասին:[2] Երեց Սնոուն հաղորդել է. «Երբ ես զգացի, որ Հոգու մտադրությունն էր, որ մենք սկսեինք սկզբում դանդաղ և զգուշավոր քայլերով, ես ենթարկվեցի երկնքի կամքին»:[3]

Չնայած միսիոներները անմիջապես չսկսեցին քարոզել, Երեց Սնոուն հոգ տարավ իտալերեն և ֆրանսերեն գրքույկների հրատարակման մասին: Բացի այդ, նա և նրա ընկերակիցները, ընկերացան շրջապատի մարդկանց հետ: «Մենք ջանք գործադրեցինք հիմք դնել ապագայում այն օգտակար դարձնելու նպատակով,- ասել է նա,- լուռ նախապատրաստելով մարդկանց միտքը Ավետարանի ընդունման համար, ընկերական զգացմունքներ զարգացնելով նրանց սրտերում, որոնցով շրջապատված էինք մենք: Այնուամենայնիվ, ես բավականին անսովոր էի զգում և համբերությունս կարծես փորձվում էր, շաբաթներ և ամիսներ լինել հետաքրքիր մի ժողովրդի մեջ, առանց ակտիվորեն և հասարակայնորեն զբաղվելու այն մեծ սկզբունքների հաղորդմամբ, որոնք ես եկել էի քարոզելու»:[4]

Եկեղեցու վերաբերյալ Վալդենսիանների զգացումները սկսեցին բավականին փոխվել, հետո, երբ Երեց Սնոուն քահանայության օրհնություն տվեց մի տղայի, որը շատ հիվանդ էր: Երեց Սնոուն իր օրագրում գրել է հետևյալը.

«Սեպտ.6.— Այս առավոտ իմ ուշադրությունն ուղղվեց դեպի Ջոզեֆ Գայը՝ երեք տարեկան մի տղա, մեր տանտիրոջ ամենափոքր երեխան: Շատ ընկերներ եկել էին տեսնելու երեխային, քանի որ բոլոր մարդկանց թվում էր, նրա վերջը մոտ էր: Ես գնացի նրան տեսնելու կեսօրին՝ մահը ավերում էր նրա մարմինը, նրա նախկին առողջ կառուցվածքից մնացել էր կմախքը և միայն մոտիկից զննելով մենք կարողացանք նկատել, որ նա ողջ էր»:

Անհանգստացած ավետարանը քարոզելու ընդդիմությունից և մտահոգված փոքրիկ Ջոզեֆ Գայի համար, Երեց Սնոուն այդ երեկոյան դիմեց Տիրոջն օգնության համար: Նա ավելի ուշ վերհիշում է. «Հանգստի գնալուց մի քանի ժամ առաջ, ես կանչեցի

առ Տերը՝ մեզ աջակցելու այս անգամ: Իմ զգացումները այս առիթով, հեշտորեն չեն ջնջվի հիշողությունից:

«Մեպտ. 7: — Այս առավոտ ես առաջարկեցի . . . որ պետք է ծոմ պահեինք և հեռանայինք դեպի լեռները և աղոթեինք: Երբ մենք մեկնում էինք, այցելեցինք և տեսանք երեխային՝ աչքերը վերև էին շրջված, կոպերը փոս ընկած ու փակված, նրա դեմքն ու ականջները նիհարել էին և ստացել էին գունատ մարմարի գույն, որը ցույց էր տալիս, որ նա շուտով մահանալու էր: Մահվան սառը քրտինքը պատել էր նրա մարմինը և կյանքը գրեթե սպառվել էր: Տիկին Գայը և մյուս կանայք հեկեկում էին, մինչ Պարոն Գայը կախել էր գլուխը»: Շշնջալով Երեց Մնոուին և մյուս միսիոներներին, Պարոն Գայն ասաց. «Նա մահանում է: Նա մահանում է:»

Երեց Մնոուն շարունակում է. «Լեռներում մի քիչ հանգստանալուց հետո, հեռու որևէ խանգարող հանգամանքներից, մենք այնտեղ կանչեցինք առ Տերը հանդիսավոր աղոթքով, որ նա խնայեր երեխայի կյանքը: Երբ ես մտածեցի այն ուղղության վերաբերյալ, որին մենք պատրաստվում էինք հետևել և այն պահանջները, որոնք մենք շուտով ներկայացնելու էինք աշխարհին, ես այս հանգամանքը համարում էի խիստ կարևորներից մեկը: Ես չգիտեի մի զոհաբերություն, որ ես չկարողանայի անել, որը ես հոժար չլինեի կատարել, որպեսզի Տերը մեր խնդրանքները շնորհեր»:

Երբ նրանք վերադարձան Գայերի ընտանիք այդ կեսօրին, Երեց Մնոուն Ջոզեֆին քահանայության օրհնություն տվեց: Նրանք գնացին տեսնելու ընտանիքին մի քանի ժամ անց և Ջոզեֆի հայրը «շնորհակալական ժպիտով» ասաց նրանց, որ տղան շատ ավելի լավ էր:

«Մեպտ.8. Երեխան այնքան լավ էր, որ ծնողները կարողացան թույլ տալ իրենց հանգստանալ, որը նրանք չէին արել նախորդ օրերի ընթացքում: Այսօր նրանք կարողացան թողնել նրան և զբաղվել իրենց գործով»: Երբ Ջոզեֆի մայրն արտահայտեց իր ուրախությունը տղայի ապաքինման առթիվ, Երեց Մնոուն պատասխանեց. «Երկնքի Աստվածն արեց սա ձեզ համար»:

«Այդ ժամից նա սկսվեց լավանալ,- հիշում էր Երեց Մնոուն,- և երախտագիտությամբ լցված սրտով մեր Երկնային Հոր

հանդեպ, ես երջանիկ եմ ասել, որ մի քանի օրից նա թողեց իր անկողինը և միացավ իր փոքրիկ ընկերակիցներին»:[5]

Այս փորձառությունից հետո, Երեց Սնոուն զգաց, որ հանգամանքները «այնքան նպաստավոր էին, ինչպես կարելի էր սպասել» ժողովրդի մեջ Տիրոջ աշխատանքն առաջ տանելու համար: 1850 թվականի սեպտեմբերի 19-ին՝ ուղիղ 11 ամիս հետո այն ժամանակից, ինչ նա թողել էր տունը ծառայելու Իտալիայում, նա ասաց իր ընկերկիցներին, որ նրանք պետք է «սկսեն [իրենց] հասարակական գործունեությունը»: Նրանք կրկին բարձրացան մի լեռ, որտեղ Երեց Սնոուն նվիրագործեց երկիրը, վերականգված ավետարանի քարոզման համար:[6]

Երեց Սնոուի խոսքերը Տիկին Գային՝ «Երկնքի Աստվածն արեց դա ձեզ համար», արտացոլում են իր ողջ կյանքի ընթացքում քահանայության մասին ուսմունքները: Նա հիշեցնում էր Սրբերին, որ քահանայություն կրողների աշխատանքով «Աստծո փառքն ու զորությունն է ցույց տրվում» ի օգուտ ուրիշների[7] [տես առաջարկ 1, էջ 248]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Քահանայություն կրողները Ամենազորի սուրհանդակներն են, երկնքից լիազորված իշխանությամբ՝ սպասավորելու սուրբ արարողությունները:

Մենք՝ Վերջին Օրերի Սրբերս, պնդում ենք, որ Աստծուց ստացել ենք հավիտենական ավետարանի լրիվությունը, մենք պնդում ենք, որ ունենք սուրբ Քահանայությունը՝ Աստծո լիազորած իշխանությունը մարդուն, որը մեզ իրավունք է տվել սպասավորելու դրա արարողությունները, որոնք ընդունելի են նրա համար:[8]

Ամեն մարդ, ով կխոնարհեցնի իրեն Աստծո առջև և ապաշխարությունից հետո մեղքերի թողության համար կընկղմվի ջրում, ձեռնադրման միջոցով կընդունի Սուրբ Հոգին: Արդյոք ես այն կարո՞ղ եմ տալ նրան: Ոչ, ես ուղղակի որպես Ամենազորի սուրհանդակ, որին լիազորված է եղել իշխանություն, սպասավորում եմ ընկղմում՝ մեղքերի թողության համար, ես ուղղակի ընկղմում եմ նրան ջրում, ունենալով այդ անելու իշխանություն:

Բոլոր Եկեղեցու հավատարիմ անդամներն օրհնվում են քահանայության արարողությունների և ուխտերի միջոցով։

Ես պարզապես դնում եմ ձեռքերս նրա վրա Սուրբ Հոգին ստանալու համար, ապա Աստված իր ներկայությունից, ընդունում է իմ իշխանությունը, ընդունում է, որ ես նրա սուրհանդակն եմ և շնորհում է Սուրբ Հոգին այդ անձնավորությանը :[9]

Երբ [ես] մկրտել եմ մարդկանց և սպասավորել այս սուրբ քահանայության արարողությունները, Աստված հաստատել է այդ սպասավորումները, ուղարկելով Սուրբ Հոգին, տալով գիտելիք մարդկանց, ում ես սպասավորել եմ, համոզելով նրանց, որ իշխանությունը լիազորված էր երկնքից։ Եվ յուրաքանչյուր Երեց, ով գնում է քարոզելու այս հավիտենական Ավետարանը և գործում է իր կոչման ոգով, կարող է բերել նույն վկայությունը , որ այդ սուրբ արարողությունների իրենց սպասավորումների ընթացքում, Աստծո փառքն ու զորությունը դրսևորվել է համոզեցուցիչ կերպով, նրանց գլուխների վրա, ում նրանք սպասավորել են։ Սա մեր վկայությունն է, սա որոշակի անձնավորության վկայությունն էր [1830 թվականին], ով

առաջ կանգնեց և հայտարարեց իր իրավունքը, որ Աստված լիազորել էր իրեն մկրտելու մարդկանց մեղքերի թողության համար և ձեռնադրելու նրանց Սուրբ Հոգին ընդունելու համար, որը նրանց գիտելիք կտար հավերժական աշխարհներից, որ նա ուներ այս իշխանությունը: Այդ անձնավորությունը Ջոզեֆ Սմիթն էր և նա շնորհեց այս իշխանությունը, որը տրվեց նրան սուրբ հրեշտակների կողմից, ուրիշների վրա, ովքեր առաջ էին ուղարկվել բերելու վկայություն աշխարհին, որ նրանք ովքեր ստանան այդ սուրբ արարողությունները, պետք է ստանային վկայություն Ամենազորից, որ իրենք այդպես էին լիազորված՝ այսպես սպասավորելու: Եվ սա է մեր վկայությունը և սա է իմ վկայությունն այս ժողովրդի առաջև և աշխարհի առջև:[10]

Որտե՞ղ ողջ աշխարհում կարող եք գտնել որևէ սպասավորների մի խումբ, ովքեր կհամարձակվեն հանձն առնել այն պաշտոնը, որոնք մեր Երեցներն են կատարում: Ո՞ւր է այն մարդը կամ մարդկանց խումբը, ում կարելի է գտնել, ովքեր կհամարձակվեն ներկայացնել իրենց աշխարհի առջև և ասել, որ նրանք լիազորված են Աստծո կողմից սպասավորելու որոշակի արարողություններ մարդկանց, որոնց միջոցով նրանք կարող են ստանալ հայտնություն՝ Աստծուց: Որևէ մեկը, ով հայտարարեր այսպիսի վարդապետություն շուտով կպարզվեր, թե նա ինքնակոչ էր թե ոչ, նա կդներ իրեն շատ վտանգավոր վիճակում և շուտով կհայտնաբերվեր, եթե նա այդպիսի լիազորություն չէր կրում: Մեր Երեցները, այնուամենայնիվ, համարձակվում են հանձն առնել այս պաշտոնը: . . . Աստված ուղարկել է իր սուրբ հրեշտակներին երկնքից և մարդկանց համար վերականգնել լիազորություն՝ սպասավորելու ավետարանի արարողությունները[11] [տես առաջարկ 2, էջ 248]:

Քահանայությունն օգնում է մեզ երջանկություն գտնել այս կյանքում և ողջ հավերժության ընթացքում:

Քահանայությունը վերականգվել է, այն շնորհվել է մարդուն, որպեսզի այդ միջոցով, բոլոր նրանք, ովքեր կկամենան լինել բարի և երջանիկ, ունենան արտոնություն: Ավետարանն ասում է մեզ ինչպես լինել մեծահոգի, բարի և երջանիկ: Քրիստոսի ավետարանի հոգին ուսուցանում է բոլոր բաները, որոնք անհրաժեշտ են մեր ներկա և ապագա բարօրության համար:

Մենք այս նպատակներն ունենք մեր տեսադաշտում և մենք անընդհատ պետք է մեր առջևում պահենք դրանք: Եթե նայեք քսանհինգ տարի, կամ եթե նայեք ընդամենը տասը տարի և շատերն են եղել եկեղեցու այդ ժամանակաշրջանում, և տեսեք թե ինչ է իրագործվել: Մենք ավելի հեռուն ենք տեսնում և ավելի լավ ենք հասկանում շատ բաներ, ուստի մենք ավելի լավ ենք նախապատրաստված այն բաների համար, որոնք գալիս են երկրի վրա, քան՝ մենք տասը, տասնհինգ, քսան կամ քսանհինգ տարի առաջ էինք՝ գիտենալով, թե ինչպես օգտակար լինել, գիտենալով ինչպես անել բաներ, երբ դրանք պետք է արվեն: . . .

. . . Քահանայության նպատակն է բոլոր [մարդկանց] երջանիկ դարձնել, տարածել տեղեկություն, իրենց հերթին բոլորին դարձնել ճաշակողներ նույն օրհնությունների:[12]

Հենց այս նպատակի համար է Սուրբ Քահանայությունը շնորհվել մեր այս օրերում, առաջնորդելու և կատարելագործելու Աստծո սրբերին այստեղ և ճիշտ նույնքան, ինչպես ձեռք են բերել խելամտություն այս աշխարհում և նվիրվածություն ու հավատարմություն . . . , այնպես էլ կլինի վեհացած վիճակում, որում մենք կհայտնվենք վարագույրի ետևում:[13]

Տերն ասել է, որ Նա կտա մեզ այն բոլորը, ինչ Նա ունի, և սա՝ ըստ այն երդման և ուխտի, որը պատկանում է Քահանայությանը [տես ՎԵՈՒ 84.33–44]: Ոչ ոք չպիտի կասկածի նրան, ինչ Հիսուսն է ասել, և Նա հայտարարել է, ինչպես արձանագրված է Սրբ.Հովհաննեսի Հայտնությունում. «Ով որ յաղթում է, կտամ նորան, որ ինձ հետ նստի իմ աթոռի վերայ, ինչպէս ես էլ յաղթեցի եւ նստեցի իմ Հօր հետ նորա աթոռի վերայ»: [Հայտնություն Գ.21]: Կարո՞ղ է որևէ ավելի մեծ բան ասվել քան այդ: Մի՞թե դա չի ընդգրկում ամեն ինչ:[14]

Այս ավետարանը, որ մենք ստացել ենք, հայտնի է դարձվել երկնքից, իսկ քահանայությունը, որ մենք կրում ենք, հայտնի է դարձվել մարդկության ընտանիքի փրկության համար: Մենք պետք է մեր մտքում վառ պահենք այդ:[15] [տես առաջարկ 3, էջ 248]:

Հնադարյան մարգարեներ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայություն Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին:

Քահանայության արդար կրողները ջանասիրաբար և եռանդուն ձգտում են հոգևոր պարգևների՝ օգնելու դրանք ուրիշներին ծառայեցնելու համար:

Իմ Քահանայության եղբայրներին ես կկամենայի մի քանի խորհրդի, հրահանգի և հորդորանքի խոսքեր առաջարկել: Ձեր վրա են դրված բարձր և սրբազան պարտականություններ, որոնք կապված են ոչ միայն այս սերնդի փրկության հետ, այլ անցյալի շատ սերունդների և շատ եկող սերուդների հետ: Էմանուելի թագավորության փառահեղ դրոշը, որը մեկ անգամ ևս հաստատվել է աշխարհում, պետք է ծածանվի յուրաքանչյուր ազգում, թագավորությունում և կայսրությունում, նախազգուշացման ձայնը . . . պետք է սլանա բոլոր մարդկանց, դուք նրանք եք, ում Տերն ընտրել է այս նպատակի համար, այսինքն Հովսեփի եղջյուրը՝ հրելով ի մի ժողովելու մարդկանց [տես Երկրորդ Օրինաց ԼԳ.13–17]: Անշուշտ դուք չեք կարող խիստ

անհանգստանալով, ոչ էլ խիստ ջանասիրաբար ներգրավված լինելով, չձգտել թե ինչպես լավագույնս, ամենաօգտակար ձևով մեծարեք ձեր սուրբ և նվիրական պաշտոնները՝ ձեզ համար և մարդկության համար։[16]

Այս Եկեղեցում կան մարդիկ, ովքեր նույնքան հիանալի են իրենց սրտերում և զգացմունքներում, որքան մարդիկ երբևէ եղել են, բայց զուրկ են հավատքից և եռանդից և ձեռք չեն բերում իրականում այն, ինչն իրենց արտոնությունն էր ստանալ։ Եթե նրանց հավատքը, նրանց եռանդը և վճռականությունը հավասար լինեին նրանց բարի զգացումներին և ցանկություններին, նրանց ազնվությանն ու բարությանը, նրանք իսկապես հզոր մարդիկ կլինեին Իսրայելում, և տկարությունն ու հիվանդությունը և այն չար մեկի զորությունը կփախչեր նրանց առջևից, ինչպես հարդը քամու առաջից։ Այնուամենայնիվ, մենք ասում ենք, որ լավ ժողովուրդ ենք և մենք ոչ միայն հավասար ենք պահում մեզ ուրիշների հետ այլ մեծ հաջողություններ ունենում արդարակեցության մեջ Աստծո առջև և կասկած չկա, որ մենք լավ ժողովուրդ ենք։ Բայց ես ուզում եմ շեշտել ձեզ համար, իմ եղբայրներ և քույրեր, որ կան մեր շարքերում հոգևոր պարգևներով օժտված Երեցներ, որոնց կարելի է գործի մեջ դնել Սուրբ Հոգու օգնության միջոցով։ Ավետարանի պարգևները պետք է զարգացվեն ջանասիրությամբ և հետևողականությամբ։ Հնադարյան Մարգարեները, երբ ցանկանում էին ինչ որ հատուկ օրհնություն կամ կարևոր գիտելիք, հայտնություն կամ տեսիլք, երբեմն ծոմ էին պահում և աղոթում օրերով և նույնիսկ շաբաթներով՝ այդ նպատակի համար։[17]

Իմ երիտասարդ եղբայրներ, երբ գործերը ձեզ հակառակ են գնում, երբ ամեն ինչ սև է երևում, կատարեք ձեր պարտականությունը և դուք կդառնաք ուժեղ մարդիկ, հզոր մարդիկ, հիվանդները կբժշկվեն ձեր ծառայությունների միջոցով, դևերը կփախչեն ձեզանից, մահացածները կբարձրանան և այն ամենը ինչ, որ երբևէ արվել է մարդու կողմից Ադամի օրերից սկսած, դուք կկարողանաք անել Աստծո զորությամբ և համապատասխան նպատակասլացության միջոցով։[18]

Մաքրությանը, առաքինությանը, հավատարմությանը, բարեպաշտությանը պետք է ձգտել նպատակասլացությամբ, այլապես թագը հնարավոր չի լինի շահել։ Այդ սկզբունքները պետք է

միախառնվեն մեր ներսում, միահյուսվեն մեր էությանը, դառնալով մեր մի մասնիկը, դարձնելով մեզ կենտրոն, ճշմարտության, ազնվության, արդարության և ողորմածության աղբյուր, այն ամենի, ինչ բարի է ու հրաշալի, որպեսզի մեզանից հորդի լույս, կյանք, զորություն և ուղղորդող օրենք, կառավարելու և աջակցելու մոլորյալ աշխարհի փրկությանը, գործելով որպես Աստծո որդիներ՝ հանուն մեր Երկնային Հոր և անունով [Նրա]: Մենք սպասում ենք հարությանը գործի դնելու մեր քահանայության զորությունները —մենք կարող ենք գործադրել դրանք միայն այնքանով որքանով ապահովել ենք դրա արդարությունը և արժանիքները, այս որակավորումներին կարելի է միայն հասնել, երբ դրանց ձգտում են և ձեռք բերում, որպեսզի հարության առավոտյան մենք ունենանք այդ ձեռքբերումները միայն, որոնք մենք ապահովել ենք այս աշխարհում: Բարեպաշտությունը չի կարող *տրվել*, այլ պետք է *ձեռք բերվի*, մի փաստ, որին կրոնական աշխարհը թվում է տարօրինակորեն և ողբալիորեն անտեղյակ: Ձգտեք օգտակար լինել ուրիշներին և ուրիշներն էլ օգտակար կլինեն ձեզ և նա, ով կլինի մեծ, թող նա լինի բարի, ուսումնասիրելով բոլորի հետաքրքրությունները, դառնալով բոլորի ծառան:[19]

Որպես Աստծո Սրբեր, Իսրայելի Երեցներ, մենք պետք է հոժար լինենք ժամանակ և աշխատանք հատկացնել, կատարելով ամեն մի անհրաժեշտ զոհաբերություն, որպեսզի ձեռք բերենք համապատասխան հոգևոր որակավորումները, որպեսզի բարձր ձևով օգտակար լինենք մեր մի քանի կոչումներում: Եվ թող Տերը ոգեշնչի ամեն սիրտ այս հարցերի կարևորությամբ, որպեսզի մենք ջանասիրաբար և եռանդագին ձգտենք Ավետարանում խոստացված այն պարգևներին և զորություններին, որոնց մենք հնազանդվել ենք[20] [տես առաջարկ 4, էջ 248]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Վերանայեք 237–40 էջերում գտնվող պատմությունը: Ինչպե՞ս կարող են Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները պատրաստվել քահանայության օրհնություններ տալուն: Ի՞նչ կարող ենք մենք բոլորս անել՝ նախապատրաստվելու քահանայության օրհնություններ ստանալուն:
2. Կարդացեք 242 էջի ներքևում գտնվող պարբերությունը: Ինչպե՞ս են քահանայության արարողությունները ցույց տալիս Աստծո զորությունը մեր կյանքում:
3. Ինչպե՞ս են քահանայության արարողություններն ու օրհնություններն օգնում մեզ բոլորին գտնել երջանկություն այս կյանքում: Ինչպե՞ս են դրանք օգնում մեզ ապահովել հավերժական երջանկություն: Այս հարցերի հետ կապված, խորհեք Նախագահ Մնոուի ուսմունքները, էջ 244:
4. 245–47 էջերում քննարկեք այն հոգևոր պարգևները, որոնք Նախագահ Մնոուն հորդորեց քահանայություն կրողներին զարգացնել: Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում զարգացնել հոգևոր պարգև: Ինչպե՞ս է այս խորհուրդը կապված Եկեղեցու բոլոր անդամների ջանքերի հետ:

Առնչվող սուրբ գրություններ. Հակոբոս Ե.14–15, Ալմա 13.2–16, ՎևՈՒ 84.19–22, 128.8–14, Հավատո Հանգանակ 1.3, 5

Օգնություն ուսուցչին. «Օգնելու համար սովորողներին նախապատրաստվել հարցերին, կարող եք նախքան ինչ որ բան կարդալը կամ ներկայացնելը ասել նրանց, որ դուք նրանցից պատասխաններ եք պահանջելու:. . . Օրինակ՝ դուք կարող եք ասել. «Լսեք, երբ կարդամ այս հատվածը, որպեսզի դուք կարողանաք կիսվել, թե ինչն է ձեզ ամենաշատը հետաքրքրում սրա վերաբերյալ, կամ՝ «Երբ կարդաք այս սուրբ գրությունը, տեսեք թե կարողանում եք հասկանալ, ինչ է ասում Տերը մեզ հավատքի մասին» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 69):

Հղումներ

1. Տես letter to Brigham Young, in *The Italian Mission* (1851), 11:
2. Տես "Organization of the Church in Italy," *Millennial Star,* Dec. 15, 1850, 371:
3. Letter to Brigham Young, in *The Italian Mission,* 14.
4. Letter to Brigham Young, in *The Italian Mission,* 14.

5. Quoted in "Organization of the Church in Italy," 371.
6. Stu letter to Brigham Young, in *The Italian Mission,* 15:
7. In Conference Report, Apr. 1880, 81.
8. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1877, 1.
9. *Deseret News,* Jan. 24, 1872, 598.
10. In Conference Report, Apr. 1880, 81–82.
11. *Deseret News: Semi-Weekly,* Dec. 2, 1879, 1.
12. *Deseret News,* May 15, 1861, 81–82.
13. *Deseret Evening News,* Oct. 6, 1880, 2; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered at the October 1880 general conference.
14. "The Object of This Probation," *Deseret Semi-Weekly News,* May 4, 1894, 7.
15. In Journal History, July 11, 1865, 2.
16. "Address to the Saints in Great Britain," *Millennial Star,* Dec. 1, 1851, 362.
17. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.
18. In "Anniversary Exercises," *Deseret Evening News,* Apr. 7, 1899, 9.
19. "Address to the Saints in Great Britain," 362–63.
20. *Deseret News: Semi-Weekly,* Aug. 15, 1882, 1.

Faithful Church leaders follow the Lord's admonition to Peter: "Feed my sheep" (John 21:16–17).

Եկեղեցու կառավարում և անձնազոհ ծառայություն

«Մենք քո ծառաներն ենք Տերում և ցանկանում ենք քո բարօրությունը և ողջ մարդկության բարօրությունը»:

Լորենզո Սնոուի կյանքից

1840 թվականի հոկտեմբերից մինչև հունվար Լորենզո Սնոուն նախագահեց Եկեղեցում՝ Լոնդոնում, Անգլիա, և շրջակա տարածքում: Նա այնտեղ վերահսկում էր քահանայության առաջնորդներին, երբեմն նրանց անհատապես ուսուցանելով, և երբեմն էլ գրելով նամակներ, առաջարկելով խորհուրդ: Անգլիայում, իր միսիայի ավարտից ոչ շատ առաջ, նա գրեց երկու «Լոնդոնի Ճյուղերի Նախագահող Երեցների», ովքեր այժմվա ճյուղի նախագահներին շատ նման էին ծառայում: Այս նամակում նա պատմեց մի փորձառության մասին, որն ունեցել էր այդ տարածքում մեկ այլ ճյուղի նախագահի հետ:

Երեց Սնուն նկարագրել է այդ ղեկավարին որպես «արտաքուստ հանցանքներ չունեցող»: Մարդը «նպատակասլաց էր գործն առաջ տանելիս» և ուներ ունակություն հավաստիացնելու, որ «ամեն մեկն իր տեղում էր և կատարում էր պարտականությունը»: Նա ջանասեր էր, «գործում անձնապես ավելի ջանասիրաբար աշխատելով, քան նրանք բոլորը: Բայց չնայած այս մարդու հավատարմության արտաքին երևույթին, ճյուղն անընդհատ խնդիր էր ունենում, որը թվում էր կենտրոնանում էր նրա վրա: Երեց Սնուն փորձում էր որոշ ժամանակ գտնել խնդիրների աղբյուրը, և նա մեղմորեն նախատեց ճյուղի անդամներին, իրենց ղեկավարին չաջակցելու համար: Հետո նա սկսեց մտածել, որ գուցե այդ ղեկավարը «հավանաբար ուներ ինչ որ գաղտնիք, ներքին գործող ոգի, որին նա տեղյակ չէր,

որը բացահայտ չէր դրսևորում իրեն», բայց, որը երբեմն տանում էր դեպի դժվարություններ ճյուղում: Երեց Սնոուն հիշում է.

«Ես աղոթեցի այդ առթիվ, որ Տերն ինձ տար խորաթափանցության պարգևը այս դեպքի առնչությամբ: Իմ աղոթքը պատասխանվեց, ես պարզեցի, որ այդ եղբայրն ուներ ինչ որ քողարկված, ծածուկ մեծամտության ոգի, որն առաջնորդում էր նրան իր արարքներից շատերում: Նա ուղարկում էր որևէ եղբոր հանձնարարություն կատարելու, բայց ուներ խլացված ցանկություն դրա պատիվն իրեն վերցնել, եթե եղբայրը չէր գալիս ճիշտ ժամանակին, նա խրատում էր հանցավորին, ոչ թե այն պատճառով, որ Տիրոջ աշխատանքն էր ինչ որ ձևով տուժվել, կամ՝ այդ եղբայրն էր կորցրել օրհնությունը, այլ որովհետև նա [ինքն] էր արհամարհվել չհնազանդվելով: Այն դեպքում, երբ մի քանիսը մկրտվեցին մի եղբոր կողմից, նրա սիրտը ցնծում էր ոչ այնքան այն պատճառով, որ մարդիկ բերվեցին ուխտի, այլ այն պատճառով, որ դա արվել էր իր ղեկավարության ներքո, գաղտնիորեն ցանկանալով, որ իր պատասխանատվության տակ գտնվող որևէ մեկը, մեծ պատվի չարժանանար, մինչև իր սեփական անունը, չկապվեր դրա հետ:

Երեց Սնոուն նկատեց, որ երբ ճյուղի որևէ անդամ հաջողության էր հասնում որևէ հանձնարարությունում, բայց չէր հետևում ղեկավարի խորհրդին ամենայն մանրամասնությամբ, ղեկավարն ունենում էր «նախանձության ոգի . . . այն թաքցնելով խոսքով հավանություն տալով,- շարունակում է նա,- Այս ոգին թաքնված էր, դրա պտուղները բացահայտորեն չէին երևում, բայց ակնհայտ կդառնար, եթե չուղղվեր, դա ներսից գործող չարիք էր, որն ի վերջո կկործաներ նրա օգտակարությունը: Դա բերում էր նրա վրա անտեղի անհանգստություն իր պատասխանատվության տակ գտնվող գործերը վարելիս, այն նմանապես առաջացնում էր նրա սեփական մտքում անընդհատ տհաճություններ: Զգտելով առաջ տանել Աստծո գործը, բայց միշտ այնպիսի ձևով, որ իր սեփական ձեռքը հստակորեն նկատելի լինի բոլոր բաներում: Նպատակասլաց էր լավ հրահանգներ տալիս, բայց ուշադիր՝ ամբողջությամբ,վերևից ներքև՝ դնելու իր ողջ անունը :»

Երեց Սնոուն չգրեց այս նամակը դատապարտելու տեղի ղեկավարին: Գրելու նրա նպատակն էր օգնել մյուս

ղեկավարներին, որ այն հպարտության ոգին, որ նա էր նկարագրում «կարողանային տեսնել, ճանաչել և խուսափել» իրենց շարքերում: Նա նախազգուշացրեց, որ շատ մարդիկ «ովքեր անկեղծորեն հավատում են, որ զերծ են մեծամտության այս ոգուց, մոտիկից քննելով իրենց դրդապատճառները, որոնք ոգեշնչում են նրանց իրենց վարքում, հայտնաբերում են ի զարմանս իրենց, որ այս ոգին էր ստիպում նրանց առաջ գնալ, կատարելով իրենց արարքներից շատերը»:

Այս նախազգուշացմամբ կիսվելուց հետո, նա խորհուրդ է տվել. «Որպեսզի դառնանք այնպիսին ինչպիսին Աստված կուզեր, որ մենք լինեինք, մենք պետք է վարժեցնենք մեր միտքը ուրախանալու՝ տեսնելով ուրիշների բարգավաճումը, ինչպես՝ ինքներս մեզ համար, ուրախանալու՝ տեսնելով Սիոնի գործը փառաբանված, ում ձեռքերով էլ Ճակատագիրը պատվիրի, և մեր սրտերը փակենք, որ նախանձությունը մուտք չգործի, երբ մի ավելի թույլ գործիք, քան մենք, կոչվում է ավելի մեծ պատվի, գոհ եղեք ավելի փոքր պաշտոնը մեծարելով, մինչև ավելի բարձրին կանչվելը, բավարարված եղեք՝ անելով փոքր բաներ և մի պահանջեք մեծ բաներ անելու պատիվը: Նա համեմատել է Եկեղեցին մեծ շենքի հետ, անհատ Սրբերն էլ, որպես այդ շենքի մասեր, ասելով, որ մենք պետք է «երբեք խիստ հպարտ չլինենք՝ երբեմն կտրվելու, քառակուսի դարձվելու, քանդակվելու և սղոցվելու, որպեսզի համապատասխանեցվենք այն տեղին, որը մենք պետք է զբաղեցնենք հոգևոր կառուցվածքում»:

Երեց Սնոուն ավարտում է նամակը այս խոսքերով. «Եթե միայն մի նախազահող երեց ձգտի դառնալ ինչպիսին կարող է և պարտավոր է լինել, ազատվելով եսասիրական սկզբունքներից և միշտ գործի իր ժողովրդի բարիքի համար և լինի խոնարհ և չձգտի խիստ շատ բան անել քիչ ժամանակում, կամ լինի խիստ մեծ նախքան աճելը, նա երբեք շփոթության մեջ չի ընկնի, թե ինչպես պատշաճորեն մեծարի իր պաշտոնը, ոչ էլ երբևէ Աստծո զորության պակասություն կունենա՝ իրականացնելու Նրա իմաստուն նպատակները»[1] [տես առաջարկ 1, էջ 258]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Տերը Իր Եկեղեցուն աստվածային հանձնարարություն է տվել.«Արածեցրեք իմ ոչխարներին»:

Թող ամեն մարդ, ով կանգնած է պաշտոնական տեղում, ում վրա Աստված շնորհել է իր սուրբ և աստվածային քահանայությունը, մտածի, թե ինչ է Փրկիչն ասել Տասներկու Առաքյալներին հենց իր Հոր ներկայություն գնալուց առաջ. «Արածեցրեք իմ ոչխարները» [Հովհաննես ԻԱ.16–17]: Եվ նա շարունակեց ասել այս, մինչև իր առաքյալները տրտմեցին, երբ նա շարունակեց այդ ձևով նրանց կոչ անել: Բայց նա ասում էր..«Արածեցրեք իմ ոչխարներին»: Այսինքն «Առաջ գնացեք ողջ ձեր սրտով, ամբողջովին նվիրվեք իմ գործին: Այս մարդիկ աշխարհում իմ եղբայրներն ու քույրերն են: Իմ զգացմունները նրանց հանդեպ կայուն են: Հոգ տարեք իմ ժողովրդի մասին: Արածեցրեք իմ հոտը: Առաջ գնացեք և քարոզեք ավետարանը: Ես կպարգևատրեմ ձեզ բոլոր ձեր զոհաբերությունների համար: Մի կարծեք, որ դուք կարող եք կատարել խիստ մեծ զոհաբերություն այս գործն իրականացնելիս»: Նա կոչ արեց նրանց իր սրտի խանդավառությամբ կատարել այդ գործը: Իսկ այժմ ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ, ովքեր կրում եք այս քահանայությունը, ցցի նախագահող ծառայողներին, և Եպիսկոպոսներին, և Բարձրագույն խորհրդին, առաջ գնալ և արածեցնել հոտը: Մտահոգվեք նրանցով: . . . Աշխատեք նրանց համար, և մի սահմանափակեք ձեր մտքերն ու զգացմունքները ձեր անձնական մեծարմամբ: Այդ ժամանակ Աստված կտա ձեզ հայտնություն հայտնության ետևից և կուսուցանի ձեզ, թե ինչպես ապահովեք Սրբերի շահերը աշխարհիկ և հոգևոր բարօրությանը վերաբերող հարցերում[2] [տես առաջարկ 2, էջ 258]:

Առաջնորդներն ու ուսուցիչները կանչված են հետևելու Փրկչի օրինակին և ծառայելու սիրով, առանց իրենց մեծարելու:

Ինչո՞ւ է մարդ կանչվում գործելու որպես նախագահ մարդկանց վրա: Մի՞թե նրա համար, որ ազդեցություն ձեռք բերի, իսկ հետո օգտագործի այդ ազդեցությունը՝ ուղղակի իր մեծարման համար: Ոչ՝ ընդհակառակը, նա կանչվում է գործելու

այդ պաշտոնում նույն սկզբունքնով ինչպես քահանայությունը տրվեց Աստծո Որդուն, որ նա զոհաբերություններ կատարեր։ Իր համա՞ր։ Ոչ, այլ ժողովրդի շահերի համար, ում նա նախագահում է։ Նրանից կպահանջվի՞ որ նա խաչի վրա բարձրացվի, ինչպես Փրկիչն արեց։ Ոչ, այլ դառնա իր եղբայրների ծառան, ոչ թե նրանց տերը, և աշխատի նրանց օգտի ու բարօրության համար։ Ոչ թե գործադրի այդպես ձեռք բերված ազդեցությունն իր օգտի համար, իր ընտանիքի և բարեկամների և անձնական ընկերների, այլ բոլորին համարելով իր եղբայրները, հավասար իրավունքներ ունենալով իր հետ և այդ պատճառով ձգտելով օրհնել և օգտակար լինել բոլորին հավասարապես, համաձայն իրենց ունեցած տաղանդների և արժանավորության և այսպիսով, այդպես անելով զարգացնել իր մեջ այն հայրական զգացումը, որը միշտ գոյություն ունի Հոր սրտում։ . . .

. . . Թող նրանք, ովքեր քարոզում են Սրբերի մեջ, հասկանան թե ինչի համար է Քահանայությունը դրվել նրանց վրա, թող նրանք իմանան և լիովին զգան, թե ինչու էին նշանակվել այս կամ այն պաշտոնում, դրա հետ կապված նրանք պետք է գործեն համաձայն մեր Տիրոջ կամքի՝ բոլորին ծառա, որ նրանք սովորեն հաշվի առնել և գնահատել նույն սիրալիր հոգածությամբ բոլորի բարօրությունը, ինչպես նրանք դա կանեին իրենց համար. . . Այնուհետև նրանք կհասկանան երկու մեծ պատվիրանների իմաստը, ինչպես Փրկիչն է ասել, որոնցից. «կախված են բոլոր օրենքը եւ մարգարէքը», այսինքն՝ սիրելով Տիրոջը մեր ողջ զորությամբ, մտքով և ուժով և մեր ընկերոջը մեր անձի պես [տես Մատթեոս ԻԲ.37–40]։[3]

Նախքան [ուսուցանելը] աղոթեք և ահա թե ինչի մասին. Խնդրեք Տիրոջը, որ դուք ասեք մի բան ձեր բացատրությունների ժամանակ, որն օգտակար կլիներ նրանց համար, ում դուք դիմում եք խոսքով։ Ուշադրություն մի դարձրեք թե դա կավելացնի որևէ բան ձեր փառքին թե ոչ, այլ պարզապես մտքներումդ պահեք, որ դուք կանչվել եք լսարանին դիմելու համար և որ նրանք ցանկանում են ստանալ մի բան, որը նրանց համար օգտակար կլինի։ Սա կարող է գալ միայն Տիրոջից։ Մի անհանգստացեք, թե արդյոք . . . նրանք, ովքեր լսում են ձեզ կասեն գեղեցիկ եք խոսում թե ոչ։ Ընդհանրապես այդ մասին մի անհանգստացեք, այլ հեռացրեք ամեն եսասիրություն, որ կարող է լինել ձեր

«Դուք կպարզեք, որպես համընդհանուր մի բան, որ տաղանդը սփռված է լինում շատերի մեջ և հազվադեպ է միակցված լինում առանձին անհատների մեջ»:

մտքում, որպեսզի Տերը թելադրի ձեզ ինչ որ բան, որը օգտակար կլինի մարդկանց համար[4] [տես առաջարկ 3, էջ 259]:

Իմաստուն ղեկավարները գնահատում են մյուսների տաղանդները և տալիս ծառայելու հնարավորություններ:

[Մի ղեկավարի] դեպքից, որը հաստատել էր իրեն մարդկանց սրտերում և նրա անձը ճանաչված լինելով նրանց կողմից իր շիտակությամբ և ազնվությամբ և նրա տրամադրվածությունը աշխատելու Աստծո և ժողովրդի համար, հոժարակամորեն անելու ամեն զոհաբերություն, որը կարող էր պահանջվել իրենից, նա ուներ նրանց վստահությունը և երբ մեկընդմիշտ այդպիսի սրբազան վստահություն է ձեռք բերվում, էլ ինչ պետք է նա աներ, որպեսզի բավարարեր մարդկանց մտքերը, որոնք քիչ թե շատ հակված են առաջադեմ լինելուն: Թող այդպիսի մարդը իրեն օգնության կանչի իր եղբայրներից նրանց, ովքեր ամենաընդունակն են, թույլ տալով կիսվել նրանց հետ իր պարտականություններով: Քանի որ դուք կպարզեք, որպես համընդհանուր մի բան, որ տաղանդը սփռված է լինում շատերի

մեջ և հազվադեպ է միակցված լինում առանձին անհատների մեջ և անհրաժեշտ է միայն հնարավորություն, որպեսզի զարգացվի: Նա կարող է ասել. Ահա, Եղբայր այսինչ կամ այնինչ, դուք ավելի հարմար եք այս կամ այն պաշտոնը զբաղեցնելու համար, քան՝ ես», կամ մեկ ուրիշին.«Դուք այն մարդն եք, որ ամենահարմարն եք այս բաժնին» և այլն, մինչև նա բացահայտում է բոլորի տաղանդները, և փոխարեն՝ հասարակության վստահությունը իր հանդեպ նվազեցնելու, այսպիսի ընթացքով, նպաստում գործին[5] [տես առաջարկ 4, էջ 259]:

Ղեկավարելու ճիշտ ուղին համեստությունով է, լավ օրինակով և նվիրվածությամբ ուրիշների բարօրությանը:

Իշխանական կառավարումը Սրբերին կառավարելու ճիշտ ձև չէ, այլ ավելի լավ է ձգտել սպասավորել համեստության, իմաստության և բարության ոգով՝ ուսուցանելով ոչ այնքան տեսականորեն, որքան գործով: Չնայած որևէ մեկը կարող է ուսուցանել հրեշտակի պերճախոսությամբ, այնուամենայնիվ մեկ ուրիշի բարի գործերը, լավ օրինակները, գործողությունները, մշտապես դրսևորելով անկեղծություն ժողովրդի շահերի համար, ուսուցանում են շատ ավելի պերճախոսորեն, շատ ավելի արդյունավետորեն:[6]

Եթե դուք լինեք այնպես հավատարիմ և միասնական, ինչպես Առաջին Նախագահությունը և Տասներկուսն են հավատարիմ և միասնական, և հետևեք մեզ ինչպես մենք ենք հետևում Քրիստոսին, ամեն ինչ լավ կլինի ձեզ համար: Մենք վճռական ենք կատարելու մեր պարտականությունը և ծառայելու Տիրոջն ու աշխատելու Նրա ժողովրդի օգտի համար և Նրա աշխատանքի իրագործման համար: Մենք ձեր ծառաներն ենք Տերում և ցանկանում ենք ձեր բարօրությունը և ողջ մարդկության բարօրությունը:

Տերը չի ընտրել աշխարհի հանրաճանաչներին և կրթվածներին կատարելու Իր աշխատանքը երկրի վրա: Այդ նրանք չեն, ովքեր վարժեցվել են ու կրթվել գիտական քոլեջներում և սեմինարիաներում, այլ խոնարհ մարդիկ՝ Իր գործին նվիրված, ում Նա է ընտրել վարելու Իր Եկեղեցու գործերը, տղամարդիկ, ովքեր հոժար են առաջնորդվել և ուղեկցվել Սուրբ Հոգու կողմից և ովքեր անխուսափելիորեն փառքը կտան Նրան, իմանալով,

որ ինքնուրույն իրենք ոչինչ չեն կարող անել։ Ես կարող եմ հավաստիացնել ձեզ, եղբայրներ և քույրեր, որ ես ձգտում չունեի վերցնել այն պատասխանատվությունը, որն այժմ դրված է ինձ վրա։ Եթե կարողանայի խուսափել պատվով, ես երբեք չէի գտնվի այս պաշտոնում։ Ես երբեք չեմ խնդրել դրա համար, ոչ էլ երբևէ օգնություն եմ խնդրել իմ եղբայրներից որևէ մեկից՝ այս պաշտոնը ձեռք բերելու համար, բայց Տերը հայտնի դարձրեց ինձ և իմ եղբայրներին, որ այս էր Նրա կամքը, իսկ ես տրամադրված չեմ խուսափել որևէ պարտականությունից, ոչ էլ՝ մերժել զբաղեցնել որևէ պաշտոն, որը Տերն է պահանջում ինձանից զբաղեցնել։[7]

Ես կջանամ նվիրված լինել ձեր շահերին և Աստծո թագավորության շահերին։ Ես կծառայեմ ձեզ իմ գիտելիքի և հասկացողության լավագույնով, նրա հետ կապված, ինչը կնպաստի ձեր շահերին, կապված՝ Ամենազորի շահերի հետ։ Ես կանեմ սա, իսկ Տերը կլինի իմ օգնականը[8] [տես առաջարկ 5, էջ 259]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Ինչպե՞ս կարող է Անգլիայի (էջեր 251–53) ղեկավարներին, ուղղված Լորենզո Սնոուի նամակը վերաբերել մեզ։ Օրինակ՝ ի՞նչ կարող է առաջանալ, երբ մենք ունենք «մեծամտության ոգի» մեր եկեղեցական կոչումներում։ Ինչպե՞ս կարող ենք մեծարել մեր կոչումներն՝ առանց մեծարելու ինքներս մեզ։
2. Ուսումնասիրեք այն բաժինը, որը գտնվում է էջ 254-ում։ Ի՞նչ ձևով կարող են ղեկավարները «արածեցնել հոտը» Քրիստոսի։ Ի՞նչ են արել Եկեղեցու ղեկավարները՝ «արածեցնելու» ձեզ։ Այդ ղեկավարների ի՞նչ բնավորության գծերով եք դուք հիանում։

3. Կարդացեք Նախագահ Մնոուի նախազգուշացումները ինքնամեծարման վերաբերյալ (էջեր 254–55)։ Ապա վերանայեք երկրորդ լրիվ պարբերությունը, էջ 253։ Ինչո՞ւ պետք է քննենք մեր դրդապատճառները Եկեղեցում ծառայելու համար։
4. Խորհեք այն պարբերության մասին, որը սկսվում է էջ 256-ի ներքևում։ Ինչպե՞ս է ազդում ծխի կամ ճյուղի վրա, երբ ղեկավարները որոշ պարտականություններով կիսվում են այլ անդամների հետ։ Ինչպիսի՞ արդյունքներ եք նկատել, երբ Եկեղեցու տարբեր տաղանդներով և փորձառություններով անդամները աշխատել են ընդհանուր նպատակի համար։
5. Նախագահ Մնոուն խորհուրդ է տվել. «Իշխանական կառավարումը Սրբերին կառավարելու ճիշտ ձև չէ» (էջ 257)։ Որոնք են Եկեղեցու ղեկավարների կողմից որոշ իշխանական հնարավոր կառավարման կանոնների արդյունքները։

Սոնչվող սուրբ գրություններ. Մատթեոս Զ.24, Ի.25–28, ԻԳ.5, Մարկոս Ժ.42–45, Հովհաննես ԺԳ.13–17, 2 Նեփի 26.29, 28.30–31, Մոսիա 2.11–19, 3 Նեփի 27.27, ՎևՈՒ 46.7–11, 50.26, 121.34–46

Օգնություն ուսուցչին. «Դասից առաջ գրատախտակին գրառված հարցերը կօգնեն սովորողներին սկսել մտածել այդ թեմաների շուրջ, նույնիսկ մինչև դասը սկսելը» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* 93)։

Հղումներ

1. Letter from Lorenzo Snow to William Lewzey and William Major, Nov. 1842, in Lorenzo Snow, Letterbook, 1839–1846, Church History Library.
2. *Deseret News,* Jan. 14, 1880, 787.
3. *Deseret News,* June 13, 1877, 290–91.
4. *Improvement Era,* July 1899, 709.
5. *Deseret News,* June 13, 1877, 290.
6. "Address to the Saints in Great Britain," *Millennial Star,* Dec. 1, 1851, 362.
7. *Deseret Semi-Weekly News,* Oct. 4, 1898, 1.
8. In Conference Report, Oct. 1898, 54.

«Երբ մարդ գիտելիք է ստանում, նրան հուշվում է հաղորդել դա ուրիշներին, երբ մարդ երջանիկ է դառնում, հոգին, որը շրջապատում է նրան, սովորեցնում է նրան ձգտել ուրիշներին էլ երջանիկ դարձնել»։

Միսիոներական աշխատանք. «Հասնել յուրաքանչյուր մարդկային սրտին»

«Կա ուղի հասնելու յուրաքանչյուր մարդկային սրտին և ձեր գործն է գտնել ուղին դեպի նրանց սրտերը, ում մոտ դուք կանչված եք»:

Լորենզո Սնոուի կյանքից

Լորենզո Սնոուն մկրտվեց Կիրթլենդում, Օհայո, որտեղ նա սովորում էր եբրայերեն մի դասարանում Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Եկեղեցու մյուս ղեկավարների հետ: Նա հույս ուներ մի օր ստանալ «դասական կրթություն» քոլեջում, Միացյալ Նահանգների արևելյան մասում:[1]: Բայց երբ նա աշխատում էր հասնելու այդ նպատակին, նրան սկսեց գրավել մեկ այլ նպատակ: Նա հետագայում հիշում էր.

«Ես ստացա [ավետարանի ճշմարտությունները] բաց սրտով, և ես վճռել էի չհանգստանալ այդտեղ: . . .Ես սկսեցի մի քիչ անհանգստանալ մտքումս, թե արդյոք այս սքանչելի գիտելիքը ստանալուց հետո, ճի՞շտ էր ինձ համար մնալ առանց վկայելու դրա վերաբերյալ: Երիտասարդները, ովքեր միսիայի էին գնացել վերադառնում էին և վկայում այն օրհնությունների մասին, որոնք ուղեկցել էին նրանց . . . , և ես սկսեցի մտածել, որ արևելյան [լեզուների] քոլեջի կամ համալսարանի նախապատրաստվելու փոխարեն ես պարտավոր եմ դուրս գալ և վկայություն բերել, այն մասին ինչի վերաբերյալ Տերն այնքան լիարժեք գիտելիք էր տվել ինձ: Միևնույն ժամանակ, ես չէի ուզում ձեռք քաշել կրթության իմ հեռանկարներից, որովհետև ես դա ունեի մտքումս երկար ժամանակ և ես այդ ժամանակ ունեի հնարավորություն և միջոցներ դա իրագործելու համար»:

Մաքառելով իր զգացմունքների հետ, նա խորհուրդ հարցրեց մի վստահելի ընկերոջից.«Ես պատմեցի նրան թե ինչ էի ուզում և նա ասաց,- Եղբայր Սնոու, ես այդպիսի խորհուրդ չէի տա ուրիշ որևէ մեկին, որը ես զգում եմ, որ պիտի տամ քեզ այս հանգամանքներում: Եթե քո փոխարեն լինեի, ես կգնայի առաջ կրթություն ստանալու իմ մտադրություններում»: Դա հենց այն էր, ինչ ես կամենում էի, որ նա ասեր և դա գոհացրեց ինձ: Ես որոշ ժամանակ բավարարված էի, բայց ձմռան սեզոնում, լսելով այդ երիտասարդ Երեցների վկայություններն Ավետարանը քարոզելիս իրենց հաջողությունների մասին, ես սկսեցի ավելի շատ մտածել այդ մասին: Տերն ինձ գիտելիք էր տվել, որ Նա գալիս էր երկիր և որ անհրաժեշտ էր նախապատրաստություն տեսնել. Նա տվել էր ինձ այն ամենը, ինչ ես խնդրել էի և դեռ ավելին, քանի որ այն մկրտությունը, որ ես ստացա Սուրբ Հոգուց և կատարյալ այն գիտելիքը, որ այդ ժամանակ տրվեց ինձ, ավելի իրական էր և համոզիչ, քան սառը ջրում իմ ընկղմվելը, և ես զգացի, որ պատասխանատվություն կար դրված ինձ վրա: Այսպիսով ես փակեցի գրքերս [և] մի կողմ դրեցի լատիներենն ու հունարենը»:[2]

Այդ որոշումն ընդունելուց հետո, Լորենզո Սնոուն միսիա ծառայեց Օհայոում՝ 1837 թվականին: Նա հետագայում ծառայեց ուրիշ միսիաներ՝ առաջինը Միսսուրի, Իլինոյս, Կենտուկի և Օհայո նահանգներում, ապա՝ Անգլիայում, Իտալիայում, Հավայան կղզիներում, Միացյալ Նահանգների հյուսիսարևմտյան մասում և Վայոմինգ նահանգում: Երբ նա Անգլիայում էր, նա մի նամակ գրեց իր հորաքրոջը, բացատրելով, թե ինչու էր կամենում թողնել տունը և ծառայել, որպես միսիոներ. «Այն միտքը, որ ես մոտավորապես չորս կամ հինգհազար մղոն հեռու եմ իմ մանկության և բոլոր իմ վաղեմի սիրելի մտերիմներից, շատ բնական հարց է հուշում. *Ինչո՞ւ եմ այստեղ* . . . Ես այստեղ եմ, որովհետև Աստված է խոսել և բարձրացրել Մարգարե, ում միջոցով Նա վերականգնել է հավիտենական Ավետարանի լրիվությունը, բոլոր իր պարգևներով, զորություններով, արարողություններով և օրհնություններով, հայտարարությամբ բոլոր ժողովուրդներին. *«Ապաշխարեք, քանզի երկնքի արքայությունը մոտ է»*:Աստծո նախախնամությամբ ես կանչվել եմ որպես դեսպան՝ տանելու այս ուղեձը երկրագնդի ազգերին,

որը ես հասկանում եմ, որ մեծ պատասխանատվություն է դնում ինձ վրա, որը ես չեմ կարող կատարել, առանց Ամենազորի աջակցության»:[3]

Նախագահ Մնոուն միշտ երախտապարտ էր որպես միսիոներ Տիրոջը ծառայելու իր որոշման համար: 1901 թվականի սեպտեմբերին, 87 տարեկան հասակում, նա ասաց. «Ես ուրախություն եմ զգում, նույնիսկ այժմ մտածելով իմ միսիոներական աշխատանքների օրերի մասին: Այս առանձնահատուկ փորձառություններից առաջացած զգացումները դարձել են իմ իսկ էության անբաժանելի մասը»[4] [տես առաջարկ 1, էջ 272]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Ստանալով ավետարանի լրիվությունը, մենք ցանկանում ենք օգնել ուրիշներին ուրախանալ նույն օրհնություններով:

Երբ մարդ գիտելիք է ստանում, նրան հուշվում է հաղորդել դա ուրիշներին, երբ մարդ երջանիկ է դառնում, հոգին, որը շրջապատում է նրան, սովորեցնում է նրան ձգտել ուրիշներին էլ երջանիկ դարձնել:. . .Մարդու համար արդյոք կա՞ հնարավորություն առանց Քրիստոսի ավետարանի վերաբերյալ գիտության երջանիկ դառնալ: . . .Չնայած աշխարհում [մարդիկ] փորձում են իրենց երջանիկ դարձնել, այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում իրագործել այն, ինչին ձգտում են: Նրանք չեն կարող երջանիկ լինել, բացառությամբ մեկ ուղով և դա ավետարանի լրիվությունն ընդունելն է, որն ուսուցանում է մեզ չսպասել մինչև հավերժության հասնելը հետո միայն սկսենք ինքներս մեզ երջանիկ դարձնել, այլ՝ ուսուցանում է մեզ ձգտել այստեղ ուրախ դարձնել մեզ և մեր շրջապատում գտնվողներին, Ամենազորի օրհնություններով:

Ուրեմն սա պետք է լինի մեր նպատակն ու մտադրությունը՝ սովորենք ինքներս մեզ օգտակար դարձնել, լինել մեր մերձավորների փրկիչը, սովորել, թե ինչպես փրկել նրանց, հաղորդել նրանց այն անհրաժեշտ սկզբունքների գիտելիքը, որը կբարձրացնի նրանց խելամտության այն նույն աստիճանին, որը մենք ինքներս ունենք:[5]

Գնացեք և ընկերներ գտեք այն մարդկանց մեջ, ում կողմից դուք շրջապատված եք, կամ ընտրեք մեկին և փորձեք ոգեշնչել նրա զգացմունքները, նրա հավատքը, նրա նյութական վիճակը և նրա միտքը, և փորձեք լուսավորել նրանց, և եթե նրանք մեղավորներ են, ջանացեք փրկել նրանց իրենց մեղքերից և նրանց դուրս բերեք իրենց գերությունից, որի մեջ են գտնվում, մասնակցելու այն լույսին և ազատությանը, որին դուք եք մասնակից, քանզի այս ուղով դուք կարող եք բարիք անել այն տեղեկության միջոցով, որը Տերն է հաղորդել ձեզ[6] [տես առաջարկ 2, էջ 272]:

Միսիոներները հոժար են զոհաբերություններ կատարել՝ օգնելու ուրիշներին գալ ճշմարտության գիտությանը:

Հենց որ Սրբերը բարեհաջող տեղավորվեցին [Յուտայի] այս հովիտներում, Տիրոջ ծառաները կրկին նրանց ուշադրությունը կենտրոնացրեցին դեպի միսիոներական մեծ աշխատանքը, որը դրված էր Եկեղեցու վրա:

Մենք աղքատության մեջ էինք և մաքառում էինք երկիրը բնակելի դարձնել, բայց մենք չէինք կարող անտեսել Ավետարանն արտասահմանում տարածելու պարտականությունը, որի ներքո էինք մենք, քանզի Տերը հրաման էր տվել, որ այն պետք է քարոզվեր ողջ աշխարհում: Դա այս աշխատանքի աստվածայնության ապացույցներից մեկն էր, որ բոլոր իրենց բռնի տեղահանումների և հալածանքների ընթացքում, Վերջին Օրերի Սրբերը հավատարմորեն ձգտում էին իրագործել Տիրոջ այս հրամանը:

Եկեղեցու գերագույն համաժողովի ժամանակ, որը տեղի ունեցավ 1849 թվականի հոկտեմբերին՝ ընդամենը երկու տարի անց [Սոլթ Լեյքի] հովիտ մտնելուց հետո, մի շարք Երեցներ կանչվեցին միսիաներ բացելու երկրագնդի տարբեր մասերում: Տասներկու Առաքյալներից չորսը, նշանակվեցին նախաձեռնությունը վերցնել իրենց վրա: Առաքյալ Էրաստս Սնոուն կանչվեց գնալու Սկանդինավիա, Առաքյալ Ջոն Թեյլորը՝ Ֆրանսիա, ինքս՝ Իտալիա և Առաքյալ Ֆրանկլին Ռիչարդսը՝ Անգլիա, որտեղ միսիա արդեն հիմնադրվել էր: Աղքատիկ պայմաններում, որոնցում հայտնվել էինք մենք, մեր ընտանիքները լինելով գրեթե չքավոր, դա դժվարին նախաձեռնություն էր մեզ համար, բայց

Տերը կանչել էր, և մենք զգացինք, որ պետք է արձագանքեինք անկախ նրանից, թե ինչ զոհաբերություն էր պահանջվելու[7]:

Մենք նվիրաբերում ենք մեր կյանքն աշխատանքին այնքան շատ, որ թվում է մենք չենք հոգում մեր կյանքի մասին, որպեսզի աշխարհը հասկանա, որ կա Աստված հավերժական աշխարհներում, որպեսզի նրանք կարողանան հասկանալ, որ Աստված ինչ որ բան ունի ներկայումս անելու մարդկանց զավակների գործերի հետ: Աշխարհն անցնում է այն զգացումներին և կարծիքներին, որ անհավատությունը վատ բան չէ: Նույնիսկ մարդկության ընտանիքի Քրիստոնեական մասի մեջ, հազարավորներ և տասնյակ հազարավորներ, չնայած նրանք չեն կամենում խոստովանել դա, որովհետև դա հասարակական համակրանք չի վայելում, չեն հավատում, որ Աստված որևէ բան ունի անելու մարդկանց զավակների հետ: Մենք պետք է առաջ կանգնենք և զոհաբերություններ կատարենք, որպեսզի այդ հավատքը և գիտելիքը կարողանա գալ մարդկանց զավակներին:[8]

Երբ մենք կանչում ենք մեր երիտասարդ միսիոներներին գնալ աշխարհի ազգերի մոտ, նրանք մտածում են այդ հարցի մասին, և լսած լինելով նրանց փորձառությունների մասին, ովքեր եղել են աշխարհում որպես միսիոներներ, դա ամենասքանչելի բաներից մեկը չէ մարդու համար ակնկալել անցնել փորձությունների և դժվարությունների միջով, որոնց միջով, նրանք հասկանում են, որ ստիպված են լինելու անցնել: Բայց առաքինությունը կայանում է սկսելու և պահանջներին հնազանդվելու նրանց հոժարակամության մեջ:[9]

Միսիայի վերաբերյալ կան բաներ, որոնցից բոլորի հետ չէ, որ մեր երիտասարդ Երեցները համաձայն են: Նրանք գիտակցում են, որ պետք է զոհաբերեն իրենց օջախի հաճույքները և նրանք հասկանում են, որ նրանք գնում են ժողովրդի մեջ, ովքեր միշտ չէ որ երախտապարտ կզգան այն բաների համար, որ իրենք պետք է ասեն նրանց, սակայն մյուս կողմից, նրանք զգում են, որ ունեն կյանքի սերմերը և երբ նրանք կարողանան գտնել որևէ ազնիվ տղամարդու կամ կնոջ, Տիրոջ Հոգին կներգործի նրանց սրտերում և գուցե ընդունեն այս փառահեղ ուղերձը, որը նրանք պետք է հաղորդեն: Սա նրանց հաճույք և բավականություն է պատճառում: Մեկ այլ բան, որ նրանք

տեսնում են այս փորձառության մեջ, իրենց ապագա պարտականություններում այն բանի ապահովումն է, որը մեծ արժեք կունենա իրենց համար: Տարօրինակ բան է, որ հազարավոր նամակներից, որ ես ստացել եմ նրանցից, ովքեր կանչվել են գնալու միսիա՝ հիմնականում երիտասարդները, կարողանում եմ հիշել միայն մեկ դեպք, որտեղ մերժում էր տրված: Ինչո՞ւ է այդպես: Դա այն պատճառով է, որ սիրո և անմահության ոգին, Ամենազորի Հոգին այս երիտասարդ Երեցների վրա է, և նրանք ստացել են դրսևորումներ, որոնք ոգեշնչում են նրանց, անելու այն, ինչն այլապես ոչ մի դրդապառճառ չէր կարող նրանց հուշել, որ անեն[10] [տես առաջարկ 3, էջ 272]:

Միսիոներները պետք է երբեք չմոռանան, որ իրենք երկնքի դեսպաններն են՝ բարի և ուրախ լուրեր բերողներ:

Մենք Երեցներ ենք ուղարկում քարոզելու Ավետարանը: Ո՞վ է ուղարկում նրանց:. . . Իսրայելի Աստվածն է ուղարկում: Սա Նրա աշխատանքն է: Չկա որևէ մահկանացու մարդ, որն այնքան հետաքրքրված լինի որևէ Երեցի հաջողությամբ, երբ Նա քարոզում է Ավետարանը, ինչպես Տերը, որն ուղարկել է նրան՝ քարոզելու մարդկանց, ովքեր Տիրոջ զավակներն են: Նրանք նրա զավակներն են ուրիշ աշխարհից, և նրանք եկել են այստեղ, որովհետև Տերն է կամեցել, որ նրանք գան:[11]

Մենք զգում ենք, որ դուք [միսիոներներդ], մեծ հաջողություն կունենաք, որովհետև մենք զգում ենք և գիտենք, որ դուք կանչված եք Աստծուց: Մարդկային իմաստությունը երբեք չէր մտածի այսպիսի աշխատանքի մասին, ինչպիսին սա է: Ես զարմանում եմ, երբ մտածում եմ դրա վիթխարիության մասին: Ես կարող եմ ասել, որ սա հենց այն աշխատանքն է, որն անհրաժեշտ է այս ժամանակաընթացքում, և ես զգում եմ, որ դուք կմտնեք դրա մեջ ձեր ողջ հոգով: Զարգացրեք Հիսուսի Հոգին, երբ նա ասաց, որ չի կարող անել ոչինչ, բացի նրանից, ինչ իր Հայրն իրեն տվեց [տես Հովհաննես Ե.30]:

Ուշադրություն մի դարձրեք ձեր դժվարություններին և ակնհայտ կորուստներին, մի անհանգստացեք ձեր սեփական շահերի մասին և ձեր հաջողությունը կլինի հսկայական

«Մի անհանգստացեք ձեր սեփական շահերի մասին և ձեր հաջողությունը կլինի հակադական ու փառահեղ և ողջ Եկեղեցին կզգա ձեր աշխատանքների արդյունքները»:

ու փառահեղ և ողջ Եկեղեցին կզգա ձեր աշխատանքների արդյունքները:

Ուշադրություն մի դարձրեք ոմանց անտարբերությանը, ում մեջ դուք կաշխատեք և փոքրիկ հիասթափություններին, որոնց դուք կհանդիպեք, Տիրոջ Հոգին կլինի ձեր վրա և դուք հետաքրքրություն կառաջացնեք նրանց հոգիներում, ում դուք կծառայեք, և կհաղթեք նրանց անտարբերությանը: . . . Դուք բավարարված կլինեք, որ իրականացրեցիք աշխատանքը, որին դուք ուղարկվել էիք կատարելու: . . .

Դուք ունեք ձեզ շնորհված ամենալիարժեք լիազորությունը, բայց դուք ընդհանրապես չպետք է խոսեք այդ մասին: Դուք կբացահայտեք, որ դրա մասին կարիք չկա խոսելու, Տիրոջ Հոգին կհաստատի դա և մարդիկ կզգան, որ դուք կրում եք այն և այս հաստատումն ու զգացումը կլինի ձեր լիազորությունը:

Դուք կգտնեք ոմանց, ովքեր կարծում են, թե գիտեն ավելին, քան դուք, բայց եթե դուք կատարեք ձեր պարտքը, ինչպես առաջարկվել է, նախքան դուք նրանցից հեռանաք, դուք կզգաք,

որ ունեք մի փոքր ավելին, քան նրանք ունեն և որ դուք օրհնել եք նրանց և օգնել . . .

Փորձեք ընդունելի դառնալ նրանց, ում մոտ ուղարկվում եք: Համեստությունը, որ դուք կդրսևորեք, և Տիրոջ Հոգին, որը կմնա ձեզ հետ, ցույց կտան ձեր համապատասխանությունը, այն պաշտոնին, որ դուք կանչվել եք զբաղեցնելու: Փորձեք հասկանալ մարդկային էությունը և գործեք համապատասխանաբար, որպեսզի ամենքին երջանիկ և ամեն ինչ ընդունելի դարձնեք: . . .

Կա ուղի հասնելու յուրաքանչյուր մարդկային սրտին, և ձեր գործն է գտնել ուղի դեպի նրանց սրտերը, ում մոտ կանչվել եք: . . .

Սրտումս ես զգում եմ, որ պետք է ասեմ՝ Աստված օրհնի ձեզ: Դուք կձեռնադրվեք նախքան ձեր գնալը և մենք կաղոթենք ձեզ համար և խորապես կմտահոգվենք ձեզ համար: Եղեք սրտով հեզ և խոնարհ: Երբ նայեք ունկնդիրներին, ձեզ կարող են երկու դրդապատճառներ ոգեշնչել, առաջինը, որ դուք լավ խոսեք և լավ տպավորություն գործեք ունկնդիրների վրա, որպես հռետոր, հաջորդը՝ կառաջանա հարց, ինչի՞ համար եմ ես այստեղ: Ցանելու կյանքի սերմեր նրանց սրտերում, ովքեր այս ունկնդիրների մեջ են և պետք է աղոթք բարձրանա ձեր սրտում. «Ով Տեր, թող այնպես լինի, որ ես զորություն ունենամ քո Հոգու միջոցով հուզել քո այս ժողովրդի սրտերը»: Այդ շատ կարճ աղոթքն այն ամենն է, ինչ երեցը պետք է ասի: Սա է այն ամենը ինչ պետք է ասեք: «Կարո՞ղ եմ ասել մի բան, որ փրկեմ այս հոգիները»: Սա այն է, ինչ Առաջին Նախագահությունը . . . և բոլոր ձեր եղբայրները ուզում են, որ դուք անեք:[12]

Ձեր ուշադրությունը դարձրեք հոգևոր ձեր զրահի պայծառացմանը: Ես գտնում եմ, որ երբ աշխարհիկ հոգսերը մի կողմ են դրված, աչքս ուղղված է միայն դեպի հոգևոր բաները: Աղոթեք, եղբայրներ, և վնասակար մի համարեք ծոմ պահելը:. . . Չափից շատ մի կատակեք, [և] զգույշ եղեք, որ Հոգին չտրտմեցնեք: Ես զգացել եմ, երբ միսիայում էի գտնվում, մեկ կամ երկու շաբաթից ես կարող էի մոռանալ տունը և Աստծո Հոգին քաջալերում էր ինձ: Հոգին մղվում է դեպի ազատություն և զվարթություն, բայց խիստ շատ մի տարվեք զվարթությամբ:

. . . Շարունակեք աղոթքով, որպեսզի Աստծո Հոգին լինի ձեզ վրա՝ ձեր գլխի գագաթից մինչև ձեր ոտքերի ծայրերը։[13]

Այգում աշխատող Երեցները երբեք չպետք է աչքաթող անեն այն փաստը, որ նրանք երկնքի դեսպաններն են, բարի և ուրախալի լուրեր բերողներ ազգերին, ովքեր չեն ճանաչում Տիրոջը։ . . .

Երբ մարգարե Ջոզեֆ Սմիթն ուղարկեց առաջին Երեցներին օտար երկրներ, նա տեսավ այն ընդունելությունը, որը սպասվում էր նրանց, և նա ասաց նրանց, որ չնայած համեմատաբար քչերը կընդունեն նրանց որպես Աստծո ծառաներ, մարդկանց մեծամասնությունը կմերժի նրանց և ուշադրություն չի դարձնի նրանց ուղերձին։ Այսպիսին է եղել Աստծո ծառաների ճակատագիրը ժամանակների սկզբից ի վեր և մենք պետք է բավարարվենք հավատարիմ աշխատանքների արդյունքներով, եթե նույնիսկ քչերը բերվեն ճշմարտության իմացությանը։ . . .

Ես իսկապես հուսով եմ և աղոթում եմ, որ ոչ մի Երեց, աշխատելիս . . . այնքան իրեն չմոռանա, որպեսզի զոհ դառնա աշխարհիկ մոլորություններին։ Կա միայն մի ապահով ուղի դրանցից խուսափելու համար՝ և դա չարից հեռու կենալն է։ Գայթակղություն այս կամ այն ձևով կներկայացվի նրանց։ Դա մեր փրկության թշնամու գործն է, բայց Իսրայելի Երեցների գործն է վեր բարձրանալ գայթակղությունից, և որպեսզի դա արվի հաջողությամբ, նրանք պետք է իրենց անբիծ պահեն աշխարհից։ . . . Քանի դեռ նրանք կզարգացնեն և կփայփայեն իրենց միսիայի ոգին և կհասկանան իրենց բարձր կոչման կարևորությունը Քրիստոս Հիսուսում և կապրեն այդ նույն հոգով, նրանք կկարողանան կանգնել որպես մարդկանց ուղեկցորդներ և փրկիչներ, արտացոլելով նրանց համար երկնքի լույսը և կլինեն մյուս մարդկանցից տարբեր, բայց եթե նրանք անցնեն թշնամու տարածք և ճաշակեն աշխարհի ոգուց, նրանք կզրկվեն իրենց ուժից և կդառնան այլ մարդկանց նման, արժանի միայն վերադառնալու տուն և տանելու ընկած մարդու վիշտը և ստիպելու իրենց սիրելիների սիրտը սգալու՝ իրենց վիճակի պատճառով։ . . . Քանի դեռ նրանք կշարունակեն խոնարհությամբ որոնել Տիրոջը, ուղղված ունենալով իրենց աչքը միայն դեպի Նրա պատիվն ու փառքը և կցանկանան իրենց սրտերում մարդկանց հոգիների փրկությունը և կանեն այն

ամենն ինչ կարող են՝ իրականացնելու նրանց փրկությունը, նրանք կունենան անսահման ուրախություն մարմնում իրենց կատարած գործերում, և վերջապես կդառնան ճաշակողներ Հոր և Որդու հետ այն խիստ մեծ և փառահեղ բաների, որ մահկանացու կյանքում դժվար է հասկանալ կամ մտածել[14] [տես առաջարկներ 4 և 5, էջ 272]:

Մեր սրտերն ուրախանում են, երբ մենք օգնում ենք ուրիշներին ստանալ ավետարանի լրիվությունը:

Մենք սպասում ենք. . . մեր կողմից, որ այս աշխատանքն իրականցնելու համար, անհրաժեշտաբար պետք է գործի դրվի և կիրառվի մեծ համբերություն, հավատք, ջանասիրություն, հաստատակամություն և երկայնամտություն, բայց քաղաքներում . . . որտեղ հազարավորներ ի վերջո ընդունեցին Ավետարանը, մի քանի դեպքերում շատ ամիսներ անցան անպտուղ թվացող աշխատանքներում, մինչև ապահովվեց պատշաճ ուշադրություն և հնազանդություն այդ սկզբունքների հանդեպ:. . . Որոշ դեպքերում մենք ոչ թե ամիսներ ենք աշխատում, այլ գուցե նույնիսկ տարիներ, բայց մենք համոզված ենք զգում, որ հավատքի, աղոթքի, աշխատանքների և Տիրոջ օրհնությամբ, մենք ի վերջո այս բոլոր դժվարությունները կհաղթահարենք և հաղթանակի կհասնենք Աստծո պատվի ու փառքի համար, և բացի այդ մենք էլ կունենանք գոհունակություն, որ *կատարել ենք մեր պարտքը* և մաքրել մեր հանդերձները բոլոր մարդկանց արյունից:[15]

Մի առիթով, նախքան Իտալիա գնալը, ես այցելեցի Մանչեստր, Մակլեսֆիլդ, Բիրմինգհեմ, Չելթենհեմ, Լոնդոն, Սաութամփթոն և Սաութ Քոնֆերենսում [Անգլիայում]: . . . Ես հաճույք ստացա հանդիպելով շատերի հետ, ում համար ես միջոց էի եղել գալու Եկեղեցի [ութ տարի առաջ] և կարիք չկա ասել, որ կրկին նրանց հանդիպելը իսկական ուրախություն էր ինձ համար և միշտ հրճվանք է պատճառում ինձ այդ մասին մտածելիս: Հովհաննես Առաքյալն իր օրերում նշել է. «Մենք գիտենք որ մահիցը ի կեանք փոխուեցանք. Որովհետև եղբայրներին

սիրում ենք» [Ա Հովհաննես Գ.14]: Այս սերը, որ մեր Եկեղեցու միսիոներ Երեցների սրտերում է ծնվում երկրագնդի ժողովուրդների հանդեպ, ովքեր համեմատաբար օտարական են նրանց համար, իսկ ժողովրդի սրտերում Երեցների հանդեպ, ովքեր բերում են Ավետարանի ուղերձը նրանց, ինքնին վկայություն է, որը բավարար է համոզելու համար ազնիվ սրտին, որ դրա աղբյուրը աստվածային է և որ Աստված մեզ հետ է: Այս սրբազան և նվիրական զգացումը, որն արթանում է մեր մեջ Սուրբ Հոգու միջոցով, արդեն զանազանում է մեզ, որպես համայնք, մարդկության մնացած ընտանիքից և սա է այն զգացումը, որը դեռ կհեղափոխի ողջ աշխարհը, և կհամոզի անհավատ մարդկանց, որ Աստված ոչ միայն մեր բոլորի Հայրն է, այլ որ մենք Նրա ընկերներն ենք և ծառաները:[16]

Տիրոջ ծառայությանն եմ ես նվիրել իմ կյանքը, իմ *ամեն ինչը* դրվել է զոհասեղանի վրա, որպեսզի ես կարողանամ պատվել նրան, կատարեմ նրա կամքը ընդունելի ձևով, և տարածեմ կյանքի սկզբունքները մարդկանց զավակների մեջ: Երբ ես մտածում եմ անցյալի մասին և նկատում Տիրոջ ձեռքը հրաշագործ ձևով իմ ճանապարհը բացելիս և ամեն բանում ինձ բարգավաճեցնելիս՝ կապված այս միսիաների հետ, ամենաբարձր սպասումներից էլ վեր, ես կրկնակի քաջալերված եմ զգում առաջ գնալու, առաջ մղվելու դեպի ապագան, լեզուն իսկապես չի կարող արտահայտել իմ սրտի այդ խորը երախտագիտությունը նրա օրհնությունների համար:Այն եղբայրներն ու Սրբերը, ում հոգու շռայլությունը և հետաքրքրությունը Աստծո աշխատանքի հանդեպ հատկապես դրսևորվել են այդ միսիաներում, նրանց վրա, թող Ամենաբարձրյալի օրհնությունները թափվեն կրկնակի առատաձեռնությամբ և երբ տարիներ հետո, նրանք լսեն հազարավորների քաղցր ձայնը և այն ազգերից տասնյակ հազարավորների Ամենազորին գովքեր բացականչելիս հայտնության լույսի համար, նրանց սրտերը նույնպես կցնծան ուրախ խղճմտանքով, որ իրենք նմանապես մասնակցել են փառահեղ փրկագնման իրագործմանը[17] [տես առաջարկ 6, էջ 273]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x.

1. Կարդացեք 261–63 էջերը և մտածեք «Ինչո՞ւ եմ ես այստեղ» հարցի Լորենզո Սնոուի պատասխանները։ Ինչպե՞ս կարող է այս հարցն ազդել բոլոր Եկեղեցու անդամների վրա՝ ավետարանով կիսվելու մեր հնարավորությունների առկայությամբ։
2. Խորհեք Նախագահ Սնոուի խորհրդի մասին 263 էջի վերևում սկսվող բաժնում։ Մտածեք, թե ինչպես կկարողանայիք հետևել այս խորհրդին, օգնելու համար որևէ մեկին իսկապես երջանիկ լինել։
3. Նախագահ Սնոուն պատմեց զոհաբերությունների մասին, որոնք նա և մյուսները կատարեցին, որպեսզի կարողանային կիսվել ավետարանով (էջեր 264–66)։ Մարդկանց կատարած զոհաբերությունների ի՞նչ օրինակներ եք տեսել՝ ավետարանով կիսվելու համար։ Ի՞նչ եք կարծում, ինչու են մարդիկ կամենում զոհաբերություններ կատարել։
4. Ինչպե՞ս կարող են 266–67 էջերի հավաստիացումներն օգնել որևէ լիաժամկետ միսիոների։ Ինչպե՞ս կարող են դրանք օգնել մեզանից յուրաքանչյուրին, երբ մենք կիսվենք ավետարանով։ Ինչպե՞ս կարող ենք օգտագործել այս ուսմուքները՝ օգնելու համար որևէ մեկին, ով տատանվում է միսիա ծառայել։
5. Երբ վերանայեք Նախագահ Սնոուի խորհուրդը 267–70 էջերում, մտածեք այն մասին, թե ինչպես է այն վերաբերում բոլոր Եկեղեցու անդամներին։ Օրինակ՝ ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում «մի անհանգստացեք ձեր սեփական շահերի մասին»։ Ի՞նչ տարբեր ուղիներ կան, որոնցով մենք կարող ենք «հասնել յուրաքանչյուր մարդու սրտին»։
6. Կարդացեք գլխի վերջին պարբերությունը, որում Նախագահ Սնոուն պատմում է միսիոներական աշխատանքի հարատև ուրախության մասին։ Ե՞րբ եք զգացել

միսիոներական աշխատանքի ուրախությունը: Ինչո՞ւ պետք է երբեմն համբերատար լինենք, մինչև կարողանանք լիովին զգալ այդ ուրախությունը:

Սոնչվող սուրբ գրություններ. Ալմա 26.1–8, 35–37, ՎևՈՒ 12.7–8, 18.10–16, 84.88

Օգնություն ուսուցչին. «Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին և կարդալ այն մտքում: Հրավիրեք նրանց հավաքվել երկու կամ երեք մարդուց բաղկացած խմբերով, ովքեր ընտրել են նույն բաժինը և քննարկել, թե նրանք ինչ են սովորել» (էջ ix այս գրքում):

Հղումներ

1. Journal and Letterbook, 1836–1845, Church History Library, 33; see also "The Grand Destiny of Man," *Deseret Evening News,* July 20, 1901, 22.
2. "The Grand Destiny of Man," 22.
3. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 48.
4. "Letter from President Snow," *Millennial Star, Sept. 12, 1901, 595.*
5. *Deseret News,* May 15, 1861, 82.
6. *Deseret News,* Mar. 11, 1857, 3; in the original source, page 3 is incorrectly labeled as page 419.
7. In "Scandinavians at Saltair," *Deseret Evening News,* Aug. 17, 1901, 8.
8. In "Laid to Rest: The Remains of President John Taylor Consigned to the Grave," *Millennial Star,* Aug. 29, 1887, 549.
9. In "Report of the Funeral Services Held over the Remains of Daniel Wells Grant," *Millennial Star,* June 20, 1895, 386.
10. In Conference Report, Apr. 1901, 2–3
11. *Deseret Weekly,* May 12, 1894, 637.
12. "Instructions to Missionaries," *Improvement Era,* Dec. 1899, 126–29; Լորենզո Մնոուն տվել է այս խորհուրդը եղբայրներին, ովքեր նոր էին կանչվել ծառայելու որպես միսիոներներ Փոխադարձ Բարելավման Միությունում: Նրա քարոզները նեբառվեցին *Improvement Era* թերթում մի բացատրությամբ, որ դա «հանուն գործի աշխատող յուրաքանչյուր աշխատողի համար լի էր օգտակար խորհրդով»:
13. In Journal History, Apr. 9, 1862, 4.
14. "Letter from President Snow," 595–96.
15. "The Malta Mission," *Millennial Star,* June 5, 1852, 237.
16. "Letter from President Snow," 595.
17. "Address to the Saints in Great Britain," *Millennial Star,* Dec. 1, 1851, 365.

Նախապատի Լորենզո Մնոնն վկայեց Մարգարեն Զոզեֆ Սմիթի միջոցով ապեստարանի Վերկանգնման մասին։

Աստծո թագավորությունը առաջ է շարժվում

«Նրանք, ովքեր հայտարարում են, որ զբաղված են [Աստծո] աշխատանքով , նրանց գործն է առաջ շարժվել: . . . Քանի դեռ մնում է մեկ քայլ առաջ գնալու, այդ քայլը պետք է արվի»:

Լորենզո Սնոուի կյանքից

1844 թվականին, երբ Լորենզո Սնոուն մի հանձնարարություն էր կատարում Միացյալ Նահանգների արևելյան մասում, նա տեղեկացավ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայր Հայրումը նահատակվել էին: Նա ասաց. «Այս տխուր իրադարձության լուրը, իհարկե, եշատ անսպասելի էր ինձ համար և խոցեց խորն ապշանքով և վշտով, որը ոչ մի լեզու չի կարող նկարագրել»: Հնազանդվելով Տասներկու Առաքյալների Քվորումի հրահանգներին, նա նախապատրաստություններ տեսավ վերադառնալու իր տուն՝ Նավու, Իլինոյս:[1]

Նա հետագայում վերհիշում է. «Ոմանք մտածում էին Ջոզեֆի օրերում, որ այս Եկեղեցին չէր կարող բարգավաճել առանց դրա ճակատագրի Ջոզեֆի ղեկավարության և երբ եկավ ժամանակը, երբ նա պետք է հեռանար այս աշխարհից, որպես նահատակ դեպի հոգևոր աշխարհ, Սրբերն Աստծո ողջ թագավորությունում մեծ ցնցում ապրեցին: Դա անսպասելի մի բան էր: Նրանք գրեթե չգիտեին, թե ինչպես էին գործերն առաջ գնալու այդ ժամանակ: [Եկեղեցու ղեկավարության] պարտականությունն այդ ժամանակ դրվեց Տասներկու Առաքյալների Քվորումի վրա և Աստծո օրհնություններով նրանց վրա և ոգեշնչման ոգով, որը բնակվում էր նրանց սրտերում և Ամենազորի առաջնորդությամբ, թագավորությունն առաջ գնաց»:[2]

Եկեղեցու երկրորդ Նախագահ Բրիգամ Յանգը մահացավ 1877 թվականին, Եկեղեցին 33 տարի ղեկավարելուց հետո: Երեց Լորենզո Սնոուն, որն այդ ժամանակ Տասներկուսի Քվորումի անդամ էր, մեկ անգամ ևս ականատես եղավ Եկեղեցու երկրային ղեկավարության փոփոխությանը: Նա հետագայում ասաց, որ Նախագահ Յանգը «գրեթե անսպասելիորեն հեռացավ կյանքից: Սրբերն այնքան էլ պատրաստ չէին դրան: Եվ այնուամենայնիվ, Աստծո թագավորությունն առաջ շարժվեց»:[3]

Երբ Ջոն Թեյլորը՝ Եկեղեցու երրորդ Նախագահը, մահացավ 1887 թվականին, Երեց Սնոուն կրկին հավաստիացրեց Սրբերին. «Տերը հարմար է տեսել այժմ կանչել մեր սիրելի եղբայր՝ Նախագահ Թեյլորին տառապանքի, այս նահատակության տեսարաններից հեռու, և Եկեղեցին, այնուամենայնիվ, առաջ է շարժվում»:[4]

1898 թվականին՝ մոտ 11 տարի անց, Նախագահ Թեյլորի թաղմանը Սրբերին հավաստիացնելուց հետո, Լորենզո Սնոուն կրկին հայտնվեց այդպիսի հավաստիացման անհրաժեշտության առաջ: Այդ ժամանակ նա ծառայում էր որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ: Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը ծառայում էր որպես Եկեղեցու Նախագահ և նրա ֆիզիկական առողջությունը գնալով վատթարանում էր: Նախագահ Սնոուն գիտեր, որ համաձայն հաջորդման հաստատված կարգի, եթե նա Նախագահ Վուդրուֆից ավելի շատ ապրեր, պետք է ինքը նախագահեր Եկեղեցու վրա: Մի երեկո նա առանձնապես ճնշված զգաց այդ հնարավորությունից: Համարելով իրեն ոչ համապատասխան ստանձնելու Եկեղեցու Նախագահի պաշտոնը, նա մենակ գնաց Սոլթ Լեյքի Տաճար՝ աղոթելու: Նա խնդրեց Աստծուն խնայել Նախագահ Վուդրուֆի կյանքը, բայց նաև խոստացավ, որ կկատարեր ամեն պարտականություն, որ Աստված կպահանջեր իրենից:

Նախագահ Վուդրուֆը մահացավ 1898 թվականի սեպտեմբերի 2- ին, տաճարում Նախագահ Սնոուի ջերմեռանդ աղոթքից ոչ շատ անց: Նախագահ Սնոուն Բրիգամ քաղաքում էր, մոտ 60 մղոն (100կիլոմետր) Սոլթ Լեյք Սիթիից՝ դեպի հյուսիս, երբ նա ստացավ նորությունը: Նա պատրաստվեց գնացքով ճանապարհորդել դեպի Սոլթ Լեյք Սիթի, նույն երեկոյան: Իր ժամանելուն պես, նա կրկին գնաց տաճարի մի առանձին սենյակ՝

աղոթելու: Նա ընդունում էր անհամապատասխանության իր զգացումները, բայց պատրաստակամություն արտահայտեց կատարել Տիրոջ կամքը: Նա առաջնորդություն խնդրեց և սպասեց պատասխանի, բայց ոչ մի պատասխան չստացավ: Այսպիսով, նա հեռացավ սենյակից:

Մտնելով մի երկար նախասենյակ, նա ստացավ պատասխան— և հավաստիացում—, որոնք փնտրում էր: Նրա առջև կանգնած էր հարություն առած Փրկիչը, որն ասաց նրան, թե ինչ պիտի աներ: Նախագահ Մնոուն հետագայում պատմեց իր թոռնուհուն՝ Ալիս Փոնդին այս փորձառության մասին: Ալիսը գրի է առել այն զրույցը, որը նա ունեցել էր իր պապի հետ, Սոլթ Լեյքի Տաճարում:

«Մեծ միջանցքում, որը տանում էր դեպի սելեստիալ սենյակ, ես քայլում էի պապիկից մի քանի քայլ առաջ, երբ նա կանգ առավ և ասաց. «Մի րոպե սպասիր, Ալլի, ես ուզում եմ մի բան պատմել քեզ: Սա հենց այն տեղն է, որտեղ Տեր Հիսուս Քրիստոսը հայտնվեց ինձ Նախագահ Վուդրուֆի մահվան ժամանակ: Նա պատվիրեց ինձ անմիջապես գնալ և միանգամից ընդունել Եկեղեցու Առաջին Նախագահությունը և ոչ թե սպասել, ինչպես արվել էր նախորդ նախագահների մահվան ժամանակ, և որ ես պետք է հաջորդեի Նախագահ Վուդրուֆին»:

Հետո պապիկը մի քայլ էլ մոտեցավ և, իր ձախ ձեռքը պարզելով, ասաց. «Նա կանգնած էր հենց այստեղ, հատակից մոտ երեք ոտնաչափ բարձրությամբ: Կարծես Նա կանգնած էր մաքուր ոսկե տախտակի վրա:

Պապիկը պատմեց ինձ, թե ինչ փառահեղ անձնավորություն է Փրկիչը և նկարագրեց Նրա ձեռքերը, ոտքերը, դեմքի արտահայտությունը և գեղեցիկ ճերմակ թիկնոց ը, որից այնպիսի փառավոր ճերմակության և պայծառության լույս էր ճառագում , որ նա հազիվ էր կարողանում նայել Նրան:

Այնուհետև [պապիկը] մեկ քայլ էլ մոտեցավ և դրեց իր աջ ձեռքը իմ գլխին ու ասաց. «Ուրեմն, թոռնիկս, ես կամենում եմ, որ դու հիշես, որ սա քո պապիկի վկայությունն է, որը նա պատմել է քեզ իր սեփական շուրթերով, որ նա իսկապես տեսել է Փրկչին, այստեղ Տաճարում, և խոսել է նրա հետ դեմ առ դեմ»:[5]

Նախագահ Մնոուի հանդիպումը Փրկչի հետ մի սրբազան հաստատում էր այն ճշմարտության, որը նա գիտեր շատ տարիներ, որ Հիսուս Քրիստոսը Եկեղեցու գլուխն է: Այս ճշմարտությունից ոգեշնչված, նախագահ Մնոուն հաճախ էր վկայում, որ չնայած ընդդիմությանը, Եկեղեցին կշարունակի իր առաջընթացը: Նա արտահայտեց իր երախտագիտությունը այն արտոնության համար, որ հանդիսանում էր մասնակից Տիրոջ վերջին օրերի աշխատանքի այդ առաջ ընթացող շարժմանը: 1898 թվականի գերագույն համաժողովում, որում նա հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ, նա ասաց. «Եկեք որոշենք մեր սրտերում, եկեք մեր ներսում վկայենք Տիրոջը, որ մենք ավելի լավ մարդիկ կլինենք, ավելի միավորված ժողովուրդ, մեր հաջորդ համաժողովում, քան մենք այսօր ենք: Սա պետք է լինի յուրաքանչյուր տղամարդու և կնոջ զգացումը և վճռականությունը, ովքեր ներկա են այս հանդիսավոր հավաքույթում: Ես իմ սրտում զգում եմ, որ կփորձեմ լինել ավելի նվիրված, քան եղել եմ անցյալում, ի օգուտ Աստծո թագավորության և Նրա նպատակների իրագործման»[6] [տես առաջարկ 1, էջ 285]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Ի իրագործումն մարգարեության՝ Տերը վերականգնել է Իր Եկեղեցին երկրի վրա:

Որպես Աստծո ծառա, ես վկայություն եմ բերում Նրա կամքի հայտնության մասին տասնիններորդ դարում: Այն եկավ Իր սեփական ձայնով երկնքից, Իր Որդու անձնական հայտնությամբ և սուրբ հրեշտակների սպասավորմամբ: Նա պատվիրում է բոլոր մարդկանց ամենուրեք ապաշխարել, դառնալ իրենց չար ուղիներից և անարդար ցանկություններից, մկրտվել իրենց մեղքերի թողության համար, որպեսզի նրանք կարողանան ստանալ Սուրբ Հոգին և գան միավորման Նրա հետ: Նա սկսել է փրկագնման աշխատանքը, որը սկսվել է բոլոր սուրբ մարգարեների, իմաստունների ու տեսանողների կողմից, բոլոր դարերում և մարդկության բոլոր ցեղերի մեջ:[7]

Մորմոնիզմը, որը Վերջին Օրերի Սրբերի կրոնի մականունն է, չի դավանում որևէ նոր բան, բացառությամբ այս սերնդի համար: Այն հայտարարում է իրեն որպես փրկության սկզբնական

«Եղբայրներ և քույրեր, Աստված հիմնել է Իր Եկեղեցին և Թագավորությունը երկրի վրա մարդկության ընտանիքի օգտի և օրհնության համար»:

ծրագիր, որը հաստատվել էր երկնքում նախքան աշխարհի ստեղծումը և հայտնի է դարձվել մարդուն տարբեր դարերում։ Այն, որ Ադամը, Ենովքը, Նոյը, Աբրահամը, Մովսեսը և այլ հնադարյան արժանավորներ ունեցել են այս կրոնը հաջորդաբար, մի շարք տնտեսություններում, մենք որպես ժողովուրդ, իսկապես հավատում ենք։ . . . Կարճ ասած, Մորմոնիզմը, նախնադարյան Քրիստոնեության վերականգված հավատքն է, նորից ետ բերված հնադարյան Ավետարանը, այս անգամ առաջնորդելու դեպի վերջին տնտեսություն, ներկայացնելու Հազարամյակը և եզրափակելու փրկագնման աշխատանքը, ինչ վերաբերում է այս մոլորակին։[8]

Մենք կարողանում ենք տեսնել Ամենազորի ձեռքը մի թագավորություն հաստատելիս, որի մասին խոսվել է դարեր առաջ Դանիել մարգարեի միջոցով, մի թագավորություն, որը կաճի և կտարածվի մինչև լցնի ողջ երկիրը [տես Դանիել Բ.44]։ Երբ լույսն ու բանականությունն այնքան համատարած կտարածվեն, որ այլևս անհրաժեշտ չի լինի որևէ մարդու համար ասել իր ընկերներին. «Ճանաչեցէք Տիրոջը, որովհետեւ նորանք ամենքը պիտի ճանաչեն ինձ, նորանց փոքրերիցը մինչեւ նորանց մեծերը» [տես Երեմիա ԼԱ.34], և երբ Տիրոջ Հոգին դուրս կթափվի ամեն մարմնի վրա այնչափ, որ նրանց որդիներն ու դուստրերը կմարգարեանան, ծերերը երազներ կերազեն, նրանց երիտասարդները կտեսնեն տեսիլքներ [տես Յովել Բ.28], և երբ չի լինի ոչ մի բան, որ վնասի կամ ավերի Տիրոջ ողջ սուրբ սարում [տես Եսայիա ԺԱ.9].[9] [տես առաջարկ 2, էջ 285]։

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կառուցված է ամուր հիմքի վրա և այն կշարունակի առաջ գնալ, չնայած ընդդիմությանը։

Եղբայրներ և քույրեր, Աստված հիմնել է Իր Եկեղեցին և Թագավորությունը երկրի վրա մարդկության ընտանիքի օգտի և օրհնության համար՝ առաջնորդելու նրանց ճշմարտության ուղով, պատրաստելու նրանց վեհացման համար Իր ներկայության մեջ և Իր փառավոր գալստյան և թագավորության համար երկրի վրա։ Նրա նպատակները կիրագործվեն, չնայած ամեն ընդդիմության, որը կբերվի նրանց դեմ չար մարդկանց և խավարի զորությունների կողմից։ Ամեն ինչ որ կանգնած է

այս աշխատանքի ճանապարհին, կհեռացվի։ Ոչ մի բան չի կարող դիմանալ Նրա զորությանը, այլ ամեն բան, որ նա վճռել է, լիովին և կատարելապես կիրականացվի։ Աստծո սերը Իր ժողովրդի հանդեպ կշարունակվի և կմնա և նրանք կհաղթեն Նրա զորությամբ։[10]

Այսպիսով խոսեք այս թագավորության կործանման մասին։ . . . Ինչո՞ւ դուք պետք է փորձեք քաղել աստղեր երկնքից, կամ էլ լուսինն ու արևը իր ուղեծրից։ Դա երբեք չի կարող իրագործվել, քանզի դա Ամենազորի գործն է։[11]

Աստծո թագավորությունը շարժվում է առաջ ուժով ու զորությամբ և հսկայական ու փառահեղ հաջողությամբ։[12]

Այս աշխատանքը կառուցված է ամուր հիմքի վրա, լինելով կառուցված դարերի վեմի վրա։. . . Անկախ նրանից, թե ովքեր կկորչեն ճանապարհին և նավաբեկության կենթարկեն իրենց հավատքը, Եկեղեցին կգնա առաջ։[13]

Այս Եկեղեցին կդիմանա, որովհետև այն ամուր հիմքի վրա է։ Այն մարդուց չէ, այն Նոր Կտակարանի կամ Հին Կտակարանի ուսումնասիրությունից չէ, այն արդյունք չէ ուսման, որը մենք ստանում ենք քոլեջներում կամ սեմինարիաներում, այլ այն եկել է ուղիղ Տիրոջից։ Տերն այն ցույց է տվել մեզ Սուրբ Հոգու լույսի միջոցով հայտնի դարձված սկզբունքներով և Ամեն մարդ կարող է ստանալ այս նույն ոգին։

. . . Նա տալիս է մեզ գիտելիք, թե մենք ինչ պիտի անենք, այնքանով, որքանով մենք հոժար ենք զոհաբերել մեր կյանքը, քան դեմ գնալ այդ գիտելիքին։ Նա բացում է մեզ համար սելեստիալ արքայության գաղտնիքները և նա անընդհատ հաղորդում է մեզ բաներ, որոնք երբեք չեն իմացվել նախկինում։ Այս գիտությունն ու բանականությունը անընդհատ ընդլայնվում են մեզ համար։ . . .

. . . Մենք խիստ շատ գիտելիք ենք ստացել և չենք կարող այլևս կանգ առնել մեր նպատակներում։ Նրանք, ովքեր ցանկանում են հալածել և տապալել Մորմոնիզմը, թող առաջ գնան և անեն իրենց աշխատանքը։ . . . Մեր աշխատանքն է աճել Աստծո գիտության մեջ, պահել Աստծո պատվիրանները, հավատարիմ լինել և շարունակել աճել և դառնալ ավելի ու ավելի

կատարյալ, երբ զարգանում ենք տարիների ընթացքում[14] [տես առաջարկ 3, էջ 285]։

Մենք Աստծո ժողովուրդն ենք, և Նա կպաշտպանի մեզ, երբ մենք առաջ ենք գնում և անում այն ամենը, ինչ Նա պահանջում է։

Շատ դեպքերում, . . . երբ Աստծո ժողովրդի կործանումը թվում էր անխուսափելի և թվում էր փախուստի ճանապարհ չկար, . . . հանկարծ մի բան էր հայտնվում կամ մեկ այլ բան, որը նախապատրաստվել էր նրանց փրկության համար, խուսափելու սպառնացող կործանումից։ Մենք դա տեսնում ենք Իսրայելացիների դեպքում, երբ առաջնորդվում էին Մովսեսի կողմից։ Երբ նրանք հասան Կարմիր ծովին և եգիպտական բանակը նրանց հետապնդելով սպառնում էր նրանց կործանել, թվում էր ճանապարհ չկար փախուստի, բայց հենց այդ պահին, երբ պահանջվում էր ազատագրում, ահա այն հայտնվեց և նրանք ազատվեցին [տես Ելից ԺԴ.10–25]։

Այդպես է եղել և այդպես էլ կլինի հավիտյան մեզ հետ։ Չնայած մեր դժվարությունները կարող են շատ մեծ թվալ, սակայն կլինեն ապահովված միջոցներ մեր փախուստի համար, եթե մենք ինքներս կատարենք այն պարտականությունները, որոնք պահանջվում են մեզանից, որպես Աստծո զավակներ։ Բայց կարող է ապագայում անհրաժեշտ դառնալ —և սա է այն կետը որ ես ուզում եմ նշել, որոշ Սրբերի խաղան Եսթեր թագուհու դերը և հոժար լինեն զոհաբերել ցանկացած բան և ամեն բան, որ պահանջվում է իրենց ձեռքից, Վերջին Օրերի Սրբերի ազատումը իրագործելու նպատակով։

Առաջինը, մենք պետք է իմանանք, որ մենք Աստծո ժողովուրդն ենք։ . . . Մեր գործն էառաջ գալ ինչպես արեց Եսթերը, և հոժար լինել վտանգի ենթարկելու ամենը՝ ժողովրդի փրկության համար։ Հանձն առնելով իր անելիքը, Եսթերն ասաց. «Եթե կմեռնեմ թող մեռնեմ» [տես Եսթեր Դ.3–16]։ . . . Բայց Աստծո ժողովուրդը չի մեռնի։ Միշտ էլ կլինի մի խոյ մացառներումը բռնված՝ նրանց ազատման համար [տես Ծննդոց ԻԲ.13]։ . . .

. . . Տերն ասել է. «Ես իմ սրտում որոշել եմ, որ ես կփորձեմ ձեզ բոլոր բաներում, թե արդյոք դուք կմնաք իմ ուխտի մեջ,

մինչև իսկ մահով, որպեսզի դուք արժանի գտնվեք։ Քանզի եթե դուք իմ ուխտի մեջ չմնաք, ապա արժանի չեք ինձ» [տես ՎևՈՒ 98.14–15]։ Մենք որոշ բան ունենք ապրելու համար, մենք ամեն ինչ ունենք մեռնելու համար։ Բայց այս դեպքերում մահ չկա։ Կա փրկություն և կա կյանք, եթե Աստծո ժողովուրդը, նրանք ովքեր կոչվում են Տեր Հիսուս Քրիստոսի անունով, պահեն Նրա պատվիրանները և անեն այն, ինչ ընդունելի է Նրա աչքում։ Ամենազորի ծրագրում չկա այնպիսի բան, որ Նա թույլ տա իր ժողովրդին կործանվել։ Եթե մենք ճիշտ վարվենք և պահենք Նրա պատվիրանները Նա անպայման կազատի մեզ ամեն դժվարությունից[15] [տես առաջարկ 4, էջ 286]։

Ժամանակն է մեզ համար խոնարհեցնել մեզ Աստծո առջև և իրագործել աշխատանքը, որը Նա վստահել է մեզ։

Նրանց գործը, ովքեր հայտարարում են, որ զբաղված են Նրա աշխատանքով, շարժվել շարունակելն է, առաջ գնալը, . . . առանց տրտնջալու կամ հարկադրվելու, քանի դեռ մնում է մի քայլ էլ կատարելու դեպի առաջ, այդ քայլը պետք է կատարել։[16]

Այժմ ժամանակն է, որ Վերջին Օրերի Սրբերը խոնարհեցնեն իրենց Ամենազորի առջև։ . . .Այժմ ժամանակն է պարզել, թե ինչ են պարտավորվել անել և լինել, ժամանակն է Վերջին Օրերի Սրբերի համար ապաշխարել իրենց մեղքերից և սխալներից և կանչել առ Ամենազորը, որպեսզի Նրա օգնությունը տրվի,. . . որ մենք առաջ գնանք և իրագործենք այն վիթխարի աշխատանքը, որը մեր խնամքին է վստահված։[17]

Մենք զբաղված ենք Աստծո գործով։ Հեռանկարները մեր առջևում փառահեղ են, բայց եկեք միշտ հիշենք, մեր ձեռքի ամեն գործում, որ մենք Աստծո ծառաներն ենք և կատարում ենք Նրա կամքը։ Թող մեր հավատարմությունը չխաթարվի, այլ մեր հավատքն անընդհատ աճի, երբ մենք առաջ ենք գնում կյանքում։ Ես բավարարված կլինեմ գործել որտեղ Ճակատագիրն է ինձ դրել, և խնդրել Տիրոջը, թե ինչ կարող եմ անել օգնելու Աստծո թագավորությունը կառուցելու այդ տեղում, և օգնելու ինձ ձեռք բերել գոյության միջոցներ իմ ընտանիքի համար։[18]

Մենք կարող ենք աճել գիտելիքով և զորությամբ և մեր ունակությամբ՝ Աստծո թագավորությունը երկրի վրա կառուցելու համար, և դա նաև մեր ջանասիրության, մեր համեստության և հավատարմության միջոցով առ այն ուխտերը, որ մենք կապել ենք:[19]

Կարող է թվալ Տիրոջ և Նրա նպատակների ուղիները լիովին չհասկանալու մեր անտեղյակության պատճառով, որ մեր առջև դրված ծրագիրն իրագործելիս մեր առաջընթացում, մենք երբեմն հասնենք մի տեղ, որտեղ կարող ենք կարճ դադար առնել, բայց փաստը նրանում է, որ այդպիսի բան չկա ծրագրում և չի էլ կարող լինել, քանի դեռ մարդիկ շարունակում են իրենց գործերը իրենց վստահությունը դնելով Աստծո խոստումների վրա։ . . .

. . . Թող յուրաքանչյուր մարդ հավատարիմ լինի և շատ ջանասեր Աստծո պատվիրանները պահելիս և զարգացնի բարիք անելու ցանկությունը իրեն շրջապատող մարդկանց և եթե մտածելով անցյալի մասին, մենք տեսնում ենք, մենք խստորեն չենք գործել ըստ մեր խղճի թելադրանքի և պարտականության, եկեք մեզ ճիշտ դարձնենք Աստծո և մարդկանց առջև, որպեսզի մենք կարողանանք պատրաստ լինել ամեն բանի, որ կարող է պատահել։ Թող տաճարների և պաշտամունքի տների կառուցումը շարունակվի, եկեք շարունակենք կրթել [մեր] երեխաներին և նրանց դաստիարակել Տիրոջ երկյուղով, և թող Ավետարանը շարունակվի տարվել հեռու ազգերին։ . . .

Սա Աստծո աշխատանքն է և նա է ղեկավարում դրա ընթացքը և առաջադիմությունը երկրի վրա և այս աշխատանքը պետք է լինի ամենակարևորը մեր մտքում և քանի դեռ մենք գտնվում ենք պարտականության ուղում, մենք անկասկած ամուր կմնանք և անսասան ու վճռական մեր նպատակում և այսպիսով ցույց կտանք աշխարհին մեր հավատքն ու նվիրվածությունը ճշմարտության սկզբունքներին, որոնք Աստված է հայտնի դարձրել։ . . .

Տերը շատ հնարավոր է ծանր ճնշում գործադրի մեզ վրա, որը կպահանջի մեծ զոհաբերություն իր ժողովրդի ձեռքից։ Հարցը մեզանում է, թե արդյոք մենք կանենք այդ զոհաբերությունը։ Այս աշխատանքը Ամենազորի գործն է և խոստացված օրհնությունները, որոնց մենք ձգտում ենք, կգան, երբ մենք

կստուգվենք և կանցնենք չարչարանքով։ Ես չունեմ հատուկ խոսք այս ժողովրդին, որ կա կամ չկա նրանց առջև կրակի փորձություն, որով նրանք կկանչվեն անցնել, հարցն ինձանում է, թե արդյոք ես պատրաստ եմ ստանալ և ճիշտ ու պատշաճ օգտագործել ամեն օրհնություն, որ Տերը պահել է ինձ համար, կամ՝ Իր ժողովրդի, կամ՝ մյուս կողմից, արդյոք պատրաստ եմ կատարել ամեն զոհաբերություն, որ Նա կպահանջի ինձանից։ Ես չէի տա մի ծեղ իսկ հանուն այն կրոնի, որի համար չարժե ապրել և որի համար չարժե մեռնել, և ես շատ չէի տա այն մարդու համար, որը չի կամենում զոհաբերել իր ամեն ինչը, հանուն իր կրոնի։

Դեհ, ես ասում եմ ինչպես մեկին այնպես էլ բոլորին՝ Առաջ շարժվեք, առաջ շարժվեք և տեսեք Տիրոջ փրկությունը և լուռ մի կանգնեք[20] [տես առաջարկ 5, էջ 286]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ դուք ուսումնասիրեք գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանել։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք 275–78 էջերի պատմությունները։ Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում, երբ ասում ենք որ Աստծո թագավորությունը առաջ է շարժվում։ Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ տեսնել, որ Աստծո թագավորությունը շարժվում է առաջ։
2. Էջ 280 ի վերջին պարբերությունում, Նախագահ Մնոուն անդրադառնում է Հին Կտակարանի չորս մարգարեությունների։ Ի՞նչ ուղիներով են իրագործվում այդ մարագարեություններն այսօր։
3. Ուսումնասիրեք Նախագահ Մնոուի ուսմունքները չնայած ընդդիմությանը Եկեղեցու առաջ շարժվելու մասին (էջեր 280–81)։ Ինչպե՞ս կարող են այս ուսմունքներն օգնել մեզ, երբ մարդիկ հալածում են մեզ մեր հավատքի պատճառով։ Ինչպե՞ս եք դիմակայել ընդդիմությանը, ունենալով ձեր վկայությունը։

4. Էջ 282- ում քննարկեք երրորդ և չորրորդ պարբերությունները: Երբ մեզանից պահանջվում են զոհաբերություններ, ի՞նչ կարող ենք սովորել Եսթերի օրինակից: Այդպիսի իրավիճակներում ի՞նչ եք կարծում, ինչպես կօգնի դա մեզ իմանալ, որ մենք Աստծո ժողովուրդն ենք:
5. Գլխի վերջին բաժնում Նախագահ Մնոուն խորհուրդ է տալիս անդամներին կառուցել Աստծո թագավորությունը, որտեղ որ Տերն է նրանց դրել: Ի՞նչ ուղիներով են ծնողների ջանքերը տանն օգնում կառուցել Աստծո թագավորությունը ողջ երկրագնդում: Ինչպե՞ս կարող են տնային ուսուցիչները և այցելող ուսուցիչները կառուցել Աստծո թագավորությունը:

Սոնչվող սուրբ գրություններ. Մատթեոս ԻԴ.14, Եթեր ԺԲ.27, Մորոնի 7.33, ՎևՈՒ 12.7–9, 65.1–6, 128.19–23

Օգնություն ուսուցչին. «Հաճախ օգտակար է սկսել մտածել եկող դասի մասին, անմիջապես, նախորդ դասն ուսուցանելուց հետո: Դուք հավանաբար լավագույնս տեղյակ կլինեք նրանցից, ում ուսուցանում եք, և նրանց կարիքներից ու հետաքրքրություններից, նրանց հետ լինելուց անմիջապես հետո» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 97):

Հղումներ

1. Տես Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 79–82:
2. In "Laid to Rest: The Remains of President John Taylor Consigned to the Grave," *Millennial Star,* Aug. 29, 1887, 549.
3. In "Laid to Rest: The Remains of President John Taylor Consigned to the Grave," 549.
4. In "Laid to Rest: The Remains of President John Taylor Consigned to the Grave," 549.
5. Alice Pond, in LeRoi C. Snow, "An Experience of My Father's," *Improvement Era,* Sept. 1933, 677; see also correspondence between Elder John A. Widtsoe and Noah S. Pond, husband of Alice Armeda Snow Young Pond, Oct. 30, 1945, and Nov. 12, 1946, Church History Library. Ալիսը քսան տարեկան դեռ չկար, օժտում ստացած և կնքված իր ամուսնու հետ, երբ Նախագահ Սնոուն կիսվեց այս փարձառությամբ նրա հետ տաճարում:
6. In Conference Report, Oct. 1898, 55.
7. "Greeting to the World by President Lorenzo Snow," *Deseret Evening News,* Jan. 1, 1901, 5.
8. "'Mormonism' by Its Head," *Land of Sunshine,* Oct. 1901, 252.
9. *Deseret News,* Jan. 24, 1872, 597.
10. *Deseret Semi-Weekly News,* Oct. 4, 1898, 1.
11. *Deseret News,* Jan. 24, 1872, 598.
12. *Deseret Weekly,* Nov. 4, 1893, 609.
13. *Millennial Star,* May 12, 1890, 293; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1890 general conference.
14. In Conference Report, Apr. 1900, 3–4.
15. *Deseret News,* Nov. 22, 1882, 690.
16. *Deseret News: Semi-Weekly,* June 27, 1882, 1.
17. *Deseret News,* Nov. 22, 1882, 690.
18. In Journal History, July 11, 1865, 2.
19. *Deseret News,* May 15, 1861, 82.
20. *Deseret News: Semi-Weekly,* June 27, 1882, 1.

Նույնիսկ Կիրթլենդում տեղի ունեցած այն մեծ դրսևորումներից հետո, շատ Սրբերը, անգամ Կիրթլենդում, ընկան ուրացության մեջ։

Աստծուն ավելի շատ սիրել, քան մենք սիրում ենք աշխարհը

«Մենք պետք է հասնենք . . . ավելի բարձր մակարդակի՝ մենք պետք է սիրենք Աստծուն ավելի շատ, քան մենք սիրում ենք աշխարհը»:

Լորենզո Սնոուի կյանքից

Կիրթլենդում, Օհայո, Լորենզո Սնոուի մկրտությունից և հաստատումից անմիջապես հետո, մի քանի Վերջին Օրերի Սրբեր, ներառյալ որոշ Եկեղեցու ղեկավարներ, դեմ կանգնեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Ըստ Լորենզո Սնոուի այս ուրացությունն առաջացավ չարաշահման պատճառով, կամ այլ խոսքով, անսովոր գործարարական ռիսկերի դիմելու և արագ հարստանալու հույս ունենալու պատճառով: Կուրացած աշխարհի անցողիկ բաների հանդեպ ցանկության պատճառով մարդիկ հեռացան, մեջքով շրջվեցին ավետարանի հավերժական օրհնություններից:

Մոտ 50 տարի անց, Նախագահ Սնոուն՝ ծառայելով որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, խոսեց մի խումբ Վերջին Օրերի Սրբերի հետ՝ Լոգանում, Յուտա: Նա պատմեց նրանց ձախորդության մասին, որը պատահել էր Կիրթլենդում և նախազգուշացրեց նրանց, որ իրենք էլ շուտով գուցե նմանատիպ փորձությունների ենթարկվեն: «Արագընթաց մի բան է գալիս, որը կփորձի ձեզ, հավանաբար այնպես ինչպես երբեք չեք փորձվել նախկինում, ասաց նա: Այնուամենայնիվ այն ամենը , ինչ հարկավոր է մեզ անել այժմ, տեսնելն է, թե ինչում են մեր հանցանքներն ու թուլությունները, եթե մենք ունենք դրանք: Եթե մենք անցյալում անհավատարիմ ենք եղել, եկեք վերանորգենք մեր ուխտերն Աստծո հետ և որոշենք , ծոմ

պահելով և աղոթելով, որ մենք ներում ստանանք մեր մեղքերին, որ Ամենազորի Հոգին կարողանա հանգչել մեզ վրա, որպեսզի զուցե կարողանանք խուսափել այդ հզոր գայթակղություններից, որոնք մոտենում են: Սև ամպեր են հավաքվում: Դուք տեսնում եք թե ինչպիսին էին այդ չարաշահման ոգու հետևանքները Կիրթլենդում: Ուստի զգուշացեք:[1]

Քանի որ Նախագահ Սնոուի նախազգուշացումը շարունակում է վերաբերել Վերջին Օրերի Սրբերին այսօր, Լոգանում նրա քարոզի մեծ մասն ընդգրկված է այս գլխում: Նա ասաց.«Գուցե մի քանի խոսք այն ժամանակ Կիրթլենդում մեր վիճակի մասին, կարող է մեզ դաս ծառայել ապագայում՝ կարող է տալ մեզ օգտակար խրատներ»[2] [տես առաջարկ 1, էջ 296]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Երբ մարդիկ թույլ են տալիս, որ աշխարհիկը հագեցնի իրենց մտքերն ու սրտերը, նրանք մեջքով են շրջվում հավերժական սկզբունքներին:

Շատ հստակորեն հիշում եմ այն վտանգավոր ժամանակները, որոնք տեղի ունեցան Կիրթլենդում . . . , որտեղ Աստծո Մարգարեն էր նախագահում, որտեղ Աստվածն Ինքը, այսինքն՝ Հիսուսը, Աստծո Որդին, հայտնվեց և ցույց տվեց Իրեն՝ Իր փառքով: Նա կանգնած էր Տաճարի ամբիոնի բազրիքի վրա, որը պատվիրանով էր կառուցված: Նրա ոտքերի տակ աղյուսապատ սաթագույն հատակ էր մաքուր ոսկուց: Նրա մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը: Նրա դեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ: Նրա ձայնն՝ ասես շառաչյուն մեծ ջրերի հնչյուն լիներ [տես ՎևՈՒ 110]: Այս սքանչելի դրսևորումը տաճարում էր, որը կառուցվել էր Նրա պատվին: Ես Կիրթլենդում էի այդ ժամանակ, որտեղ մենք անցանք այնպիսի իրադարձություններով, որոնք երբեմն, կարծում եմ, այժմ սկսում ենք կրկնել: Հանգամանքները, որոնք շրջապատում էին Վերջին Օրերի Սրբերին այդ ժամանակ, առանձնահատուկ բնույթի էին, համենայն դեպս մարդկանց վրա թողված ազդեցությունները առանձնահատուկ բնույթ ունեին: . . . Այդ ժամանակ չարաշահման մի ոգի համակեց այս ազգի մարդկանց մտքերը: Կային փողի չարաշահումներ, բանկային չարաշահումներ, հողային

չարաշահումներ, չարաշահումներ քաղաքային հողակտորների, չարաշահումներ բազմաթիվ այլ ասպարեզներում: Չարաշահման այդ ոգին բարձրացավ աշխարհից և հեղեղեց Սրբերի սրտերը սաստիկ ջրերի հզոր ալիքի պես և շատերն ընկան և ուրացան:[3]

Նրանցից [Կիրթլենդի Սրբերից] ոմանք սկսեցին չարաշահումներ անել, նրանք մոռացան իրենց կրոնը, նրանք մոռացան այն սկզբունքները, որոնք նրանց հայտնի էին դարձվել և նրանցից շատերն ընկան այդ ժամանակների ոգու մեջ և քշվեցին հեռու չարաշահմումներով: Դժվարություններ բարձրացան՝ նախանձություն և կռիվ և Տերը լինելով դժգոհ նրանցից, նրանց մեջ կործանում բերեց և նրանք մասնատվեցին որպես բնակավայր:[4]

Այս մեծ ուրացությունից հենց առաջ Տերը դուրս թափեց սքանչելի օրհնություններ մարդկանց վրա: Ավետարանի պարգևները՝ հավերժության հարստությունները դուրս թափվեցին նշանակալի չափով: Հրեշտակներ էին այցելել նրանց: Աստծո Որդին, ինչպես ավելի շուտ նշվեց, խոսեց Իր ծառաների հետ: Տաճարի նվիրագործման ժամանակ օրհնությունները, որոնք մարդիկ ստացան սքանչելի էին: Աստծո բարեհաճությունների այդ հարուստ ժամանակահատվածում ես ինքս, այցելեցի տարբեր ժողովներ, որոնք տեղի էին ունենում Տաճարում: Մենք ունենում էինք աղոթքի ժողովներ և վկայության ժողովներ և եղբայրներն ու քույրերն այնպիսի վկայություններ էին բերում, որ սքանչելի էին: Նրանք մարգարեանում էին, նրանք խոսում էին լեզուներ, և ունեին լեզուների թարգմանություն մեծ չափով: Այս օրհնությունները գրեթե համընդհանուր էին Կիրթլենդի ժողովրդի վրա: Նրանց սրտերն այն ժամանակ նվիրված էին, նրանք այնպես էին զգում, որ կարծես թե կարող էին զոհաբերել ցանկացած բան, որ ունեին: Նրանք այնպես էին զգում, կարծես ապրում էին Աստծո հետ, և դա բնական էր, որ նրանք պիտի ունենային այդ զգացումը, այդպիսի սքանչելի ազդեցությունների ներքո:

Բոլոր այս և շատ ուրիշ օրհնություններ, որոնք ես ժամանակ չունեմ թվարկելու, վայելվում էին Վերջին Օրերի Սրբերի կողմից հենց նախքան այն ժամանակը, երբ այդ չարաշահման ոգին սկսեց լցվել մարդկանց սրտերը: Մարդ կարող է մտածել,

որ այս սքանչելի դրսևորումները ստանալուց հետո, ոչ մի գայթակղություն չէր կարող տապալել Սրբերին։ Բայց դա տեղի ունեցավ և այն կարծես հողմի պես ցրեց նրանց դեպի չորս կողմերը։։

Աննախադեպ կարող է թվալ, բայց այդ չարաշահման ոգին համակեց Տասներկու Առաքյալների քվորումին և Յոթանասունների Յոթ Նախագահների Քվորումին, իրականում Եկեղեցում չկար մի քվորում, որ այդ չարաշահման ոգով քիչ թե շատ համակված չլիներ։ Երբ այդ ոգին աճեց, հետևեց պառակտումը։ Եղբայրներն ու քույրերը սկսեցին մեղադրել և վիճաբանել միմյանց հետ, որովհետև նրանց շահերը ներդաշնակության մեջ չէին։

Մի՞թե այդպես կլինի այժմ Վերջին Օրերի Սրբերի հետ, ում ես դիմում եմ։ Վախենում եմ, որ դա գալիս է, բայց որքանով այն կազդի ձեզ վրա, ես դա չեմ կարող ասել։ Այնուամենայնիվ, դուք կունենաք փորձառություն, և գուցե դա խիստ անհրաժեշտ է, որ ունենաք։

. . . Առաքյալների քվորումի կեսը Կիրթլենդի օրերին ընկան այս չար ազդեցությունների տակ։ Դա այս չարաշահումն էր, ոսկու այս սերը՝ աշխարհի աստվածը, որն առաջացրեց այդ շատ տխուր հետևանքը։ Եվ եթե այն ունեցավ այդ ազդեցությունը նրանց վրա, ովքեր բարձրագույն քահանայությունն էին կրում երկրի վրա, ինչպես այն կազդի մեզ վրա, ովքեր ըստ երևույթին չունենք այն խելամտությունը, տեղեկացվածությունը և փորձառությունը, որ նրանք ունեին։ . . .

Այսպիսով, դուք լավ ժողովուրդ եք։ Աստված սիրում է ձեզ։ Նա հիանում է ձեր արդարակեցությամբ և Նա չի կամենա տեսնել այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան. . . Կիրթլենդում։ Դրա կարիքը չկա։ Մենք մեր սեփական ձեռքերում ունենք զորություն պահպանելու մեզ այդ բաներից, որոնք բաժանեցին Սրբերին Կիրթլենդում և տապալեցին Տասներկուսի կեսին։ Տերը չի կամենում, որ այս վերջին ժամանակներում կրկին ականատես լինենք այդ իրադարձություններին։[5]

Վերջին Օրերի Սրբերը պարտավոր են լինել չափազանց իմաստուն և խելամիտ չընկնելու այս տիպի ծուղակներ։ Դա օգտակար չէ։ Ոչ մի մարդու օգուտ չի տա մեջքով շրջվել այս

փառահեղ սկզբունքներին և այն բաներին , որոնք ստացվել են հավերժական աշխարհներից՝ այս բաներին մեջքով շրջվել և խառնվել ու մեզ նվիրել աշխարհի ողորմելի բաներին: Դա մեզ օգուտ չի տա: Ինչ գայթակղություն էլ պատահի մեզ կամ որին մենք այժմ ենք ենթարկվում, մենք պետք է լսենք անցյալի պատմությունը և թույլ չտանք մեզ պարտվել, այլապես մենք շատ կզղջանք[6] [տես առաջարկ 2, էջ 296]:

Մենք ուխտել ենք առանձնացնել մեզ աշխարհիկից և նվիրել մեզ Աստծո թագավորությանը:

Աշխարհի աստվածը ոսկին ու արծաթն է: Աշխարհը պաշտում է այս աստծուն: Նրանց համար նա ամենազոր է, չնայած նրանք գուցե չկամենան դա ընդունել: Այժմ ծրագրված է Աստծո նախախնամությամբ, որ Վերջին Օրերի Սրբերը պետք է ցույց տան, թե որքան են առաջադիմել այս գիտելիքում Աստծո իմաստությամբ և զորությամբ, որ իրենք չեն կարող պարտվել աշխարհի աստծո կողմից: Մենք պետք է գանք այդ կետին: Մենք պետք է նաև հասնենք մեկ այլ չափանիշի, ավելի բարձր մակարդակի՝ մենք պետք է սիրենք Աստծուն ավելի քան մենք սիրում ենք աշխարհը, ավելի քան սիրում ենք ոսկին կամ արծաթը և սիրենք մեր մերձավորին ինչպես ինքներս մեզ:[7]

Եթե մենք . . . ձախողվենք պահել մեր կապած ուխտերը, այսինքն՝ օգտագործել մեր ժամանակը, տաղանդը և ունակությունը՝ կառուցելու Աստծո թագավորությունը երկրի վրա, ինչպե՞ս կարող ենք սպասել դուրս գալու առաջին հարության առավոտյան, ճանաչված լինելով փրկագնման մեծ աշխատանքի համար: Եթե մենք մեր վարվելակերպով, սովորույթներով և հարաբերություններով կրկնօրինակում ենք . . . աշխարհին, այդպիսով մեզ նույնացնելով աշխարհի հետ, միթե՞ կարծում եք իմ եղբայրներ, որ Աստված մեզ կշնորհի օրհնություններ, որոնք մենք ցանկանում ենք ժառանգել: Ես ասում եմ ձեզ ոչ, Նա չի շնորհի:. . . Մենք պետք է շենացնենք մեզ երկնքի արդարությամբ և մեր սրտերում սերմանենք Աստծո արդարությունը: Տերն ասել է մարգարե Երեմիայի միջոցով. «Իմ օրէնքը պիտի դնեմ նորանց ներսումը, եւ նորանց սրտի վերան պիտի գրեմ այն, եւ ես պիտի լինեմ նորանց Աստուած, եւ նորանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն» [Երեմիա ԼԱ.33]: Սա այն

է, ինչ Տերն է ցանում անել և սա նա կիրագործի մեր մեջ, եթե մենք ենթարկվենք Նրա կամքին։[8]

Ես շնորհակալ եմ Աստծուն, որ աշխարհի կաշառակերության և ամբարշտության այս ժամանակներում մենք ունենք սուրբ և արդար տղամարդիկ և կանայք, ովքեր կարող են նվիրաբերել այն մեծ տաղանդները, որոնք Աստված է շնորհել իրենց՝ Նրա գովաբանությանն ու փառքին։ Եվ ես կասեի ավելին, որ կան հազարավոր առաքինի և պատվավոր տղամարդիկ և կանայք, ում Տերը հավաքել է ազգերից, որոնք նույնպես հոժար են նվիրաբերել իրենց ժամանակը և տաղանդները օգնելու իրականացնել Աստծո աշխատանքը ի օգուտ Իր զավակների[9] [տես առաջարկ 3, էջ 297]։

Մենք հետևում ենք Փրկչի օրինակին, երբ հրաժարվում ենք փոխել հավերժության փառքերը աշխարհի հարստությունների հետ։

Դուք կարող եք ակնկալել . . . խոչընդոտների հանդիպել կյանքի ճանապարհին, որոնք կստուգեն ձեր հաստատակամությունը բարձրագույն նպատակներին և ձեզանից ոմանք գուցե գայթակղվեն շեղվել ճշմարտության և պատվի արահետից և Եսավի նման, ցանկանան հրաժարվել հավերժության փառքերից բավարարվածության և հաճույքի մի քանի անցողիկ պահերի համար [տես Ծննդոց ԻԵ.29–34], ուրեմն . . . օգտվեք ձեր հնարավորությունից ընդօրինակելու մեր Փրկչին, երբ նրան առաջարկվեց այս աշխարհի փառքը, թե նա արդյոք կգործեր հիմարություն, նա պատասխանեց իր փորձիչին. *«Գնա յետս, սատանայ»* [տես Ղուկաս Դ.5–8]։[10]

Կյանքի մասին խորհրդածելիս ես գտնում եմ, որ այս աշխարհը կարճ է հավերժության հետ համեմատած, որ մեր բանականությունը, մեր միջի աստվածայնությունը միշտ գոյություն է ունեցել, երբեք չի ստեղծվել, և միշտ գոյություն կունենա ողջ հավերժության մեջ [տես ՎԵՈՒ 93.29]։ Ի նկատի ունենալով այս փաստերը, մեզ որպես բանական էակներ արժէ գիտակցել, որ այս կյանքը մի քանի օր հետո ավարտվում է, ապա գալիս է կյանքը, որը հավերժական է և ըստ այն չափի թե ինչպես ենք պահել պատվիրանները, մենք ունենք առավելություն

Հարուստ երիտասարդի նման, որը խոսեց Փրկչի հետ (տես Մատթեոս ԺԹ.16–22), որոշ մարդիկ այսօր զայթակղվում են շրջվել նրանցից, ովքեր կարիքի մեջ են:

նրանց հետ համեմատած, ովքեր ձախողվեցին կատարել այդ բարեփոխումները:[11]

Ավետարանը կապում է միմյանց բոլոր իր հետևորդների սրտերը, այն տարբերություն չի դնում, այն չի դնում խտրականություն հարուստի և աղքատի միջև, մենք բոլորս կապված ենք որպես մեկ անձնավորություն կատարելու պարտականությունները, որոնք դրված են մեզ վրա: . . . Այժմ թույլ տվեք մի հարց տալ: Ո՞վ ունի որևէ բան, որը կարող է իսկապես և ճշմարտապես այս աշխարհի բարիքներից իր սեփականը կոչել: Ես այդպես չեմ կարծում, ես ընդամենը տնտես եմ շատ փոքր մի մասի վրա և Աստծուն ես հաշիվ եմ տալու դրա օգտագործման և տնօրինության համար: Վերջին Օրերի Սրբերը ընդունել են ավետարանի օրենքը Աստծո հայտնությունների միջոցով և դա այնքան պարզ է գրված, որ բոլորը կարող են հասկանալ: Եվ եթե մենք հասկացել ենք և ըմբռնել այն պաշտոնը, որը ստանձնել ենք համաձայնվելով դրա հետ, երբ մենք մտանք ուխտի մեջ մեղքերի թողության համար մկրտությամբ, մենք պետք է միշտ

գիտակցենք այն փաստը, որ օրենքը պահանջում է մեզանից *առաջինը* որոնել Աստծո արքայությունը և որ մեր ժամանակը, տաղանդը և ունակությունը պետք է ծառայեն դրա շահերին [տես Մատթեոս Զ.33, 3 Նեփի 13.33]։ Եթե դա այդպես չլիներ, ինչպես մենք կկարողանանք սպասել այս կյանքից հետո, երբ այս երկիրը կդարձվի Աստծո և Նրա Որդու բնակավայրը, ժառանգել հավերժական կյանք և ապրել ու թագավորել Նրա հետ։

Ո՞վ է ասում, որ հարուստը կամ նրանք, ովքեր ունեն շատ տաղանդներ, ունեն ավելի մեծ հույս կամ հեռանկար ժառանգելու այս օրհնությունները, քան աղքատը, կամ նրանք, ովքեր ունեն ընդամենը մեկ տաղանդ։ Ինչպես ես եմ հասկանում, լինի այն մարդը, ով աշխատում է արհեստանոցում որպես դերձակ, հյուսն, կոշկակար կամ աշխատի արտադրամասում, եթե նա ապրում է ըստ Ավետարանի օրենքի և ազնիվ է ու հավատարիմ իր կոչումում, նա ճիշտ նույնքան նախընտրելի է ստանալու համար այս բաները և Նոր ու Հավիտենական Ուխտի բոլոր օրհնությունները, ինչպես որևէ ուրիշ մարդ, իր հավատարմության միջոցով նա կունենա գահեր, իշխանություններ և զորություններ, նրա զավակները դառնալով այնքան բազմաթիվ ինչպես աստղերը երկնքում կամ ավազը ծովափին։ Ո՞վ ունի, ձեզ եմ հարցնում, որևէ ավելի մեծ հեռանկար, քան սա է[12] [տես առաջարկ 3 և 4, էջ 297]։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ դուք ուսումնասիրեք այս գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Մտածեք 289–90 էջերի պատմության մասին։ Ի՞նչ կա աշխարհիկ կյանքում, որը տանում է մարդկանց դեպի իրենց կրոնը մոռանալուն։ Ինչպե՞ս կարող ենք հոգ տանել մեր նյութական կարիքների մասին առանց թույլ տալու, որ աշխարհիկը հաղթի մեզ։
2. Խորհեք 290 էջում սկսվող բաժնի մասին։ Ինչպե՞ս կարող է մեր սերն Աստծո հանդեպ օգնել մեզ խուսափել աշխարհիկի կողմից հաղթված լինելուց։

3. Նախագահ Մնոուն ուսուցանել է, որ մենք ուխտ ենք կապել՝ «օգտագործել մեր ժամանակը, տաղանդը և ունակությունը երկրի վրա Աստծո թագավորությունը կառուցելու համար» (էջ 293)։ Մտածեք, թե ինչ կարող եք անել այս ուխտը պահելու համար։
4. Վերանայեք գլխի վերջին բաժինը։ Ի՞նչ ուղիներով կարող են հետևյալ ճշմարտություններն օգնել մեզ պահել մեր ուխտերը։ Այս աշխարհը կարճ է համեմատած հավերժության հետ։ Ոչ ոք չի կարող «իսկապես և ճշմարտացիորեն այս աշխարհի բարիքներից որևէ մեկը իր սեփականը կոչել»։

Առնչվող սուրբ գրություններ. Մատթեոս Զ.19–24, Հովհաննես ԺԷ.15, Ա Հովհաննես Բ.15–17, Հակոբ 2.13–19, Մորմոն 8.35–39, ՎԵՈՒ 38.39, 63.47–48; 104.13–18

Օգնություն ուսուցչին. Փոքր խմբերում քննարկումները «մեծ թվով մարդկանց հնարավորություն են տալիս մասնակցել դասին։ Այն անձինք, ովքեր սովորաբար տատանվում են մասնակցել, կարողանում են կիսվել գաղափարներով փոքր խմբերում, որոնք նրանք չէին արտահայտի ամբողջ խմբի առջև» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 161)։

Հղումներ

1. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
2. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
3. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
4. *Deseret News,* Apr. 11, 1888, 200; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1888 general conference.
5. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
6. *Deseret News,* Apr. 11, 1888, 200.
7. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
8. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1877, 1.
9. *Deseret Semi-Weekly News,* June 4, 1889, 4.
10. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 486.
11. *Brigham City Bugler, Supplement,* Aug. 1, 1891, 2.
12. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1877, 1.

Ճանապարհորդելով Այուպի Նահանգով, Սնոումեռի ընտանիքն օգնություն ստացավ մեկից, ում նրանք օգնել էին մեկ օր առաջ։

Բարիք անել ուրիշներին

«Զարգացրեք գթության ոգի, պատրաստ լինելու ուրիշների համար անելու ավելին, քան կապասեիք նրանցից, եթե հանգամանքները փոխվեին հակադարձ ուղղությամբ»:

Լորենզո Սնոուի կյանքից

Լորենզո Սնոուն և նրա ընտանիքը Նավույից, Իլինոյս, առաջին գաղթի մասնակիցների թվում էին: Այլ ընտանիքներից կազմված մի խմբի հետ՝ 1846 թվականի փետրվարին, նրանք ուղևորվեցին դեպի արևմուտք՝ Այովայի նահանգ: Եղանակային պայմանները նրանց ճանապարհորդությունը դժվարին էին դարձնում՝ օրեցօր նրանք մաքառում էին անձրևի, ձյան և ցեխի միջով:

Երբ Սնոուների ընտանիքը ճամփորդում էր, մի օր իրենց խմբի անդամներից մեկը նրանցից օգնություն խնդրեց: Լորենզո Սնոուն գրել է իր օրագրում, որ մի մարդ «խնդրեց, որ ես թույլ տայի, որ նա դներ իր ճամպրուկը իմ կառքում, ասելով, որ չէր կարողանում այն որևէ ուրիշ տեղ դնել»: Կառքը «ամբողջովին լիքն էր բազմաթիվ բաներով, որոնք հնարավորին չափով կարողացել էինք տեղավորել, հիշում էր Լորենզոն, բայց, այնուամենայնիվ, ասացի, որ դներ ներսում և գար ու մեզ հետ ժամանակ անցկացներ»:

Հաջորդ գիշեր ընտանիքին, ինչպես Լորենզոն կոչեց, «շատ տհաճ դեպք» պատահեց, կառքի սռնիներից մեկը կոտրվեց: Նա հիշում էր.«Այդ ժամանակ շատ ուժեղ անձն էր գալիս և բավականին ցուրտ էր: Մենք անմիջապես խփեցինք մեր վրանը [և] ընկուզենու փայտով մի լավ խարույկ վառեցինք: Ջուրն ու ցեխը շատ խորն էին և մենք չէինք կարողանում հասնել կառքին առանց դրա միջով անցնելու. . . . Աժմ մենք տասնհինգ

մղոն հեռու էինք ճամբարից և ինը կամ տասը մղոն հեռու մինչև առաջին տունը ու մեզանից ոչ մեկը մեխանիկ չէր և կառքը վերանորոգելու հեռանկարն այնքան էլ խոստումնալի չէր։

Մխիթարությունն անսպասելիորեն եկավ այն մարդուց, ում նրանք օգնել էին նախորդ օրը։ «Ես սուգ էի անում իմ ձախորդ բախտի համար, ասաց Լորենզոն, երբ նա մոտեցավ ինձ և տեղեկացրեց, որ իր արհեստը կառքեր սարքելն է և կարող էր շատ հեշտորեն վերանորոգել իմ կառքը։. . .Հենց որ եղանակը լավացավ, եղբայր Ուիլսոնը (այդ էր վերում նշված եղբոր անունը) սկսեց աշխատել և սարքեց շատ ավելի լավ սոնակ քան այն մեկը, որը ես կոտրել էի։ Մեր կառքը վերանորոգվելուց հետո, մենք հեռացանք այդ վայրից, անձրևի և ցեխի պատճառով մի քանի օր այնտեղ մնալուց հետո»։

Լորենզո Սնոուի համար այս փորձառությունը ամրացրեց ծառայության և ընկերասիրության վերաբերյալ արժեքավորը դասը։ Նա գրեց իր օրագրում. «Մի բարեհաճություն անելը տանում է մեկ ուրիշը ստանալուն»[1] [տես առաջարկ 1, էջ 306]։

Լորենզո Սնոուի ուսմունքները

Մենք նույն Երկնային Հոր զավակներն ենք և մենք ուղարկվել ենք աշխարհ՝ բարիք անելու միմյանց։

Մենք սելեստիալ աշխարհների նույն Հորից ենք։ . . . Եթե մենք իմանայինք միմյանց այնպես, ինչպես պետք է, . . . մեր համակրանքն ավելի ուժեղ կլիներ, քան դա ներկայումս է և ցանկություն կլիներ յուրաքանչյուր անձնավորության կողմից իրենց իսկ մտքում ուսումնասիրել, թե ինչպես իրենց եղբայրներին բարիք անեին, ինչպես թեթևացնեին նրանց ցավերը և շենացնեին նրանց ճշմարտությամբ, ինչպես [կարողանային] հեռացնել խավարը նրանց մտքերից։ Եթե մենք հասկանանք միմյանց և իսկական կապը, որը մենք ունենք միմյանց հանդեպ, մենք տարբեր կզգայինք նրանից, ինչ անում ենք, բայց այս գիտելիքը կարելի է ձեռք բերել միայն, երբ մենք ձեռք ենք բերում կյանքի Հոգին, և երբ մենք ցանկանում ենք շենացնել մեկս մյուսին արդարակեցությամբ։[2]

Մենք աշխարհ ենք ուղարկվել բարիք անելու ուրիշներին և բարիք անելով ուրիշներին մենք բարիք ենք անում ինքներս

մեզ: Մենք միշտ պետք է դա պահենք մեր տեսադաշտում՝ ամուսինը իր կնոջ հանդեպ, կինը՝ ամուսնու հանդեպ, երեխաները իրենց ծնողների հանդեպ և ծնողներն իրենց երեխաների հանդեպ: Միշտ էլ կա միմյանց բարիք անելու հնարավորություն:[3]

Ես աղոթում եմ Աստծուն Հիսուսի անունով, որ դուք և ես փորձենք ամեն օր մի փոքր ավելի հավատարիմ լինել, որ մենք փորձենք մի փոքր ավելի լավը դառնալ քան երեկ էինք, որ փորձենք մի փոքր ավելի շատ սեր ունենալ և համակրանք մեր մերձավորների հանդեպ, քանի որ մեզ ասված է, որ սրանից է կախված օրենքն ու մարգարեները. «սիրել մեր Տեր Աստծուն բոլոր մեր սրտովը մեր բոլոր անձովը եւ մեր բոլոր մտքովը և բոլոր մեր ուժովը և մեր ընկերին մեր անձի պես» [տես Մատթեոս ԻԲ.37–40]: «Ամեն ինչ որ կամենում էք՝ թե ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց. Որովհետեւ այս է օրէնքը եւ մարգարէները» [տես Մատթեոս Է.12]: Սրանք սկզբունքներ են, որոնք մենք պարտավոր ենք և պետք է սովորենք:. . . Մենք պետք է լինենք ընկերներ ամենուրեք և ամեն մեկին: Չկա Վերջին Օրերի Սուրբ, որն ատի աշխարհը, այլ մենք ընկերներ ենք աշխարհին, մենք պարտավոր ենք լինել, այնքանով որքանով դա նրանց է վերաբերում: Մենք պետք է սովորենք մեր գթությունը և աշխատանքը տարածել հանուն ողջ մարդկության շահերի: Սա է Վերջին Օրերի Սրբերի առաքելությունը, ոչ թե սահմանափակվենք մեզանով, այլ տարածենք դա ամենուրեք, քանի որ անհրաժեշտ է, որ այն տարածվի ողջ մարդկության մեջ:[4]

Եղեք ուղղամիտ, արդար և ողորմած, գործադրելով ազնվության և բարեպաշտության ոգի ձեր բոլոր մտադրություններում և որոշումներում՝ բոլոր ձեր գործողություններում և ընկերական հարաբերություններում: Զարգացրեք գթության ոգի, պատրաստ եղեք ուրիշների համար անել ավելին, քան դուք կակնկալեիք նրանցից, եթե հանգամանքները փոխվեին հակադարձ ուղղությամբ: Զգտեք մեծ լինել, ոչ թե աշխարհիկ մտածողության չափանիշներով, այլ Աստծո աչքում և մեծ լինել այս իմաստով *«սիրել մեր Տեր Աստծուն բոլոր մեր զորությամբ, մեր բոլոր մտքովը և բոլոր մեր ուժովը և մեր ընկերին մեր անձի պես»*: Դուք պետք է սիրեք ողջ մարդկությանը, որովհետև նրանք ձեր եղբայրներն են՝ Աստծո զավակները:

Ջանասիրաբար աղոթեք մարդասիրության այս ոգու համար, մտքի և զգացմունքի այս ընդլայնման համար և ի շահ Մեսիայի թագավորության լրջորեն աշխատելու զորության և ունակության համար[5] [տես առաջարկ 2, էջ 306]։

Մեր երջանկությունը մեծանում է, երբ մենք օգնում ենք ուրիշներին գտնել երջանկություն։

Մենք պետք է մեր մեջ ուրիշներին բարիք անելու ուժեղ ցանկություն ունենանք։ Այնքան էլ ուշադրություն չդարձնենք ինքներս մեզ։ Բարին կգա մեզ անհապաղ, եթե մեր մտքերը որոշ չափով մեզանից հեռու պահենք և փորձենք ուրիշներին ավելի երջանիկ դարձնել և նրանց մի փոքր ավելի մոտեցնել Տիրոջը։ . . . Երբ ձեզ մի քիչ տխուր եք զգում, նայեք ձեր շուրջը և գտեք մեկին, որն ավելի վատ վիճակում է քան դուք ինքներդ, գնացեք նրա մոտ և պարզեք, թե ինչումն է խնդիրը, ապա փորձեք վերացնել այն իմաստությամբ, որը Տերը կշնորհի ձեզ և առաջին բանը, որ կզգաք այն է, որ ձեր տխրությունն անցել է, դուք թեթև եք զգում, Տիրոջ Հոգին ձեր վրա է և ամեն ինչ լուսավոր է թվում[6] [տես առաջարկ 3, էջ 306]։

Երբ մենք առաջինը հոգ ենք տանում ուրիշների շահերի համար, մենք ավելի արագ ենք բարեփոխվում։

Լավագույն բաներից մեկը, որ որևէ երիտասարդ տղամարդ կամ երիտասարդ կին կարող է աչքի առաջ ունենալ՝ փորձելով մեծ լինել, մյուսներին էլ մեծ դարձնելն է և դեմ չլինելը՝ մի քիչ ժամանակ ծախսել ուրիշներին բարեփոխելու համար։ Ինքներս մեզ բարեփոխելու լավագույն ուղին՝ ուրիշներին բարիք անելուն մեզ վարժեցնելն է։ Սա անընդհատ պահեք ձեր մտքում։[7]

Զբաղվելով որևէ տեսակի ուսումնասիրությամբ, մարդը պետք է շարունակի աշխատել և մեկ դասընթաց անցնելուց հետո, նա պետք է կրկին անցնի այն և շարունակի աշխատել, որպեսզի վարպետ դառնա դրանում, և նա երբեք չի տիրապետի դրան այնքան լավ մինչև նա չկիսվի այն տեղեկությամբ, որն ինքը ձեռք է բերել։ Թող նա գործի անցնի և հավաքի իր ընկերներին և ջանա նրանց տալ նույն գիտելիքը, ինչ ինքն է ստացել և նա այդ ժամանակ կսկսի իրեն լուսավորված զգալ

«. . . Թող ձեր մտքերն ընդարձակվեն ըմբռնելու և ոգոնելու ձեր ընկերների շահը, որոնք ձեր շրջապատում են»:

այն բաների վերաբերյալ, որոնք նա երբեք չէր իմանա, մինչև նա չհետապնդեր ուսուցանելու և կիսվելու իր ունեցած տեղեկությամբ ուրիշների հետ: Ամեն մեկը, ով ուսուցիչ է եղել դպրոցում, լավ կհասկանա ինձ այս հարցում: . . .

Թող ամեն մարդ հիշի, որ կան ուրիշները խավարի մեջ և որ նրանք չեն առաջադիմել այնքան խորը գիտելիքի, իմաստության և խելամտության մեջ և թող նա հաղորդի այդ գիտելիքը, խելամտությունը և զորությունը իր ընկերներին և եղբայրներին, այնքանով որքանով նա առաջադիմել է ավելի խորը, քան նրանք և այդ անելով նա շուտով կզգա, որ իր միտքն ընդարձակվում է և այն լույսն ու գիտելիքը որը նա ձեռք է բերել կաճի և կբազմապատկվի, ավելի բուռն ձևով: . . .

Եթե կամենում եք ապահովել ձեր ընկերների ընկերասիրությունն ու համակրանքը ջանացեք նրանց մխիթարել այն լույսով, որը դուք եք ստացել, հիշելով այն օրհնությունները, որոնք

վար եկան Աստծուց և որ այս բաներն անելով դուք ընդամենն անում եք այն, ինչ յուրաքանչյուր մարդ պիտի անի։ . . .

Այսպիսով անձնավորությունը, որպեսզի ապահովի բարձրագույն օրհնություններն իր համար, որպեսզի ապահովի Ամենազորի հավանությունը և որպեսզի շարունակաբար բարելավվի արդարակեցությանը վերաբերող բաներում, նա պետք է անի բոլոր բաները իր հնարավորությունների լավագույնով։ Թող նա գործի անցնի և հոժար լինի զոհաբերել հանուն իր ընկերների։ Եթե ուզում է շենացնել իրեն, լավագույն սկզբունքը, որով նա կարող է անել դա, իր ընկերներին շենացնելն է։ . . .

. . . Թող ձեր մտքերն ընդարձակվեն ըմբռնելու և որոնելու ձեր ընկերների շահը, որոնք ձեր շրջապատում են և որտեղ որ դուք զորություն ունեք ապահովել օգուտներ ձեր ընկերներին, արեք այդպես և այդպես անելով դուք կտեսնեք , որ այն բաները, որոնց կարիքն ունեք կգան ձեր ձեռքն ավելի արագ, քան եթե դուք աշխատեիք ամբողջապես ապահովելու դրանք ձեզ համար, անկախ ձեր ընկերների շահերը հաշվի առնելու։ Ես գիտեմ, որ սա լավ և կարևոր սկզբունք է[8] [տես առաջարկ 4, էջ 306]։

Երբ մենք զոհաբերում ենք ուրիշների բարու համար, մենք մեր մեջ ենք ունենում երկինքը։

Մենք ուղղակի պետք է զգանք. . . որ կան այլ մարդիկ բացի մեզանից, մենք պետք է նայենք ուրիշների սրտերի և զգացմունքների ներսը և դառնանք ավելի բարեպաշտ, քան այժմ ենք։

Պետք է ինքնազոհողություն արվի հանուն նրանց շահերի, ում հետ մենք հաղորդակցվում ենք։ Մենք տեսնում ենք սա Փրկչի մեջ և եղբայր Ջոզեֆի մեջ և մենք տեսնում ենք սա նաև մեր Նախագահի [Բրիգամ Յանգի] մեջ։ Հիսուսը, եղբայր Ջոզեֆը և եղբայր Բրիգամը միշտ պատրաստ են եղել զոհաբերել այն ամենը, ինչ իրենք ունեցել են մարդկանց բարիքի համար, դա այն է, ինչը եղբայր Բրիգամին ուժ էր տալիս Աստծո հետ և ուժ՝մարդկանց հետ, դա ինքնազոհողության զգացումն է, որը նա ցուցաբերում է ողջ ժամանակ։ Դա այդպես է նաև ուրիշների դեպքում, ճիշտ նույնքանով, որքանով որ նրանք պատրաստ

են զոհաբերել հանուն ուրիշների, այդքանով նրանք ստանում են Աստծուն իրենց մեջ և հավերժական աշխարհների օրհնությունները նրանց վրա են և այդ նրանք են, ովքեր կապահովեն ոչ միայն այս աշխարհի իրավունքները, այլ կապահովեն հավերժության օրհնությունները: Ճիշտ նույնքանով որքանով դուք. . . կզոհաբերեք միմյանց համար, ճիշտ նույնքանով էլ դուք կառաջադիմեք Աստծո բաներում: Այսպիսով, եթե դուք ուզում եք երկինքն ունենալ ձեր մեջ և գնալ երկինք, դուք կամենում եք հետևել այն կուրսին, որին հետևում են հրեշտակները, ովքեր երկնքում են: Եթե դուք կամենում եք իմանալ, թե ինչպես դուք պետք է աճեք, ես կասեմ ձեզ, դա ձեր մեջ բարեպաշտություն զարգացնելու միջոցով է:

. . . Մարդիկ կարող են վայելել երկինքն իրենց շրջապատում բոլոր վայրերում: Մենք պետք է ջանք գործադրենք և անենք այս, մենք պետք է ջանք գործադրենք և հաստատենք երկինքը այս երկրագնդի վրա, չնայած այն չարիքներին, որ կան մեր շրջապատում, դևերին, որ կան մեր շրջապատում և չնայած այն ամբարշտությանը, որ գոյություն ունի, այնուամենայնիվ մենք պետք է ջանք գործադրենք և հիմնադրենք երկինքը՝ այս երկրի վրա:

Մարդ երբեք չի կարող վայելել երկինքը, մինչև չսովորի, թե ինչպես ստանա այն և գործի դրա սկզբունքների հիման վրա: Այժմ վերցրեք որոշ անձանց և մտքով անդրադարձեք այն հանգամանքներին, որոնք շրջապատում էին նրանց 20 տարի առաջ, . . . երբ նրանք ունեին որոշ չափով ուրախություն, խաղաղություն, երջանկություն, չնայած կյանքը հարմարավետ չէր այն ժամանակ: Այժմ նրանք գուցե ապահովել են հարմարավետ պայմաններ և նյութական միջոցներ, որոնք կծառայեն նրանց ֆիզիկական կարիքներին և պահանջներին, բայց եթե նրանք չեն ապահովել ընկերներ, իրենց եղբայրների բարի զգացումները, նրանք դժբախտ են և ավելի, քան 20 տարի առաջ էին:

. . . Թող Տերն օրհնի ձեզ եղբայրներ և քույրեր, և թող որ դուք մտածեք այս բաների մասին և թող որ մենք սիրենք միմյանց, և ապրենք այնպես, որ մեզ վեհացնենք այնքանով, որքանով Տերն իմաստություն կտա մեզ և ունակություն ու կապահովի վստահություն միմյանց հանդեպ՝[տես առաջարկ, 5 էջ 264]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ դուք ուսումնասիրեք այս գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x։

1. Վերանայեք 299 և 301 էջերի պատմությունը։ Երբ եք տեսել, որ «Մի բարեհաճություն անելը տանում է մեկ ուրիշը ստանալուն»։
2. Նախագահ Մնոուն հիշեցրել է մեզ, որ բոլորն Աստծո զավակներն են (էջեր 301–302)։ Ինչպե՞ս պետք է այս գիտելիքն ազդի միմյանց հանդեպ, մեր վերաբերմունքի վրա։ Ինչպիսի՞ հնարավորություններ է ընձեռում Սփոփող Միությունը կանանց՝ ուրիշներին բարիք անելու համար։ Ինչպիսի՞ հնարավորություններ է ընձեռում քահանայության քվորումը տղամարդկանց՝ ուրիշներին բարիք անելու համար։
3. Խորհեք 303 էջի վերջին պարբերության մասին։ Ինչո՞ւ է մեր երջանկությունն աճում, երբ օգնում ենք ուրիշներին երջանկություն գտնել։ Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին սովորել այս ճշմարտությունը։
4. Ինչո՞ւ եք կարծում, որ մենք աճում ենք իմաստության մեջ, երբ կիսվում ենք մեր գիտելիքով ուրիշների հետ (օրինակների համար տես էջեր 302–304)։ Ի՞նչ փորձառություններ եք ունեցել, որոնք ցույց են տվել ձեզ՝ այս սկզբունքի ճշմարտության մասին։
5. Ուսումնասիրեք 304 էջում սկսվող բաժինը։ Ինչո՞ւ եք կարծում, որ ծառայության պարզ գործողությունները ուժ ունեն մեզ ավելի մոտեցնելու երկնքին։ Երբ խորհեք այս գլխի ուղերձի մասին, մտածեք այն ուղիների մասին, որոնցով կկարողանաք ձեր տունը դարձնել ավելի երկնային մի վայր։

Սոնչվող սուրբ գրություններ. Մատթեոս ԻԵ.31–45, Ղուկաս Զ.36–38, Մոսիա 2.17, 4.14–27, ՎևՈՒ 81.5, 82.3

Օգնություն ուսուցչին. «Ավելի լավ է ուղղակի մի քանի լավ գաղափարներ վերցնել և լավ քննարկում ծավալել և լավ ուսուցում, քան թե մոլեգնած փորձել ուսուցանել ձեռնարկի յուրաքանչյուր բառ: . . .Խաղաղ մթնոլորտը և անշտապողականությունը բացարձակապես անհրաժեշտ են, եթե դուք պետք է Տիրոջ Հոգին ներկա ունենաք ձեր դասարանում» (Jeffrey R. Holland, "Teaching and Learning in the Church," *Ensign,* June 2007, 91):

Հղումներ

1. Journal of Lorenzo Snow, 1841–47, Church History Library, 39–42.
2. *Deseret News,* Jan. 28, 1857, 371.
3. In Conference Report, Apr. 1899, 2.
4. *Salt Lake Daily Herald,* Oct. 11, 1887, 2.
5. In Eliza R. Snow Smith, *Biography and Family Record of Lorenzo Snow* (1884), 486–87.
6. In Conference Report, Apr. 1899, 2–3.
7. *Improvement Era,* July 1901, 714.
8. *Deseret News,* Mar. 11, 1857, 3; in the original source, page 3 is incorrectly labeled as page 419.
9. *Deseret News,* Mar. 11, 1857, 4.

Մարգարեն Զոզեֆ Սմիթը «Աստծո մարդ էր, լի իր կոչման ոգով»։

Մարգարե Զոզեֆ Սմիթը

«Ես Զոզեֆ Սմիթին գիտեի որպես ազնիվ մարդու, ճշմարտության, պատվի և հավատարմության մարդ, հոժար զոհաբերելու այն ամենը ինչ ուներ, նույնիսկ իր կյանքը, որպես վկայություն երկինքներին և աշխարհին, որ նա վկայել էր ճշմարտությունը մարդկության ընտանիքին»:

Լորենզո Մնոուի կյանքից

«Հավանաբար շատ քիչ մարդիկ են այժմ ապրում, որոնք այնքան լավ ծանոթ լինեին Զոզեֆ Սմիթ Մարգարեին, որքան ես», - ասել է Լորենզո Մնոուն 1900 թվականին: «Ես հաճախ էի լինում նրա հետ: Ես այցելում էի նրան իր ընտանիքում, նստում նրա սեղանի շուրջը, հաղորդակցվում նրա հետ տարբեր առիթներով և անհատական հարցազրույցներ ունենում նրա հետ խորհրդի կարգով»:[1]

Բացի այդ անձնական շփումներից, Լորենզո Մնոուն վկայեց հասարակայնության մեջ՝ իր ծառայության ժամանակ Զոզեֆ Սմիթի մասին՝ որպես Սրբերի ընկեր և որպես Վերականգման Մարգարե: Նա պատմել է մի հանդիպման մասին, որին մասնակցում էր Զոզեֆ Սմիթը Նավուի կիսավարտ Տաճարում: Մարգարեն քայլեց դեպի ամբիոնը, ուրիշ հավատքի մի սպասավորի ուղեկցությամբ: Սպասավորը «խիստ լուրջ» էր: Երբ ինչ որ բան էր ասվում, որը ծիծաղ էր առաջացնում ժողովրդի մեջ, [նա] կատարելապես հանդարտ էր մնում և նույնիսկ ցույց չտալով դեմքի արտահայտության նվազագույն իսկ փոփոխություն: Ի տարբերություն նրա, Զոզեֆ Սմիթը «շատ լավ էր զգում այդ առավոտ» և մի դիտողություն արեց, որը «ծիծաղ առաջացրեց մարդկանց մեջ», նախքան ժողովի սկսելը: Ժողովը բացելուց հետո, վերհիշում է Լորենզոն «Նախագահ Սմիթը ոտքի կանգնեց և ես երբեք չեմ լսել, որ նա խոսեր ավելի մեծ իշխանությամբ,

քան այդ առիթով: Մարդիկ հիացած էին, նա լցված էր Աստծո Հոգով և խոսեց մեծ ուժով և պերճախոսությամբ»:[2]

Չնայած Նախագահ Մնոուն մեծ տպավորություն էր ստացել այն փորձառություններից, որ ունեցել էր Ջոզեֆ Սմիթի հետ, նրա վկայությունը Մարգարեի առաքելության վերաբերյալ հիմնված չէր այդ փորձառությունների վրա: Նա հաճախակի էր հայտարարում, որ ստացել էր իր վկայությունը Սուրբ Հոգուց: Նա ասում էր. «Ինչ վերաբերում էր [Ջոզեֆ Սմիթի] ճշմարտության և պատվի մարդ լինելուն ես, ոչ էլ որևէ մեկ ուրիշը, ով գիտեր նրան, որևէ պատճառ չուներ կասկածելու մեկ վայրկյան իսկ: Սակայն այդ ժամանակ ես երբեք չէի գնա քարոզելու այս Ավետարանի հիմունքները՝ ամբողջապես կախված լինելով որևէ տեղեկությունից, որ ես ստացել էի նրա կամ որևէ այլ մարդու միջոցով, բայց ես հավատում էի նրա խոսքերին, որոնք գալիս էին ըստ ինձ, որպես ճշմարտության խոսքեր Աստծո ոգեշնչված մարդու կողմից: . . .Աստծո Հոգին, Սուրբ Հոգին, որը կարող են ստանալ բոլոր մարդիկ և վայելել, . . .հաստատում էր ինձ ճշմարտությունը նրա ասածի վերաբերյալ և այն դառնում էր այնպիսի բնույթի մի գիտելիք ինձ համար, որը ոչ մի մարդ չէր կարող տալ ոչ էլ վերցնել»[3] [տես առաջարկ 1, էջ 317]:

Լորենզո Մնոուի ուսմունքները

Երբ Ջոզեֆ Սմիթը ստացավ իր աստվածային կոչումը, նա մաքուր, անկեղծ, ազնիվ երիտասարդ տղամարդ էր:

Ջոզեֆ Սմիթը, ում Աստված ընտրեց հիմնադրելու այս աշխատանքը, աղքատ էր, կրթություն չստացած և պատկանում էր Քրիստոնեական ոչ հանրաճանաչ դավանանքի: Նա մի պարզ պատանի էր, ազնիվ, շիտակությամբ լի, անծանոթ խաբեության, նենգության և կեղծիքի, որը գործածվում էր քաղաքագետների և կրոնական կեղծավորների կողմից՝ իրենց նպատակներն իրագործելու համար: Հին ժամանակների Մովսեսի նման, նա անիրազեկ և չորակավորված էր զգում իրեն այդ հանձնարարության համար, առաջ գնալու որպես կրոնական բարեփոխիչ, ամենաանբարենպաստ մի պաշտոն՝ ճակատամարտելու կարծիքների և հավատամքների դեմ, որոնք դարեր շարունակ գոյություն էին ունեցել, ունենալով մարդկանց վավերացումն

ու աջակցությունը ամենախորը աստվածաբանական տեսություններում, բայց Աստված կանչել էր նրան ազատելու բոլոր ազգերի աղքատներին և ազնվասիրտներին իրենց հոգևոր և ֆիզիկական ստրկությունից [գերությունից]: Եվ Աստված խոստացավ նրան, որ ովքեր ընդունեն և հնազանդվեն իր ուղերձին՝ մկրտվեն մեղքերի թողության համար, նպատակի ազնվությամբ, ստանային աստվածային դրսևորումներ, ստանային Սուրբ Հոգին, նույն ավետարանական օրհնությունները, որոնք խոստացվել էին և ձեռք բերվել Ավետարանի միջոցով, երբ քարոզվել էին հնադարյան Առաքյալների կողմից: Եվ այս ուղերձը, այս խոստումը, պետք է ուժի մեջ լիներ որտեղ էլ և ում որ էլ այն տարվեր Երեցների՝ Աստծո լիազորված սուրհանդակների կողմից: Այսպես էր ասում Ջոզեֆ Սմիթը, կրթություն չստացած, պարզամիտ, հասարակ, սովորական, ազնիվ տղան:[4]

Առաջին անգամ, երբ ես տեսա Մարգարե Ջոզեֆ Սմիթին, ես մոտավորապես տասնութ տարեկան էի: Դա մոտ 1832 թվականին էր, այդ տարվա աշնանը: Լուրեր էին պտտվում, որ Մարգարեն պատրաստվում էր ժողով անցկացնել Հայրամում, Փորթիջի երկրամասում, Օհայո, որը մոտավորապես երկու մղոն հեռավորության վրա էր հորս տնից: Նրա մասին շատ բաներ լսած լինելով, հետքրքրությունս բավականին շարժվեց և ես մտածեցի, որ կօգտվեմ այս առիթից՝ նրան տեսնելու և լսելու համար: Հետևաբար հորս ընտանիքի մի քանի անդամների հետ ես գնացի Հայրամ: Երբ մենք հասանք այնտեղ, մարդիկ արդեն հավաքվել էին մի փոքրիկ ստվերաշատ հավաքատեղում՝ մոտ հարյուրհիսունից, երկու հարյուր մարդ էր ներկա: Ժողովն արդեն սկսվել էր և Ջոզեֆ Սմիթը կանգնած էր [Ջոն] Ջոնսոնի տան դռանը, նայելով դեպի հավաքատեղը և դիմելով ժողովրդին: Ես քննադատական քննության ենթարկեցի ինչ վերաբերում էր նրա արտաքինին, նրա հագուստին և նրա խոսելաձևին, երբ լսում էի նրան խոսելիս: Նրա ելույթը հիմնականում սահմանափակվում էր իր սեփական փորձառություններով, հատկապես հրեշտակի այցելությամբ, տալով ուժեղ և հզոր վկայություն այդ սքանչելի դրսևորումների կապակցությամբ: Սկզբում նա կարծես մի փոքր անվստահ էր [անվճռական] և խոսում էր բավականին ցածր ձայնով, բայց գնալով շատ ուժեղ և հզոր դարձավ և կարծես թե ազդեց ողջ լսարանի վրա, այն զգացումով, որ

ինքն ազնիվ էր և անկեղծ։ Այն իհարկե ազդեց ինձ վրա այդ ձևով և այնպիսի տպավորություն գործեց ինձ վրա, որը մնաց մինչև օրս։[5]

Երբ նայեցի նրան [այդ առաջին անգամը] և լսեցի, ես մտածեցի մտքումս, որ մարդը, որն այդպիսի հրաշալի վկայություն է բերում, ինչպես նա արեց և ունենալով այնպիսի դեմքի արտահայտություն ինչպիսին նա ուներ, հազիվ թե կեղծ մարգարե լիներ[6] [տես առաջարկ 2, էջ 317]։

Ողջ իր կյանքում Մարգարե Ջոզեֆը պահպանեց իր ազնվությունն ու բարձր բարոյական նկարագիրը։

Ջոզեֆ Սմիթ Մարգարեն, որի հետ ես մտերիմ ծանոթ էի տարիներ շարունակ, այնքան լավ որքան իմ եղբոր հետ, ես գիտեմ, որ նա շիտակ մարդ էր՝ մարդ, որը նվիրված էր մարդկության շահերին և Աստծո պահանջներին բոլոր այն օրերում, որոնք նրան թույլ էր տրվել ապրել։ Չի եղել երբևէ մի մարդ, որն ունենար շիտակության ավելի բարձր աստիճան և ավելի մեծ նվիրվածություն մարդկության շահերին, քան Մարգարե Ջոզեֆ Սմիթը։[7]

«Ես Ջոզեֆ Սմիթին գիտեի որպես ազնիվ մարդու, ճշմարտության, պատվի և հավատարմության մարդ, հոժար զոհաբերելու այն ամենը, ինչ ուներ, նույնիսկ իր կյանքը, որպես վկայություն երկինքներին և աշխարհին, որ նա վկայել էր ճշմարտությունը մարդկության ընտանիքին»։[8]

Ես գիտեի նրան որպես Աստծո մարդ, իր կոչման ոգով լցված՝ մարդ, որի շիտակությունն անվիճելի էր և որն ազնիվ էր իր բոլոր ջանքերում։ Ոչ մեկը, որն այնքան մտերիմ ծանոթ լիներ նրա հետ ինչպես ես էի, չէր կարող որևէ հանցանք գտնել նրանում, այնքանով որքանով նրա բարոյական նկարագրին էր վերաբերվում։ . . . Ես բերում եմ իմ վկայությունը Եղբայր Ջոզեֆ Սմիթի լավ բնավորության, նրա ազնվության, նրա նվիրվածության, նրա հավատարմության, նրա առատաձեռնության և նրա բարեսրտության մասին, որպես մարդ և որպես Աստծո ծառա[9] [տես առաջարկ 2, էջ 317]։

Զերծ կեղծավորությունից, Զոզեֆ Սմիթը կարող էր մասնակցել անմեղ զվարճությունների, ինչպես նաև՝ ուսուցանել Աստծո զորությամբ:

Ես կանոնավորապես հաճախում էի . . . ժողովներին, որոնք տեղի էին ունենում Տաճարում և լսում էի Մարգարեին, որը քննարկում էր կարևորագույն թեմաներ: Երբեմն նա լցվում էր Սուրբ Հոգով, խոսելով ինչպես հրեշտակապետ և լցված Աստծո զորությամբ, նրա ողջ անձը շողում էր և դեմքը լուսավորվում: . . .

Երբեմն խոսում էր թեթևորեն, իսկ ուրիշ անգամ բացատրում թագավորության գաղտնիքները: Փոփոխությունն այնքան նկատելի էր, որ թվում էր, թե նա բարձրացած էր երկինք, երբ դիմում էր ժողովրդին, ովքեր երկրի վրա էին, և նորից վերադառնում ավելի ծանոթ թեմաների: . . .

Զոզեֆ Սմիթը միշտ բնական էր և չափազանց մեղմ, նա երբեք չէր շփոթվում կամ բորբոքվում մարդկանց կամ իրեն շրջապատող բաներից: Շատ քահանաներ այցելում էին նրան և ջանում նրան բռնել անսպասելիորեն ինչ որ բան անելիս, որով նրան կարողանային մեղադրել, բայց երբ նա մարդկանց հետ չէր, նրա գործողությունները միշտ նույնն էին: Նա երբեք մեղավոր չէր կեղծավորության մեջ:Նա զբաղվում էր բոլոր առողջարար սպորտաձևերով և չէր մտածում, որ դա անսազական է գնդակ խաղալ, մասնակցել մրցավազքի կամ զբաղվել որևէ այլ բացօդյա սպորտաձևերի: Մի քահանա, երբ Մարգարեի տանն էր, պատահաբար դուրս նայելով պատուհանից տեսավ Մարգարեին պարտեզում մի ընկերոջ հետ ըմբշամարտելիս: Սա և անմեղ զվարճության այլ դեպքեր, համոզեցին քահանային, Մարգարեի ազնվության և կեղծավորությունից լիովին զերծ լինելու մասին: . . .

Մեկ այլ դեպքում Զոզեֆ Սմիթը զբավել էր գնդակ խաղալով մի քանի պատանիների հետ Նավույում: Երբ նրա եղբայր Հայրումը տեսավ դա, նա կամեցավ ուղղել Մարգարեին և նույնիսկ հանդիմանեց նրան, ասելով որ այդպիսի վարվելաձևը չէր սազում Տիրոջ Մարգարեին: Մարգարեն պատասխանեց մեղմ ձայնով. «Եղբայր Հայրում տղաների հետ իմ այսպես խառնվելը անվնաս այս սպորում ինձ չի վնասում որևէ ձևով, բայց մյուս

Ջոզեֆ Սմիթը վայելում էր «անմեղ զվարճությունները» ընտանիքի և ընկերների հետ:

կողմից, դա նրանց երջանիկ է դարձնում և նրանց սրտերը մոտեցնում ինձ»[10] [տես առաջարկ 3, էջ 274]:

Սուրբ Հոգու կողմից զորացվելով Ջոզեֆ Սմիթը աճեց հոգևոր ուժով և ազդեցությամբ:

Ջոզեֆ Սմիթը՝ մեծ մարգարեն, կրթված մարդ չէր, երբ Աստված ընտրեց նրան և հայտնի դարձրեց նրան իր առաքելությունը: Տերը շնորհում է հոգևոր պարգևներ և գիտելիք անուսումների վրա, և թագավորության մեծությունը հայտնի է դարձվում նրանց Սուրբ Հոգու զորությամբ և նրանք աստիճանաբար դառնում են մեծ՝ Աստծո բաների գիտության մեջ:[11]

Իր կյանքի ավելի ուշ շրջանում Ջոզեֆ Սմիթը դարձավ ուժի և ազդեցության վարպետ իր ընկերների վրա: Այս փաստը շատ ցայտուն ձևով բերվեց իմ ուշադրությանը, երբ ես վերադարձա Եվրոպայի իմ միսիայից: Ես նկատեցի և նույնիսկ նշեցի նրան, որ նա շատ էր փոխվել իմ վերջին անգամ նրան տեսնելուց հետո, որ նա ուժեղացել էր և ավելի հզոր դարձել: Նա ընդունեց այդ և ասաց, որ Տերը նրան օժտել էր Իր Հոգու հավելյալ բաժնով:

Մի օր նա հավաքեց միասին Տասներկու Առաքյալների եղբայրներին և Եկեղեցու մյուս նշանավոր Երեցներին՝ նրանց իրենց մի քանի աշխատանքներին և միսիաներին նշանակելու համար: Յուրաքանչյուրը նստած էր և սպասում էր մեծ անհանգստությամբ լսելու Մարգարեի խոսքերը ապագա պարտականությունների վերաբերյալ: Նրանք զգում էին, որ իրենք գտնվում էին ավելի բարձր էակի ներկայությամբ: Երբ Կիրթլենդում էին, Մարգարեն կարծես թե չուներ այդ ուժն ու զորությունը, . . . բայց հետագա տարիներին նա դարձավ այնքան ուժեղ Տիրոջ զորությունում, որ մարդիկ զգում էին դա: Դա այդպես էր այս դեպքում ևս: Երեցները գիտակցում էին նրա վերադաս ուժը: «Եղբայր Բրիգամ, ասաց նա, ես ուզում եմ, որ դու գնաս արևելք և հոգ տանես Եկեղեցու գործերին Արևելյան Նահանգներում, իսկ Եղբայր Քիմբալը կարող է ուղեկցել քեզ»: Դիմելով մեկ ուրիշին նա ասաց. «Ուշադրություն դարձրու թերթի հրատարակությանը» և այսպես նշանակեց յուրաքանչյուրին իր հատուկ միսիային, բոլորն ընդունելով նրա խոսքը, որպես Տիրոջ միտքը: . . .

Մարգարեն զորություն ուներ նշանակալի տպավորություն գործելու բոլոր նրանց վրա, ովքեր մոտենում էին իրեն: Նրա մեջ կար մի բան, որն ազդում էր նրանց սրտերի վրա: Դա առանձնապես այն դեպքում էր, երբ եղբայրները նրանից ստանում էին իրենց նշանակումները՝ գնալու և քարոզելու Ավետարանը: Այն ոգեշնչումը, որը հորդում էր նրանից, տիրում էր նրանց հոգիներին և նրա խոսքերը ներթափանցում էին նրանց էության ամենախորն անկյունները: Նրանք սիրում էին նրան և հավատում նրան և պատրաստ էին անել, ինչ էլ որ նա հրահանգեր Աստծո աշխատանքի առաջխաղացման համար: Նա լցնում էր նրանց իր ներկայության զորությամբ և սարսուռ առաջացնում

իր մարգարեական առաքելության վկայությամբ։ Աշխարհում կան շատ մարդիկ, ովքեր ունեն արտասովոր ընկերասիրության և ջերմության ոգի, որը բոլորն են զգում, ովքեր հանդիպում են նրանց։ Ես այդպիսի շատ մարդկանց եմ հանդիպել, բայց դեռ երբևէ չեմ հանդիպել որևէ այլ անձնավորության, որի ներկայությամբ ես զգայի այն առանձնահատուկ և զորավոր ազդեցությունը, որը զգացել եմ ես Մարգարե Ջոզեֆ Սմիթի ներկայությամբ։ Դա Աստծո Հոգու մեծ չափի պատճառով էր, որ նա ուներ, պարզապես նրա ձեռքը սեղմելը կարող էր մարդուն լցնել այդ ազդեցությամբ, և զգայուն էությամբ ցանկացած մարդ, կիմանար, որ նա սեղմում էր արտասովոր անձնավորության ձեռքը[12] [տես առաջարկ 4, էջ 318]։

Մեզանից յուրաքանչյուրը կարող է վկայություն ստանալ, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր և որ ավետարանը վերականգնվել էր նրա միջոցով։

Իմ սրտի շիտակությամբ, ճշմարտությունն իմանալու նպատակի ազնվությամբ, ես ընդունեցի [Ջոզեֆ Սմիթի] ուղերձը, ես հնազանդվեցի վարդապետության այս ձևին և ես ստացա ամենաշոշափելի և բավարարող ձևով աստվածային դրսևորում՝ խոստացված օրհնությունը, գիտելիք այս աշխատանքի մասին։ Արդյոք ես միակ վկան ե՞մ։ Իսկ ինչպե՞ս է դա հազարավորների փորձառության հետ կապված, ում այժմ ես դիմում եմ։ Արդյոք դուք նույնպես վկանե՞ր եք։[13]

Ինչպիսի՞ն է մեր վկայության բնույթը։ Սա է. այս ժամանակների լրիվության ժամանակ, հրեշտակը, որ Հովհաննես Հայտնողը տեսավ թռչելիս երկնքի միջից՝ ունենալով հավիտենական Ավետարանը քարոզելու նրանց, ովքեր բնակվում են երկրի վրա և ամեն ազգի և ցեղի ու լեզվի և ժողովրդի, որ այդ հրեշտակը հայտնվել է և վերականգնել Ավետարանը երկրի վրա, և Ջոզեֆ Սմիթը եղավ գործիք, որի միջոցով վերականգնումը տեղի ունեցավ [տես Հայտնություն ԺԴ.6]։[14]

Ջոզեֆ Սմիթը հաստատեց, որ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը այցելեցին նրան և շնորհեցին նրան իշխանություն՝ սպասավորելու Ավետարանի սուրբ արարողությունները, որի միջոցով ամեն ազնվասիրտ տղամարդու և կնոջ խոստացվել է Սուրբ Հոգին և վարդապետության կատարյալ գիտելիքը։[15]

Ջոզեֆ Սմիթը լիազորված էր բացել ուղի և ծրագիր հիմնադրել, որի միջոցով մարդը կարողանար ստանալ գիտելիք այս բաների մասին, որպեսզի մենք չթողնվեինք կախված Մարգարեների վկայությունից, կամ հնադարյան Առաքյալների վկայությունից կամ ներկա օրերի Առաքյալների վկայությունից, կամ Մորմոնի Գրքից, կամ էլ որևէ այլ բանից, որն արվել է կամ ասվել անցյալում, այլ որպեսզի մենք կարողանանք իմանալ ինքներս: Դա անձնական գիտելիք է:[16]

Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը կենդանի Աստծո ճշմարիտ Մարգարեն է: Ես վկայում եմ, որ նա տեսավ և խոսեց Աստծո հետ և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ: Տերը տվել է ինձ այս կենդանի վկայությունը և այն վառվում է իմ հոգու մեջ այդ ժամանակից ի վեր, ինչ ես ստացել եմ այն: Այժմ ես տալիս եմ այն ողջ աշխարհին: Ես ոչ միայն վկայում եմ ողջ մարդկությանը, որ Ջոզեֆ Սմիթը ուղարկված էր Աստծո կողմից և որ այն աշխատանքը, որը հաստատվեց նրա միջոցով Աստծո աշխատանքն է, այլ նախազգուշացնում երկրագնդի բոլոր ազգերին Մարգարեի կանխազգուշակումների մասին և վկայում ամենահանդիսավոր ձևով, որ գիտեմդրանք ճշմարիտ են[17] [տես առաջարկներ 5 և 6, էջ 318]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ դուք ուսումնասիրեք այս գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Ձեր մտքում պատկերացրեք 309 էջում նկարագրվող իրադարձությունը: Ի՞նչ է այս պատմությունը հաղորդում Ջոզեֆ Սմիթի մասին:
2. Վերանայեք Նախագահ Սնոուի նկարագրությունները Ջոզեֆ Սմիթի բնավորության մասին (էջեր 310–12): Ի՞նչ ուղիներով, ձեր կարծիքով, Ջոզեֆ Սմիթի բնավորությունն օգնեց նրան գործիք լինել Տիրոջ ձեռքում:

3. Ինչպիսի՞ն են ձեր մտքերն ու զգացումները Մարգարե Ջոզեֆի մասին, որը ժամանակ էր հատկացնում «անմեղ զվարճությունների» համար (էջեր 313–14)։ Ինչպե՞ս կարող ենք հետևել, որ մեր զվարճություններն ավելի շուտ նպաստեն և ոչ թե շեղեն մեզ Սուրբ Հոգով լցվելու մեր կարողությունից։
4. Ի՞նչ ուղիներով Ջոզեֆ Սմիթը «աստիճանաբար դարձավ մեծ՝ Աստծո բաների գիտությունում» (օրինակների համար տես էջեր 314–16)։ Ի՞նչ կարող եք անել Մարգարեի օրինակին հետևելու համար, երբ ձգտում ենք հոգեպես աճել։
5. Կարդացեք 316 էջի առաջին լրիվ պարբերությունը, կարծես, Նախագահ Մնոուն ուղղակիորեն խոսում է ձեզ հետ։ Ինչպե՞ս կպատասխանեիք նրա հարցերին։
6. Ուսումնասիրեք 316 էջում սկսվող բաժինը։ Ի՞նչ փորձառություններ եք ունեցել, որոնցում դուք կարիք եք ունեցել իմանալ ինքներդ ձեզ համար, որ ավետարանը վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով։ Ի՞նչ խորհուրդ կտայիք ընտանիքի որևէ անդամի կամ ընկերոջ, ով ուզում է ձեռք բերել այս վկայությունը։

Առնչվող սուրբ գրություններ. ՎԿՈՒ 1.17, 5.9–10, 35.17–18, 135.3, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.1–26

Օգնություն ուսուցչին. «Երբ ինչ որ մեկը հարց է տալիս, մտածեք մյուսներին հրավիրել պատասխանելու դրան, ինքներդ պատասխանելու փոխարեն։ Օրինակ՝ դուք կարող եք ասել. «Դա հետաքրքիր հարց է։ Ի՞նչ են մտածում ձեզանից մնացածները, կամ՝ «Կարո՞ղ է որևէ մեկն օգնել այս հարցին պատասխանել» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 64)։

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1900, 61.
2. "Reminiscences of the Prophet Joseph Smith," *Deseret Semi-Weekly News,* Dec. 29, 1899, 1.
3. *Deseret News: Semi-Weekly,* June 27, 1882, 1.
4. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 9, 1886, 1.
5. "Reminiscences of the Prophet Joseph Smith," 1.
6. "The Grand Destiny of Man," *Deseret Evening News,* July 20, 1901, 22.
7. In Conference Report, Apr. 1898, 64.
8. *Millennial Star,* Nov. 25, 1889, 738; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered at the October 1889 general conference.
9. *Millennial Star,* June 27, 1895, 402.
10. "Reminiscences of the Prophet Joseph Smith," 1.
11. In Journal History, Nov. 14, 1898, 4; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered at the Box Elder Stake conference in November 1898.
12. "Reminiscences of the Prophet Joseph Smith," 1.
13. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 9, 1886, 1.
14. *Deseret News,* Nov. 22, 1882, 690.
15. *Deseret News: Semi-Weekly,* Mar. 9, 1886, 1.
16. *Deseret News,* Nov. 22, 1882, 690.
17. "Reminiscences of the Prophet Joseph Smith," 1.

«Մենք վկայում ենք ողջ աշխարհին, որ մենք գիտենք աստվածային հայտնությամբ, նույնիսկ Սուրբ Հոգու դրսևորումներով, որ Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստծո Որդին»:

Մտորումներ Հիսուս Քրիստոսի առաքելության մասին

«Մենք բոլորս կախված ենք Հիսուս Քրիստոսից, նրա գալստից այս աշխարհ՝ բացելու ուղի, որով մենք կարող ենք ապահովել խաղաղություն, երջանկություն և վեհացում»:

Լորենզո Սնոուի կյանքից

1872 թվականի հոկտեմբերին Նախագահ Բրիգամ Յանգն իր առաջին Խորհրդական նշանակեց Ջորջ Ա. Սմիթին՝ ճանապարհորդելու Եվրոպայով և Միջին Արևելքով: Նախագահ Սմիթին ուղղված մի նամակում, Նախագահ Յանգն ու նրա Երկրորդ Խորհրդական՝ Նախագահ Դանիել Հ. Ուելսն ասել են. «Մենք կամենում ենք, որ դու մոտիկից զննես թե ինչ հնարավորություններ գոյություն ունեն այժմ, կամ որտեղ կարելի է մուտք բաց անել Ավետարանը ներկայացնելու համար, այն տարբեր երկրներում, ուր դուք կայցելեք»: Ճանապարհորդությունը պիտի վերջանար Սուրբ Երկրում, որտեղ Նախագահ Սմիթը «կնվիրագործեր և կսրբագործեր այդ երկիրը Տիրոջ համար»: Նախագահներ Յանգն ու Ուելսը գրել են. «Մենք աղոթում ենք, որ դուք պահպանվեք՝ ճանապարհորդելու խաղաղությամբ և ապահովությամբ, որ դուք առատորեն օրհնվեք իմաստության խոսքերով և սահուն արտահայտվելով ձեր բոլոր զրույցներում, ինչ վերաբերում է Սուրբ Ավետարանին, ցրելով նախապաշարմունքները և արդարության սերմեր ցանելով մարդկանց մեջ»:[1] Նախագահ Սմիթը Վերջին Օրերի Սրբերի մի փոքրիկ խումբ վերցրեց իր հետ, ներառյալ Երեց Լորենզո Սնոուն, որն այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր: Երեց Սնոուի քույրը՝ Էլիզա Ռ. Սնոուն, որը ծառայում էր,

որպես Սփոփող Միության գերագույն նախագահ, այդ ժամանակ, նույնպես խմբի մեջ էին։

Երբ Երեց Սնոուն ճանապարհորդում էր, նա հաճախ էր նամակներ գրում՝ նկարագրելով աշխարհագրությունը, շենքերը և ժողովրդի սովորույթներն ու պայմանները։ Բայց երբ նա ու նրա ընկերները այցելեցին վայրեր Սուրբ Երկրում, նրա նամակները փոխեցին իրենց տոնը։ Նրա մտքերը դարձան դեպի Աստծո Որդին, որը հաճախ էր եղել այդ նույն վայրերում դարեր առաջ։ Օրինակ՝ նա գրել է 1873 թվականի փետրվարին իր ունեցած փորձառության մասին, երբ խումբը մոտենում էր Երուսաղեմ քաղաքին.

«Մեկ ժամվա մեքենայով ճամփորդությունը . . . մեզ կբերի Երուսաղեմ։ Մենք շարժվում ենք առաջ և այդ ընթացքում բարձրանում մի բարձունքով «կամ բլրով» և նայում «Սուրբ Քաղաքի»՝ Երուսաղեմի վրա։ Հեռվում՝ աջ կողմում Սիոն սարն է, Դավթի քաղաքը։ Մեր ձախ կողմում, այն վեհ այնպես դատարկ թվացող բարձունքը՝ Ձիթենյաց սարն է, մի ժամանակ մեր Փրկչի սիրելի հանգստավայրը և այն տեղը, ուր վերջին անգամ դրվեց Նրա սրբազան ոտքերը, նախքան Նա կբարձրանար Իր Հոր ներկայությունը։ Այս հետաքրքիր պատմական վայրերը, բոլոր իրենց սրբազան զուգորդումներով, ներշնչում են տպավորիչ և հանդիսավոր մտքեր ու խորհրդածություններ։ Այո, այնտեղ է Երուսաղեմը, որտեղ ապրեց և ուսուցանեց Հիսուսը և խաչվեց, որտեղ նա բացականչեց.«Կատարուած է» և խոնարհեց Իր գլուխը և մահացավ։ Մենք դանդաղ և մտածկոտ, ոլորապտույտ ճանապարհով իջնում ենք բլրից ներքև, . . . մինչև որ հասնենք քաղաք»։[2]

Հորդանան գետ գնալուց հետո, Երեց Սնոուն գրել է. «Երբ մենք խմեցինք դրա քաղցր և թարմացնող ջրից և լվացվեցինք դրա սրբազան վտակում, մեր մտքերն ու մտորումները վերադարձան մանկության օրերը, երբ մենք սովորություն ունեինք ընթերցել Սուրբ Գրությունները նկարագրելով կարևոր իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել այս վայրում՝ Իսրայելացիների անցումը, երբ ջրանցքը ցամաքեց, երբ քահանաներն իրենց ուսերին տանելով սուրբ տապանակը մտան հոսող ջրի մեջ, Եղիայի կողմից ջրերի բաժանումը, երբ նա անցավ չոր հունով և երկինք վերցվեց հակառակ կողմի հարթավայրից

պտտահողմով, և Եղիսեն, երբ վերադարձավ վերցրեց Եղիայի վերարկուն, որն ընկավ նրա վրայից և զարկեց ջրերին, ասելով. «Ո՞ւր է Եղիայի Տէր Աստուածը» այսպիսով, ստիպելով Հորդանանին երրորդ անգամ կիսվել: Բայց շատ ավելի խորը հետաքրքրություն ներկայացնող մեկ այլ իրադարձություն է կապված այս վայրի հետ՝ Փրկչի մկրտությունը, որը հիշատակվում է հետևյալ ձևով. «եկավ Յովհաննեսը, քարոզում էր Հրեաստանի անապատումը . . . և Յիսուսը Գալիլեայիցը եկաւ Յորդանան Յովհաննէսի մօտ նորանից մկրտուելու» [տես Մատթեոս Գ] և մենք գտնվում էինք այդտեղ, կամ՝ մոտ այդ նշված վայրին, որտեղ տեղի էին ունեցել բոլոր այդ հիշարժան իրադարձությունները, կանգնելով գետի ափին, նայելով նեղ հովտին և լողանալով նույն գետում, որն այս վեհ իրադարձությունների լուռ վկան էր»[3] [տես առաջարկ 1, էջ 329]:

Լորենզո Սնոուի ուսմունքները

Հիսուս Քրիստոսը եկավ աշխարհ կատարելու Հոր կամքը և բացելու ճանապարհ մեր խաղաղության, երջանկության և վեհացման համար:

Այս ավետարանը տարբեր ժամանակներում ներկայացվել է աշխարհին: Դա գիտեին Մարգարեները: Նրանք հասկանում էին պարզորեն և հստակորեն, որ Հիսուսը զառն էր, որ սպանվեց նախքան աշխարհի հիմնադրումը [տես Հայտնություն ԺԳ.8, Մովսես 7.47], և ուրույն ժամանակին նա ցույց էր տալու իրեն մարդկանց զավակներին, որ նա մեռնելու էր նրանց մեղքերի համար և խաչվելու էր, որպեսզի ավարտի հասցներ փրկության ծրագիրը:[4]

Երբ Հիսուսը պառկած էր մսուրում, որպես մի անօգնական մանկիկ, Նա չգիտեր, որ Ինքն Աստծո Որդին էր, որ նախկինում Ինքն էր ստեղծել երկիրը: Երբ հրատարակվեց Հերովդեսի հրամանը, Նա ոչինչ չգիտեր այդ մասին, Նա զորություն չուներ Իրեն փրկելու և [Հովսեփն ու Մարիամը] ստիպված էին վերցնել Նրան և [փախչել] Եգիպտոս՝ պահպանելու Նրան այդ հրամանի հետևանքներից: . . . Նա հասավ տղամարդկության և Նրան բացահայտվեց, թե ով էր Ինքը և ինչ նպատակի համար

1872թվականի վերջին և 1873 թվականի սկզբին Երեց Լորենզո Սնոուն և ուրիշներ ճանապարհորդեցին Սուրբ Երկրով:

էր Նա աշխարհում: Փառքն ու զորությունը, որ Նա ուներ նախքան աշխարհ գալը, Նրան հայտնի դարձվեց:[5]

Երբ Հիսուսն այստեղ՝ երկրի վրա ճանապարհորդում էր, կատարելով Իր առաքելությունը, ասաց մարդկանց, որ Նա չէր հրաշքներ գործողը, որոնք Նա կատարել էր նրանց մեջ, Իր սեփական զորությամբ չէր, ոչ էլ Իր սեփական իմաստությամբ, այլ Նա այստեղ էր, որպեսզի կատարի Իր Հոր կամքը: Նա չէր եկել որոնելու փառք մարդկանցից և մարդկանց պատիվը, այլ որոնելու Իր Հոր պատիվն ու փառքը, որն ուղարկել էր Իրեն: Ես իմ Հօր անունովն եկայ, եւ ինձ չէք ընդունում. Եթե ուրիշը գայ իր անունովը, նորան կընդունիք[Հովհաննես Ե.43]:

Այսպիսով, Նրա առաքելության առանձնահատկությունը և այն, ինչ տարբերակում էր այն այլ առաքելություններից, սա էր. Նա չեկավ որոնելու մարդկանց փառքն ու պատիվը, այլ որոնելու Իր Հոր պատիվն ու փառքը և կատարելու Իր Հոր գործը, որն ուղարկել էր Նրան: Այստեղ էր գտնվում Նրա բարգավաճման գաղտնիքը և այստեղ է գտնվում ամեն մարդու բարգավաճման գաղտնիքը, ով գործում է նույն սկզբունքով:[6]

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին մեկ անգամ դրվեց մի վիճակում, որը պահանջում էր բարձրագույն ջանքը, որպեսզի կատարեր այն, ինչ անհրաժեշտ էր Աստծո միլիոնավոր

զավակների փրկության համար։ Դա պահանջում էր բարձրագույն ջանք և վճռականություն, որը պետք է գործադրվեր նախքան Աստծո Որդին կկարողանար անցնել այդ չարչարանքով՝ այն զոհաբերությամբ, որն անհրաժեշտ էր։[7]

Հիսուսը՝ Աստծո Որդին, ուղարկվեց աշխարհ ձեզ և ինձ համար հնարավոր դարձնելու ստանալ արտասովոր օրհնություններ։ Նա պետք է աներ մեծ զոհաբերություն։ Այն պահանջում էր ողջ ուժը, որ Նա ուներ, և ողջ հավատքը, որ Նա կարող էր հավաքել Իր համար իրականացնելու այն, ինչ Հայրը պահանջեց Նրանից։ Նա չձախողվեց, չնայած փորձությունն այնքան դաժան էր, որ Նա քրտնեց արյան խոշոր կաթիլներով։ . . . Նրա զգացմունքները պետք է որ աներևակայելի լինեին։ Նա Ինքն է պատմում մեզ, ինչպես դուք կգտնեք այն արձանագրված Վարդապետություն և Ուխտեր Գրքի 19 բաժնում, որ Նրա տառապանքն այնքան մեծ էր, որ այն ստիպեց նույնիսկ Նրան «ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե հոգով, և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ»։ Բայց Նա պետք է որ Իր սրտում անընդհատ ասեր. «Հայր, ոչ թե իմ կամքը, այլ Քոնը կատարվի» [տես ՎԿՈՒ 19.15–19][8]։

Մենք բոլորս կախված ենք Հիսուս Քրիստոսից, նրա գալուստից աշխարհ՝ բացելու ճանապարհը, որով կկարողանայինք ապահովվել խաղաղությամբ, երջանկությամբ և վեհացմամբ։ Եվ, եթե Նա չգործադրեր այս ճիգերը, մենք երբեք չէինք կարողանա ապահովվել այս օրհնություններով և արտոնություններով, որոնք երաշխավորված են մեզ համար ավետարանում՝ Հիսուս Քրիստոսի միջնորդության միջոցով, քանզի նա գործադրեց անհրաժեշտ ճիգերը։ . . .

. . . Չնայած նա զոհաբերեց Իրեն և հիմնեց մարդկանց համար փրկագնման ծրագիրը, այնուամենայնիվ, մինչև մարդիկ չջանան ձեռք բերել այդ միությունը Նրա և իրենց միջև, նրանց փրկությունը երբեք չի իրականանա։[9]

Մենք հասկանում ենք լիովին, որ Հիսուս Քրիստոսը բնակվեց այստեղ մարմնում և որ Նա այդ մարմինը ստացավ և այժմ բնակվում է նրանում փառավորված, և որ մենք իրավունք ունենք նույն օրհնությանը, նույն վեհացմանը և նույն փառքին[10] [տես առաջարկներ 2 և 3, էջեր 329]։

Հիսուս Քրիստոսն այցելել է երկիր վերջին օրերին, բացահայտելով երկնային ճշմարտություններ մեր փրկության համար:

Այն Էակը, ով ապրում էր Երկնքում, ով թագավորում էր այնտեղ նախքան աշխարհի լինելը, ով ստեղծեց աշխարհը և ով ժամանակի գագաթնակետին ներքև եկավ կատարելագործելու և փրկելու այն, ինչ Ինքը ստեղծել էր, հայտնվեց մարդկանց այս դարում:[11]

Մենք վկայում ենք ողջ աշխարհին, որ մենք գիտենք աստվածային հայտնությամբ, այսինքն Սուրբ Հոգու դրսևորումների միջոցով, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, և որ Նա հայտնի է դարձրել իրեն Ջոզեֆ Սմիթին այնպես անհատապես, ինչպես նա արել էր Իր առաքյալներին հին դարերում, գերեզմանից բարձրանալուց հետո, և որ Նա հայտնեց նրան երկնային ճշմարտությունները, որոնց միջոցով միայն մարդկությունը կարող է փրկվել:[12]

Կիրթլենդի Տաճարում երկու տղամարդիկ տեսան Նրան: . . . Աստծո Որդին հայտնվեց նրանց, Նա, ով սպանվեց Հրեաների կողմից և նրանք ասացին. «վարագույրը հեռացվեց մեր մտքերից, և մեր հասկացողության աչքերը բացվեցին և մենք տեսանք Տիրոջը ամբիոնի բազրիքի վրա կանգնած, մեր առաջ»: . . . Նրա ոտքերի տակ աղյուսապատ սաթագույն հատակ էր մաքուր ոսկուց:Նրա դեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ:Նրա ձայնն ասես շառաչյուն մեծ ջրերի հնչում լիներ: Դա Եհովայի ձայնն էր, ասելով. «Ես եմ առաջինը և վերջինը. Ես նա եմ, ով ապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. Ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ: Ահա, ձեր մեղքերը ներված են ձեզ. Դուք մաքուր եք իմ առաջ. Հետևաբար, բարձրացրեք ձեր գլուխները և ցնծացեք: Դուք կառուցել եք այս տունն իմ անվան համար: Ես կընդունեմ այս տունը և դուրս կթափեմ իմ Հոգին նրանց վրա, ովքեր պահում են իմ պատվիրանները, և ես չեմ հանդուրժի, որ այս սուրբ տունը պղծվի» [տես ՎԿՈՒ 110.1–8]: Դա նույն անձնավորության ձայնն էր, որին մերժեցին Հրեաները, և Նրան տեսան այնտեղ: Այժմ ես գիտեմ, որ այս բաները՝ բաներ են, որոնք ճշմարիտ են ինչպես ճշմարիտ է Աստված: Բայց երկրի ազգերը տեղյակ չեն սրան, որ Հիսուսը՝ Աստծո Որդին, եկել է և հայտնվել է

մարդկանց և հանդերձավորել նրանց ավետարանը քարոզելու իշխանությամբ և խոստացել Սուրբ Հոգին բոլոր նրանց, ովքեր կհավատան և կհնազանդվեն այս սկզբունքներին և կստանան գիտելիք, որ այս սկզբունքները ճշմարիտ են։[13] [տես առաջարկ 4, էջ 329]։

Փրկիչը նորից կգա և մենք պետք է նախապատրաստենք մեզ Նրա գալստին։

Մենք ունենք վկայություն Քրիստոսի մասին, որ Նա գալիս է աշխարհ՝ թագավորելու։[14]

Հիսուսը կգա ժամանակ առ ժամանակ և կհայտնվի մեր մեջ, ինչպես Նա հայտնվեց այն օրերում, երբ երկրի վրա էր՝ Հրեաների մեջ, և Նա կուտի և կխմի մեզ հետ և կխոսի մեզ հետ և կբացատրի Թագավորության խորհուրդները և կպատմի մեզ բաներ, որոնք օրինական չէ խոսել այժմ։[15]

Եթե դուք շարժվող գնացքի մեջ եք, քանի դեռ դուք հանգիստ նստած եք և զբաղեցնում եք ձեր տեղը, այդ գնացքը կտանի ձեզ այն նպատակակետը, որտեղ դուք եք կամենում, բայց եթե դուք իջնեք գնացքից վտանգավոր կլինի և գուցե երկար ժամանակ պահանջվի մինչև մեկ ուրիշ գնացք գա։ Նույնը մեզ հետ է, եթե մենք ճիշտ ենք ապրում, կատարելով մեր աշխատանքը, մենք շարունակում ենք գնալ և եթե մենք պահում ենք մեր ուխտերը, մենք կատարում ենք Աստծո աշխատանքը և իրականացնում Նրա նպատակները և նախապատրաստվում այն ժամանակին, երբ Հիսուսը՝ Աստծո Որդին կգա պատվով և փառքով, և բոլորի վրա ովքեր կապացուցեն, որ հավատարիմ են, կշնորհի բոլոր օրհնությունները, որ նրանք ակնկալում են և հազարավոր անգամներ ավելի։ . . .

. . . Ես ասում եմ Վերջին Օրերի Սրբերին, եթե ձեզանից որևէ մեկը քնկոտ է, կարդացեք Փրկչի խոսքերը, որոնք Նա խոսել է, երբ Նա երկրի վրա էր՝ տասը կույսերի վերաբերյալ, որոնցից հինգն իմաստուն էին և վերցրեցին յուղ իրենց լամպերում, և երբ Փեսան եկավ միայն կեսն էին պատրաստ դուրս գալու Նրան դիմավորելու [տես Մատթեոս ԻԵ.1–13, ՎևՈՒ 45.56–59]։ Մի թույլ տվեք, որ դա այդպես լինի մեզ հետ, որպես Վերջին Օրերի Սրբեր։ Եկեք փորձենք հավատարիմ լինել հավիտենական

Նախագահ Սնոուն քաջալերեց Սրբերին հետևել Փրկչի տասը կույսերի առակի հինգ իմաստուն կույսերի օրինակին:

ուխտերին, որոնք մենք ենք կապել և հավատարիմ լինենք Աստծուն: Աստված օրհնի Վերջին Օրերի Սրբերին և թափի Իր Հոգին ձեզ վրա: Թող որ դուք հավատարիմ լինեք ձեր Աստծուն, հավատարիմ ձեր ընտանիքներին, և խոհեմությամբ վարվեք բոլոր բաներում և աշխատեք հանուն Աստծո թագավորության շահերի, և որպեսզի մենք չլինենք ոչ իմաստուն կույսերի շարքում, այլ արժանի համարվենք լինելու նրանց շարքում, ովքեր կթագադրվեն, որպես թագավորներ և թագուհիներ և կթագավորեն ողջ հավերժության ընթացքում.[16] [տես առաջարկներ 5 և 6, էջ 329]:

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Խորհեք այս գաղափարների շուրջ, երբ դուք ուսումնասիրեք այս գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր viii–x:

1. Խորհեք Սուրբ Երկրում ունեցած փորձառությունների վերաբերյալ Նախագահ Մնոուի խոսքերի մասին (էջ 322)։ Ի՞նչ եք կարծում, ինչու նրա մտքերը և խորհրդածությունները դարձան «տպավորիչ ու հանդիսավոր», երբ նա այնտեղ էր։ Ինչպե՞ս կարող ենք զարգացնել նմանատիպ զգացումներ Փրկչի հանդեպ, նույնիսկ առանց այցելելու Սուրբ Երկիր։
2. Ուսումնասիրեք բաժինը, որը գտնվում է էջ 323-ում, մտածելով, թե ինչ է Հիսուսն արել ձեզ համար։ Երբ դուք խորհեք Փրկչի ցանկության մասին, «որոնեք Նրա Հոր պատիվն ու փառքը», մտածեք, թե ինչ պետք է դուք անեք Աստծո կամքին հետևելու համար։
3. 323 էջում Նախագահ Մնոուն կիսվում է «բարգավաճման գաղտնիքով»։ Ինչպե՞ս է այս գաղտնիքը գործում մեզ համար։
4. Կարդացեք 326 էջում սկսվող բաժինը։ Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի վկայությունը ազդում ձեր կյանքի վրա։ Խորհեք տարբեր ուղիների մասին, որոնցով մենք կարող ենք անել մեր մասը՝ կիսվելու Հիսուս Քրիստոսի վկայությամբ աշխարհի հետ։ Օրինակ՝ ի՞նչ կարող ենք անել մեր վկայությամբ կիսվելու մեր ընտանիքների հետ, կիսվելու նրանց հետ, որոնց այցելող կամ տնային ուսուցիչներն ենք մենք, մեր հարևանների հետ, մարդկանց հետ, ում մենք հանդիպում ենք օրեց օր։
5. Ի՞նչ ուղով կարող ենք պատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստին (օրինակների համար տես էջեր 327–28)։ Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին պատրաստվել։
6. Ի՞նչ ձևերով են Նախագահ Մնոուի ուսմունքներն ազդել Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայության վրա։ Ուղիներ որոնեք կիսվելու ձեր վկայությամբ ընտանիքի անդամների և ուրիշների հետ։

Առնչվող սուրբ գրություններ. Ղուկաս ԺԲ.31–48, Բ Կորնթացիս Ը.9, 2 Նեփի 2.7–8, 25.23, 26, Ալմա 7.11–13, ՎևՈՒ 35.2, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17

Օգնություն ուսուցչին. «Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին և կարդալ այն մտքում: Հրավիրեք նրանց հավաքվել երկու երեք հոգուց բաղկացած խմբերով, ովքեր ընտրել են նույն բաժինը և քննարկեք, թե նրանք ինչ են սովորել» (էջ ix այս գրքում):

Հղումներ

1. Letter from Brigham Young and Daniel H. Wells to George A. Smith, in *Correspondence of Palestine Tourists* (1875), 1–2.
2. In *Correspondence of Palestine Tourists,* 205.
3. In *Correspondence of Palestine Tourists,* 236–37.
4. *Deseret News,* Jan. 24, 1872, 597.
5. In Conference Report, Apr. 1901, 3.
6. *Deseret News,* Dec. 8, 1869, 517.
7. In Conference Report, Oct. 1900, 2.
8. *Millennial Star,* Aug. 24, 1899, 531.
9. *Deseret News,* Mar. 11, 1857, 3; in the original source, page 3 is incorrectly labeled as page 419.
10. *Deseret News,* Nov. 22, 1882, 690.
11. In Journal History, Apr. 5, 1884, 9.
12. *Deseret News: Semi-Weekly,* Jan. 23, 1877, 1.
13. *Millennial Star,* Apr. 18, 1887, 245.
14. *Deseret News,* Apr. 11, 1888, 200; from a detailed paraphrase of a discourse Lorenzo Snow delivered in the April 1888 general conference.
15. In Conference Report, Apr. 1898, 13–14.
16. *Millennial Star,* Apr. 18, 1887, 244–46.

Տեսանյութերի ցանկ

Կազմը՝ *Լորենզո Մնոու,* Ջոն Ուիլարդ Քլաուսոնի կողմից, ողորկ թուղթ © Artbeats

Էջ vi. Լուսանկարը տրամադրվել է Եկեղեցու Պատմության Գրադարանի կողմից:

Էջ 2. Փորագրանկարը տրամադրված է Եկեղեցու Պատմության Գրադարանի կողմից:

Էջ 6. Լուսանկարը տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 9. Հատված, *Առաջին Նախազգուշությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը նկարից, 1853,* փորագրանակարը՝ Ֆրեդերիկ Հակինս Փիերսի:

Էջ 14. *Նավ դեպիՄիոն,* Գլեն Ս. Հոփկինսոնի: © Glen S. Hopkinson. Չպատճենահանել

Էջ18. *Լորենզո Մնոուն սպասավորում է մի վիրավոր մարդու,* Բրայան Քոլի: © Brian Call.

Էջ 22. *Պիոներների ծածկակառքը,* Միներվա Թեյչերթ: Տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 42. *Լորենզո Մնոու,* Լյուիս Ռամզեյ: Տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 49. Լուսանկարը տրամադրվել է Եկեղեցու Պատմության Գրադարանի կողմից:

Էջ 54. *Հովհաննեսը մկրտում է Հիսուսին,* Հարի Անդերսոն: © IRI

Էջ 57. *Պենտեկոստեի օրը,* Սիդնի Քինգ: Տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 68. Լուսանկարը՝ Ֆրանկ Հելմրիչի: © 2009 Frank Helmrich.

Էջ 71. *Լորենզո Մնոուն աղոթելիս,* Բրայան Քոլ: © Brian Call.

Էջ 82. Լուսանկարը՝ Ուիլյամ Առլեյ Քոուլի

Էջ 83. *Ուիլյամ Քլաֆը և Արմա Սմիթը սպասավորում են Լորենզո Մնոուին,* Սամ Լոլոր: © Sam Lawlor.

Էջ 87. Լուսանկարը՝ Սթիվ Բանդերսոնի © 2000 Steve Bunderson.

Էջ 94. Լուսանկարը © Corbis:

Էջ 100. *Պողոս Առաքյալը,* Ջեֆ Ուարդ: © Jeff Ward.

Էջ 106. *Լեռան Քարոզը,* Կարլ Հեյնրիխ Բլոխ: Օգտագործված է Ֆրիդրիխսդորֆի Ազգային Պատմության Թանգարանի թույլտվությամբ, Հիլրոդ, Դանիա:

Էջ 110. *Աբրահամը Մամբրէի տաճարամանուներում,* Գրանթ Ռոմնի Քլաուսոն, հիմնված Հարի Անդերսոնի կատարած բնօրինակի վրա: © IRI

Էջ 122. Հատված՝ *Շուզեր Քրիք, 1846,* Գրեգորի Սիվերս © Gregory Sievers.

Էջ 125. Հեբեր Կ. Քիմբալի օրագրում Փիթեր Օ. Հանսենի կողմից կատարած գծանկարը:

Էջ 140. *Յովնան,* Ռոբերթ Թ. Բարեթ: Robert T. Barrett.

Էջ 170. Հատված *Քրիստոսը Գեթսեմանում,* Հեյնրիխ Հոֆման: Տրա-

մադրվել է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից:

Էջ 176. *Մովսեսը բաժանում է Կարմիր ծովը,* Ռոբերթ Թ. Բարեթ: © 1983 IRI.

Էջ 180. Լուսանկարը՝ Իվան Օրտիզ Փոնսի: © 2002 Ivan Ortiz Ponce.

Էջ 202. *Նա օծեց կույր մարդու աչքերը,* Ուոլթեր Ռեյն: Տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 212. Լուսանկարը տրամադրվել է Եկեղեցու Պատմության Գրադարանի կողմից:

Էջ 226. *Մեկնումը Նավուից,* Գլեն Ս. Հոփկինսոն: Glen S. Hopkinson.

Էջ 230. Լուսանկարը՝ Սթիվ Բանդերսոնի: © 2006 Steve Bunderson.

Էջ 238. Լուսանկար© Getty Images:

Էջ 245. *Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնումը,* Ուոլթեր Ռեյն: © IRI

Էջ 274. *Առաջին Տեսիլքը,* Միներվա Թեյչերթ: Տրամադրվել է Ռեյ Մ. և Լաֆոնդ Փոփ Հոլի կողմից: Չպատճենահանել:

Էջ 279. *Զոզեֆ Սմիթ Կրտ. Հայտնություն ստանալը,* Դենիել Ա. Լյուիս: © 2007 Daniel A. Lewis.

Էջ 288. *Տերը հայտնվում է Կիրթլենդի Տաճարում,* Դել Փարսոն: © 2001 IRI

Էջ 295. *Քրիստոսը և հարուստ երիտասարդ կառավարիչը,* Հեյնրիխ Հոֆման: Տրամադրված է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից:

Էջ 298. *Լորենզո Մնոուն և նրա ընտանիքն օգնություն են ստանում փորձության մեջ,* Սամ Լոլոր: © Sam Lawlor.

Էջ 308. *Զոզեֆ Սմիթ,* անհայտ նկարիչ: Այս նկարը տրամադրվել է Քրիստոսի Արխիվների Համայնքի կողմից, Միսսուրի:

Էջ 314. *Զոզեֆը իր երեխաների հետ խաղալիս,* Ռոբերթ Թ. Բարեթ: © 1991 Robert T. Barrett.

Էջ 320. *Քրիստոսը կարմիր պատմուճանով,* Միներվա Թեյչերթ: © IRI Տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 324. *Երուսաղեմ,* Ջեյմս Ֆեյրման: Տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 328. *Տաղը կույսերի առակը,* Դան Բրը: © IRI

Ցուցիչ

Ա

Ամուսնություն
- Սփոփող Միությունը խրախուսում է հավատարմություն, 196
- հավերժական, նրանց համար, ովքեր չեն ամուսնացել այս կյանքում, 150-51
- հավերժական, պետք է խրախուսվի, 149
- հավերժական, տաճարներում, 162
- միասնություն զգացմունքի, 151-52

Անգլիա
- Լորենզո Սնոուի ճանապարհորդությունը դեպի, 201-203
- Լորենզո Սնոուի միսիան, 10–16, 251, 253-54

Աշխատանքը Տիրոջ
- բերում է բարգավաճում, 207-208
- բերում է ուրախություն, 221-22
- կարող է դժվար լինել, 221-22
- մենք կարիք ունենք Աստծո օգնությունը կատարելու համար, 207-208

Աշխատանքը
- ընկերների օգտի համար, 303-304
- կատարելով, մեզ վստահված, 283-85
- որտեղ Տերն է մեզ տնկում, 201

Աշխարհիկություն
- առանձնացնել մեզ, 117-19, 202-204, 293-94
- հրաժարվել փոխանակել հավերժության փառքերը որևէ բանի հետ, 294-95
- մեզ շրջում է հավերժական սկզբունքների դեմ, 290-93
- նախազգուշացումներ ընդդեմ, 289-93

Ապաշխարություն
- առաջ է տանում մեր իսկ գործը, 141
- կապված մկրտության և հաստատման հետ, 56-57
- հաղթահարում է ձախողումը, 113-15
- տասանորդ չվճարելու համար, 185-86

Առաքյալներ, պարտականություններ, 22

Աստծո Թագավորություն
- Սփոփող Միության անդամները առաջ են շարժվում, 196
- առաջինը ձգտելով, 295
- կառուցումը, 282, 295-96
- նվիրվածություն, 293-94
- շարունակում է առաջընթացը, 275-79
- չի կարող կործանվել, 281-82
- *Տես նաև* Ծառայություն Եկեղեցում; Հիսուս Քրիստոսի Եկեղեցի

Աստծո կամքը, որոնելով և հետևելով, 170-77

Արարողությունները
- բերում են հավերժական պարգևներ և օրհնություններ, 62
- մահացածների համար, 161-62, 165
- սպասավորվում են քահանայության միջոցով, 62-64, 241-43

Բ

Բարգավաճում, գաղտնիքը, 323

Բարօրություն, նվիրվածություն հանդեպ, ուրիշներին, 257-58

Բնավորություն
- ապաշխարությունը զորացնում է, 141
- արդարները, ավելի են մոտեցնում մեզ Տիրոջը, 141-44
- զարգանում է աստիճանաբար, 140-41
- հաստատել պատշաճ, 137-39
- պահպանում է արդարին, 141-43
- սուրբ գրություններն ուսուցանում են բարեփոխման մասին, 139-40

Բրիգամ Սիթի, Լորենզո Մնոուն, 28-29

Գ

Գայ, Ջոզեֆ, բժշկվում է Լորենզո Մնոուի սպասավորմամբ, 239-40

Գայթակղություններ
- Տերը զորացնում է մեզ հաղթահարելու, 130-31
- ինչպես խուսափել, 289-90
- հավատարիմ մնալով ընթացքում, 129
- միսիոներները հեռու մնան դրանից, 270
- չհաղթվեն դրանից, 290-93
- տաճարային աշխատանքն օգնում է մեզ դիմակայել, 165-66

Գթություն
- Սփոփող Միության անդամները օրինակ են ծառայում, 195
- տարածել բոլորին, 301-302

Գիտելիք
- հոգևոր աճ, 73-74
- ձեռք բերել հոգևոր, պահանջում է ուժերի լարում, 74-76
- ուրիշների հետ կիսվելը, 303
- *Տես նաև* Գիտելիք

Դ

Դարձ
- Լորենզո Մնոուի, 6–7, 75, 71-72
- աճող հավատքի միջոցով, 73-76
- սկսվում է վկայությամբ, 73

Ե

Երեխաներ
- թանկարժեք ժառանգություն, 149
- պետք է սովորեն տասանորդի օրենքը, 186

Երկնային Հայր. *Տես* Հայր Աստված

Երջանկություն
- Սուրբ Հոգու լույսով քայլելը բերում է, 88-89
- ապահովված Հիսուս Քրիստոսի միջոցով, 324-25
- ավետարանն ընդունելը բերում է, 263
- գալիս է քահանայության միջոցով, 243
- մեծանում է, երբ մենք օգնում ենք ուրիշներին գտնել, 302
- չարչարանքների մեջ, 123-26

Զ

Զոհաբերություն
- անհրաժեշտ է ֆիզիկական փրկության համար, 280-81
- կատարել տաճարային աշխատանք, 165
- կարող է պահանջվել Տիրոջ կողմից, 282
- ուրիշների բարիքի համար, 233-34, 262–63
- պահանջվում է միսիոներներից, 263-66
- պատրաստված Աստծո օգնությամբ, 204-205

Զվարթություն Աստծուն ծառայելիս, 220

Ը

Ընդդիմությունը չի կործանի թագավորությունը, 280-82

Ընկերություն
նրանց հետ, ովքեր այլ հավատքից են, 263
պահանջում է ջանքեր երկու կողմերից, 232

Ընտանեկան պատմություն, զոհաբերություններ անել՝ կատարելու համար, 164

Ընտանիք
Սփոփող Միության լավ ազդեցությունը, 196
ավետարանի ուսուցում, 153-55
միասնություն, 152-53, 231
սրբազան և հավերժական փոխհարաբերություններ, 149-50
տաճարներում կնքվածներ, 160
օրհնությունները, մատչելի են բոլոր հավատարիմներին, 150-52

Ի

Իտալական Միսիան, հիմնադրում է Լորենզո Սնոուն, 24-27, 237-40

Խ

Խաղաղություն
Հիսուս Քրիստոսի միջոցով, 324-25
Սուրբ Հոգին կարող է բերել, 88-89

Ծ

Ծառայել ուրիշներին
բարեփոխել մեզ, միջոցով, 303-304
թույլ է տալիս մեզ ստանալ երկինք մեր ներսում, 304-305
մեծացնում է մեր երջանկությունը, 302
քննել անձնական դրդապատճառները, 254-55
օգտագործել տաղանդները, 256-57
օրհնությունները գալիս են, 299, 301
Տես նաև Ծառայությունը Եկեղեցում

Ծառայություն Եկեղեցում
Սփոփող Միությունն ապահովում է հնարավորություններ, 197-98
դժվար բայց ուրախալի, 221-22
հավատարիմ և եռանդուն, 220-21
յուրաքանչյուր կոչում կարևոր է, 216-220
օգնում է ուրիշներին փրկություն ստանալ, 215-16
Տես Ծառայել ուրիշներին

Ծնողներ
խրախուսում են սեր և բարություն տանը, 151-52
մշակել կյանքի և փրկության սկզբունքներ, 154
պետք է օրինակ հանդիսանան երեխաների համար, 152-54
սովորեցնել երեխաներին տասանորդ վճարել, 186
Տես նաև Ընտանիք

Կ

Կանայք, Տիրոջ աշխատանքում, 198
Տես նաև Սփոփող Միություն

Կատարելագործում
գալիս է տառապանքների միջոցով, 127
հասնելու համար անհրաժեշտ է երկնային օգնություն, 109-111
ձգտել պատվիրանին, 109-111
մեր ոլորտի ներսում, 112-13
պահանջվում է ապաշխարություն, 113-15
օրեցօր գործընթաց, 112-17, 119

Կարգապահություն, պահանջվում է կատարյալ դառնալու համար, 110

Կիրթլենդի տաճարը
Հիսուս Քրիստոսը հայտնվում է, 157, 290-91, 325-26
օրհնություններ նվիրագործման ժամանակ, 290-91

Կյանքի նպատակը, 178

Կոչումներ
բոլորը կարևոր են Աստծո աշխատանքում, 216-220
կատարելիս, Տիրոջ օգնության կարիքը, 173-78, 201-203
մեծարել, 216-220

Կրթություն
կևորությունը, Լորենզո Սնոուի համար, 3–4, 43-44
հոգևոր, 46, 73-74
պահանջում է հավատք, ուժերի լարում և հաստատակամություն, 44-46

Հ

Հազարամյակ, տաճարային աշխատանք ընթացքում, 165

Հալածանքները չեն կործանի Եկեղեցին, 280-82

Համբերություն է պահանջվում կատարյալ դառնալու համար, 109

Համեստություն
անհրաժեշտ է՝ Հոգին ունենալու համար, 90-92
անհրաժեշտ է՝ աշխատանքն իրականացնելու համար, 283-84
ղեկավարները կարիք ունեն, 257-58

Հայտնություն
Եկեղեցի, կառուցված վեմի վրա, 85-86
համեստությունն անհրաժեշտ է, 91
օգնում է դժվարությունների մեջ, 84-85

Հայր Աստված
Հիսուս Քրիստոսը կատարեց կամքը, 323-25
բոլոր մարդիկ զավակներն են, 301-302
ընդունելով ձեռքը, այն բարիքում, որ մենք անում ենք, 177
կատարելով կամքը, 171-73
ձգտելը փառքին, ապահովում է հաջողություն, 171-73
ներուժ նման դառնալու, 95-99
պաշտպանում է Իր ժողովրդին, 282-83
պատրաստում է սքանչելի բաներ հավատարիմների համար, 160
օգնությամբ, մենք կարող ենք անել պահանջվող ամեն բան, 204-205

Հաջողություն
գալիս է Հոր կամքը կատարելու արդյունքում, 171-77
հնազանդությունը բերում է, Աստծո աշխատանքի մեջ, 221-22

Հաջորդականությունը Նախագահությունում, 275-78

Հաստատում. *Տես* Սուրբ Հոգի

Հավատարիմների ճակատագիրը, 95-98

Հավատք
Հոգու պարգև, 84-85
կապված մկրտության և հաստատման հետ, 56-57
կատարելով հանձնարարությունները, 220-222
հիմնավորվելը, ուժեղացնում է բնավորությունը, 141
հոգևոր գիտելիքը մեծանում է, 73-74
ուժերի լարումը մեծանում է, 74-76

Հավերժություն, փառք՝ ավելի մեծ քան աշխարհի հարստությունները, 294-95

Հիսուս Քրիստոս
Եկեղեցու ղեկավար, 275-78
Քավություն, բոլոր մարդկանց համար, 216
աղոթում է՝ բոլորը մեկ լինելու համար, 227-29
առաքելություն, 323-24
գայթակղությանը դիմակայելու օրինակ, 294

ենթարկում Հոր կամքին, 170-73, 323-25
ծնունդը, 323
կգա երկիր թագավորելու, 327-28
հայտնվում է Լորենզո Մնոուին, 32, 275-78
հայտնվում է Կիրթլենդի Տաճարում, 290-91, 325-26
մկրտությունը, 58, 322
նախասահմանվածություն, 127
ներում քավող արյան միջոցով, 62
վեհացում միջոցով, 98-99, 324-25
վկայություն, 71, 211-13, 326-27
քահանայության ծառայության օրինակ, 216

Հիսուս Քրիստոսի Եկեղեցի
առաջ է շարժվում չնայած ընդդիմությանը, 275-80, 280-81
կառուցված ամուր հիմքի վրա, 280-81
Տես նաև Աստծո Թագավորությունը; Ծառայություն Եկեղեցում

Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը, 327-28

Հնազանդություն
Աստծո կամքին, բերում է զորություն, 173-77
բերում է օրհնություններ, 55-56

Հոգևոր պարգևներ, որոնել, 245-47

Հուսահատություն, հաղթահարել, 117, 198-99

Հպարտություն, Եկեղեցու մի առաջնորդի օրինակը, 251, 253-54

Չ

Չախորդություն. *Տես* Փորձություններ

Ղ

Ղեկավարները
կարիք ունեն Հոգուց առաջնորդության, 257-58
չպետք է ձգտեն պատվի իրենց համար, 251, 254-55
պատվիրված են արածացնելու Տիրոջ ոչխարներին, 255-56
պետք է լիազորեն պարտականություններ, 256-57
պետքէ ծառայեն սիրով, 254-56
պետք է մտահոգվեն ուրիշների բարօրությամբ, 251, 254-58

Ճ

Ճշմարտություն, Սուրբ Հոգու պարգևը տանում է դեպի ամեն, 83-85

Մ

Մալթայում, Լորենզո Մնոուի ծառայությունը, 211-23

Մաունթ Փասգա
Լորենզո Մնոուն ղեկավարում է, 21, 123-26
զվարճություն, 124-27

Միասնություն
Եկեղեցում, 227-29
բերում է լույս և խելամտություն, 234
գալիս է, երբ մենք ծառայում ենք միմյանց, 229-31
դարձնում է մեզ հզոր ժողովուրդ, 234
ընտանիքներում, 229
նախապատրաստում է մեզ Աստծո ներկայության մեջ բնակվելուն, 234
ցույց է տալիս աշխարհին Տիրոջ բնավորությունը, 227-29
քվորումներում և կազմակերպություններում, 227-29

Միսիոներական աշխատանք
անդամները ծառայում են, 214-15
բերելով բարի և ուրախ նորություններ, 266-67
խորհուրդ, թե ինչպես ծառայել, 266-68

ծառայել որպես երկնքի դեսպաններ, 267
ծառայելու համար զոհաբերելը, 263-66, 269
ուրախություն մասնակցելիս, 262, 270-71
պատճառներ լիաժամկետ ծառայության համար, 262-64
ստանալով Տիրոջ օգնությունը, 261-63
օգնում է մյուսներին ստանալ ավետարանի օրհնությունները, 263-66
և սեր մերձավորի հանդեպ, 269

Մկրտություն
Լորենզո Մնոուի, 6, 53
Հիսուս Քրիստոսի, 60, 322
անհրաժեշտ է մեղքերի թողության համար, 56-57, 61-63
նախորդում է Սուրբ Հոգու պարգևին, 56-57
ուխտը պահելը բերում է օրհնություններ, 63-65
սպասավորվում է ընկղմամբ, 59-61
սպասավորվում է համապատասխան իշխանությամբ, 62-63

Ն

Ներգաղթի Մշտական Հիմնադրամ, 225-27

Ներում, 234

Շ

Շնորհ, 201

Ու

Ուխտեր
չկարողանալ պահել, 293-94
պահելը բերում է ուրախություն, 220-22
պահել մկրտության, բերում են օրհնություններ, 65-66

Ուսուցիչներ
Հոգու առաջնորդության կարիքն ունեն, 46-47, 255-56
լուսավորվում են ուրիշներին սովորեցնելու միջոցով, 303
պետք է ծառայեն սիրով, 255
սովորեցնում են երեխաներին տասանորդ վճարել, 186

Ուրախություն
ճշմարտության գործին նվիրվածությունը բերում է, 221-22
չնայած դժվարություններին, 100-101, 131-32

Ուրացություն
Կիրթլենդում, Օհայո, 289-90
հետևում է աշխարհիկությանը, 290-93

Չ

Չարաշահումներ, ոգի, տանում է դեպի Կիրթլենդի ուրացությանը, 290-93

Ջ

Ջենսեն, Էլլա, կյանքի վերադարձվեց Լորենզո Մնոուի սպասավորման միջոցով, 30-32

Ս

Սելեստիալ արքայություն
Սուրբ Հոգին նախապատրաստում է մեզ, 91-92
ձգտելու, 103

Սելեստիալ օրենքը, հաստատել մեր կյանքում, 222

Սիրել
Աստծուն ավելի, քան աշխարհը, 293
միմյանց, 231-33, 301-302
միսիոներական աշխատանքում, 266
միսիոներներից՝ մարդկանց, 269

Սմիթ, Ալմա Լ., օգնում է փրկել Լորենզո Մնոուի կյանքը, 81-83

Սմիթ, Հայրում, նահատակությունը, 275
Սմիթ Ջոզեֆ
Լորենզո Սնոուի վկայությունը, 310, 315-16
Լորենզո Սնոուի փորձառությունները, հետ, 309-11
Լորենզո Սնոուն առաջինն է տեսնում, 311
աճեց հոգևոր զորությամբ և ազդեցությամբ, 315-16
աստվածային կոչում, 310
բարձր բարոյական բնավորություն, 311-12
զերծ կեղծավորությունից, 312-13
խոսում է զորությամբ Նավուի Տաճարում, 309
մի անկեղծ պատանի էր, երբ կանչվեց, 310-11
նահատակությունը, 275
վայելում էր անմեղ զվարճություններ, 312-13
քահանայությունը վերականգվեց, միջոցով, 241-43
Սնոու, Էլիզա Ռ. (Լորենզո Սնոուի քույրը)
Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահը, 193
անզավակության վիճակը, 150-51
ուղեկցում է Լորենզո Սնոուին դեպի Սուրբ Երկիր, 321-22
Սնոու, Լորենզո
Անգլիայի ճանապարհին փոթորիկ է տեղի ունենում, 201-203
Հիսուս Քրիստոսը հայտնվում է, 32, 276-78
այցելում է Սուրբ Երկիր, 321-22
արձագանքում է Բրիգամ Յանգի վերափոխվելու կոչին, 135, 137
գիտության հանդեպ ծարավ, 3–4, 43-44
դառնում է Եկեղեցու Նախագահ, 33-34
դարձը, 6–7, 69, 71-72
ընկերանում է կրոնական այլ առաջնորդների հետ, 35-36
խոսում է Սփոփող Միության միջոցառմանը, 193
կազմակերպում է ընտանեկան հավաք, 147, 149
կանչվում է Տասներկու Առաքյալների Քվորում, 22-23
կյանքը փրկվում է Հավայան կղզիներում, 81-83
կրթություն, 4–6
հաստատվում է Եկեղեցու Նախագահ, 276-78
հիմնադրում է Եկեղեցի Մալթայում, 211-13
հիմնադրում է Իտալական միսիան, 23-26
ձեռք է բերում վկայություն, 6–7
ղեկավարում է Սրբերին Բրիգամ Միթիում, 27-28
ղեկավարում է Սրբերին Մաունթ Փասգայում, 22
մանկությունը, 3–4
մեծարում է քահանայությունը, 135, 137
մկրտությունը, 6, 53
մտնում է բազմամուսնության մեջ, 20
նամակ է ուղարկում Լոնդոնի քահանայության ղեկավարներին, 251, 253-54
նվիրատվություններ է հավաքում Գաղթի Մշտական Հիմնադրամի համար, 225-27
որոշում է ծառայել լիաժամկետ միսիա, 261-63
որպես լիաժամկետ միսիոներ, 7–16, 25-26, 81-83, 237-40
ուսուցանում է տասանորդի օրենքը, 36-37, 181-84

պատմում է հասարակության առջև խոսելու դժվարությունների և հաջողությունների մասին, 108-11
սպասավորում է Էլլա Ջենսենին, 30-33
սպասավորում է Վալդենսիանների մի տղայի, 239-41
սպասավորում է նավի վիրավոր մատուցողին, 16-19
փող է թողնում Բրիգամ Յանգի կնոջը, 10–11
փորձառությունները Ջոզեֆ Սմիթի հետ, 309-311
օգնություն է ստանում մի մարդուց, ում ինքն է փրկել, 299, 301
և տաճարային աշխատանք, 29-30

Մնոու, Ռոզետա Լեոնորա Փեթիբոուն (Լորենզո Մնոուի մայրը), 3–4

Մնոու, Օլիվեր (Լորենզո Մնոուի հայրը), 3–4

Սովորեն
Հոգով, 46-47
կրկնությունը օգտակար է, 45-46
հավատքով, 44-45
պահանջում է հաստատակամություն, 44-45
Տես նաև Գիտելիք

Սուրբ Հոգի
առաջնորդություն, տանում է դեպի օրհնություններ, 63-65
բացահայտում է Աստծո բաները, 87-88
բերում է խաղաղություն և երջանկություն, 88-89
հուշում է անդամներին ծառայել միսիաներ, 266
հուշումները, փրկեցին Լորենզո Մնոուի կյանքը, 81-84
նախապատրաստում է մեզ սելեստիալ փառքի համար, 89-90
ներգործում է լսողների սրտերի վրա, 266
շնորհվում է ձեռնադրմամբ, 59-60
որպես մեր ընկեր, 87-88, 91
պահում է մեզ առաջընթացի ուղու վրա, 92
պարգև, կապված հավատքի և ապաշխարության հետ, 56-58
պարգև, պետք է սպասավորվի պատշաճ իշխանությամբ, 62
տալիս է խորհուրդ, 88
տանում է դեպի ամեն ճշմարտություն, 84-87
օգնում է համբերել փորձություններին, 89-92
օգնում է հատուկ հանգամանքներում, 81-84, 90
օգնում է մեզ կատարել պարտավորությունները, 89-91

Սուրբ գրություններն ուսուցանում են մեր աստվածային ներուժի մասին, 98-102

Սփոփող Միություն
աշխատել քահանայություն կրողների հետ, 196
առաջ գնալ Աստծո թագավորությունում, 196
առաքելությունն է, 196
զորացնում է մայրությունը, 196
լավ ազդեցություն տներում, 196
մարմանվորում է գթություն և մաքուր կրոն, 195
ստանալ ծառայելու մեծացող հնարավորություններ, 197-98
օգնել անդամներին նպատակաուղղվել սելեստիալ փառքի վրա, 198

Վ

Վալդենսիանները, 24-26, 237-40

Վեհացում
համար ներուժ, 96-102, 150-152

հնարավոր Հիսուս Քրիստոսի միջոցով, 324-25

Վերականգնում
Լորենզո Սնոուի վկայությունը, 316-17
իրականացվել է Ջոզեֆ Սմիթի միջոցով, 241-43, 316-17
մարգարեացավ, 278

Վկայություն
Հիսուս Քրիստոսի, 78, 214-15, 326-27
Ջոզեֆ Սմիթի և Վերականգման մասին, 316-17
լավ մեկնարկային կետ է, 74

Վստահություն
Տիրոջ խոստումներում, 283-85
առ Աստված, 198-99, 201-203

Տ

Տաղանդներ
առակը, 217-19
ղեկավարներն օգտագործում են, ուրիշների, 256-57

Տաճարներ
Հազարամյակի հիմնական աշխատանքը, 165
զոհաբերություններ կատարել՝ աշխատելու համար, 143
ընտանիքները կնքվում են, 162
թույլ են տալիս մեզ փրկիչներ լինել, 165
կարևորությունը Լորենզո Սնոուի համար, 28-29
մտնելով մաքուր սրտով, 166
նախապատրաստում են մեզ դիմակայել գայթակղությանը, 165-66
ներս գալու հրավեր, 162
վայրեր՝ սովորելու Աստծո օրհնությունների մասին, 162
օրհնություններ, ծառայելիս, 165-66
և արարողություններ մահացածների համար, 162-65

Տասանորդ
Եկեղեցուն ազատում է պարտքից, 37, 183-84
Լորենզո Սնոուն ոգեշնչվում է քարոզել այդ մասին, 36, 181-82
բոլոր Վերջին Օրերի Սրբերը պետք է վճարեն լրիվ, 181-82, 185
երեխաներին պետք է սովորեցնել վճարել, 186
ծնողներն ու ուսուցիչները օրինակ պետք է հանդիսանան վճարելու համար, 186
ոչ դժվար օրենք՝ հասկանալու և ապրելու համար, 184-85
սրբագործում է երկիրը, 184-85
վճարում, բերում է հոգևոր և ֆիզիկական օրհնություններ, 183, 184-864
վճարում է տաճարների համար, 184, 185

Տասը կույսեր, առակը, 327-28

Տասներկու Առաքյալների Քվորում, Լորենզո Սնոուի կոչումը, 20-21

Տուն. *Տես* Ընտանիք

Փ

Փաթեն, Դեյվիդ Վ., վկայություն է բերում Լորենզո Սնոուին, 1, 3

Փառքը Աստծո, միտք ուղղված միայն դեպի, 207

Փորձություններ
Սուրբ Հոգին օգնում է մեզ համբերել, 89-92
Տերը զորացնում է մեզ հաղթահարելու, 130-31
գտնել ուրախություն ընթացքում, 102-103, 124-27
լինել հավատարիմ ընթացքում, 124-27, 129

հնարավորություն է տալիս սեր ցույց տալ Աստծո հանդեպ, 129
պատրաստում է մեզ սելեստիալ փառքի համար, 126-27
օգնում է մեզ ավելի մոտենալ Աստծուն, 131-32

Փրկության ծրագիր
Հիսուս Քրիստոսի կյանքը և մահը մասն է կազմում, 323-25
ավետարանը, 278
հիմնադրվել է նախքան աշխարհի սկիզբը, 278

Ք

Քահանայություն
առաջնորդում է և կատարելագործում մեզ, 244
երկնքից լիազորված իշխանություն, 241-43
կրողները, աշխատում են Սփոփող Միության քույրերի հետ, 196
կրողները, պետք է ծառայեն որիշներին, 245-47
կրողները, պետք է հետևեն արդարակեցության սկզբունքներին, 245-47
կրողները պետք է ձգտեն և գործադրել հոգևոր պարգևներ, 245-47
վերականգվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով, 241-43
օգնում է մեզ երջանկություն գտնել, 244

Քլաֆ, Ուիլյամ, օգնում է փրկել Լորենզո Մնոուի կյանքը, 81-84

Քվորումներ, միասնություն, 227-28

Օ

Օվսաննայի բացականչություն, 159-60

Օրինակ
ծնողների վերաբերյալ սահմանված, երեխաների համար, 153-55
ղեկավարներն ու ուսուցիչները հետևեն Փրկչի, 255-56
պերճախոս ուսուցիչ է, 257

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02367 87201 4
36787 201